Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՄԱՌՕՏ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԹՊԵՏՍ

ԱԶԳ. ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

վաւերացեալ

յՈՒսումն. Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆԵՐՍԷՍ Ձ. ԱՐԱՄԵԱՆ

1891

Լսար
393

Lang
565

Краткая
иллюстрированная
География,
для народныхъ начальныхъ училищъ,

Григорія Маргарянъ,
преподавателя географіи и исторіи.

Константинополь.
1891.

Լաց
393

ՀԱՄԱՌՕՏ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Ի ՊԷՏՍ
ԱԶԳ. ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ
Վաւերացեալ
յՈրոշմ. Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ
ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ
ՈՒՍՈՒՑԻՉ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

معارف نظارت جليلەسنك رخصتنامەسيله طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. ՆԵՐՍԷՍ Ա. ԱՐԱՄԵԱՆ
1891

№ 985
№ 926
БИБЛІОТЕКА
ЦІАЛЬНЫХЪ КЛАСС
ВСКАГО ИНСТИТУ

Հեղինակին ստորագրութիւնը չկրող օրինակներն կեղծ են

եւ անվաւեր կը համարուին

Ա. Ր.

ԱԶՆՈՒԱՇՈՒՔ

ՄԿՐՏԻՉ ԷՖԷՆՏԻ ԷՍԱԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

եւայլն եւայլն եւայլն

ՀՕԼ

ԽՈՐԻՆ ՄԵԾԱՐԱՆԱՑ ԵՒ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԸՆ

28-392

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆ ՎԱՆ

393-2004

78149 -ակ

(1244-87 Վ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

23 Օգոստոս 1891

Համար 237

ՎԱԽԵՐԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ազգային Կեդրոնական վարչութեան Ուսումնական Խորհուրդս՝ ընդունելով «Համառօտ պատկերազարդ Աշխարհագրութեան» Դասագիրքն՝ որ ի պէտս Ազգ. Նախակրթական վարժարանաց պատրաստած է՝ Պատմութեան եւ Աշխարհագրութեան ուսուցիչ Գրիգոր Էֆէնեցի Մարգարեան, կը վկայէ որ նեղինակին դիտած նպատակին՝ որ է Աշխարհագրական նախնական գիտելիքն՝ դիւրին ու հաճելի եղանակաւ աւանդել, լաւ կերպով ծառայող ընտիր դասագիրք մէ, եւ վաւերացնելով զայն՝ կ'արտօնէ նորա գործածութիւնն յԱզգային Նախակրթարանս:

ԿՆԻՔ

Ի դիմաց Ուսումնական Խորհրդոյ

Վ. ԱՏԵՆԱԴՊՐԻ — ԱՏԵՆԱՊԵՏ

ՊՕՂՈՍԷԳ. ՔԷՐԷՍՏԷՃԵԱՆ — Ռ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՏՂՊԱՋԱԲԱՆ

Բերկրառիթ է տեսնել որ՝ Աշխարհագրութեան նման օգտաշատ և անհրաժեշտ գիտութիւն մը՝ շնորհիւ կարող մասնագիտաց՝ օր քան զօր Ազգային վարժարանաց ծրագրոց մէջ իւր արժանաւոր դիրքը կ'ստանայ և Հայ ծնողք՝ տակաւ կը թօթափեն այն այլանդակ նախապաշարումը թէ՝ Աշխարհագրութիւնը *Տափտան*ներու յատուկ գիտութիւն մ'է:

Քաջալերեալ այս յուսալից բարեշրջումէն՝ ձեռնարկեցինք ներկայ աշխատասիրութեան՝ որ սահմանեալ է 'ի պէտս Ազգ. Նախակրթական վարժարանաց:

Թօսելէ առաջ գործոյս ընդհանուր ուղղութեան վրայ, կարեւոր կը համարիմք անգամ մը եւս յիշեցնել սա ընդհանուր ճշմարտութիւն թէ՝ դասագիրք մը՝ ինչ առաւելութիւններով ալ օժտուած լինի, ուսուցչին համար ոչ թէ իբր աղբիւր՝ այլ պարզապէս իւր աշխատութիւնը դիւրացնող մի գործի և միայն ուսանողին համար իբր ուղեցոյց սահմանեալ է ծառայել, քանզի դասախօսն ինքն իսկ է ամենայն ինչ և հեղինակութիւն՝ հանդէպ իւր աշակերտին:

Արդարեւ միևչեւ ցարդ 'ի պէտս Ազգ. նախակրթական վարժարանաց՝ Աշխարհագրութեան օգտակար դասագրեանք չէին պակսեր առ մեզ, սակայն մեք այն համոզումն ունիմք թէ՝ Դասագիրք մը պէտք չէ մեծավաճառութիւն դառնայ և մանաւանդ ուսանող ամէն ճիւղերու սահմանեալ դասագրեանց բազմապատիկ թիւն՝ ոչ թէ աւելորդ բեռ՝ այլ ինքնին բաղդատութեան դիւրագոյն միջոց մ'է նոցա իրարմէ ունեցած առաւելութիւնը փորձով կարենալ հաստատել և գնահատելու համար:

Ճիշդ այսու նպատակաւ պատրաստած եմք ներկայ դասագիրքն՝ հետեւելով Ֆօնտէնի և Բիժօնի դասական համառօտ Աշխարհագրութեանց և կցորդելով նմա ինչ որ կրցած էինք ձեռք բերել մեր անձնական փորձառութեամբ:

Ջանացած եմք աւելորդաբանութիւններէ զգուշանալով՝ աւանդել այն բաները միայն՝ որք անհրաժեշտ են և ուսանողին համար հասկնալի, մանաւանդ կարեւոր բաժին մ'ալ ուսուցչին թողլով:

Իւրաքանչիւր տէրութեան վրայ առանձինն երեք հատուածներու մէջ խօսած եմք, *Բնական Նկարագիր*, *Քաղաքական Նկարագիր*

և *Ընդհանուր Տեղեկութիւն* որ կը խօսի մէջն մի երկրի տնտեսական և ընկերական վիճակին վրայ։ Որպէս միշտ, մեր ներկայ գործոյն մէջ ես օգտակար համարած եմք բաժնել իւրաքանչիւր երկրի նահանգիսաներն ներքին քաղաքներէ և ամէն ցամաքի բաժանման վերջն՝ *Ընդհանուր հարցարան*ներ դրած եմք՝ աւանդեալ դասուց ամէն ճիւղերն շօշափող։

Նոյնպէս հարկ համարած եմք՝ ուսանողն ամուլ միօրինակութենէ և թուլթակաբար ուսանելէ փրկելու նպատակաւ՝ մէն մի ցամաքի վերջն դնել՝ *Մտաւոր Աղեւորութիւններ, Պարտականութիւններ*՝ առ՝ի վարժութիւն քարտիսագծութեան, և՝ի վախճան գործոյն՝ գետեղել 70 ի չափ՝ Աշխարհագրական հրահանգիչ և զուարճալի *Հանելուկներ* Եւրոպիոյ վրայ եւ զորս Պատ. Ուսուցիչք այլ եւ այլ ձեւերով կրնան բազմապատկել կամ փոփոխել հաւասարապէս ամէն ցամաք երկիրներու վրայ։

Այս է ահա մեր համեստ ծրագիրն և ընդունած ուղղութիւնն որ՝ եթէ Պատ. Ուսուցչաց և Խնամակալաց ներողամիտ գնահատմանն արժանալով՝ օգտակար գործի մը լինի Հայ զաւակաց ձեռաց մէջ՝ այդ իսկ պիտի համարիմք մեր մեծագոյն քաջալերութիւնը։

Գ. Մ.

ՀԱՄԱՌՕՏ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
Ընդհանուր Գիտելիք

ԴԱՍ Ա.

Աշխարհագրութիւնը երկիրս նկարագրող գիտութիւնն է։ Երկիրս կը կոչուի նաև Գունտ կամ Երկրագունտ, որովհետև նաւորընկի նման կլոր է։ Երկրիս կլորութեանը կրնանք համոզուիլ երբ՝ ընդարձակ ծովու մը եզրն կենալով՝ դիտենք հեռուէն եկող նաւ մը. այն ատեն կը տեսնենք որ նախ և առաջ այդ նաւուն կայմերն ու առագաստները կ'երեւին և ապա հետզհետէ՝ նաւուն ամբողջ մարմինը։ Ասկից կը հասկցուի որ՝ եթէ երկիրս տափարակ լինէր՝ այդ հեռուէն երեւցող նաւն ոչչափ ալ փոքր ըլլար՝ դարձեալ ամբողջը պէտք էինք տեսնել։

Հեռուէն երեւցող նաւու մը ձեւերը

Նոյնպէս՝ Լուսինը խաւարած ժամանակ, որոշակի կը տեսնենք որ՝ երկիրս կլոր սուտեր մը կը ձգէ Լուսնին վրայ։ Այս երեւոյթները կ'ապացուցանեն թէ՝ արդարեւ երկիրս կլոր է։

ԵՐԿՐԻՍ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Երկիրս ունի երկու տեսակ շարժում, մին՝ 24 ժամը մէկ անդամ իւր առանցքին վրայ կը դառնայ՝ որմէ յառաջ կ'ուզան Յորեկ և Գիշեր, միւսն է տարեկան շարժում, այսինքն 365 աւուր և 6 ժամու մէջ Արեգական շուրջը դառնալով՝ յառաջ կ'ուզան տարւոյն 4 եղանակները որք են՝ Գարուն, Ամառ, Աշուն եւ Ձմեռ:

Առանցք կ'ըսուի Երկրիս հիւսիսէն՝ ի հարաւ և կեդրոնէն անցնող այն երեւակայական գիծը որու վրայ Երկիրս կը դառնայ: Իսկ Առանցքին երկու ծայրերը կը կոչուին Բեւեռ. Հիւսիսային Բեւեռ և Հարաւային Բեւեռ:

Երկիրս Արեգական շուրջը դառնալուն համար կը կոչուի Մոլորակ և ունի 40000 քիլմ. չրջապատ: Երկիրս լուսնէն 49 անդամ մեծ, իսկ Արեգակէն 1300000 անգամ փոքր է:

ԵՐԿՐԻՍ ԶՈՐՍ ԳԼԽԱՒՈՐ ԿՈՂՄԵՐԸ

Երկրագնդիս վրայ տեսած կամ քաղաքի մը դիրքն ճշդիւ որոշելու համար՝ չորս գլխաւոր կողմեր մտածուած են՝ Արեւելք, Յարեւմուտք, Հիւսիս, Հարաւ: Այն կողմն ուրկից ամէն առաւօտ Արեւը կը ծագի, կը կոչուի Արեւելք. — Արեւելքի հակառակ կողմն՝ ուրկից Արեւը մարդ կը մտնէ՝ կը կոչուի Արեւմուտք: Երբ երեսնիս դէպ Արեւելք դարձնենք, ձախ կողմերնիս կ'ըլլայ Հարաւ և ձախերնիս՝ Հիւսիս:

Այս չորս գլխաւոր կողմանց մէջ տեղերն կան՝ նաև 4 երկրորդական կողմեր, ինչպէս Հիւսիսային Արեւելք և Հիւսիսային Արեւմուտք. — Արեւելեան Հարաւ և Արեւմտեան Հարաւ. որոնք կը կոչուին Միջանկեալ կողմեր:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ ԵՒ ԳՕՏԻՔ

Երկրագնդիս մակերեւոյթին ուսումը դիւրացնելու եւ նորա այլ և այլ մասանց դիրքն ճշդիւ որոշելու նպատակաւ՝ Աշխարհագիրք՝ երեւակայական, այսինքն իրապէս չեղած գիծեր ու շրջանակներ կը մտածեն Երկրիս շուրջը: Այս գիծերն են՝ Առանցք, Հասարակած, Միջօրէական և Արեւադարձ:

Առանցք կ'ըսուի Երկրիս հիւսիսէն՝ ի հարաւ և կեդրոնէն անցնող այն գիծը որուն վրայ Երկիրս կը դառնայ: Առանցքին ծայրերը կը կոչուին Բեւեռ՝ Հիւսիսային և Հարաւային բեւեռ:

Հասարակած կ'ըսուի այն մեծ շրջանակն որ՝ Երկրիս մակերեւոյթին ճիշտ մէջ տեղէն և բեւեռներէն հաւասար ուղղութեամբ անցնելով՝ գունագը կը բաժնէ երկու հաւասար մասերու, Հիւսիսային կիսագունդ և Հարաւային կիսագունդ:



Առաւցեալ գօտւոյ մէջ տեսարան

Միջօրէական կը կոչուի այն շրջանակն որ բեւեռէ բեւեռ ձգուելով՝ Հասարակածը կը կտրէ և գունագը կը բաժնէ երկու հաւասար մասերու՝ Արեւելեան կիսագունդ և Արեւմտեան կիսագունդ:

Արեւադարձ կը կոչուի՝ բեւեռներու եւ Հասարակածին մէջ գտնուած զուգահեռական գիծերը: Հասարակածի հիւսիսային կողմինը կը կոչուի Արեւադարձ խեցգետնի, իսկ հարաւակողմինը Արեւադարձ Այծեղջեր:

Այս չորս գլխաւոր շրջանակները Երկիրս կը բաժնեն հինգ գօտիներու,

Հիւսիսային Բարեխառն Գօտի, Հարաւային Բարեխառն Գօտի, Հիւսիսային Առաւցեալ, Հարաւային Առաւցեալ Գօտի և Արեգեալ Գօտի:

Առաւցեալ գօտիներու մէջ չափազանց ցուրտ կ'ընէ, վասն զի Արեգակը իւր ճառագայթները խոտորնակի կը զարնէ հոն՝ որով բոլոր և կենդանիք նուազ կ'ըլլան:

Բարեխառն գօտիներու մէջ ամէն ու ցուրտն չափաւոր են,

այս պատճառաւ բուսաբերութիւնն ալ բաւական և առատ է։

Ա.յրեցեալ գօտւոյ մէջ սոսափիկ տաք կ'ընէ, որովհետև Արեգական ճառագայթները ուղղակի կը զարնեն Երկրիս կեդրոնին եւ որով բոյսերն ալ առատ և այլազան են։

ԵՐԿՐԱԳՈՒՆՏ ԵՒ ՔԱՐՏԷՍՔ

Եթէ ուզեմք Երկրիս բնական ճիշտ ձեւը աչքի առաջ ունենալ, արուեստական գունդ մը կ'առնեմք և անոր վրայ կը նշանակեմք ցամաքի և ջրոյ բաժանումները, սահմանները, քաղաքական բաժանումները եւլն։ Այս կերպ գունդ մը կը կոչուի Երկրագունտ։



Բարեխառն գօտւոյ մէջ տնասրաց

Աշխարհացոյց fարstէս կը կոչուին այն տախտակներն որոնք կը ներկայացնեն Երկրիս ամբողջ մակերեւոյթն կամ անոր մէկ մասը։

Համաստաւած կ'ըսուին այն աշխարհագրական տախտակներն որք Երկրիս ամբողջ մակերեւոյթը կը ներկայացնեն։

Ընդհանուր fարstէս կ'ըսուին այն աշխարհացոյցներն որոց վրայ Երկրիս հինգ մասանց մին նշանակուած է։ Իսկ երբ թղթի մը վրայ Երկրի կամ աեբութեան մը մակերեւոյթն ուղիմք ներկայացնել, այն ատեն նոյն աշխարհացոյցը կը կոչուի Առանձնաfարstէս կամ Մասնաfարstէս։

Աշխարհացոյց տախտակներու վրայ՝ Երկրիս չորս կողմերը հետեւեալ կերպով նշանակուած են։

Վերի կողմը Հիւսիս, վարի կողմը Հարաւ, աջ կողմը Արեւելք և ձախ կողմը Արեւմուտք։

Երկրագունտս երկու ձեւով կարելի է երեւակայական երկու մասերու բաժնել, Ա°. երբ Հասարակածին ուղղութեամբ կարուած նկատեմք, կ'ունենամք երկու կիսագունտներ՝ Հիւսիսային կիսագունտ և Հարաւային կիսագունտ։ Իսկ երբ Հիւսիսէն ի Հարաւ, այսինքն՝ Միջօրէականի ուղղութեամբ կարուած նկատեմք, դարձեալ կ'ունենամք երկու բաժանումներ, այսինքն Արեւելեան եւ Արեւմտեան կիսագունտ։



Ա.յրեցեալ գօտւոյ մէջ տնասրաց

ՑԱՄԱՔԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Երկիրս՝ որոյ վրայ կը բնակիմք, կազմուած է ցամաքէ և Ջուրէ որոց չուրջն ալ մթնոլորտը պատած է։

Երկրիս մակերեւոյթին ընդարձակութիւնն է 51000-000 քիլոմ. քառ.։ Այս մակերեւոյթին երեք մասը Ջուր և մէկ մասը ցամաք է։

Ցամաք երկիրներն մեծաւ մասամբ զետեղուած են կիսագունտերու հիւսիսակողմերը։ Ցամաքները կը բաժնուին երեք որոշ մասերու, 1°. Հին Աշխարհ որ կը պարունակէ Եւրոպա, Ասիա և Աfրիկէ. 2°. Նոր Աշխարհ որ կը պարունակէ Հիւսիսային և Հարաւային Ամերիկաները. 3°. Ովկիանիա կամ Աւստրալիա որ տարածուած է Ա.րեւելեան կիսագնդին Հար. արեւելեան կողմը և բաղկացած է մեծ ու փոքր բազմաթիւ կղզիներէ։

Ցամաքին այլ և այլ ձեւերը իրենց առանձին առանձին անուններն ունին Աշխարհագրութեան մէջ՝ ինչպէս լեռ, դաշտ, կղզի, պարանոց եւայլն։

Կղզի

Կղզի կ'ըսուի ամէն կողմէն ջրով շրջապատուած մեծ կամ փոքր ցամաքին:

Երեւելի կղզիներ են Իպանիա, Մատագասքար, Աւստրալիա:

Կղզեխումբ կամ Արշիպեղագոս կ'ըսուին իրարու մօտ գտնուած բազմաթիւ կղզիներ: Երեւելի են Իշխանաց կղզիները՝ Մարմարայի մէջ. Օսմանեան, Յունական, Ճապոնական և Անգլիական արշիպեղագոսները:



Թերակղզի

Թերակղզի կ'ըսուի ցամաքի այն մասին որ երեք կողմէն ջրով շրջապատուած ըլլալով՝ միայն հողի կտորով մը ցամաքին միացած է: Երբ թերակղզին շատ մեծ է՝ կ'ըսուի Ցամաքակղզի: Իտիմ և Մօրա՝ թերակղզիներ են, Փոխր Սախա և Սմաննիհնավիա՝ Ցամաքակղզիներ են:

Պարանոց կ'ըսուի հողի այն նեղ կտորին որ թերակղզին ցամաքին կը կապէ: Երեւելի են Փանամայի, Կորնթոսի, Բերեմոքի պարանոցները:

Գլուխ

Գլուխ կ'ըսուի ցամաքի մ'այն փոքր մասն որ դէպ ի ծով երկնցած է, եթէ Գլուխը բարձր ու լեռնային է՝ կ'ըսուի Հրուանդան: Երեւելի են Մարթապան, Գոմորին, Ս. Վիչենցիոս եւլն:

Խութ կամ Վիմուտ կ'ըսուին ծովերու կամ ովկիանոսներու մէջ՝ տեղ տեղ գտնուած այն ժայռերն՝ որոնք ջրոյ մակերեւոյթին հաւասար և կամ անկից քիչ բարձր ըլլալով՝ նաւարկութեան համար վտանգաւոր են:

Երկիր կամ Աշխարհ կ'ըսուի Ցամաքի մը քաղաքականապէս որոշեալ մէկ մասն՝ ինչպէս Թուրքիա, Անգլիա, Հնդկաստան, Պրազիլ առանձին երկիր կամ Աշխարհներ են:

Դաշտ կ'ըսուին երկրի տափարակ և ընդարձակ տեղամասերը: Ալազտա և անդեր դաշտերուն Անապատ կ'ըսեն: Ոմանք անոնք կ'ուսան՝ անապատներու մէջ տեղ տեղ գտնուած ջրերի ու բուսերը վայրերուն:

Տափաստան կ'ըսուին ճախնային անապատները:

Լեռ կ'ըսուին երկրի վրայի բնական բարձրաթիւններ: Եթէ

լեռը փոքր է՝ կ'ըսուի Բլուր: Երեւելի լեռներ են Արարատ կամ Մասիս, Լիբերիա, Տաւրոսի, Բրնչինճինկա, եւայլն:



Դաշտ

Լեռնաշղթայ կամ Գօտի յերաւնց կը կոչուին երբոր կիպ՝ միաշար լեռներ որք այլ և այլ գօտիներէ ձեւացած են: Երեւելի լեռնագօտիներ են, Պրպեանիք, Ապատաժ, Կովկաս, Արարատ, Հիմնապայա եւայլն:

Լեռնագագաթ կ'ըսուին բլրոց կամ լերանց կատարը գըտնուած տափարակ տեղուանք:

Հրաբուղխ կը կոչուին այն լեռներն որոնց խորը գըտնուած հանքերն ու կաղերը աւեն աւեն բռնկելով՝ լեռանը գագաթը կը ծակին և դուրս կ'արձակին կրակ, քար և մուխ: Հրաբուղխին բերանը կը կոչուի խառնարան, իսկ անկից դուրս վազած հեղուկը՝ լաւա: Երեւելի են Վեսուվ, Ետնա, Ամինկատա, Ս. Եղիա եւն.:

Ծովային հրաբուղխ կը կոչուին այն հրաբուղխներն որոնք ծովուն նեղքերէն բռնկելով՝ նոր նոր կղզիներ կը ձեւացնեն:

Հովիտ կ'ըսուին երկու լերանց շղթաներու միջեւ տարածուած տափարակ և ընդարձակ դաշտերը:

Կիրճ կ'ըսուին լերանց շղթաներու մէջ գտնուած նեղ և օձապտոյտ անցքերը: Երեւելի է Թերմոպիլէի կիրճն ի Յունաստան և Անտեան լերանց կիրճերը:



Հրաբուխ

Ասիոնիմ կամ Ծովեզերք կ'ըսուին ցամաքի մ'այն մասերն զոր ծովը կը թրջէ։

Այր կամ Անձաւ կ'ըսուին երկրիս խորերը կամ լեռանց ու ժայռերու մէջ գտնուած բնական մեծամեծ ծակերը։ Երեւելի են՝ Ենգլիսյ մէջ Էլտեն, Սկովտիոյ մէջ Ֆինկալի և Թրիէսաէ քաղաքին մօտ Ստեղափերկի այրերը։

Երկրաշարժ կ'ըսուի՝ երկրիս մէկ մասին չարժելուն կամ ցընցուելուն՝ որ յառաջ կուգայ՝ երկրիս խորերը գտնուած կազերուն կամ գիւրավառ հանքերուն՝ յանկարծական կերպով բռնկելէն։

ՋՐՈՅ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Ծով. Ովկիանոս. — Երկրիս մակերեւոյթին մեծագոյն մասը ծածկող ագի ջրոյ ընդարձակ տարածութիւնը Ծով, իսկ այն լայնատարած ծովերն որոնք մեծամեծ ցամաքներ կը շրջապատեն՝ Ովկիանոս կը կոչուին։



Ծով

Հինգ ովկիանոս կայ. Արտաւստեան, Խաղաղական կամ Մեծ ովկիանոս, Հնդկաց, Արջային և Հակարջային ովկիանոս։

Ծոց կ'ըսուին ջուրին այն մասերն՝ որոնք դէպ ի ցամաք ներս մտած են, իսկ երբ ամբողջ ծով մը ծոցի ձեւով դէպ ի ցամաք ներս մտած է, կ'ըսուի Ծովածոց։



Ծոց

Խորշ և Նաւահանգիստ. — Փոքր ծոցերը կը կոչուին խորշ, իսկ բնական այն ապահով խորշերն որոց մէջ նաւեր խարիսխ ձգելով՝ ապրանք կը փոխանակեն և կամ ճամփորդներ կ'առնուն՝ կը կոչուին Նաւահանգիստ։



Նաւահանգիստ

Նեղուց եւ Ջրանցք. — Ջրոյ այն նեղ անցքերն որոցմով երկու ծովեր կամ ովկիանոսներ կը միանան, կը կոչուին Նեղուց, իսկ եթէ նեղուցը լայն ըլլայ՝ կ'ըսուի Ջրանցք։

Լիճ և Ճահիճ. — Ցամաքին մէջ գտնուած ջրոյ այն մասերն որոնք ուրիշ ծովերու հետ հաղորդակցութիւն չունին և իրենց ջուրն ալ ընդհանրապէս անոյշ է, Լիճ կ'ըսուին։ Ճահիճ կ'ըսուի երկրիս



Գետաբերան

մակերեւութին վրայ թեթեւ բարձրութեամբ տարածուած այն ազմուտ եւ ապականեալ ջուրերն որոնք չրջակայ բնակութեանց օդը կ'ապականեն։

Լիճ

Աղբիւր և Առուակ. — Աղբիւր կ'ըսուին այն ջուրերն որոնք կը բղխին լերանց ստորոտներէն կամ դաշտագետնին։ Իսկ այս աղբիւրներէն ձեւացած ջրոց փոքր հոսանքներն կը կոչուին Առուակ։

Ջրվէժ

Գետ կ'ըսուին առուակներէ և աղբիւրներէ կազմուած ջրոց ընդարձակ հոսանքները։ Եբեւելի գետեր են, Միսիսիպի, Ամազոն, Եանկ-Ցէ-Քեանկ, Դանուբ —։

Ակ և Աղբիւր. —Գետի մը բղխած տեղն Ակ կամ Աղբիւր, իսկ ծովուն հետ խառնուած տեղը կը կոչուի Գետաբերան։

Ցերդա կ'ըսուին՝ երբեմն գետերու

Գետ

բերանը գտնուած սա Ձեւով եռանկիւնի փոքր կղզիներն՝ որոնք ընդհանրապէս նոյն գետոյ բերած աւազներէն ու հողերէն ձեւացած են։ Երեւելի են Նեղոսի. Գանգէսի. Դանուբայ եւն. Տելդաները։

Սահանիք կամ Ջրվէժ կ'ըսուին այն ջրոյ հոսանքներն որոնք ահագին բարձրութենէ մը վար կը գահավիժին։

Հոսանիք և Ծորձանիք. — Ծովերու մէջ երբեմն ջրոյ առանձին հոսանքներ ձեւանալով այլ և այլ ուղղութեամբ կը վազեն։ Այս հոսանքներն երբ ջրոյ յատակին մէջ ցցուած ժայռերու կամ խոր տեղերու հանդիպին՝ կըր չրջան մը կ'ընեն՝ որ կը կոչուի Ծորձանք։

Գետափուն մ. — Եթէ գետի մը հոսանքին ի վեր նաւարկենք, ալ կողմերնիս կ'ըլլայ նոյն գետին Աջակողմեան ափունքն և ձախերնիս՝ Ձախակողմեան ափունքը։

ՄԱՍՈՒՆՔ ԵՐԿՐԻ

Ինչպէս տեսանք, ցամաք երկիրները՝ երկրիս մակերեւութին մէկ չորրորդ մասը միայն կը կազմեն և մեծաւ մասամբ զետեղուած են Հիւսիսային կիսագունտերու մէջ։ Հին Աշխարհը կը շրջապատեն Ատլանտեան, Խաղաղական, Արկտական և Հնդկաց ովկիանոսք։

Նոր Աշխարհը կը շրջապատեն Արկտական, Ատլանտեան, Հակարկտական և Խաղաղական ովկիանոսք։

Եւրոպա, Ասիա և Աֆրիկէ կը կոչուին Հին Աշխարհ, որովհետեւ շատ հին ժամանակներէ ի վեր մեծաւ մասամբ ծանօթ են։ Իսկ Ամերիկա և Ովկիանիա կը կոչուին Նոր Աշխարհ՝ քանզի նոր դարուց մէջ ճանչցուեցան։

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԵՐ

Մարդիկ որոնք սփռուած են երկրիս հինգ մասանց մէջ, կը հաշուուին իրը 1400 միլիոն և իրենց դիմագծութեան, գոյնին և մարմնական կազմութեանն համեմատ՝ կը բաժնուին հինգ գլխաւոր ցեղերու։

Սպիտակ կամ Կովկասեան ցեղ՝ որ տարածուած է Եւրոպիոյ, Արեւմտեան Ասիոյ, Հիւսիսային Աֆրիկէի մէջ և գաղթականութեամբ՝ աշխարհիս ամեն կողմերը։ Այս ցեղը կը հաշուուի իրը 500 միլիոն։

Դեղին կամ Մոնկոլեան ցեղ որ տարածուած է Հիւսիսային Եւրոպաէ ի զատ, Ասիոյ Հիւսիսային, կեդրոնական, և Արեւելեան մասանց մէջ։ Այս ցեղն ալ իրը 500 միլիոն կը հաշուուի։

Թխագոյն կամ Մալայեան ցեղ որ կը բնակի Ասիոյ հարաւային արեւելեան կողմերը և Խաղաղական ովկիանոսի կղզեայ շատերուն մէջ։ Այս ցեղը կը հաշուուի իրը 30 միլիոն։

Երովպական կամ Խափշիկ ցեղ որու բնագաւառն էր Աֆրիկէ, իսկ այսօր աշխարհիս ամեն կողմերը ցրուած են։ Այս ցեղը կը հաշուուի իրը 100 միլիոն։

Մալայեան

Կովկասեան

Մոնկոլեան

Ամերիկեան Հնդիկ

Երովպական

Պղնձագոյն կամ Ամերիկեան Հնդիկք կը կոչուին այն բնիկ վայրենիները որք կը բնակին Ամերիկայի մէջ և կը հաշուուին իրը 13 միլիոն։

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

Քաղաքակրթեալ կը կոչուին այն մարդիկ որոնք մեծամեծ ընկերութիւններով կ'ապրին, ունին օրէնք, արուեստ, ձեռագործ, ուսում վաճառականութիւն եւայլն։ Այս կարգի մարդոց ընկերութիւնը կը կոչուի Ազգ կամ Ժողովուրդ։

Կէս քաղաքակրթեալ կամ բոլորովին վայրենի մարդիկ խումբ խումբ և կամ առանձին ընտանիքներու բաժնուած կ'ապրին՝ վրաններու, խրճիթներու կամ քարայրներու մէջ։ Մինչդեռ քաղաքակրթեալ ազգերն կը բնակին քարէ, փայտէ կամ աղիւսէ չինուած հաստատուն և կանոնաւոր բնակարաններու մէջ։

Դիւղ կ'ըսուին սակաւաթիւ տուներու համախմբութիւնք։ Աւելի բազմաթիւ տուներ կամ կանոնաւոր չէնքեր պարունակող Գիւղերը կը կոչուին Գիւղաքաղաք։

Քաղաքը մարդկային բնակութեանց ամենէն չէնն ու մեծագոյնն է։

Սրուարձան կ'ըսուին քաղաքի մը բերդէն կամ որոշեալ սահմանէն դուրս գտնուած մօտակայ գիւղերը, ինչպէս Գասը-քէօյ, Իսկիւտար, Սան-Սթէֆանօ, Բերա՝ Պոլսոյ Արուարձաններն են։

Տէրութիւն կամ Աշխարհ կ'ըսուին այն երկիրներն որոնք մէկ կառավարութեան ներքև միացած են և ընդհանրապէս ունին մէկ լեզու, միօրինակ բարք և կրթութիւն, մէկ կրօն և մէկ պատմութիւն։ Անգլիա, Չինաստան, Պրազիլ տէրութիւններ են։

Մայրաքաղաք կ'ըսուի Տէրութեան մ'այն քաղաքը՝ ուր ընդհանրապէս կը բնակի թագաւորը, իշխանը կամ նախագահը։

Միապետական կ'ըսուի այն ձև կառավարութեան՝ որու մէջ բացարձակ կերպով կ'իշխէ թագաւորն կամ կայսրը։ Եթէ տէրութեան մը մէջ թագաւորին կամ կայսեր իշխանութիւնը օրինօք սահմանաւորեալ է, այդ ձև կառավարութիւնը կը կոչուի Սահմանադրական կամ Զահաւորեալ միապետութիւն։ Չինաստան, Թուրքիա և Ռուսիա Բացարձակ Միապետութիւններ՝ իսկ Անգլիա, Գերմանիա, Սպանիա՝ Զահաւորեալ կամ Սահմանադրական երկիրներ են։

Հանրապետական կամ Սահմանադրական կ'ըսուին այն տէրութիւններն որոց մէջ փոխանակ կայսեր կամ թագաւորի, ժողովուրդն ընտրուած Նախագահ ու Երեսփոխանական ժողով մը կայ և ինքն է որ կը անօրինէ և կ'որոշէ տէրութեան գործերը։

ԿՐՕՆՔ

Բոլոր մարդիկ կը հաւատան թէ Տիեզերքս ստեղծող և կառավարող Գերագոյն էակ մը կայ։ Միայն թէ ամէն մարդ միևնոյն կերպով չըմբռներ այդ Էակն և տարբեր տարբեր ձևերով կը մատուցանէ նմա յարգանք և պաշտամունք։ Ահա ասկից ծագումն առած է կրօնից տարբերութիւնը։

Օրինակի համար. կան Ազգեր որոնք միակ և ճշմարիտ Աստուծոյ կը հաւատան և ասոնք երեք դասերու կը բաժնուին՝ 1°. Քրիստոնեայ, 2°. Մահմէտական, 3°. Մովսիսական։

Քրիստոնեայք կը հաշուուին իրը 300000000, Մահմէտականք կը հաշուուին իրը 250000000, Մովսիսականք իրը 7 միլիոն։

Կան նաև ազգեր որոնք մէկէ աւելի աստուածներու կը հաւատան և կը կոչուին կռապաշտ։ Ասոնց թիւը 600000000 է աւելի է։

Քրիստոնէութիւնը կը բաժնուի երեք գլխաւոր ճիւղերու 1°. Կաթոլիկ կամ Հռոմէական Եկեղեցի. 2°. Արեւելեան կամ Օրթոտոքս Եկեղեցի. 3°. Բողոքական Եկեղեցի։

Հայք ունին իրենց ազգային ուրոյն՝ Հայաստանեայց Կաթուղիկէ Եկեղեցին՝ հիմնեալ ի վերայ Սրբազան Առաքելոց՝ Թադէի և Բարթուղիմէոս։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԵՒՐՈՊԱ.

ՐՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Եւրոպա. Հին Աշխարհի հիւսիսային արեւմտեան կողմը մեծ թերակղզի մը կը ձեւացնէ։ Եւրոպա թէև Հինգ ցամաքներու փոքրագոյնը, սակայն ամենէ քաղաքակրթեալն, ամենէն ղօրաւոր և համեմատաբար ամենէն բազմամարդն է։

Սահմաններն են՝ հիւսիսէն Արկտական Սառ. ովկէանոս, արեւելքէն՝ Ուրալ լերինք, Ուրալ գետ և Կասպից ծով, հարաւէն Կովկասու գօտին, Սև ծով, Պոսֆորի և Տարտանէլի նեղուցք, Միջերկրական ծով և Ճիպրալդարի նեղուց, արեւմուտքէն Ատլանտեան ովկէանոս։

Եւրոպա ունի 10180000 քիլ. քառ. տարածութիւն 236000 քիլ. ծովափունք և 320000000 է չափ բնակիչ որք մեծաւ մասամբ Կովկասեան ցեղէ են։

Ծով և Ծոցք. — Եւրոպիոյ ծովափունք շատ անկանոն են և այս պատճառաւ ձեւացած են բազմաթիւ ծովեր, ծովածոցեր ու խորշեր։

Սառ. ովկէանոսէն ձեւացած են Բարայի և Սպիտակ ծովերը։

Ատլանտեանէ ձեւացած են՝ Պալթիկ, Հիւսիսային կամ Գերմանական ծով, Մանշ, Իրլանտայի ծով, Միջերկրական՝ որմէ ձեւացած են Տիւրէնեան կամ Թոսքանայի, Ադրիական, Յոնիական, Եգէական, Մարմարա, Սեւ և Ազովու ծովերը։

Եւրոպան շրջապատող ովկէանոսներէն ու ծովերէն ձեւացած են հետեւեալ ծոցերը։ Նախ՝ Սպիտակ ծովէն ինքնին մեծ ծոց մ'է՝ Սառ. ովկէանոսէն ձեւացած։

Պալթիկի մէջ կը գտնուին Պօթնեան, Ֆինլանտեան, Րիգայի կամ Լիվոնիոյ և Տանցիկի ծոցերը։

Ատլանտեանէ ձեւացած են Պիսկայեան կամ Գասկոնեան ծովածոցը։

Միջերկրականէ ձեւացած են Լիոնի և Շէնովայի ծոցերը. — Յոնիականէ ձեւացած են Տարէնտօնի, Արդայի, Լէփանդոյի և Կորինթոսի ծոցերը. — Ադրիականէ՝ Վենետկի և Թրիէսթէի ծոցերը։

Արշիպելագոսի մէջ կան Աթենի, Սեյանիկի, Եգինեայի և Սարոնի ծոցերը։ Սեւ ծովու մէջ կը գտնուին Պուրկասի, Վառնայի և Օտեսայի ծոցերը։

Նեղուց. — Եւրոպիոյ ովկէանոսներն ու ծովերը իրար կապուած են հետեւեալ նեղուցներով.

Սունտ, Մեծ Պելթ, Փոր Պելթ, Քաթթեկատ, և Սկակերրաք՝ Հիւս. և Պալթիկ ծովերուն միջեւ։

Տովրի կամ Քալէի նեղուց՝ կը միացնէ Մանշը Հիւս. ծովուն։

Ս. Գեորգայ և Հիւս. Ջրանցք՝ Ատլանտեանի և Իրլանտայի ծովուն միջեւ։

Ճիպրալդարի կարեւոր նեղուցն որ Ատլանտեանը կը միացնէ Միջերկրական ծովուն և Սփրիկէն կը բաժնէ Եւրոպայէ։

Կոնիճայիոյ նեղուց՝ Թրսիքա և Սարտինիա կղզեաց միջև։

Մեսինայի նեղուց՝ Հար. Իտալիոյ և Սիկիլիոյ միջև։

Օրանդի Ջրանցք՝ Յոնիականի և Ադրիականի միջև։

Տարտանելի կամ Ջանիճ-Քալեի նեղուց՝ ի մէջ Արշիպելագոսի և Մարմարայի։

Կոնճորի կամ Կ. Պոլսոյ նեղուց որ՝ Մարմարան կը միացնէ Սեւ ծովու։

Կերչի կամ Եգինի-Քալեի նեղուց՝ որով միացած են Սեւ և Ազովու ծովերը։

Թերակղզիք, Կղզիք, Պարանոցք

Եւրոպա իւր չուրերուն մէջ ունի 4 մեծ ու 3 փոքր թերակղզիներ։

Զոյս մեծերն են՝ Սկանտինաւեան Ցանախակղզի (Շուէտ-Նորվեկիա) հիւս. կողմը. — Պիրենեան Ցանախակղզի (Սպանիա եւ Փորթոկալ) հար. արեւմտեան կողմը. — Ապենինեան Ցանախակղզի (Իտալիա) հար. կողմը եւ Պալկանեան Ցանախակղզի՝ Եւրոպիոյ հար. արեւելեան կողմը։

Երեք փոքրերն են՝ Եութլանտ՝ Պալթիկ և Հիւս. ծովերով շրջապատեալ. Մօրա՝ կամ Պելոպոնէս Յունիականի, Միջերկրականի և Արշիպելագոսի միջև, Իրիմ՝ Սև ծովու մէջ, Ռուսիոյ հարաւակողմը։

Մօրա՝ յամաքին կապուած է Կորինթոսի պարանոցով, իսկ Իրիմ՝ Փերեկոպի պարանոցով։

Եւրոպիոյ մէջ կան մեծ ու փոքր բազմաթիւ կղզիներ։

Սառ. Ովկէանոսի մէջ կը գտնուին Նոր Զեմպլա և Ֆռանսուա Ժոզէֆ սառնապատ կղզիք։

ԼօֆՓօտէնի արշիպելագոս՝ Նորվեկիոյ հիւս. արեւմտ. կողմը։

Մեծն Բրիտանիա կամ Անգլիա՝ Ատլանտեանի մէջ, որ է Եւրոպիոյ մեծագոյն կղզին։ Շուրջը կը գտնուին Իրլանտա մեծ կղզին արեւմտեան կողմը. Հեպրիտեանք, Շեթլանտ, Որկադեանք, Ռաայ, Մէն և Էնկլիա։ Իսկ Ատլանտեանի հիւս. արեւմ. կողմը կը գտնուի Իսլանտա մեծ և հրաբղխային կղզին։

Անկղօ-Նորւեկիական կղզիք՝ Մանշի ծովուն արեւմտ. կողմը։

Քաթթեկատի նեղուցին և Պալթիկի միջև կը գտնուին Դանիական կղզիք որոց գլխաւորներն են Զեյլանտ և Ֆիւնիա։

Միջերկրականի մէջ Սպանիոյ արեւելեան կողմը կը գտնուի Բալեարեան արշիպելագոսը որոյ գլխաւոր կղզիներն են Մայորքա, Մինորքա, Իվիճա։ Իտալիոյ արեւմտեան կողմը կը գտնուին Կորսիկա, Սարտենիա, Էլպա և հարաւային կողմը Սիկիլիա մեծ կղզին. նոյնպէս Միջերկրականի մէջ են Մալթա, Լիպարեան եւ Զերիկօ կղզիք։

Յունիական ծովու մէջ կը գտնուին համանուն կղզիք։ Գլխաւորներն են Քորֆու, Քեֆալոնիա և Զանդա։

Արշիպելագոսի մէջ կը գտնուին բազմաթիւ մանր կղզիներ.

393-2004 (1244-87)

Հայաստանի ... դպրոցական

Գլխաւորներն են Նէկրոպոնդ, Նախսոս, Փարոս, Թիւնօ, Անտրոս եւայլն որոնք կը կոչուին Կիկլատեան կղզիք։

Արշիպելագոսի հարաւակողմը՝ Միջերկրականի մէջ կը տարածուի Կրետէ կամ Քանիա մեծ կղզին՝ որ է Եւրոպիոյ ամենէն հարաւային ցամաքը։

Լերինք եւ Հրուանդանք

Եւրոպիոյ գլխաւոր լեռնագօտիները են,

Տօքրիս կամ Տաւրոսի-Արապեան՝ համանուն ցամաքակղզւոյն մէջ։

Կրաւարեան եւ Քրնպրեան լերինք՝ Մեծին Բրիտանիոյ մէջ։

Արպեան լերիք Զուիցերիոյ, Իտալիոյ, Գերմանիոյ եւ Աւստրիոյ սահմանագլխոյ։

Ժիւռա, Վօժ եւ Սեվենեան լերինք՝ Գաղղիոյ արեւելեան եւ միջին մասին մէջ։

Պիրենեան գօտի՝ ընդ մէջ Սպանիոյ եւ Գաղղիոյ։

Կարպատ լերինք Մաճառիստանի մէջ՝ Աւստրիոյ արեւելեան կողմը։

Ապենինեան լերինք որք կը տարածուին Իտալիոյ հիւսիսէն ի հարաւ։

Տինարեան Ալպեանք՝ Եւրոպ. Թուրքիոյ արեւմտեան կողմը։

Պալքան լերինք՝ համանուն ցամաքակղզւոյն մէջ։

Հելվենական լերինք՝ համանուն երկրին մէջ։

Ուրալ լերինք՝ Եւրոպիոյ արեւելեան կողմը։

Կովկաս լերինք՝ Եւրոպ. Ռուսիոյ հարաւային արեւելեան կողմը։

Եւրոպիոյ մէջ 3 գլխաւոր հրաբուղխ կայ, Վեսուվ Իտալիոյ մէջ՝ Նափոլիի մօտ, Հեկլա՝ Իսլանդա կղզւոյն, եւ Ցնա Սիկիլիոյ մէջ։

Եւրոպիոյ գլխաւոր հրուանդաններն են Նորտ-Քիպ Շոտլանդիոյ հիւսիսակողմը,

Միզեն՝ Իռլանդայի հարաւային արեւմտեան կողմը, Լենտսէնտ Անգլիոյ հարաւային արեւմտեան կողմը,

Ֆինիսթեր՝ Սպանիոյ արեւմտեան հիւսիսային կողմը, Սուրվիչենտիոնա՝ Փորթոկալի արեւմտեան հարաւակողմը, Սպարտիվենտո՝ Իտալիոյ հարաւային ծայրը,

Մարատան՝ Մօրայի հարաւակողմը։

Գետք եւ Լիճք

Եւրոպա բաժնուած է երկու ջրհեղձներու, մին կը կազմեն Սառուցեալ եւ Ատլանտեան ովկէանոսները դէպ՝ի հիւսիս եւ արեւմուտք, իսկ միւսն՝ որ է հարաւայինը՝ կը կազմեն Միջերկրական, Սեւ եւ Կասպից ծովերը։

Սառուցեալ ովկէանոսը կը թափի Փէչորա։ Սպիտակ ծով կը թափի Տվինա։

Պալթիկի հոսկատուներն են Թօրնէա, Նեվա, Նիեմէն, Վիսթուլա եւ Օտէր։

Հիւսիսային ծով կը թափին Էյպա, Վեզեր, Հոենոս, Մեօզ, Էսմօ, Թաւիզ եւ Ֆօրթի։ Մանչի մէջ կը թափի Սեն՝ Ցառանսաէն։

Ատլանտեան կը թափին Բլայս, Սեվերն, Շենրն, Լուար, Կարոն, Ժիռոնս, Միհնո, Տուրօ, Թակօ, Կուատիանա եւ Կուատալֆիվեր։

Միջերկրականի մէջ կը թափին Էպրօ, Ռօն, Առնօ եւ Տիբերիս։

Ադրիականի մէջ կը թափին Բօ եւ Ատիճէ։

Արշիպելագոս կը վազեն Վարտար, Սդրումա, եւ Մարիձա։

Սեւ ծով կը թափին Դանուբ, Փրուբ, Տնիեսթեր եւ Տնիեբեր։

Ազովու մէջ կը թափի Տօն։

Վոլգա եւ Ուրալ կը թափին Կասպիցի մէջ։

Եւրոպիոյ ամենէն մեծ լիճերը կը գտնուին Պալթիկ ծովու ահմանակից երկու երկրայ՝ Ռուսիոյ եւ Շուէտի մէջ։ Լադոգա, Օնեգա, Իլմեն, Փեյպուս եւ Պիեռօ՝ Ռուսիոյ մէջ։ Վեներ, Վեթեր եւ Մելար Հարաւային Շուէտի մէջ։

Ֆինղանիցա, Յուրիխ, Լուչեռնա, Նեօշաթել, Լեման կամ Ժինեվրայի գեղեցիկ լիճերը Զուիցերիոյ մէջ։

Մանիտոբ, Կօմօ, Կարտա, Իտալիոյ մէջ. — Պալատօն՝ Աւստրիա։

Եւրոպ. Թուրքիոյ մէջ կը գտնուին Շֆոտրայի, Եանեայի, Օհրիտայի եւ Պէշիկի փոքր լիճերը։

Կլիմայ եւ Բուսաբերութիւն

Եւրոպիոյ հիւսիսային կողմերն սաստիկ ցուրտ կ'ընեն, հարաւային երկիրներն չափաւորապէս տաք են՝ ընդհանուր Միջերկրա-

կան ծովուն՝ որ կը զովացնէ իւր սահմանակից երկիրները։ Իսկ Միջին և Արեւմտեան մասերն ընդհանրապէս կը վայելեն բարեխառն և զուարճալի կլիմայ։

Եւրոպիոյ հողն ընդհանրապէս բարեբեր և լաւ մշակուած է։ Կ'արտադրէ ցորեն, գարի, հաճար, վարսակ, կանեփ, դեղնախընձոր, ճակնդեղ, բրինձ, ծխախոտ, ձիթապտուղ, որթեւտունկ, բամպակ, առատ եւ ազնիւ մրգեղէն, լեմոն, նարինջ, բանջարեղէն ևն։ Եւրոպա ունի նաեւ ընդարձակ անտառները որք կ'արտադրեն աղնիւ ատաղձ։

Կենդանիք եւ Հանք

Եւրոպա ունի բազմաթիւ ընտանի անասուններ որոց մանաւանդ լանջք տարուելով հետզհետէ կ'աճին ու կ'աղնուանան։ Վայրի կենդանիք քիչ են։

Եւրոպիոյ ծովերուն մէջ կ'որսան այլ և այլ ձկունք որոնք մեծ շահ կը բերեն, իսկ հիւսիսային կողմերը կը դանուին Մօրի, Բինկա ևայլն։

Եւրոպիոյ չատ մը երկրաց մէջ կը դանուին հարուստ և կարեւոր հանքեր։ Երկաթ մանաւորապէս կը դանուի Սքանտինավիոյ, Անգլիոյ, Գերմանիոյ և Ֆռանսայի մէջ։ Պղինձ՝ մանաւանդ Նորվեկիոյ, Ֆռանսայի և Սպանիոյ մէջ։ Անագ՝ Մեծն Բրիտանիոյ մէջ։ Ոսկի կը գտնուի Ուրալ և Կարպաթ լերանց մէջ։ Սնդիկ՝ Սպանիոյ և Աւստրիոյ մէջ։ Ձինկ՝ Պելճիքայի ու Գերմանիոյ մէջ։ Ծծումբ՝ մանաւորապէս Սիկիլիա կղզւոյն մէջ։ Հանիածոխ առատօրէն կը դանուի Անգլիոյ, Պելճիքայի, Հիւսիսային Գերմանիոյ և քիչ մ'ալ արեւմտեան Ֆռանսայի մէջ։

Բաղաքակրթութիւն Եւրոպիոյ

Եւրոպա բաժնուած է 20 տէրութեանց և դասակարգուած է հետեւեալ կերպիւ։

Հիւսիսային Եւրոպա՝ որ կը պարունակէ Շուէտ-Նորվէկիա, Ռուսիա, Մեծն Բրիտանիա և Տանիմարկա։

Կեդրոնական Եւրոպա կը պարունակէ Ֆռանսա, Պելճիա, Հոլանտա, Գերմանիա, Զուիցերի և Աւստրօ-Հունգարիա։

Հարաւային Եւրոպա կը պարունակէ Փորթուկալ, Սպանիա,

Իտալիա, Եւրոպ, Թուրքիա, Ռումանիա, Սերպիա, Պուլկարիա, Գարատաղ և Ցունաստան։

Եւրոպա թէեւ երկրագնիս 5 չափաբաժ փոքրագոյնը, սակայն համեմատաբար աւելի բազմամարդ և մանաւանդ ամենէն քաղաքակրթեալն է։ Ուսում, կրթութիւն, արուեստ, ճարտարութիւն և վաճառականութիւն չատ զարգացած են, այս պատճառաւ՝ Եւրոպա աշխարհիս միւս մասանց վրայ նիւթական և բարոյական մեծ ազդեցութիւն ունի։

Եւրոպիոյ կառավարութեանց ձեւն է ընդհանրապէս Սահմանադրական Միապետութիւն։ Ասոնց մէջ Թուրքիա և Ռուսաստան Բացարձակ Միապետութիւններ, իսկ Ֆռանսա և Զուիցերի՝ Հանրապետութիւններ են։

Եւրոպական Աշխարհ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱ

ԱՆԳԼԻԱ կամ ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Անգլիա կամ Մեծն Բրիտանիա կը տարածուի Եւրոպիոյ հիւսիսային արեւմտեան կողմը և բաղկացած է մեծ ու փոքր բազմաթիւ կղզիներէ։

Գլխաւոր կղզիներն են՝ Անգլիա որ՝ Սկովտիոյ հետ կը կազմէ մէկ կղզի։

Իրլանտա՝ Անգլիոյ արեւմտեան կողմը նոյնպէս մեծ կղզի մ'է։

Երկրորդական կղզիներն են Հեբրիտեանք, Որկադեանք, Շեթլընտ՝ հիւսիսային կողմը։ Մէն և Լինկլսի՝ Իրլանտայի ծովուն մէջ, Ձրսի և Ուայթ՝ Մանչի մէջ։

Սկովտիա և հիւսիսային ու արեւմտեան Անգլիա լեռնային են, իսկ Իրլանտա բոլորովին դաշտային կղզի մ'է։

Մեծին Բրիտանիոյ կլիմայն ընդհանրապէս խոնաւ, մշուշապատ և ձմեռն ցուրտ է։ Հողը թէեւ ի լինէ անբեր, սակայն լաւ մշակուած է և կ'արտադրէ գեռնախնձոր, դարի, բանջարեղէն և քիչ քանակութեամբ ցորեն։ Բուսոյ պակասութեան փոխարէն՝ Անգլիա ունի հանքածխոյ, երկաթի, կապարի և անագի հարուստ հանքեր որոնք կը շահագործուին։

ԲՆԱԿԱՆԱՑՈՒՑ ՆԿԱՐԱԳԻՐ

Մեծն Բրիտանիա ունի 315,000 քիլ. քառ. տարածութիւն և 39,000,000 բնակիչ։

Մեծն Բրիտանիա կը բաժնուի 4 մասերու 1° Անգլիա, 2° Կալլէսի երկիր, 3° Սկոտիա, 4° Իրլանտա։

ԱՆԳԼԻԱ

Գլխաւոր Նաւահանգիստք

ԼՈՆՏՈՆ (4,300,000 բնակիչ), Մայրաքաղաք Մեծին Բրիտանիոյ, չինուած է Թամիզ գետին եզերքը։ Լոնտոն իր բազմամարդութեան, ընդարձակ վաճառականութեամբ, ճարտարութեանց և մեծ հարստութեան կողմանէ՝ աշխարհիս առաջին քաղաքն է։ Շէնքերուն մէջ երեւելի են Ազգային խորհրդարանը (Բարլամէնդ), Ս. Պօղոսի հոյակապ եկեղեցին և Ուէսթմինըսթըրի Աբբայարանը։ Սոնցմէ ի զատ՝ Լոնտոնի մէջ կը գտնուին հարուստ թանգարաններ, հսկայ և փառաւոր կամուրջներ, ուսումնական հաստատութիւններ ևն։ Լոնտոնի գիմացն է Կրինիչ՝ որ ունի աստղաբաշխական դիտարան և ծովային գինուորաց հիւանդանոց։

Լիվըրուլ, Իրլանտայի ծովուն վրայ, Մէրսի գետին բերանը խիստ վաճառաշահ ու ընդարձակ նաւահանգիստ է և աշխարհիս ամէն մասանց հետ ընդարձակ յարաբերութիւն ունի։

Պրիսթըլ, համանուն ծովին խորը, վաճառաշահ նաւահանգիստ է։

Քարտիֆ, ունի առատ հանքածուխ։



Ուէսթմինըսթըրի Աբբայարանը

Փորթսմըթ, Փլիմըթ, Մանչի վրայ պատերազմական նաւահանգիստներ են։

Տովր, համանուն նեղուցին վրայ՝ Անգլիաէ Ֆռանսա անցնելու սովորական նաւահանգիստն է, հոս ծնած է Անգլիացի անուանի բանաստեղծ՝ Լորտ Պայրըն։

Երեւելի են նաև Հըլ, Սաուտեմբրըն, Պրայթըն, Սունտէրլանտ ևայլն։

Ներքին Գլ. քաղաքներն են

Մանչէսթըր (550,000 բն.), Լիվըրուլի մօտ, բամպակեղինայ և աղնիւ կտաւեղինայ մասին երկրագնահռչակ առաջին վաճառաշահ քաղաքն է։ Բնակչաց մէջ կան Հայ վաճառականներ։

Պէրմինկհէմ, ունի երկաթեղինայ և գինուց մեծամեծ գործարաններ։

Եորք, Անգլիոյ ամենէն հին քաղաքներէն մին է։

Լիտս, ունի աղնիւ բրդեղէններ և գորգ։

Օքսֆորս և Քէմպրիճ, անուանի են երկոցունց համալսարաններով։

Շէֆֆիլտ, անուանի են կարասեղէնները։

Երեւելի են նաև Նիուքէսթլ որ ունի հարուստ ածխահանք։ Կալլէսի երկրին գլխ. քաղաքն է Մըրտիր-Թիտուիլ որ երկաթի ու ածխոյ հարուստ հանք ունի։

Գլխ. քաղաք Սկովտիոյ

ԷՏԻՄՊՈՒՐԿ (230,000 բն.), *Մայրաքաղաք Սկովտիոյ, ունի փառաւոր Համալսարան, Հոյակապ շէնքեր և կանոնաւոր փողոցներ։*

Կլասկոյ (600,000 բն.), *Գլասկոյ գետին վրայ, աշխարհիս ամենէն երեւելի նաւահանգստաց մին է. ունի Համալսարան և նաւաշինութեան գործարաններ։*

Երեւելի են նաև Տրնեսի, Ապրտիի։

Գլխ. քաղաք Իրլանտայի

ՏԸՊԼԻՆ (350,000 բն.), *Մայրաքաղաք Իրլանտայի։ Կղզւոյն արեւելեան կողմը, գեղեցիկ և բանուկ նաւահանգիստ է. ունի Համալսարան։*

Պելֆաստ, *ճարտարարուեստ քաղաք է։*

Երեւելի են նաև Լոնտոնտերի, Քորք, Լիմերիկ, Ուաթըրֆըրդ։

Կալուածք

Մեծն Բրիտանիա ունի ընդարձակ և հարուստ կալուածներ։

Ճիպրադար քաղաքն ու Մալդա կղզին Եւրոպիոյ մէջ։

Կիպրոս՝ զոր առժամապէս կը կառավարէ, Ատեն քաղաքը՝ Արաբիոյ մէջ, Հնդկաստանի մեծագոյն մասը։ Պիրմանիոյ մէկ մասը, Սեյլան կղզին Մալաքքա և Սինկափոր. — Հոնկ-Քոնք քաղաքը Ասիոյ մէջ։

Ափրիկէի մէջ ունի Սիէռրա-Լէօնի, Բարեյուսոյ հրվիրդ, Ոսկեղինեի, Համբարձման, Մորիս և Սեշելեան կղզիներէն ի զատ՝ Մոզամպիքի մէկ մասը։

Ամերիկայի մէջ ունի Նոր Բրիտանիա, Եոմաթանի մէկ մասը Լոբայեան և Քոր Անդիեան արշիպելագոններու մեծագոյն մասը, Եամայիքա և Կույանայի մէկ մասը։

Ովկէանիոյ մէջ ունի Աւստրալիա մեծ կղզին, Վան-Տիմէնի, Նոր-Զելանտա և այլ բազում մանր կղզիներ։

Ընդհանուր տեղեկութիւն

Մեծն Բրիտանիա Եւրոպիոյ ամէնէն քաղաքակրթեալ և հարուստ երկիրներէն մին է։ Երեւելի են իւր կառավարիչները, բրդե-

ղէնները, երկաթէ, պողպատէ ու պղնձէ գործուածքները, մեքենաները, կարօտները Լայըն որոնք աշխարհիս ամէն կողմը մեծ յարգ ունին և այս պատճառաւ վաճառականութիւնը շատ ծաղկած է, իսկ ծովային զօրութեան մէջ Անգլիա մէկ հատիկ է։

Անգլիացիք և Սկովտիացիք Բողոքական, իսկ Իրլանտացիք Կաթոլիկ են։

ՏԱՆԸՄԱՐԿ

ՌՆԱՏԱՆ ՆԱՀԱՊԱՏԻՐ

Տանըմարկ կամ Դանիա կը գտնուի Պալթիկ և Հիւս. ծովերուն մէջև և բաղկացած է թերակղզիէ մը որ է Եուրոպացւոց և արշիպելագոսէ մը որոյ գլխ. կղզիներն են՝ Զելանտ, Ֆիւնիա, Լաղանտ, Լանկելանտ, և Ֆալստեր։

Եուտլանտ թերակղզին ընդհանրապէս տափարակ, ճախճային ու խոնաւ է, իսկ կղզիներն աւելի բարեբեր ու ծաղկեալ են։ Երկրին կլիման խոնաւ, ցուրտ և փոփոխական է։ Տանըմարքայի մէջ կարեւոր ոչ լեռ կայ և ոչ գետ։

Գլխ. բոյսերն են ցորեն, կանեփ, գետնախնձոր և ծխախոտ։ Տանըմարքա գրեթէ հանք չունի։

ԴԱՂՏՐԱԿԱՆ ՆԱՀԱՊԱՏԻՐ

Տանըմարքայի թագաւորութիւնը կը պարունակէ Եուրոպացւոց թերակղզին և Դանեաց կամ Դանիական արշիպելագոսը։

Տարածութիւնն է 38,000 քիլ. քառ. և բնակիչ 2,000,000։

Գլխաւոր քաղաքներ

ՔՈՓԷՆՀԱԿ (270000 բն.) *Մայրաքաղաք Տանըմարքայի, Զելանտ կղզւոյն մէջ. գեղեցիկ քաղաք և բանուկ նաւահանգիստ է։*

Հէլսինկոր՝ *նոյնպէս Զելանտի մէջ՝ ամուր և վաճառաշահ քաղաք է։*

Օտեցնէ, Ֆիօնիա կղզւոյն մէջ՝ ունի չուխայի երեւելի գործարանները։



Նէյգէր

Ալպօրկ, Վիպօրկ, Արհիւս՝ Նուէթլանտ թերակղզւոյն կարեւոր քաղաքներն են։ — Տանըմարքայի կը վերաբերի Իսլանտա մեծ և հրաբղխային կղզին որոյ գլխաւոր բնակավայրն է Րայֆեավիֆ։ Իսլանտայի մէջ կը գտնուին բազմաթիւ մարած հրաբուղխներ ու եռացող ջրոյ աղբիւրներ Կեյզէր անուն։ Տանըմարքա ունի նաև Կրօէնլանտա Ամերիկայի հիւս. կողմը, և Ս. Թաչ կղզին Փոքըր Անթիլեանոց մէջ։

Ընդհանուր տեղեկութիւն

Տանըմարքացիք պարկեշտ և աշխատասէր մարդիկ են։ Գլխաւորապէս կ'զբաղին երկրագործութեամբ, արհեստներով և Րինկա ձկան որսորդութեամբ։ Ճարտարութիւն և ձեռագործ բաւական յառաջ գացած են, նոյնպէս՝ հասարակաց կրթութիւն, վաճառականութիւն շատ ծաղկած են։ Տանըմարքացիք քաջ նաւորդներ են։

Կրօնքն է Բողոքականութիւն, կառավարութեան ձեւն է Սահմանադրական միապետութիւն։

ՍՓԱՆՏԻՆԱՎԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՇՈՒԷՏ — ՆՈՐՎԷԿԻԱ.

ՇՒԱՑՔԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Եւրոպիոյ հիւսիսային կողմը մեծ ցամաքակղզի մ'է Սկանտինաւիա որոյ սահմաններն են՝ հիւսիսէն՝ Հիւսիսային Սառուցեալ ովկիանոս, արեւելքէն Ռուսիա և Պալթիկ ծով, հարաւէն՝ Սքակէրարի նեղուց և Պալթիկ ծով, արեւմուտքէն Ատլանտեան ովկիանոս և Հիւսիսային ծով։

Սկանտինաւեան ցամաքակղզին կը պարունակէ երկու երկիրներ՝ Շուէտ՝ արեւելեան կողմը և Նորվէկիա արեւմտեան կողմը։ Շուէտ դաշտային, իսկ Նորվէկիա լեռնային է։ Հիւսիսէն՝ ի հարաւ կ'երկարին Փեօլէն կամ Սկանտինաւեան լերինք։

Կզզիք. — Նորվէկիոյ հիւսիսային արեւմտեան կողմը կը գըտնուի ԼոֆՕօտէնի արշիպելագոն որոյ մօտէն կ'անցնի Մաելսթրէմի յորձանքը, իսկ Պալթիկ ծովու մէջ ունի Կոթլանտ և Էօլանտ կղզիները։

Սկանտինաւիոյ մէջ, մանաւանդ հիւսիսային կողմերը ձմեռը սաստիկ ցուրտ ու երկարատեւ է, իսկ հարաւակողմը աւելի բարեխառն։

Հողագործութիւնը միայն հարաւային մասերուն մէջ ծաղկած է և յառաջ կ'ուզայ ցորեն, գարի, հաճար ղեռնախնձոր և կանեփ։

Նորվէկիա ունի մեծամեծ անտառներ որք չինութեան ընտիր փայտ կը մատակարարեն։

Անուանի են այս երկրին պղնձի ու երկաթի հարուստ հանքերը։

ԳՈՂԱՏԱՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Սկանտինաւիա ունի 775,000 քիլ. քառ. տարածութիւն եւ 6,500,000 բնակիչ։ 4,600,000ը Շուէտի և մնացեալը Նորվէկիոյ մէջ։

ՇՈՒԷՏ

ՍԹՈՔՀՈԼՄ (230,000 բնակիչ), Մայրաքաղաքն է Մէլար լիճը ծովուն միացնող նեղուցին վրայ ծաղկեալ քաղաք է, ունի բնական գուարճալի դիրք և հոյակապ շէնքեր.

Կոթէնպուրկ՝ Քաթէկաթի նեղուցին վրայ բանուկ նաւահանգիստ է.

Ուփսալա՝ Մէլար լճին հիւսիսային կողմը երեւելի քաղաք է, ունի դիտարան և անուանի համալսարան, նշանաւոր են նաեւ Մալմօէ, Քարլսխրօնա, Քալմար են։

ՆՈՐՎԷԿԻԱ.

ՔՐԻՍՏԻԱՆԻԱ (130000 բն.), Մայրաքաղաք Նորվէկիոյ՝ համանուն ծովին մէջ, երեւելի է իւր համալսարանով և ընդարձակ վաճառականութեամբ։

Պէրժէն՝ արեւմտեան կողմը վաճառաշահ նաւահանգիստ է, Տրոնհիայմ ունի անուանի ձեռագործներ։

Ընդհանուր Տեղեկութիւն

Շուէտ և Նորվէկիա թէեւ միացեալ թագաւորութիւն մ'է, սակայն իւրաքանչիւրն իւր առանձին կառավարութիւնն ու օրէնքներն ունի։

Նշանաւոր են այս երկրի բնակիչներն իրենց մաքուր բարոյականով, աշխատասիրութեամբ և բարեկրթութեամբ։ Արհեստ և վաճառականութիւն հետզհետէ ծաղկելու վրայ են։ Կրթութիւն և ուսում շատ յառաջ գացած են, այնպէս որ գիւղացիներն անդամ կարդալ ու գրել գիտեն։ Երկրին գլխ. հարստութիւններն են՝ շինութեան աղնիւ փայտ, պղնձի ու երկաթի հանքեր, Մօրի ձկան իւղ և հիւսիսային եղնիկ կամ եղջերու զոր տեղացիք կը գործածեն իրենց բալխիները քաշելու։

Շուէտ-Նորվէկիացիք կրօնիւ Բողոքական են։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌՈՒՍԻԱ.

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԴԻՐ

ՌՈՒՍԻԱ Եւրոպիոյ ամենէն ընդարձակ տէրութիւնն է որ կը դրաւէ Եւրոպիոյ հիւսիսային և արեւելեան մասերն։ Սահմաններն են հիւսիսէն՝ Սառ. Ովկիանոս, արեւելքէն՝ Քարայի ծով, Ուրալ լերինք և Ուրալ գետ. — Հարաւէն՝ Կասպից ծով, Կովկաս լերինք, Ազով և Սեւ ծով. արեւմուտքէն՝ Շուէտ, Պալթիկ ծով, Գերմանիա, Աւստրիա և Ռումանիա։

Ռուսիա մեծատարած եւ տափարակ երկիր մ'է։ Հիւսիսային մասանց մէջ կ'երեւին ընդարձակ և սառնապատ ճահիճներ, իսկ կովկասու հիւսիսային դաշտաւայ և Լէհաստանի մէջ կան աղօտ աւազի դաշտեր։ Ռուսիոյ ամենէն արգասաւոր և մշակութեան յարմար մասերն են միջին և հարաւային գաւառներն որոց մէջ հողագործութիւնը շատ ծաղկած է։

Ռուսիոյ մէջ ձմեռնային ճամբորդութիւն

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Ռուսիոյ կլիմայն հիւսիսային կողմերն սաստիկ ցուրտ և շատ տեղ սառնապատ են, իսկ միջին մասը բարեխառն և հարաւային կողմերն գուարճալի և ծովեզերքն ալ ամառները շատ տաք կ'ընեն։

Գլխաւոր բոյսերն են մեծ քանակութեամբ ցորեն, կանեփ, վուշ, ճակնդեղ, գետնախնձոր, ծխախոտ եւլն: Ռուսիա ունի ընտիր տեսակէ կովեր և հիւսիսային կողմերն ալ կը գտնուին մուշտակաւոր կենդանիներ:

Երկրին մէջ կան ոսկւոյ, բլաթինի, պղնձի ու երկաթի հարուստ հանքեր որոնք ընդհանրապէս կը գտնուին Ուրալ լերանց մէջ:

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Եւրոպական Ռուսիա ունի 5,330,000 քիլ. քառ. տարածութիւն և 95,000,000 բնակիչ, Հանդերձ Կովկասու 105,000,000 բնակչօք:

Ներ պարզունակէ հետեւեալ մեծ բաժանումները. Մեծ Դքսութիւն Ֆինլանտիոյ, Կովկասեան երեք նահանգք (Բուսպան, Թէրբէք, Տաղիստան) և Պալթիկեան նահանգք որոնք՝ բացի Ֆինլանտիայէ՝ բաժնուած են 65 կուսակալութեանց:

Ս. ՓԷԹԵՐԶՊՈՒՐԿ (950,000 բն.) Կայսրութեան Մայրաքաղաքն Նեվա գետին բերանը՝ Ֆինլանտիոյ ծոցին մէջ: Ունի հոյակապ պալատներ, թատրոններ, եկեղեցիներ և ընդարձակ հրապարակներ: Հոս կայ Հայկական գեղեցիկ եկեղեցի մը՝ որ չինուած է արդեամբ Լազարեան մեծահամբաւ գերդաստանին: Այս քաղաքը հիմնեց Ռուսաց Մեծն Պետրոս կայսրը:

Գլխաւոր Նաւահանգիստք

Ռուսիա կը տեսնէ հինգ ծովեր: Սպիտակ ծովու վրայ կը գտնուի Արխանգել, ունի մորթի և մուշտակի մեծ վաճառականութիւն:

Պալթիկի վրայ են,

Քրոնշտատ, փոքր կղզեայ մը վրայ, հոս է տէրութեան առաջին նաւարանը:

Րիգա, համանուն ծոցին վրայ, մեծ ու վաճառաշահ նաւահանգիստ է:

Սեւ ծովու վրայ են,

Օտէսա, կայսրութեան ամենէն վաճառաշահ նաւահանգիստն է և ունի ցորենի մեծ առեւտուր:

Իմայիլ, Դանուբայ բերնին մօտ: Երեւելի են նաև Սֆիեռնան, Քերսոն, Նիխոլայեվ. իսկ Սեվաստոպոլ Թրիմու արեւմտեան կողմը՝ պատերազմական նաւահանգիստ է:



Ռուսական Ովկիանոսի մէջ Պալէճայի տեսարդութիւն

Ազովու վրայ կը գտնուին Կերչ, Թականրոգ կամ Թագանրոգ, ցորենի և ալիւրի մեծ առեւտուր ունի. Ազով, Տոնի բերանը. Աստրախան կամ Աժտէրխան, Կասպից ծովուն վրայ, Վոլկայի բերնին մօտ նշանաւոր նաւահանգիստ է: Ունի խաւեարի, մուշտակի, ցորենի և մորթի մեծ վաճառականութիւն:

Ներքին Գլ. քաղաքներն են

Հիւսիսային Ռուսաստանի մէջ,

Հելսինկֆոր, Նովկորոդ, Նիժնի-Նովկորոդ որոնք կարեւոր քաղաքներ են:

Միջին Ռուսիոյ Գլ. քաղաքներն են

Մոսկուա (600,000 բն.) բազմամարդ, շէն, վաճառաշահ և ուսումնական քաղաք է: Ս. Փեթերզպուրկէ առաջ այս էր Ռուսիոյ մայրաքաղաքը: Ունի հռչակաւոր պալատ մը Քրեմլին անուն: Մոսկուայի մէջ ծնած է Մեծն Պետրոս Ռուսաց կայսրը, հոս է նաեւ Հայոց Լազարեան Ճեմարանը:

Վարշաւիա (450000 բն.), Մայրաքաղաք Լեհաստանի, վի-

Թուլա գեաին վրայ, Ռուսիոյ ամենէն ծաղկեալ, վաճառաշահ և ճարտարարուեստ քաղաքներէն մին է։

Քիէվ, Տնիեբրի վրայ մեծ քաղաք է. Մուսքուայէն առաջ այս էր Ռուսաց մայրաքաղաքը։

Քազան, Վոլկայի վրայ, ունի համալսարան և ասպղաբաշխական դիտարան։

Օրէնպուրկ, Ասիոյ սահմանին մօտ՝ վաճառաշահ քաղաք է։

Քիջեվ. Պեսարապիոյ գաւառին մայրաքաղաքն է։

Երեւելի են նաեւ Բօլդաւա, Խարիով, Նոր Նախիջեւան, Վիլնա, Քուրսք, Վլատիմիր, Ջերնիհով, Պերտիչեվ, Քիշեվ կամ Թեոդոսիա ուր ծնած է Ա. յվազովսքի անուանի Հայ ծովանկարիչը։

Խրիմու գլխաւոր քաղաքներն են Գաղչէ-Սէրայ և Սիմֆէրօփոլ

Ռուսիոյ կը վերաբերին Սփիցպէրկ, Նոր Զեմլա, Քալկոյեվ, Սառ. ովկիանոսին մէջ։ Ալաւնս, Տակօ, Էօզել Պալթիկի մէջ։

Կալուածք

Ռուսիա Ասիոյ մէջ ունի Կովկաս, Սիպերիա, Թամաչիսանի մեծագոյն մասը և փոքր մաս մ'ալ Աֆղանիստանէն։

Ընդհանուր տեղեկութիւն

Ռուսիա մեծատարած կայսրութիւն մ'է ուր՝ բաց ի Ռուսերէ իւր մէջ կը պարունակէ նաեւ այլ և այլ ժողովուրդներ. ինչպէս՝ Ֆինլանտացի, Գերմանացի, Լէհ, Թաթար, Հրէայ, Հայ, Զերքէս, Լէզկի, Ռումէն եւլն։ Ռուսք գործունեայ և կրօնասէր մարդիկ են։

Երկրագործութիւնը միջին և հարաւային գաւառայ մէջ շատ յառաջ գացած է։ Երկրին գլխաւոր հարստութիւններն են ալմաստ, կանեփ, վուշ, մոմ, մուշտակ, խաւիար, պատան, առագաստի կտաւ եւլն։ Ուսում և ճարտարութիւն նոր սկսած են ծաղկիլ։ Ռուսք կը պատկանին Սլաւ ցեղին։ Իրենց կայսրը կը կոչուի Ձար։

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՒՐՈՊԱ

ՖՌԱՆՍԱ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ֆրանսա կը գրաւէ Միջին Եւրոպիոյ արեւմտեան մասը։ Սահմաններն են Հիւսիսէն Մանչի ծով և Քալէի նեղուց, արեւելքէն՝ Պելճիա, Գերմանիա, Զուիցերի և Իտալիա, հարաւէն Միջերկրական ծով և Պիրենեան լերինք, արեւմուտքէն Ատլանտեան ովկիանոս։

Ֆրանսայի հիւսիսային և արեւմտեան կողմերն ընդհանրապէս դաշտային, իսկ արեւելեան և հարաւային մասերը լեռնային են։

Ֆրանսայի կլիման՝ հիւսիսային և միջին մասերը բարեխառն և առողջ, իսկ հարաւային կողմերը ընդհանրապէս ամառները տաք կ'ընեն։ Երկրին հողը բարեբեր և լաւ մշակուած է։ Կ'արտադրէ որթեատունկ, ձիթենի, արմաւիք, ծխախոտ, գարի, վարսակ, կանեփ, գեռանախնձոր եւլն։ Շատ համբաւաւոր են Ֆրանսայի գինիները։ Ֆրանսա ունի ընդարձակ ու պարարտ արօտներ որոց մէջ կ'արածին ոչխար, այծ, ընտիր տեսակէ կովեր, խոզ, ձի եւլն։

Երկրին մէջ կը գտնուին ղինկի, հանքածխոյ, երկաթի, չինուածեան քարերու հանքեր որոնք կը շահագործուին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ֆրանսա ունի 529,000 քիլ. քառ. տարածութիւն և 39,000,000 բնակիչ։

Երկիրը բաժնուած է 86 գաւառներու որոնք կը կոչուին Տեփարթըման։

ՓԱՐԻԶ (2,500,000 բն.), Մայրաքաղաք Ֆրանսայի, Սէն գետին վրայ չինուած՝ Եւրոպիոյ ամենէն գեղեցիկ, հարուստ և ծաղկեալ քաղաքաց մին է։ Ունի երեւելի համալսարաններ, մասնաճաղարաններ, հնութեանց թանգարաններ, գեղեցիկ ձեռագործներ, զարդեղէններ, ուսմանց և գիտութեանց ամեն ճիւղերու համար երեւելի վարժարաններ։ Շէնքերուն մէջ անուանի են Նոդռ-Տամի Մայր եկե-

ղեցին, Նոր Օբէռա Թատրոնը, Էնվալիա անուն՝ ծեր գինուորաց անկեղանոցը, Բանթէոնը, Մատըլէնի եկեղեցին, Ատեղան ցաղթական կամարը, Լուվրի պալատը եւլն: Ասոնցմէ ի զատ՝ Փարիզու մէջ կան Պուլվար անուն գեղեցիկ ճեմելիները, հասարակաց սիրուն պարտէզները, Թատրոնները, ընդարձակ և մաքուր փողոցները եւլն:

Գլ. Նաւահանգիստք Մանշի վրայ

Քալէ, Անգլիա անցնելու սովորական եւ բանուկ նաւահանգիստն է:

Ռուան, Սէն գետին վրայ վաճառաշահ նաւահանգիստ է: Հոս ծնաւ Բոռնեյլ անուանի բանաստեղծը:

Լը-Հավր, Սէնի բերանը խիստ բանուկ և վաճառաշահ նաւահանգիստ է: Հայրենիք՝ Պեռնարտէն տը-Սէն Բիէռ Ֆռանսայի մատենագրին:

Շէրպուռ, պատերազմական նաւահանգիստ է: Ս. Մալօ, հայրենիք Շատօպրիանի:

Ատլանտեանի վրայ կը գտնուին

Պռէսթ, գինուորական նաւահանգիստ: Նանդ, Լուառ գետին վրայ, ունի նաւարան:

Պօռտօ, կարեւոր գետին վրայ խիստ բանուկ և վաճառաշահ նաւահանգիստ, համբաւաւոր է գինին: Անուանի են նաեւ Լա-Ռօշել և Սէն Նազեռ:

Միջերկրականի վրայ կը գտնուին

Մառսէյլ կամ Մարսիլիա, Ֆռանսայի առաջին և աշխարհիս նշանաւորագոյն նաւահանգստաց մին է: Հոս ծնած է Թիէր մեծ քաղաքագէտը:

Թուլօն, ունի երեւելի նաւարան: Նիս, ունի մեղմ և գուարճալի կլիմայ: Հոս ծնած է կառիպալդի Իտալացի զօրապետը:

Ներքին Գլ. քաղաքներ

Լիլ. ամուր և ճարտարարուեստ քաղաք է: Ռեյնս, հին քաղաք է, անուանի է գինին:

Ամիէն, ունի հոյակապ մայր եկեղեցի:

Օռլէան, հին և վաճառաշահ քաղաք՝ զոր Անգլիացւոց պաշարմանէն ազատեց Ժան Տ'Արք:

Լիօն, Ֆռանսայի ամենէն ճարտարարուեստ քաղաքներէն մին և մեռաքսեղինաց կողմանէ աշխարհիս ամենէն երեւելի կեդրոնն է:

Պրզանսօն, անուանի կեդրոն ժամագործութեան: Հոս ծնած է Վիքթոր Հիւկօ:

Այգեկուրկ ի Ֆռանսա

Տիժօն, ունի քիմիական նիւթոց վաճառականութիւն: Հոս ծնած է Մեծն Պօսիւէ:

Քլէռմօն-Ֆէռան. Հայրենիք Բասքալ բնագէտին:

Մոնփէլիէ, ունի երկրագործական վարժարան: — Նիմ, հին քաղաք է. հոս ծնաւ Կիզօ մեծ պատմաբանը. — Նիմ, Լիմօժ, Մոնբռսան վաճառաշահ քաղաքներ են:

Երեւելի են նաեւ Թուլուզ, Սէնդ-Էթիէն, Անկուլեմ, Ամիենօն, Կրընօպլը, եւայլն:

Կալուածք

Ֆռանսա Եւրոպիոյ մէջ ունի Բոռսիխա կզին որու գլխաւոր քա-

ղաքն է Այաչչիօ։ Հոս ծնած է Մեծն Նաբոլէօն՝ Ֆռանսայի կայսրն։

Հեռաւոր կալուածներն են Բօդիշէրի, Քարիխալ, Մահէ և Զանձերևակօր քաղաքները Հնդկաստանի մէջ։ Թոնիին և Հար. Փոյինչին Հնդկա-Չինու մէջ։

Ալճերի, Թունուզ, Բոնկոյի և Սենեկալի մէկ մէկ մասերը, Պուսպօն և շրջակայ մի քանի փոքր կղզիք Ափրիկէի մէջ։

Կույանահի մէկ մասէն զատ, Մարթինիք, Կուատալուպի և մի քանի փոքր կղզիներ Ամերիկայի մէջ։

Մարիզեան, Թահիթի և Նոր-Քալէտոնիա՝ Ովկէանիոյ մէջ։

Ընդհանուր տեղեկութիւն

Ֆռանսացիք աշխարհիս մեծ ազգերէ մին են։ Արուեստ, գիտութիւն, ձեռագործ և ճարտարութիւն շատ կատարելագործած են։ Երեւելի են այս երկրին մեծաքսեղէնները, զարդեղէնները, նորաձեւութեան վերաբերեալ նիւթերը, Պօռտօլի և Շամբայնի գինիները, սաուեղէնը եւլն. եւլն։

Ֆռանսայիք ուշիմ, համակրելի և աշխատասէր մարդիկ են։ Կը պատկանին Լատին ցեղին։ Ֆռանսական լեզուն շատ ներգաշնակ և ընդհանրացեալ լեզու մ'է։ Տիրող կրօնն է Կաթոլիկութիւն։ Կառավարութեան ձեւն է Հանրապետութիւն։

ՊԵԼՃԻՔԱ

ԸՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պելճիքա փոքր թագաւորութիւն մ'է Ֆռանսայի հիւս. արեւելեան կողմը։ Սահմաններն են հիւսիսէն Հոլանտա և Հիւս. ծով, արեւելքէն Գերմանիա, հարաւէն Ֆռանսա և արեւմուտքէն Հիւսիսային ծով։

Պելճիքայի բայ զատ հարաւային արեւելեան կողմերէն յորս կ'երեւին Արտեն լերինք՝ ծածկեալ մասերն ընդհանրապէս դաշտային են։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Պելճիոյ կլիման ընդհանրապէս բարեխառն է, ամառները զուարճալի իսկ ձմեռները ցուրտ են։

Հողը բարերեր և խիստ լաւ մշակուած ըլլալով կ'արտադրէ ցորեն, ծխախոտ, դարի, կանեփ և այլ բոյսեր։

Պելճիքա ունի հանքածխոյ, զինկի ու երկաթի հարուստ հանքեր որք կը շահագործուին։

ԲԱԺԱՆՈՒԹԻՒՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պելճիքա ունի 30,000 քիլ. քառ. տարածութիւն և 6,000,000 բնակիչ։

Պելճիքա կը բաժնուի 9 գաւառներու։

ՊՐԻՔՍԷԼ (400,000 բն.) Մայրաքաղաք Պելճիքայի, Էսքօ գետին մէկ ճիւղին վրայ չինուած նշանաւոր քաղաք է։ Ունի թագաւորական հոյակապ պալատ, գեղեցիկ Մայր եկեղեցի, գիտութեանց և ճարտարութեանց երեւելի կեդրոններ։

Գլխաւոր քաղաքներն են

Անվէրս, Էսքօ գետին վրայ բանուկ նաւահանգիստ է և ունի գեղեցիկ ձեռագործներ և մեծ վաճառականութիւն։ Կանտ՝ Պելճիոյ ամենէ մեծ քաղաքն է։ Լիէժ՝ ունի հանքածուխ և շատ մը գործարաններ։ Երեւելի են նաեւ Պրուժ, Վերվիէ, Նամիւր, Մօնս եւայլն։

Ընդհանուր տեղեկութիւն

Պելճիքա թէեւ փոքր, սակայն Եւրոպիոյ ամենէ յառաջադէմ և հարուստ երկիրներէն մին է։ Ունի առատ հանքածուխ և հարուստ բուսաբերութիւն։ Ձեռագործ և ճարտարութիւն եւս շատ ծաղկեալ են։ Անուանի են կտաւեղէնները, ասղնեգործերը (ֆաբրիկ), մեռաքսեղէնները, գորգերը և չուխաները։ Երկրին մէջ երկաթուղիք ու ջրանցք խիստ շատ են որով ներքին հաղորդակցութիւնն ալ մեծապէս դիւրացած է։

Պելճիքացիք կը խօսին Ֆռանսերէն և Ֆլամաներէն որ Գերմանական և Ֆռանսական լեզուներու խառնուրդ մ'է։ Երկրին կրօնն է Կաթոլիկութիւն։ Կառավարութեան ձեւն է Սահմանադրական Միապետութիւն։

ՀՈԼԱՆԴԱ

ԿԱՄ

ՍՏՈՐԻՆ ՆԱՀԱՆԳԻՔ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՈԼԱՆԴԱ. Հիւսիսային ծովուն եզերքը փոքր ու տափարակ երկիր մ'է: Սահմաններէն են հիւսիսէն և արեւմուտքէն Հիւսիսային ծով, արեւելքէն Գերմանիա, հարաւէն Պելճիքա:

Այս երկրին մանաւանդ հիւսիսային մասերը շատ սեղ ծովէն ցած ըլլալուն պատճառաւ՝ սեղայիք բարձր և ամուր թումբեր կանգնած են՝ երկիրը ողողմանէ պաշտպանելու համար:

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Հոլանտայի կլիմային ընդհանրապէս խոնաւ և փոփոխական է: Հողը՝ թէեւ բնականէն անբեր ու ճախճախուտ՝ սակայն բնակչաց յարատեւ աշխատութեան չնորհիւ՝ հետզհետէ այդ ճախիններըը ցամքելով՝ մշակելի երկիրներ դարձած են: Գլխաւոր բոյսերն են ծխախոտ, արմտիք, կանեփ, գետնախնձոր և դարի:

Հոլանտա ունի ընդարձակ և պարարտ արօտներ որոց մէջ կը կերակրին ընտիր տեսակէ կովեր և ոչխարներ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հոլանտա ունի 33,000 քիլ. քառ. տարածութիւն և 4,500,000 բնակիչ:

Երկիրը բաժնուած է 11 գաւառներու:

ԼԱ-ՀԷ կամ ՀԱԱԿ (150,000 բն.) Մայրաքաղաք Հոլանտայի, ծովուն մօտ նոր ու գեղեցիկ քաղաք է:

Ամսդերտամ (300,000 բն.) նախկին Մայրաքաղաք Հոլանտայի, Զուիտերզէի ծոցին վրայ՝ աշխարհիս ամենէն անուանի և վաճառականական նաւահանգիստներէն մին է: Ունի փառաւոր եկեղեցիներ, արքունի պալատներ և ուսումնական տեղիք:

Երեւելի են նաեւ Ռոդերտամ, Ուրեխտ, Լէյտա, Հարլեմ և Մ'ասպրիխ:

ԿԱԼՈՒԱԾՔ

Հոլանտա Եւրոպայէ դուրս ունի հեռաւոր և հարուստ կալուածներ: Ճաւա կղզին և Սումատրայի մէկ մասը, Պօռնէօ և Մոլուքեան կղզեայ մէկ մասը՝ Ովկէանիոյ մէջ: Կուրանայի մէկ մասը և Փոխր Ալեքիեանց մի քանին՝ Ամերիկայի մէջ:

Հոլանտայի կը պատկանի նաեւ Լիխտանսթուրկի Դքսութիւնը որ չէզոք երկիր մ' Գերմանիոյ և Պելճիքայի միջեւ: Գլխաւոր քաղաքն է Լիխտանսթուրկ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Հոլանտացիք աշխատասէր և գործունեայ մարդիկ են: Երկրագործութիւն, արհեստ և վաճառականութիւն շատ ծաղկեցուցած են: Երկրին գլխաւոր հարստութիւններն են կաշի, ձկան իւղ, պանիր, աղնիւ կտաւ, բրդեղէն և թաւիշ: Հոլանտացիք երեւելի են նաև իբրև քաջ նաւաստիներ: Կը խօսին Գերմաներէնին մէկ տեսակը: Կրօնքնին է Բողոքականութիւն: Կառավարութեան ձեւն է Սահմանադրական Միապետութիւն:

Ժամանակաւ Ամստերտամի մէջ Հայոց եկեղեցի և տպարան կար:

ՉՈՒԻՑԵՐԻԱ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՉՈՒԻՑԵՐԻԱ ԿԱՄ ՀԵԼՎԵՏԻԱ. փոքր ու լեռնային երկիր մ'է՝ Գերմանիոյ, Իտալիոյ և Աւստրիոյ միջեւ:

Զուիցերի շատ երեւելի է իր բնական գեղեցիկ տեսարաններուն, բարձրաբերձ ու ձիւնապատ լեռներուն, զուարճալի լիճերուն և առողջ ու բարեխառն կլիմային կողմանէ:

Լերինք. — Այս երկրին մէջ կը տարածուին Ալպեանց բազուկներն որոց գլխաւոր գագաթներն են Ս. Պեռնար, Մօն Ռօզա, Սեն Կոթառ և Լն.:

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Զուիցերիոյ լեռնային դաշտաւոյց կլիման ընդհանրապէս ցուրտ է. իսկ հովիտներուն մէջ աւելի բարեխառն և զուարճալի կլիմայ մը կը տիրէ: Երկրագործութիւնը շատ ծաղկած է այս երկրին մէջ և կ'արտադրէ ամեն տեսակ արմտիք ու բանջարեղէն: Ունի բազմաթիւ կաթնատու կենդանիներ որոց կաթէն տեղացիք կը շինեն ընտիր կարագ և պանիրներ:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Զուիցերի ունի 41,000 քիլ. քառ. տարածութիւն և 2,900,000 բնակիչ:

Երկիրը բաժնուած է Քանտոն կոչուած 22 դաշնակից նահանգներու:

ՊԷՌՆ (45,000 բն.) Մայրաքաղաք Զուիցերիոյ, Լէն ու Ծաղկեալ քաղաք է, ունի Համալսարան, փառաւոր Մայր Եկեղեցի և զուարճալի զբօսավայրեր:

ՁԻՆԷՎՐԱ՝ Համանուն լճին վրայ սիրուն և Զուիցերիոյ մեծագոյն քաղաքն է: Ունի երեւելի վարժարաններ և ընդարձակ վաճառականութիւն:

ՅՈՒՐԻԽ՝ Համանուն լճին վրայ՝ Զուիցերիոյ ամենէն ճարտարարուեստ քաղաքն է:

ԼՕԶԱՆ՝ Ձինեվրայի լճին մօտ՝ ունի գեղեցիկ զբօսավայրեր և կանոնաւոր վարժարաններ:

Երեւելի են նաեւ **ՆԷՕՇԱԹԷԼ**, **ԼԱՍԷՌՆԱ**, **ՍԷՆ-ԿԱԼ**, **ՇԱՖ-ՏՈՒՓ**, **ՖՈՒՐԿՈՒՐԿ** և **ՍԻՕՆ**:

Ընդհանուր տեղեկութիւն

Զուիցերացիք առանձին ազգութիւն մը չեն, այլ կը բաղկանան Ֆռանսացիներէ, Գերմաններէ և Իտալացիներէ որոնք իրարու հետ շատ սիրով կ'ապրին: Նշանաւոր են Զուիցերիացիք իբրեւ աշխատասէր, գործունեայ և ազատասէր մարդիկ: Այս պատճառաւ իրենց մէջ շատ յառաջ գացած է դաստիարակութիւն, արուեստ, ճարտարութիւն և առեւտուր: Երեւելի են այս երկրին պանիրն, ժամացոյցը, ոսկիէ ու գոհարեղէն զարդերը:

Երկրին մէջ կը խօսուի Գերմաներէն, Ֆռանսերէն և Իտալերէն: Կրօնքը Բողոքականութիւն և Կաթոլիկութիւն խառն է: Իւրաքանչիւր գաւառ իւր առանձին կառավարութիւնն ունի:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԳԵՐՄԱՆԻԱ. Եւրոպիոյ կեդրոնական մասին մէջ ընդարձակ տէրութիւն մ'է: Սահմաններն են հիւսիսէն՝ Հիւսիսային Ծով, Տանըմարքա և Պալթիկ Ծով. արեւելքէն՝ Ռուսիա և Աւստրիա. հարաւէն՝ Աւստրիա և Զուիցերի. արեւմուտքէն՝ Ֆռանսա, Պելճիքա և Հոլանտա:

Գերմանիոյ հիւսիսային մասն (Բրուսիա) տափարակ ու ճախճախուտ է, միջին մասն աւելի բարձր դիրք ունի, հողը բարեբեր է և անտառներով ծածկուած, իսկ հարաւային և արեւմտեան կողմերն բոլորովին լեռնային են:

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Ընդհանրապէս Հիւս. Գերմանիա խոնաւ, ցուրտ և օդն փոփոխական է. իսկ աւելի զուարճալի և բարեխառն են արեւմտեան և մանաւանդ հար. կողմերը:

Երկիրն լաւ մշակուած է և կ'արտադրէ ցորեն, գետնախնձոր, ճակնդեղ, դարի, վարսակ, ծխախոտ և չինութեան փայտ: Գերմանիա ունի ընտանի ամեն տեսակ կենդանիներ: Հանենոսի շրջակայ դաշտաւոյց մէջ յառաջ կ'ուգայ որթեատունկ:

Հանք. — Գերմանիա հանքի մասին հարուստ է, ունի արծաթ, պղինձ, հանքածուխ, երկաթ, կապար, անդիկ, աղ և սաթ:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Գերմանիա ունի 540,000 քիլ. քառ. տարածութիւն, և 50,000,000 բնակիչ:

Գերմանիա մեծ և փոքր բազմաթիւ դաշնակից տէրութիւններէ կազմուած ընդարձակ կայսրութիւն մ'է և կը պարունակէ 4 Թագաւորութիւն, 6 Մեծ Դքսութիւն, 5 Դքսութիւն, 7 Իշխանութիւն, 3 Ազատ քաղաքներ և 1 կայսերական գաւառ:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԲՐՈՒՍԻՈՅ

Բրուսիա որ է Գերմանական տէրութեանց ամենէն մեծը և կարեւորը՝ կը տարածուի Հիւսիսային և Պալթիկ Ծովերուն հարաւա-

կողմը, Հոլանտայէն սկսեալ մինչեւ ի Ռուսիա: Ունի 355,000 քիլ. քառ. տարածութիւն և 27,500,000 բնակիչ:

Մայրաքաղաքն է ՊԵՌԼԻՆ (1,400,000 բն.), *Սրբէ գետին վրայ՝ Եւրոպիոյ մեծագոյն և ամենէ ծաղկեալ քաղաքներէն մին է: Հոյակապ շէնքեր են կայսերական պալատը, համալսարանները, ցաղթական կամարը, զինարանը եւլն:*

Գլխաւոր նաւահանգիստներն են Պալթիկ ծովու վրայ

Քէօնիկսպէրկ, *ուր ծնած է Քանդ երեւելի փիլիսոփան. Տանցիկ, Շեֆթեն, Շտրալսունտ, Լիւպէկ և Քիլ:*

Էլպայի բերնին մօտ կը գտնուին՝ Ալթօնա և մանաւանդ Համպուրկ որ է աշխարհիս ամենէն վաճառաշահ և բանուկ նաւահանգիստներէն մին:

Ներքին գլխաւոր քաղաքներն են

Պրէսլաւ, *Օաէրի վրայ ճարտարարուեստ քաղաք է:*

Քոլոնիա կամ Քէօլն, *Հռենոսի վրայ՝ Գերմանիոյ ամենէն երեւելի քաղաքաց մին և հայրենիք է Օքէնպախ մեծանուն երաժշտին:*

Ֆրանքֆօրթ, *Մայն գետին վրայ, ունի երեւելի դրամատուներ: Հոս ծնաւ Կէօթէ անուանի բանաստեղծը:*

Հանովր, *ճարտարարուեստ ու վաճառաշահ քաղաք է:*

Անուանի են նաեւ Մակդեպուրկ, Աախէն կամ Էխ-լա-Շապել Բօզէն, Քասէլ, Վոցտամ, Ֆրանքֆօրթ (Օաէրի վրայ), Կոպլենց, Թիւսիթ եւլն:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՍԱՔՍՈՆԻՈՅ

Կը գտնուի Բրաւսիոյ Հարաւային կողմը:

Մայրաքաղաքն է ՏՐԷՋՏԱ *Էլպա գետին վրայ դեղեցիկ ու ծաղկեալ քաղաք է:*

Լայպցիկ, *ունի երեւելի համալսարան և գրքի մեծ վաճառականութիւն:*

Երեւելի են նաեւ Շեմնից և Ֆրայպէրկ:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՊԱՎԵՐԻՈՅ

Կը գտնուի Սաքսոնիոյ Հարաւային արեւմտեան կողմը:

Մայրաքաղաքն է ՄԻՒՆԻԽ *կամ* ՄԻՆԽԷՆ, *Իզար գետին վրայ:*

Ունի երեւելի ճեմարաններ, թանգարան և անուանի համալսարան:

Նիւրէնպէրկ, *ճարտարարուեստ քաղաք է, ունի տղոց սիրուն խաղալիքներ:*

Երեւելի են նաեւ Ալկսպուրկ և Ռարիզպօնա:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՎԻՒՐԹԷՄՊԷՐԿԻ

Կը գտնուի Պավերիոյ արեւմտեան կողմը:

Մայրաքաղաքն է ՇԹՈՒԹԿԱՐՏ (117,000 բն.), *անուանի է այս քաղաքն արուեստից և գիտութեանց կողմանէ:*

Երեւելի են նաև Ուլմ որ՝ Դանուբի վրայ ամուր բերդաքաղաք է:

Լուիզպուրկ *որ է երկրորդ թագաւորանիստ քաղաք: Մարպախ, Հոս ծնած է Շիլլեր բանաստեղծը:*

ՄԵՄ ԴՔՍՈՒԹԻՒՆՔ

1°. Պաէն, *Մայրաքաղաքն է* ՔԱՐԼՍՐՈՒՀԷ. *ունի ուսումնական երեւելի հաստատութիւններ: Անուանի են նաև Հայտելպէրկ՝ նշանաւոր է համալսարանը. Պատըն-Պատըն, ունի հանքային ջուրերու բաղանիքներ:*

2°. Էխսէ-Տարմշդատ, *Մայրաքաղաքն է* ՏԱՐՄՇԴԱՏ, *իսկ ամենէն կարեւորն է Մայանս կամ Մայնց որ Հռենոսի վրայ երեւելի բերդաքաղաք է: Հոս ծնաւ Կուդդենպէրկ:*

3°. Սամս-Վայմար, *Մայրաքաղաքն է* ՎԱՅՄԱՐ:

4°. Մեկլէմպուրկ, » ՄԵՔԼԷՄՊՈՒՐԿ:

5°. Օլտէնպուրկ, » ՕԼՏԷՆՊՈՒՐԿ:

6°. Մեկլէմպուրկ-Շուէրին, » ՇՈՒԷՐԻՆ:

Չորս Դքսութիւններն են

1°. Պրունսվիք, 2°. Սաքս-Քոպուրկ-Կոթա, 3°. Սաքս-Մայնինկրն, 4°. Սաքս Ալտէնպուրկ *որոց Մայրաքաղաքներն իրենց անուամբ կը կոչուին:*

Երեք Ազատ քաղաքներն են

Պրեմա, Համպուրկ և Լիւպէք *որոնք խիստ վաճառաշահ քաղաքներ են:*

Կայսերական գաւառք

1871 ին Գերմանիա Փռանսայէն գրաւեց Ալզաս և Լօրէն գաւառները որոնք կը գտնուին Հռենոսի ձախ ափանց վրայ: Գլխաւոր քաղաքներն են Սթրազպուրկ երեւելի բերդաքաղաք է. ունի անուանի Մայր եկեղեցի. Մէջ՝ նոյնպէս սքանչելի քաղաք է:

Ընդհանուր տեղեկութիւն

Գերմանացիք երեւելի են իբրեւ գործունեայ, ծանրաբարոյ և ուշիմ մարդիկ: Կրթութիւն, արուեստ, ճարտարութիւն, վաճառականութիւն և մանաւանդ զինուորական արուեստը շատ յառաջ գացած են իրենց մէջ: Ամէն տեղ կը տեսնուին նախնական վարժարաններ, թանգարաններ և համալսարաններ: Երկրին մէջ բազմաթիւ երկաթուղւոյ գիծեր կան եւ հետզհետէ ալ կ'ընտրելու վրայ են:

Գերմանացիք վերջի տարիներս Արեւելեան Ափրիկէի և Ովկէանիոյ մէջ մի քանի գաղթականութիւններ ունեցան: Երկրին լեզուն Գերմաներէն է: Կրօնը՝ Հիւս. կողմը Բողոքականութիւն, իսկ Հար. երկրայ մէջ Կաթոլիկութիւն է:

Բրուսիոյ թագաւորը կը կրէ կայսր Գերմանիոյ տիտղոսը:

ԱՒՍՏՐՕ — ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ

ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՒՍՏՐՕ-ՀՈՒՆԳԱՐԻԱ. Կեդրոնական Եւրոպիոյ մէջ Գերմանիոյ արեւելեան հարաւային կողմը ընդարձակ կայսրութիւն մ'է: Սահմաններն են հիւս. Գերմանիա, արեւել. Ռուսիա և Ռումանիա, հարաւէն՝ Ռումանիա, Սերպիա, Թուրքիա և Դարատագ, արեւմուտքէն՝ Ադրիական ծով, Իտալիա, Զուիցերի և Գերմանիա:

Երկրին արեւմտ. և արեւել. հար. կողմերը շատ լեռնոտ են, իսկ Հունգարիա, Կալիցիա և Պոհեմիա դաշտաւներն կը պարունակեն ընդարձակ և բարեբեր հովիտներ:

Աւստրիոյ կլիման ընդհանրապէս բարեխառն և առողջ է, գարնան և աշնան մէջ յորդ անձրեւներ կը տեղան, իսկ Ադրիականի սահմանակից գաւառներն համեմատաբար աւելի տաք կ'ընեն: Երկրին հողը բարեբեր և լաւ մշակուած է. գլխաւոր բոյսերն են՝ ցորեն, գարի, կանեփ, վարսակ, որթատունկ, ծխախոտ, գետնախնձոր, ձիթենի և աղնիւ մրգեղէններ:

Կենդանիք և Հանք. — Աւստրիա ունի ամէն տեսակ ընտանի կենդանիներ, Մաճառիստանի մէջ կը գտնուի ընտիր ձի և խոզ:

Երկրին մէջ կան արծաթի, երկաթի, կապարի, գինիի, հանքածխոյ և մանաւանդ աղի հարուստ հանքեր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Աւստրօ-Հունգարիա ունի 614,000 տարածութիւն և 40,000,000 բնակիչ:

Երկիրը բաժնուած է 12 գաւառներու:

ՎԻԵՆՆԱ (1,350,000 բն.), *Մայրաքաղաք Աւստրիական կայսրութեան Դանուբ գետին ալ եղերքին վրայ ընդարձակ, բազմամարդ և ծաղկեալ քաղաք է: Շէնքերուն մէջ երեւելի են Ս. Սթեփաննոսի Կաթոլիկէն. Կայսերական պալատները. քաղաքատունը և Օպէրա Թատրոնը: Վիէննա անուանի է նաև իբրև կեդրոն գիտութեանց, արուեստից և վաճառականութեան: Մխիթարեան Հարք այս Մայրաքաղաքին մէջ ունին վանք և տպարան ուսկից լոյս տեսած են գրական և գիտական օգտակար մատեաններ:*

Գաւառք և Գլխ. քաղաքներ

Իսդրիա կամ Լիւրիկէ. Գլխաւոր քաղաք Թրիեսդէ՝ Ադրիական ծովուն վրայ կայսրութեան ամենէն բանուկ ու վաճառաշահ նաւահանգիստն է և աշխարհիս ամէն կողմանց հետ ընդարձակ յարաբերութիւն ունի: Փօլա՝ նոյնպէս Ադրիականի վրայ զինուորական նաւահանգիստ մ'է:

Թիրօլ գլխ. քաղաք Ինսպրուհ, ին գետին վրայ վաճառաշահ քաղաք է:

Սղրիա գլխ. քաղաք Կրաց, անուանի է գարեջուրը։

Վերին Աւստրիա գլխ. քաղաք Սալցպուրկ՝ ունի հարուստ աղահանք։

Պոհէմիա գլխ. քաղաք Փրակա, վաճառաշահ և ճարտարարուեստ քաղաք է. ունի անուանի համալսարան։

Մորավիա գլխ. քաղաք Պրիւն, ունի բրդեղինայ եւ բամբակեղէն գործարաններ։

Սիլէզիա գլխ. քաղաք Թրոպիօ։

Կալիցիա գլխ քաղաք Լեմպէրկ, երեւելի է համալսարանը։

Քրաֆովիա գլխ. քաղաք Քրաֆովիա, ունի աղի, ղինկի և պղնձի հարուստ հանքեր։

Տալմացիա գլխ. քաղաքներն են Զառա և Բակուզա որոնք Ադրիականի վրայ նաւահանգիստներ են. Ֆիումի՝ համանուն գաւառին գլխ. քաղաքն ու նաւահանգիստ է Ադրիականի վրայ։

Խռուաթիա գլխ. քաղաք Ակրամ։

Թրանսիլվանիա գլխ. քաղաքներն են Հերմանիշտատ, Քլաւզենպուրկ և Քրոնշտատ։

ՀՈՒՆԳԱՐԻԱ. կամ ՄԱՋԱՐԻՍՏԱՆ

Փէշթա կամ Փէշթ (360,000 բն.), Մայրաքաղաք Հունգարիական թագաւորութեան, Դանուբի Թեիս կամ Թեյս ճիւղին վրայ վաճառաշահ, գեղեցիկ ու ծաղկեալ քաղաք է։ Փէշթայի դիմացն է Օֆէն արուարձանը։

Գլխ. քաղաքներն են Թէշվար, Տեսրեցին, Մոնաց, Քրեզպուրկ, Թոքայ, Մարխա-Թերեզիօրուլ ևայլն։

ՀԵՐՍԷՔ ԵՒ ՊՈՍՆԱ.

Սոյն երկու գաւառներն որոնք կը պատկանին Օսմանեան պետութեան, 1873 էն ի վեր առժամեայ կերպիւ կը կառավարէ Աւստրիա։ Գլխ. քաղաքներն են Պոսնա կամ Պոսնա-Սէրայ, Մոնտար, Պանեալուխա, Թրավնիք և Նովի։

ԸՆԴՀԱՆՈՒՐ տեղեկութիւն

Աւստրօ-Հունգարիա Եւրոպիոյ ամենէն ընդարձակ և զօրաւոր պետութիւններէն մին է։ Ձեռագործ, ճարտարութիւն, գիտու-

թիւն և առևտուր շատ ծաղկած են բուն Աւստրիոյ և Պոհեմիոյ մէջ։ Դաստիարակութիւնն ևս հետզհետէ յառաջ երթալու վրայ է, որովհետեւ նախնական կրթութիւնը պարտաւորիչ է այս երկրին մէջ։ Աւստրիացիք առանձին ազգութիւն մը չեն կազմեր, այլ կը բաղկանան Գերմաններէ, Սլաւներէ, Ռումանացիներէ, Իտալացիներէ և այլ փոքր ազգութիւններէ։ Իսկ Հունգարացիք թուով իբր 16 միլիոն՝ իրենց բնակաւայրին մէջ կը կազմեն առանձին թագաւորութիւն մը։

Աւստրիական կայսրութեան մէջ կը դասուին Կաթոլիկ, Բողոքական և Յունադաւան ժողովուրդներ։

Երկրին մէջ կան բազմաթիւ երկաթուղիներ ու ջրանցքներ։ Կառավարութեան ձեւն է Սահմանադրական միապետութիւն։

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԵՒՐՈՊԱ.

ՍՊԱՆԻԱ.

ԸՆԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Սպանիա. Փորթոկալի հետ միասին կը կազմէ Հարաւային Եւրոպիոյ երեք մեծ թերակղզիներէ մին Իբերիական անուանով։ Սահմաններն են՝ Հիւսիսէն՝ Ատլանտեան ովկիանոս և Ֆռանսա, արեւելքէն Միջերկրական ծով, Հարաւէն Ճիպրալթարի նեղուց, արեւմուտքէն Փորթոկալ և Ատլանտեան ովկիանոս։

Սպանիա ընդհանրապէս լեռնային երկիր մ'է։ Ունի ջրոյ հոսանքներով ոռոգուած դեղեցիկ ու բարեբեր հովիտներ։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Սպանիոյ ներքին մասերը բարձր լերանց պատճառաւ ձմեռները ցուրտ, դաշտաց մէջ բարեխառն, իսկ ծովեզերքները շատ տեղ վտառուղ են։ Երկրին հողը՝ թէեւ բարեբեր բայց լաւ մշակուած չէ։ Գլխաւոր բոյսերն են՝ ձիթենի, նարնջենի, լեմոնի, բամպակ շաքարեղէգ, նռնենի, արմաւենի, որթեատունկ, ցորեն, գարի եւլն։

Սպանիոյ ընտանի կենդանեաց մէջ անուանի են ձին և մանաւանդ Մերինոս անուն ոչխարն որոյ բուրդը բարակ և աղնիւ է։ Սպանիա հանքահարուստ երկիր մ'է։ Ունի մնդիկի, աղի, մարմարիոնի, ղինկի, պղնձի, կապարի ու երկաթի հանքեր որոց մեծ մասը չ'շահագործուիր։

Սպանիա ունի 504,000 քիլ. քառ. տարածութիւն և 17,000,000 բնակիչ։

Երկիրը բաժնուած է 13 գլխաւոր գաւառներու որք են Կաղիցիա, Աստուրիա, Հին Քաստիլիա, Վալենսիա, Մուրսիա և Անտալուզիա, Արագոն, Նավարա, Լեոն, Էսթրեմատուրա և Նոր Քաստիլիա՝ միջին մասին մէջ։

ՄԱՏՐԻՏ (500,000 բն.) Մայրաքաղաք Սպանիոյ, Նոր Քաստիլիա գաւառին մէջ Եւրոպիոյ ամենէն բարձր դիրք ունեցող մայրաքաղաքն է։ Մատրիտ գեղեցիկ քաղաք մ'է, ունի ընդարձակ և փառաւոր հրապարակներ, պալատներ, ճեմարան, հոյակապ եկեղեցիներ, թանգարան եւլն։

Գլխաւոր Նաւահանգիստք

Ալանտեանի վրայ կը գտնուին,

Սանդանտէր, Քաստիխս, ամուր և վաճառաշահ նաւահանգիստներ են։

Բալօս, Քրիստափոր Կոլոմպոս այս փոքր նաւահանգստէն ճամբայ ելաւ 'ի Նոր Աչխարհ։

Ճիպրալդար, համանուն նեղուցին վրայ գինուորական երեւելի նաւահանգիստ է որ՝ 1704 էն ի վեր կը պատկանի Անգլիոյ։

Միջերկրականի վրայ կը գտնուին,

Մալակա, գեղեցիկ նաւահանգիստ — Համբաւաւոր է գինին։

Պարչելօնա, Սպանիոյ ամենէն վաճառաշահ և ծաղկեալ քաղաքն է։

Երեւելի են նաեւ Ալմերիա, Կարթագինէ, Ալիքանդէ եւայլն։

Ներքին Գլ. քաղաքներն են

Վալէնցիա, Կուատալվիտա գետին բերնին մօտ, Սպանիոյ մեծագոյն և ծաղկեալ քաղաքաց մին է։

Սէվիլ, Անտալուզիա գաւառին գլխաւոր քաղաքն և խիստ վաճառաշահ ու ճարտարարուեստ կեդրոն մ'է։



Ալհամպրայի Պալատը

Կրընատա, Մաւրիտանացւոց ժամանակ այս էր իրենց Մայրաքաղաքն և ուր այսօր կ'երեւի Ալհամպրայի պալատին աւերակները։

Գորտովա, Մաւրիտանացւոց ժամանակ չատ ծաղկած էր. — Ունի պատուական գինի։

Կալուածք

Երեւելի են նաեւ Թոլէտօ, Սարակոսա, Սալամանկա, Սանթիակօ, Ալմատէն, Վալեատոլիտ, Լէօն, Թորտոզա եւայլն։

Սպանիա Ափրիկէի մէջ ունի Քանարեան և Անճոպօն կղզիները. Սէօղտա քաղաքը Մարոքի մէջ. Ֆէրնանտօ-Բօ կղզին Կուինիոյ ծոցին մէջ։

Ամերիկայի մէջ ունի Քուպա և Փորտօ-Րիքօ կղզիները՝ Մեծ Անդիլեանց մէջ։

Ովկիանիոյ մէջ ունի Փիլիպպեանց մեծ մասը և Մարիանեան ու Քարոլինեան կղզիները։

Ընդհանուր տեղեկութիւն

Սպանիա ունի աչխարհագրական գեղեցիկ դիրք, բարեբեր հող և հարուստ հանքեր։ Արուեստ, գիտութիւն և ճարտարութիւն ետ մնացած են, իսկ վաճառականութիւնը բաւական զարգացած է։ Երեւելին են այս երկրին գինիները, մրգեղէնները, բուրդը, մետաքսը որոնք իր արտադրին վաճառականութեան գլխաւոր նիւթերը կը կազմեն։ Սպանիացիք կը պատկանին Լատին ցեղին և կրօնիս Կաթոլիկ են։ Կառավարութեան ձեւն է Սահմանադրական Միապետութիւն։

ՓՈՐԹՈԿԱԼ

ՌՆԱԿԱՆ ՆԱՀԱՐԴԻՐ

ՓՈՐԹՈԿԱԼ Սպանիոյ արեւմտեան կողմը փոքր երկիր մ'է։ Սահմաններն են հիւսիսէն և արեւելքէն Սպանիա, հարաւէն և արեւմուտքէն Ատլանտեան ովկիանոս։

Փորթոկալ նեղ ու լեռնային երկիր մ՚է։ Ունի գեղեցիկ հովիտներ՝ գետերով ոռոգուած։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Երկրին կլիման՝ լեռնային ներքին մասանց մէջ բարեխառն, իսկ ծովեզերքն տաք է։ Երկրագործութիւնը Փորթոկալի մէջ չատ յառաջ գացած չէ։ Գլխաւոր բերքերն են տաք երկրի պտուղները, արմաւիք, լեմոն, նարինջ, ձիթենի, ծխախոտ, որթեւտունկ, թթենի և այլն։ Կենդանեաց մէջ կարեւորներն են ձին ու Մերինոսեան ցեղէ ոչխարը։ Փորթոկեզք կ՚զբաղին նաև ծովեզերեայ ձկնորսութեամբ ու շերամաբուծութեամբ։

Երկրին մէջ կան ոսկւոյ, պղնձի, կապարի, աղի և մարմարիոնի հանքեր որոնք մեծաւ մասամբ երեսի վրայ թողուած են։

ԿԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Փորթոկալ ունի 92,000 քիլ. քառ. տարածութիւն և 5,000,000 բնակիչ։

ԼԻԶՊՕՆԱ (250,000 բն.), Մայրաքաղաք Փորթոկալի, Թակո գետին բերանը խիստ գեղեցիկ և վաճառաշահ նաւահանգիստ է և ունի մեծ յարաբերութիւն Նոր Աշխարհի և Անգլիացւոց հետ։

Գլխաւոր Նաւահանգիստք

Փորթօ կամ Օ՚ Փորթօ, Տուրօ գետին բերանը, Ունի գինւոյ և օդիի ընդարձակ վաճառականութիւն։ Այս քաղաքը հին աեն կը կոչուէր Փորթուս-Քալէ որմէ առած է երկիրը Փորթոկալ անունը։

Սէդուվալ, Լիզաօնի հարաւակողմը՝ վաճառաշահ նաւահանգիստ է։

Ներքին Գլ. քաղաքներն են

Փոնիսրա, Պրակա, Էվորա, Պրականցա, Լակօս, Դաւիրա են.

Կալուածք

Փորթոկալ Ափրիկէի մէջ ունի Անորեան, Մասէրա, Դալարի գլխոյ և Ս. Թովմաս կղզիները, Փոնկոյի և Սենէկալսկոյ մէկ մասը և արեւելեան Ափրիկէի մէջ՝ Մոզամպիքի ափունքը։

Ասիոյ մէջ Կօա և Տիու քաղաքներն՝ ի Հնդկաստան և Մաքաօ կղզին Չինաց ծովուն մէջ։ Ովկիանիոյ մէջ ունի Թիմօր։

Ընդհանուր տեղեկութիւն

Փորթոկալի դիրքն չատ նպաստաւոր է ծովային վաճառականութեան։

Փորթոկեզք գտան Հնդկաստանի ծովային ճանապարհն՝ Ափրիկէի շրջանն ընելով։ Դաստիարակութիւն, արուեստ, ձեռագործ և ճարտարութիւն տակաւին ետ մնացած են, միայն վաճառականութիւնը ծաղկեալ է։ Երեւելի են Փորթոկալի գինիները, լեմոնը, նարինջը, մրգեղէնները, ձէթը և կաշին։ Փորթոկեզք կը վերաբերին Լատինական ցեղին և Կաթոլիկ են։ Կառավարութիւնն է Սահմանադրական Միապետութիւն։

ԻՏԱԼԻԱ

ԿԱՄ

ԱՊԵՆԻՆԵԱՆ ՅԱՄԱԲԱԿՂԶԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Իտալիա. Եւրոպիոյ հարաւային երեք ցամաքակղզիներէն մին է։ Սահմաններն են՝ հիւսիսէն Ալպեան լերինք, արեւելքէն Աւստրիա, Ադրիական ծով, Օթրանթի ջրանցք և Յոնիական ծով հարաւային արեւելքէն. — Միջերկրական ծով և Մեսինայի նեղուց հարաւէն. — արեւմուտքէն Տիւրէնեան կամ Թոսքանայի ծով և հիւսիսային արեւմուտքէն Ցուանոա։

Կղզիք. — Իտալիոյ կը վերաբերին Սիկիլիա, Սարտենիա, Էլպա և այլ մի քանի փոքր կղզիներ՝ Միջերկրականի մէջ։

Իտալիա՝ Եւրոպիոյ լեռնային երկիրներէն մին է։ Հիւսիսային սահմանին վրայ կը կանգնի Ալպեան բարձրաբերձ գօտին որոյ բարձրագոյն կատարներն են Մօն Պլան, Մօն Վիզօ, Մօն Սրնի, Սեն-Պեռնար, Սեն-Կոթառ։ Իսկ հիւսիսէն՝ ի հարաւ կ՚երկարաձգին Ապենինեան լերինք։ Իտալիա ունի երկու հրաբուղխ, մին Ետնա՝ Սիկիլիոյ մէջ, միւսը Վէսուվ՝ Նափոլիի մօտ։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Իտալիա ունի բարեխառն և զմայլելի կլիմայ, բնական գեղեցիկ տեսարաններ ու պայծառ երկինք. միայն հարաւային Ծովեզերեայ մասերն տեղ տեղ վատառողջ են: Երկրին գլխաւոր բուսաբերութիւնքն են արմաւիք, ոլոռեւտունկ, ձիթենի, լեռնն, նարինջ, ըրինձ, բամպակ, շագարեղէգ և հարաւային երկիրներու յատուկ բոյսեր: Իտալացիք մեծ քանակութեամբ չերամ կը բուծանեն:



Ալպեանց մէկ տեսարանը

Իտալիա ունի խազ, այծ, կով, ջորի: Գլխաւոր հանքերն են մարմարիոն, ծծումբ, երկաթ, պղինձ, կապար, պաղլեղ և պորտա:

ԲԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Իտալիա ունի 296,000 քիլ. քառ. տարածութիւն և 32,000,000 բնակիչ:

ՀՌՈՄ (350,000 բն.), Մայրաքաղաք Իտալիոյ, Տիբերիս գետին վրայ շինուած: Հռոմէական իշխանութեան ժամանակ՝ աշխարհիս Մայրաքաղաքն էր Հռոմ: Այսօր եւս նշանաւոր է՝ հին պարիսպ ճոպատ հոյակապ աւերակներով: Իսկ նոր շէնքերուն մէջ նշանաւոր են Ս. Պետրոսի հրաշակերտ եկեղեցին և Վատիկանու պալատը ուր կը բնակի Հռոմէականաց Պապը: Առնցմէ 'ի զատ՝ Հռոմի մէջ կան նաեւ գեղեցիկ կաթողիկէները, պալատներ, հնութեանց թանգարաններ, գեղարուեստից վարժարան, համալսարան եւլն:

Գլխաւոր նաւահանգիստք

Միջերկրականի վրայ կը գտնուին,

Ձէնովա, համանուն ծովին վրայ՝ երեւելի ու բանուկ նաւահանգիստ: Հոս ծնաւ Քրիստափոր Կոլոմպոս;

Լիվոռնօ, Բիզա, Զիվիթա-Վեքիա երեւելի և բանուկ նաւահանգիստներ են:

Նափոլի (500,000 բն.) համանուն ծովին խորը՝ Իտալիոյ ամենէն բազմամարդ քաղաքն է: Ունի զուարճալի կլիմայ, ճարտարութիւն և ընդարձակ առեւտուր: Մօտն է Վեզուվ հրաբուղխն որ Քրիստոսի 79 թուականին բռնկելով՝ իր լաւաներուն տակ խեղդեց Հերոլանում և Պոմպէա քաղաքները: Սալեռնօ, համանուն խորշին մէջ, Տարենտօ, նոյն ծովին վրայ:

Ադրիականի վրայ կը գտնուին,

Պրինտիզի, որ հետզհետէ կարեւորութիւն կ'ստանայ, Պարի, Պաղերրա, Մանճրեդոնիա և մանաւանդ Անքօնա որ է երեւելի և առաջին կարգի նաւահանգիստ:

Վենետիկ կամ Վենեցիա, Ադրիականի խորն բազմաթիւ փոքր կղզիներու վրայ շինուած սիրուն և մեծադործ քաղաք է և կը կոչուի «Թագուհի Ադրիականի»: Վենետկոյ կղզեայ միոյն՝ Ս. Ղազարու մէջ է Մխիթարեան Հարց վանքը, տպարանն ու դրատունը:

Ներքին գլխաւոր քաղաքներ

Ֆիրէնցէ կամ Ֆիօրէնցա, Արնօ գետին վրայ սիրուն և զուարճալի քաղաք է: Դիտութիւն, գեղարուեստ և ճարտարութիւն շատ ծաղկած են հոս: Այս քաղաքը ծնած են Լեւոն ժ. Պապը, Տանդէ բանաստեղծը, Միքել-Անճէլօ և Լէօնարտ-տը-Վինչի պատկերհանները, Ամերիկոս-Վեսփուչչի նաւապետը եւլն:

Դուրինօ կամ Դուրին, Բօ գետին վրայ երեւելի քաղաք է:

Միլանօ կամ Միլան, ճարտարարուեստ ու վաճառաշահ քաղաք, Լոմպարդիոյ մէջ:

Երեւելի են նաեւ Մանդուա ուր ծնած է Վիրգիլիոս անուանի բանաստեղծը, Բաստոնա կամ Բաստուա, Ալեքսանդրիա, Վէրօնա, Պոլոնիա, Պէրդամօ, Բէճամօ, Ֆօճմիա, Բէրուճիա, եւլն:

ՍԻԿԻԼԻԱ. ԵՒ ԱՐՏԵՆԻՍ.

Սիկիլիա մեծ ու բարեբեր կղզի մ'է, ունի 23,600 քիլ. քառ. տարածութիւն և իբր 2,800,000 բնակիչ:

Գլխաւոր քաղաքն է Բալէրմօ (300,000 բն.) հին ու գեղեցիկ

քաղաք և բանուկ նաւահանգիստ է։ Մեսինա, Համանուն նեղուցին վրայ վաճառաշահ քաղաք։

Երեւելի են նաեւ Գաղանիա, Ձիրճինդի, Սիրակուսա, Թրապանի և Մարսալա։

Սարտենիա կը գտնուի Իտալիոյ արեւմտեան կողմը, հողն արդասաւոր՝ այլ անմշակ է։ Ունի ծծումբի, ղինկի և կապարի հարուստ հանք։ Գլխաւոր քաղաքներն են Քալիարի և Սասարի։ — Էյպա կղզին եւս նշանաւոր է իւր երկաթի հարուստ հանքով։ Գլխաւոր քաղաքն է Բորթօ-Ֆերայօ, ուր Պոնապարթի բնակեցաւ 1814 ին։

Ընդհանուր տեղեկութիւն

Եւրոպիոյ մեծ տէրութեանց մին է Իտալիա որ երեւելի եղած է իւր փառաւոր անցեալովը և զուարճալի կլիմային կողմանէ։ Գեղարուեստի, ճարտարապետութեան, քանդակագործութեան մասին չատ յառաջդիմած է Իտալիա։ Իսկ ձեռարուեստ, ճարտարութիւն, գիտութիւն մանաւանդ վերջին 20 տարուան մէջ բաւական յառաջդիմեցին։ Երեւելի են Իտալիոյ մարմարիոնը, երաժշտական գործիքները, մետաքսեղէնները, գինին, ճէթը, յարդէ գլխարկներն, պանիրը, բրինձը, կարագը, աղած ձուկը եւլն։ Իտալացիք կը պատկանին Լատինական ցեղին և են զուարթ և զբօսասէր մարդիկ։ Լեզուն է Իտալերէն որ չատ ներդաշնակ է։ Կրօնն է Կաթոլիկութիւն, Կառավարութեան ձեւն է Սահմ. Միապետութիւն։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ.

ՌՆԱԿԱՆ ՆԱՀԱՊԵՏՐ

Եւրոպական Թուրքիա կարեւոր մէկ մասն է Օսմանեան պետութեան որ՝ Դանուբեան իշխանութեանց հետ կը ձեւացնէ Պալհանեան յամրակղզին։

Սահմաններն են հիւս. արեւմուտքէն Գարատաղ և Աւստրիա, հիւսիսէն Սերպիա և Պուլկարիա, արեւելքէն Սեւ ծով, Հարաւէն Կ. Պոլսոյ նեղուց, Մարմարա, Տարտանէլ, Արշիպելագոս և Ցուռնասան. արեւմուտքէն՝ Յոնիական ծով, Օթրանթի ջրանցք և Ադրիական ծով։

Կազմուրիւն և Լերինք. — Եւրոպական Թուրքիա ընդհանրապէս լեռնային երկիր մ'է, սակայն՝ լերանց սառոյտներն կը տարածուին ընդարձակ և պարարտ հովիտներ որք նշանաւոր են իրենց եղական արդասաւորութեամբ։ Գլխաւոր լեռներն են՝ Արեւելեան Ալպեանք Պալքանեան յամրակղզւոյն արեւմտեան կողմը որ կը ձեւացնէ Սեւ և Ադրիական ծովուց աւազանները։ Տիւնարեան Ալպեանք՝ Եւրոպական Թուրքիոյ արեւմտեան մասին մէջ. Պալհանեան լերինք՝ որք Պուլկարիան Թուրքիայէն կը բաժնեն։ Այս գօտին արեւմուտքէն դէպ արեւելք կ'երկարի և կը վերջանայ Վառնայի մօտ Էմինէ հրուանդանով։ Գօտւոյ Պալհանեան դէպ ի հարաւ կ'երկարին չորս բազուկներ, մին Ստրանճա դէպ ի հար. արեւելք Կ. Պոլսոյ նեղուցին մօտ, երկրորդը Թեֆիր տաղ, երրորդը Ռոտոփ կամ Տէպրոր տաղ դէպ ի Արշիպելագոս՝ Էնոսի ծոցին մօտ, չորրորդը կ'երկարի նոյնպէս Արշիպելագոս և կը վերջանայ Աթոս կամ Այնորոս լեռնով (2,000 մ. բ.)։ Եւրոպական Թուրքիոյ լերանց բարձրագոյն գագաթներն են Ռիլօ և Ոլիմպոս։

Գետք և Լիճք. — Եւրոպական Թուրքիա երկու աւազան միայն ունի, հարաւէն (Արշիպելագոս և Մարմարա), արեւմուտքէն Ադրիականը։ Արշիպելագոս կը թափին Մարիցա կամ Մէրիճ, Քարասու կամ Սրոումա, Վարտար և Ինճէ Կարա-Սու։ Մարմարայի մէջ կը թափին Թունճա՝ ձախ կողմէն և Ատրա՝ աջէն։

Արեւմտեան աւազանին գլխաւոր գետերն են Նարաւնթա, Պոյանա, Տրին, Վոյուսա և Բալարնաս։

Եւրոպական Թուրքիոյ մէջ կը գտնուին Շխոտրայի, Օհրիտայի, Բրէզպայի, Քասդորիայի, Եանեւայի, Պէշիկի և Թաիրնոսի լիճերը։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Երկրին կլիմայն ընդհանրապէս առողջ է։ Ձմեռները՝ բարձր լերանց պատճառաւ սաստիկ ցուրտ, իսկ ամառները բարեխառն և հարաւային գաւառաց մէջ ալ տեղ տեղ տաք կ'ըլնեն։

Եւրոպական Թուրքիոյ հողն ի բնէ արդասաւոր և հողագործութիւնն ալ բաւական ծաղկած ըլլալով՝ յառաջ կ'ուղան արմտիք,

ծխախոտ, բամպակ, կանեփ, կորեակ, նեղուկ նիւթեր, առատ որթեատունկ որք կ'ուտան պատուական գինի, բազմաթիւ պաղատու ծառեր, ձիթենի, վարդենի եւլն։ Երեւելի են Մակեդոնիոյ և Ալպանիոյ ընդարձակ անտառներն որոնք մեծ քանակութեամբ առաջ կ'արտադրեն։

Կենդանիք և Հանք. — Եւրոպական Թուրքիոյ ընդարձակ և պարարտ արօտավայրերուն մէջ կ'արածին այծ, կով և մանաւանդ ոչխարն (Գամբռ) որ համբաւաւոր է իւր համեղ մսովը և որոյ բուրդն ու մորթն ալ՝ վաճառականութեան մեծ նիւթեր են։ Եւրոպական Թուրքիա ունի նաև բազմաթիւ մուշտակաւոր կենդանիք։ Նոյնպէս ունի երկաթի, մարմարիոնի, կապարի պղնձի և քրոմի հանքեր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Եւրոպական Թուրքիա ունի 165,438 քիլ. քառ. տարածութ. և 4,500,000 բնակիչ։

Պառմական կամ նախկին 4 գաւառներն են՝ Ռումելի, Եպիրոս, Մակեդոնիա և Թրակիա որք բաժնուած են այսօր Եօթն Կուսակալութեանց (Վիլայէթ)։

1°	Կուսակալութիւն կամ Վիլայէթ	Կ. Պոլսոյ		Գլ. քաղաք	Կ. Պոլիս
2°	»	Էտիրնէի	(Թրակիա)	»	Էտիրնէ
3°	»	Սէլանիկի	(Մակեդոնիա)	»	Սելանիկ
4°	»	Մանաստրի	(Վերին »)	»	Մանաստր
5°	»	Գոսովայի	(Ալպանիա)	»	Բրիզրէն
6°	»	Շքոտրայի	(Վերին Ալպանիա)	»	Շքոտրա
7°	»	Եաննայի	(Եպիրոս եւ Ստորին Ալ.)	»	Եաննէա

Իւրաքանչիւր կուսակալութիւն կը բաժնուի նահանգներու (Լիվա) և լիվաներն ալ գաւառակներու (Գազա)։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Կ. ՊՈԼԻՍ որ կը կոչուէր հին ատեն Բիւզանդիոն, *Թէ իբր Մայրաքաղաք Օսմանեան պետութեան և Թէ իբր աշխարհիս ամենէ վաճառաշահ, գեղեցիկ և ընդարձակ նաւահանգիստներէ մին՝ մեծ կարեւորութիւն ունի և կընայ 1,000 է աւելի նաւ պարունակել։ Կ. Պոլիս երեք դլխաւոր մասերէ կը բաղկանայ, 1°. Բուն*

Իսթանպօղ որ՝ Եօթն բլրակներու վրայ չինուած ըլլալով ամիւթեատրոնի մը հիանալի ձեւն ունի և Ոսկեղջիւրի ծովակոթը կը



բաժնուի կալաթա և Բերա արուարձաններէն։ 2°. Ստուարաձաւէ Գալաթայ և Բերայի՝ Ոսկեղջիւրի և Վոսփորի եղերայ վրայ գըտնուած դիւղերով։ 3°. Իսկիւտար և Դասը-Քէօյ, Վոսփորի Ասիա-

կան եղերայ վրայ դանուած գիւղերով։ Կ. Պոլսոյ արուարձին ամառանոց արդարեւ զմայլելի է։ Երեւելի շէնքերն են Այա-Սոֆիայի մեծադործ մզկիթը, Սուլթան-Ահմէտ որու մօտակայ հրապարակին

Սուլթան Ահմէտի հրապարակը

մէջ կայ Եգիպտական կոթող մը, Սուլթան Մահմուտի դամբարանը (Քիւրտէ), Նուրի Օսմանիի, Սուլթան Պայազիտի և Ֆաթիհի մզկիթները, Մեծ շուկան, Փողերանոցը, Սպարապետութեան և Բարձրագոյն դատարանները, Հին պալատը, Զինւոյ Թէօշկը եւլն։ Վոսփորի երկու եղերայ վրայ կը դանուին Տոլմա-Պաղչէի, Զրադանի, Պէյլեր-Պէյիի կայսերական հոյակերտ պալատներէն ի զատ՝ նաեւ գեղատնայ և մեծատանց փառաւոր ապարանքներ և ամարանոցներ։ Նշանաւոր է նաեւ Եղիզլգի գեղեցիկ պալատն՝ Օրթա-Քէօյի բարձանց վրայ՝ ուր ընդհանրապէս կը բնակի մեր Օգոստափառ Ինքնակալն ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻՒԼ-ՀԱՄԻՏ ԽԱՆ։ Պոլսոյ արուարձանաց՝ մէջ Բերա ամենէն նշանաւորն է իւր արհեստական գեղեցկութեամբ, բազմամարդութեամբ, կանոնաւոր փողոցներով, փառաւոր շէնքերով, թատրոններով, եկեղեցիներով, վարժարաններով եւլն։ Հոս կը բնակին մեծաւ մասամբ Եւրոպացիք։

Գալաթիոյ մէջ Հայք ունին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, Ազգ. կեդրոնական և Թաղային վարժարանները. Ազգ. Խորհրդարանը, Մատենադարանը, Միացեալ Ընկերութեանց գրասենեակները՝ նոյն եկեղեցւոյ շրջափակին մէջ իսկ։ Իսկ ի Բերա՝

Հայք ունին Ս. Երրորդութեան փառաւոր եկեղեցին, Աղջիանց Ահիեսագիտական Ուսումնարանն ի զատ, Ս. Յարութիւն եկեղեցին ու Նարեկեան վարժարանը՝ որք ի նորոյ պիտի կառուցուին ներկայ տարւոյ մէջ՝ արդեամբ և ծախիւք էսաեան բարեհամբաւ հարազատաց։

Վոսփորի գլխաւոր գիւղերն են Պէօյիւք-տէրէ, Թարապիա, Եէնի-Քէօյ, Օրթա-Քէօյ, Պէշիկ-թաշ Եւրոպական եղերայ վրայ։ Պեյ-օղլ, Գանտիլլի, Դուզկունճուք, Իւսկիւտար՝ Ասիական եղերայ վրայ։ Սոյն եղերքը Մարմարայի վրայ կան Հայտար-փաշա և աւելի կարեւոր՝ Գատը-Քէօյ՝ շէն և բազմահայ գիւղը։ Մարմարայի Եւրոպական եղերայ վրայ կան Գում-Գափու, Եէնի-գափու, Սաւաթիա, Եէտի-գուլէ, Մարմի-Քէօյ ու Սան-Սթեֆանօ։ Մարմարայի մէջ՝ Նիկոմիդիոյ ծոցին մտից մօտ կը գտնուին Իշխանաց Կղզիք։

Կ. Պոլիս ունի 940,000 բնակիչ որք կը բաղկանան հետեւեալ կերպով, Թուրք, Յոյն, Հայ, Հրէայ ու Օտարազգիք։

Կ. Պոլիս երկաթուղեաւ միացած է Փարիզու։

Գլ. Նաւահանգիստք Եւրոպական Թուրքիոյ

Մարմարայի վրայ կը գտնուին,

Սիլիվրի և Ռօսոպօ կամ Թէքիր-Տաղ, բանուկ նաւահանգիստներ են։

Կէլիպոլու, Տարտանէլի նեղուցին բերանը։

Արշիպելագոսի վրայ կը գտնուին,

Տէտէ-Աղաճ, համանուն ծոցին վրայ նոր նաւահանգիստ մ'է։

Գավալա, Եէնիճէ, անուանի են ատոնց ծխախոտը։

Օրճանօ, համանուն ծոցին վրայ ապահով նաւահանգիստ մ'է։

Սէլանիկ, համանուն ծոցին խորը, Եւրոպական Թուրքիոյ ամենէն մեծ ու վաճառաշահ նաւահանգիստն է։ Կ'արտածէ արմաւիք, բամպակ, բուրդ, ծխախոտ, մետաքս, գինի եւլն։

Ծոնիականի վրայ կը գտնուին Բրեմեզա և Բարկա։

Ադրիականի վրայ են Վալօնա կամ Ավլօնա և Տուրացցօ որոնք բանուկ նաւահանգիստներ են։

Ներքին գլխաւոր քաղաքներ

Էսիրնեի կուսակալութեան մէջ,

Էսիրնէ կամ Անդրիանուպոլիս, Մարիցայի վրայ երեւելի և

վաճառաշահ քաղաք՝ որ Կ. Պոլսէ առաջ՝ Օսմանցւոց Մայրաքաղաքն էր։ Երեւելի են նաեւ Քրմ-Քիլիսէ, Տիմօթիա, Մուսթաճափաշա, Լիւլէ-Պուրկաս, Զօրլու եւլն։

Սէլանիկի կուսակալութեան մէջ,

Սէլանիկէն՝ ի զատ որ՝ առաջին նաւահանգիստն է Եւրոպական Թուրքիոյ, երեւելի են նաեւ Տրամա, Սէրէս, Օրճանօ, Տիմիր-Հիսար եւլն։

Մանաստրի կամ Վերին Մակեդոնիոյ մէջ,

Մանաստր, ամուր և զինուորական քաղաք է. — Սէրճիչէ, Օխրիտա, Գայման-Տէլէն, Էլբասան, Ֆլօրինա։

Ռումելիի կուսակալութեան մէջ,

Գլխաւոր քաղաքն է Բրիզրէն, Զար-Տաղ լերան ստորոտը վաճառաշահ ու գեղեցիկ քաղաք։ Երեւելի են նաեւ Իւսկիւպ, Եենի-Պազար, Միթրովիցա, Բրիշթինա, Իփէֆ, Ափօվա եւլն։

Շոսդրայի կուսակալութեան մէջ,

Գլխաւոր քաղաքն է Շկոդրա, համանուն լճին եզերքը մեծ և վաճառաշահ քաղաք։ Երեւելի են նաեւ Ալ-Հիսար, Բալահա, Ալեսիո։

Եանեայի կուսակալութեան մէջ,

Գլխաւոր քաղաքն է Եանեա, համանուն լճին մօտ, մեծ ու վաճառաշահ քաղաք։ Հոս ծնած է Տէփէլէն Ալի փաշա։ Երեւելի են նաեւ Էրկէրի կամ Արեհրոփատրո. Պերաթ։

Կղզիք. — Արշիպելագոսի հիւսիսային կողմը՝ Թուրքիա ունի մի քանի կղզիներ որոց գլխաւորներն են Թասոս, Սամոդրակէ, Լեմնոս, Թենեդոս կամ Պոհնա Ասպաք Տարտանելի նեղուցէն 24 քիլոմ. հեռի։ Իսկ Արշիպելագոսի հարաւային կողմը՝ կը գտնուի Կռետէ մեծ կղզին (2,000,000 բն.) որ ունի բարեբեր հող և բանուկ վաճառականութիւն ձէթի, նարնջի, լեմոնի, աճառի, գինւոյ, մետաքսի և մրգեղինաց։ Բնակչաց մեծ մասը Յոյն է։ Գլխաւոր քաղաքներն են Քանիա, Ռեթիմօ և Քանէա։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Եւրոպական Թուրքիա երեւելի է իւր աշխարհագրական դիրքով, արդիւնաւորութեամբ, առատ կլիմայիվ և հարուստ բուսաբերութեամբ։

Երկրագործութիւն և արուեստ հետզհետէ յառաջանալու վրայ են, իսկ վաճառականութիւնը բաւական բանուկ է։ Ձեռագործից մէջ յարգի են մետաքսեայ և բրդէ գործուածքները, շալ-ները և գիպակը։

Եւրոպական Թուրքիոյ մէջ կը բնակին բայ ի Թուրքերէ՝ նաեւ Պուլկար, Ալպանուտ, Ցոյն, Հայ, Հրէայ, Սրմսար, Գնչու եւլն։

Կառավարութեան ձեւն է Միապետութիւն։ Թագաւորը կը կոչուի Սուլթան՝ որ է միանդամայն յաջորդ (Խալիֆէ) Իսլամաց Մարգարէին։ Արդի Սուլթանն է ՕՓՈՍՏԱՓԱՆ ՍՈՒԼԹԱՆ ԱԶԻԶ-ԻՆԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆ լուսամիտ և յառաջդիմասէր կայսրն՝ որոյ գահակալութենէն ի վեր երկիրն վայելած է նիւթական և բարոյական մեծամեծ բարւոքումներ։ Օսմանեան պետութիւնը կ'ամբողջացնեն Ասիական Թուրքիա, Հինազ ու Եգիպտոս գաւառները Արաբիոյ մէջ։ Թարապլուս և Պենկազի Ափրիկէի մէջ։ Եգիպտոս՝ ընդ գերիշխանութեամբ Սուլթանին՝ առանձին փոխարքայութիւն մ'է։

Եւրոպական Թուրքիա ունի իբր 1656 քիլմ երկաթուղի։

ՀԱՐԿԱՏՈՒ ԻՆԹԱՆՈՒԹԻՒՆ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պուլկարիա 1878 էն ի վեր կազմուած ինքնօրէն իշխանութիւն մ'է՝ ի մէջ Դանուբայ, Սեւ ծովու, Պալքան լերանց և Սերպիոյ։ Երկրին հիւսիսային և արեւելեան կողմերը դաշտային, իսկ հար. և արեւմտեան կողմերը լեռնոտ են։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Պուլկարիոյ կլիմայն Պալքան լերանց պատճառաւ ձմեռները սաստիկ ցուրտ, իսկ միւս եղանակաց մէջ բարեխառն է։ Պուլկարիա ունի արդասաւոր հող և բաւական ծաղկեալ երկրագործութիւն։ Կ'արտադրէ ցորեն, գարի, եգիպտացորեն, վարսակ եւլն։ Ունի ընդարձակ արօտներ յորս կ'արածին կաթնատու ազնիւ կենդանիներ։

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պուլկարիա ունի 63,972 քիլ. քառ. տարածութիւն և 2,200,000 բնակիչ։

ՍՕՖԻԱ (22,000 բն.) Մայրաքաղաք Պուլկարիոյ, վիթխարի լեռան ստորոտը՝ բաւական ծաղկեալ քաղաք է։ Հոս կը նստի երկրին իշխանը։

Րուսճուգ, Դանուբի վրայ երեւելի նաւահանգիստ և է, Պուլկարիոյ մեծագոյն քաղաքը։

Վառնա, Սեւ ծովու վրայ երեւելի նաւահանգիստ է։ Նիկոպոլիս, Դանուբի վրայ, նոյնպէս վիտին որ հին բերդաքաղաք է։

Երեւելի են նաեւ Թրնովա, Շումլու, Բիելնա, Սաւախօճ, Կասրովա, Տուպնիցա, Սիլիստրէ, Զիշդովա եւլն։

Պուլկարիա երկաթուղեաւ կապուած է Կ. Պոլսոյ ու Արեւմտեան Եւրոպիոյ հետ։

Ընդհանուր Տեղեկութիւն

Պուլկար ազգը կը վերաբերի Սլաւ ցեղին և է աշխատասէր ու յառաջդիմասէր մի ժողովուրդ՝ որ տակաւ կը զարգանայ։ Ունի Ազգ. Խորհրդարան, նախարարութիւն և Բրիստոնեայ մի իշխան։ Պուլկարք Ցունադաւան են։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՐՈՒՄԷԼԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Արեւելեան Րումելի վոյը այլ բազմամարդ և ինքնօրէն գաւառ մ'է Պուլկարիոյ հարաւակողմը։ Ունի 36,000 քիլ. քառ. տարածութիւն և 1,000,000 բնակիչ։ Երկիրը լաւ մշակեալ ու բարեբեր է։ Գլխաւոր բոյսերն են ընտիր արմաւիք, եղիպտացորեն, գարի, բամպակ և վարդ որմէ կը շինեն վարդի իւղ։ Անուանի են այս գաւառին ոչխարները (Բուռնէ Գէմբուզ) և կովը։

Ֆիլիպէ, գլխաւոր քաղաք Արեւելեան Րումելիի, Մարիցայի վրայ հին ու վաճառաշահ քաղաք է։ Ունի մեծ առեւտուր մետաքսի, բրդեղինայ, գորգի և բամպակեղինայ։

Երեւելի են նաեւ Պուրկաս, Սեւ ծովու վրայ նաւահանգիստ։ Թաթար-Բազարճըգ, Էսկի-Զաղրա, Եէնի-Զաղրա, Դրզանըգ, Սյոզու եւլն։

ՌՈՒՄԱՆԻԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Ռումանիա 1878 ին հաստատուած առանձին մի թագաւորութիւն է և կը պարունակէ Մոլտավիա, Վլաախիա և Տուպրուճա գաւառները։

Սահմաններն են հիւսիսէն Աւստրիա, արեւելքէն Ռուսիա և Սեւ ծով. հարաւէն Դանուբ. արեւմուտքէն Աւստրիա և Սերպիա։

Երկիրն ընդհանրապէս դաշտային է, միայն հիւսիսային սահմանին վրայ կը կանգնին Կարպաթեան լերինք։ Երկրին կարեւորագոյն գետն է Դանուբ որ հարաւէն անցնելով՝ երեք բերաններով (Սուլինա, Քիլիա և Ս. Գէորգ) կը թափի ի Սեւ ծով։

Ռումանիայէն Դանուբայ մէջ կը թափին Ալութա և Սերէթ։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Երկրին կլիման տեղ տեղ ցուրտ, բայց ընդհանրապէս բարեխառն է, իսկ Տոպրուճա չերմուտ է։ Հողը բարեբեր և լաւ մշակուած է։ Առատօրէն կ'արտադրէ արմաւիք, ծխախոտ և ալնիւ առատ։

Ռումանիա ունի կաթնատու կենդանիներ և խոզ։ Նոյնպէս ունի քարիւղ և հանքային աղ։

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ռումանիա ունի 130,000 քիլ. քառ. տարածութիւն և 5,400,000 բնակիչ։

ՊՈՒՔՐԷՇ կամ **ՊՈՒՔԱՐԷՍՏ** (220,000 բն.) Մայրաքաղաք Ռումանիոյ, գեղեցիկ և վաճառաշահ քաղաք է։ Ունի ընդարձակ փողոցներ, պուրակներ և պալատներ։

Նաճ կամ Նապի, Գլխաւոր քաղաք Մոլտավիոյ։ — Սուլինա,



Երկրագործութիւն

Քէօսթենճէ, Կալաց, Իպրայիլ, Ճուրճէվօ, բանուկ նաւահանգիստներ են։ Երեւելի են նաեւ Քալաճար, Ալեքսանդրիա, Բրայօվա եւլն։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ռումանը կը պատկանին Լատին ցեղին։ Երկրին մէջ կան նաեւ Հրէայ, Ռուս, Հայ, Թուրք, Պուլկար և Գընչու։ Երկրագործութիւնը շատ ծաղկած է այս երկրին մէջ, այնպէս որ արմտեայ, առվսւր և ստաղէի վաճառականութեամբ շատ տակ կը մնէ ի Ռումանիա։ Տէրող Կրօնն է Յունադաւանութիւն։ Կառավարութիւնն է Սահմանադրական Միապետութիւն։

ՍԵՐՊԻԱ

ՌՆԱԿԱՆ ՆԱՀԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Սերպիա Պալքանեան տերութեանց մին է։ Սահմաններն են հիւսիսէն Դանուբ, արեւելքէն Ռումանիա և Պուլկարիա, հարաւէն Թուրքիա և արեւմուտքէն Աւստրիա։ Երկիրն ընդհանրապէս լեռնային է։ Երեւելի են Սերպիական Աշպեանիք որոյմէ ձեւացած է Երկաթի Դուռ կոչուած Դանուբայ նշանաւոր կիրճը։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Սերպիա ունի առողջ կլիմայ, բայց ձմեռները սաստիկ ցուրտ կ'ընէ՝ բարձր լերանց պատճառաւ։

Երկիրն բարեբեր և բուսական լաւ մշակուած է։ Կ'արտադրէ առատ արմտիք, ծխախոտ, որթեատունկ և ստաղէ։ Ունի կաթնատու և մուշտակաւոր կենդանիներ ու խոզ։ Սերպիոյ մէջ կան հանքային աղ ու երկաթ։

ԲՆԱԿՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Սերպիա ունի 48,000 քիլ. քառ. տարածութիւն և 2,000,000 բնակիչ։

ՊԵԼԿՐԱՏ (40,000 բն.) *Մայրաքաղաք Սերպիոյ, Դանուբայ և Սաւայի միացման տեղը սիրուն բերդաքաղաք է։*

Երեւելի են նաեւ Նիս ուր ծնած է Մեծն Կոստանդիանոս, Սեմենտրիա, Բրակոյեվաց, Ագեխինաց, Եակօսինա, Լիսոիվաց, Բիրոդ և Վրանիա։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

1878 էն ի վեր առանձին թագաւորութիւն մ'եղած է Սերպիա։ Միայն երկրագործութիւնը ծաղկած է այս երկրին մէջ։ Սերպիոյ արտաքին վաճառականութեան նիւթերն են բուրդ, խոզ, արմտիք, ծխախոտ եւլն։ Սերպիացիք կը պատկանին Սլաւ ցեղին և են Յունադաւան։ Կառավարութիւնն է Սահմ. Միապետութիւն։

ԳԱՐԱՏԱՂ կամ ՄՈՆԹԵՆԷԿՐՕ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Գարատաղ լեռնօրէն, փոքր ու լեռնոտ երկիր մ'է Պալքանեան ցամաքակղզւոյն արեւմտեան հիւս. կողմը, Թուրքիոյ, Աւստրիոյ և Սերբիականի միջեւ։ Երկիրն է բոլորովին անբեր ու աղքատ։ Կլիմայն ալ ընդհանրապէս ցուրտ է։

Ունի 9,000 քիլ. քառ. տարածութիւն և իբր 250,000 բնակիչ

Մայրաքաղաքն է Ջերինէ որ է բնակավայր Իշխանին։ Տուլչինօ և Անթիվարի նաւահանգիստներ են։ Իսկ նեղբին մասին մէջ կան Բօսկորիցա, Նիկշիճ։

Դարատաղցիք կարճ, աշխատասէր և արիասիրտ են։ Կը պատկանին Սլաւ ցեղին և կրօնիւ Յունադաւան են։

ԵԼԼԱԴԱ կամ ՅՈՒՆԱՍՏԱՆ

ՌՆԱԿԱՆ ՆԱՀԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Յ*ՈՒՆԱՍՏԱՆ փոքր երկիր մ'է Եւրոպիոյ հարաւային արեւելեան կողմը։ Սահմաններն են հիւսիսէն Թուրքիա, արեւելքէն Արշիպելագոս, հարաւէն Միջերկրական և արեւմուտքէն Յոնիական ծով։*

Յունաստան կը բաժնուի երեք բնական մասերու 1°. Եղլադա, 2°. Մորա կամ Պելոպոնէս, 3°. Հեղլենական կղզիք։ Յունաստան ունի բազմաթիւ ծոցեր, խորշեր ու թերակղզիներ որոնք իւր արտաքին հաղորդակցութեան շատ նպաստաւոր եղած են։

Ընդհանրապէս լեռնային երկիր մ'է Յունաստան որոյ հիւսիսէն ի հարաւ կ'երկարի Հեղլենական գօտին։ Երեւելի բազուկներն են Փինտար, Պարնասոս, Ոլիմպոս, Օսսա և Պելիօն։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Երկրին կլիմային ընդհանրապէս բարեխառն և առողջ է, միայն ծովեզերեայ մի քանի մասերն ճահճային ըլլալուն՝ տաք, վատառողջ ու ջերմնա են։ Դլխաւոր բերքերն են բամպակ, ձիթենի, թուղ, չամիչ, լեմոն, կիտրոն, աղնիւ գինի, ներկի նիւթեր, սուսամ եւլն։ Յունաստան ունի նաեւ մետաքս և մեղր։ Համբաւաւոր է Յունաստանի մարմարիոնը։

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Յունաստան ունի 65,000 քիլ. քառ. տրծ. և 2,200,000 բնակիչ։

ԱԹԷՆՔ (90,000 բն.) Մայրաքաղաքն Յունաստանի համանուն ծոցին մօտ ու երկաթուղեաւ կապուած է Պիրէոնի։ Աթէնք հին դարուց մէջ խիստ նշանաւոր եղած է իւր անուանի փիլիսոփաներով, գիտուններով և իւր բարձր քաղաքակրթութեամբ։ Հնութենէ մնացած շէնքերուն մէջ երեւելի են Բանիթիօն կամ Աթենասայ տաճարը, Ակրոպոլիսը։



Ակրոպոլիս

Գլխաւոր Նաւահանգիստք Ցոնիականի վրայ

Բադրաս, Մորայի հիւսիսային կողմը վաճառաշահ և բանուկ նաւահանգիստ է։

Կորնթոս, համանուն պարանոցին վրայ։ Անուանի է գինին ու չամիչը։ Նավարին, Մորայի արեւմտեան կողմը։

Նաբլէա, մեծ վաճառականութիւն ունի գինւոյ, ձէթի և սպունգի։

Արշիպեղագոսի վրայ են

Փիրէ կամ Պիրէոն, նաւահանգիստ Աթէնքի ծոցին վրայ։ Վոլօ, համանուն ծոցին վրայ նաւահանգիստ։



Կորնթոս

Ներքին գլխաւոր քաղաքներ

Եղլադայի մէջ,

Լարիսա կամ Եէնի-Շէհիր, Թերապնա, Թրիխալա և Կարտիցա գեղեցիկ ու ծաղկեալ քաղաքներ են։ Միսողունկի, ամուր բերդաքաղաք է։ Հոս մեռաւ Անգլիացի անուանի բանաստեղծ Լորտ Պայրըն։

Երեւելի են նաեւ Թիւա, Սպարտա, Լիվատիա, Մարաթոն, Լամիա, Մեգարա եւլն։

Մորայի մէջ կան,

Թրիփոլիցա, Մէթոն, Սպարտա, Ռոդոն, Մոնէմպազիա, Արմաֆիա, Քալաւռիտա եղէն։

Յոնիական կղզիք

Քորճու, (հինն *Կորկիւրէ*) համանուն մայրաքաղաքաւ։ Բաֆօ, և Քեֆալոնիա, *որ է Յոնիական արշիպելագոսի մեծագոյն կղզին։* Գլ. քաղաքն է *Արկոսդոլի*։ Զանդա (հինն *Զակինթոս*) համանուն քաղաքաւ։ Սանդա-Մաւրա (հինն *Լեւքաֆիա*)։ Թէաֆի (հինն *Իթակէ*), *հայրենիք Ոդիսեւսի*։ Զէրիկօ, *Մորայի հարաւային կողմը քարուտ և անբեր կղզի մ'է,*

Սրեւելեան Արշիպելագոս

Յունաստանի մեծագոյն կղզին է Եւբէա *կամ* Նեկրոբոնդէ, *Աատիկէի արեւելեան կողմը։ Գլխաւոր քաղաքն է Քալֆիա։*

Կիկլատեան *Արշիպելագոսի գլխաւոր կղզիներն են Հիդրա, Շիրա կամ Սիրա, Նաֆսոս, Թինօս, Անդրոս, Ծիա, Միլօ, Փարօ, ՍէրՓօ եւայլն։*

Ընդհանուր տեղեկութիւն

Յունաստան 1830 էն ի վեր հաստատուած թագաւորութիւն մ'է որ՝ հետզհետէ յառաջադիմելու վրայ է՝ չնորհիւ իւր աշխարհագրական նպաստաւոր դիրքի և բնակչաց գործունէութեան։ Յոյնք կը պատկանին Հելլէն ցեղին որ մեծ դեր կատարած է անցեալին մէջ։ Ա.յսօր եւս նշանաւոր են Յոյնք նաւային ու առեւտրական արուեստին մէջ ունեցած մեծ յարմարութեամբ։ Լեզուն է Նոր Հելլէներէն։ Կրօնն է Յունադաւանութիւն։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԵՒՐՈՊԻՈՅ ՎՐԱՅ

1.

Եւրոպա որ կիսագնդին մէջ կը գտնուի, — ի՞նչ է իր բնական ձեւը. — ի՞նչ ովկիանոսներ ու ծովեր կը տեսնէ. — Ո՞ր ծովերէն ձեւացած են Պոթնիոյ, Ֆինլանտիոյ, Բիւկայի, և Տանցիկի ծոցերը. — Հիւսիսային և Մէջերկրական ծովերէն ո՞ր ծոցերը ձեւացած են. — Ադրիականի, Արշիպելագոսի եւ Սեւ ծովերու մէջ ո՞ր ծոցերը կան. — Եւրոպիոյ Ովկիանոսներն ու ծովեր ի՞նչ երեւելի նեղուցներով միացած են Եւրոպիոյ կարեւոր լիճերը ո՞ր երկրաց մէջ կը գտնուին. — Քանի՞ աւազան

ունի Եւրոպա։ Ո՞ր երկիրներէն կ'անցնին եւ ո՞ր կը թափին Հեենոս, Դանուբ, Վոլգա, Ուրալ, Ռօն, Մարիցա, Լուառ, Վիսթուլա, Կուատիանա, Լպարօ, Բօ, Թակօ, Էլպա։ Եւրոպիոյ ո՞ր Մայրաքաղաքները գետերու վրայ չինուած են։ —

2.

Որո՞նք են Եւրոպիոյ գլխաւոր կղզիները. — Եւրոպիոյ ո՞ր թերակղզիները տէրութիւններ կը կազմեն. — Եւրոպա քանի՞ գլխաւոր հրուանդան ունի. — Ո՞ր կը գտնուին Ուրալ, Բէօլէն, Կովկաս, Ալպեան, Պիրէնեան, Ապէնինեան, Կարպաթ եւ Պալքան Լերինք։ Որո՞նք են Եւրոպիոյ երեք գլխաւոր հրաբուղխները. — Ո՞րոնք են Եւրոպիոյ երկրագործական երկիրները. — Ո՞ր երկիրները կ'արտադրեն արմտիք, գետնախնձոր, կանեփ, ճակնդեղ, գարի, վարսակ եւ առագ։ — Ո՞ր երկիրը կարտադրէ խաւեար, մուշտակ, առագաստի կտաւ, կաշի եւ կաթընտուր կենդանիներ. — Ո՞ր երկիրները կ'արտածեն ձկան իւղ, կարագ եւ պանիր. — Եւրոպիոյ ո՞ր երկիրները կ'արտադրեն գինի եւ այլ ոգելից ըմպելի. — Ո՞ր երկիրներն ունին հանքածուխ, մարմարիոն, պղինձ, երկաթ, զինկ, ծծումբ, րլադին, ոսկի եւ արծաթ. — Եւրոպական ո՞ր երկրաց մէջ ճեռագործ եւ ճարտարութիւն չատ ծաղկած են։

3.

Եւրոպա որչափ բնակիչ ունի եւ քանի՞ մեծ ընտանիքներու կը բաժնուին. — Ո՞ր ժողովուրդներն են Կաթոլիկ, Բողոքական եւ Յունադաւան։ Ո՞րոնք են Եւրոպիոյ գաղթական տէրութիւնները. — Ո՞րոնք են Բացարձակ, Սահմանադրական եւ Հանրապետական երկիրները։ Նշանակէ Եւրոպիոյ երեւելի նաւահանգիստները. — Յոյց տուր Զինուորական նաւահանգիստները. — Փորթոկալ, Սպանիա, Հարաւային Ֆռանսա, Իտալիա, Յունաստան ու Եւրոպական Թուրքիա ի՞նչ առեակ բոյսեր կ'արտադրեն։

4.

Ի՞նչ կողմանէ երեւելի է Պարաս. Լիօն, Շէֆֆիլտ, Օքսֆորտ, Քէմպրիճ, Մանչէսթըր, Նիս, Մալտա, Օռլէան, Նիւքէսըլ, Բարթիֆ, Նաֆոլի, Միլան, Օաէսա, Համպուրկ, Ճինէվրա. Քոլոնիա, Բալօս, Աժաէրխան, Վէնետիկ, Կարնթոս, Վարշաւիա, Կրաց, Սէլանիկ, Ֆիօրէնցա, Աթէնք, Հռոմ, Լայփցիկ, Մոսքուա, Ճիպրալթար, Վառնա, Արխանկէլ, Պէլգրատ, Լիվըրուլ, Ռոտդերտամ, Պըզանսօն, Բուսմըգ եւն։

5.

Ո՞ր ծնած են Պոնապարտէն-Տը-Սէն-Բիւռ, Լարա Պայրըն, Վիրգիլիոս, Շաթոպրիան, Տանդէ, Կառնպալտի, Լամըէ, Օֆէնպաք, Մոցարտ, Կլօփ, Շիլլեր, Կուդէ-Մղերկ, Մեծն Կոստանդիանոս, Տէֆէլէնէլի Ալի փաշա, Լէւան Ժ. Միքել Անճէլօ, Ամերիկաս-Վէսփուչէի, Վիքթօր-Հիւկօ, Թիէռ, Բոնէյլ, Պոսիւէ, Բասքալ, Ա.յվազովսքի Յովհաննէս։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՍԻԱ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Ասիա է Արեւելեան կիսագունտի մեծագոյն ցամաքն որ կը տարածուի Հին աշխարհի հիւսիսային և արեւելեան կողմը։

Սահմաններն են՝ հիւսիսէն Սառուցեալ ովկիանոս, հիւսիսային արեւելքէն Պէհրինկայի նեղուց և Պէհրինկայի ծով, արեւելքէն Խաղաղական ովկիանոս, արեւել. հարաւէն Մալաքքայի նեղուց, հարաւէն Հնդկաց ովկիանոս, հարաւային արեւմուտքէն Պապ-էլ-Մանտէպի նեղուց, արեւմուտքէն կարմիր ծով, Միջերկրական, Արշիպելագոս, Մարմարա, Սեւ, Կասպից ծովերն և Ուրալ գետ ու Կովկաս լերինք։

Ծովք և Ծոցք

Սառուցեալ ովկիանոսէ ձեւացած է Բարացի ծոցը. Խաղաղականէ ձեւացած են Պէհրինկայի, Օխոդսկի, Ճապոնի, Դեղին, Կասպից և Չինաց ծովերը։ Արեւմտեան կողմը կը գտնուին Կարմիր, Միջերկրական, Արշիպելագոս, Մարմարա, Սեւ և Կասպից ծովերը որոնք իբր սահման կը ծառայեն։

Ասիոյ դլխաւոր ծոցերն են Օսկի, Եճնիսէ որոնք ձեւացած են Սառուցեալ ովկիանոսէ. Անատիրի ծոց՝ Պէհրինկայի ծովէն ձեւացած, Բէյիլիի ծոց՝ Դեղին ծովէն ձեւացած, Թոնկինի և Սիամի ծոցք՝ Չինաց ծովէն ձեւացած։

Հնդկաց ովկիանոսէն ձեւացած են՝ բաց ի Պէնկալայի և Օմանի մեծ ծոցերէն՝ նաեւ Մարթապանի, Պարսից և Ասէնի ծոցերը։ Միջերկրականի մէջ կ'երեւին Ալէքսանդրիոյ և Ատալիոյ ծոցերը։ Արշիպելագոսի մէջ՝ Զմիւռնիոյ, իսկ Մարմարայէ ձեւացած են Մուդանիոյ և Նիկոմիդիոյ ծոցերը։

Նեղուցք

Ասիոյ նեղուցներն են Պէհրինկայի նեղուց՝ Համանուն ծովն և Սառուցեալ ովկիանոսի միջեւ, Դարաֆիայի նեղուց՝ Սաքալեան կղզւոյն և Սիպերիոյ միջեւ, Լա Բէյրուզի նեղուց Ճապոնի եզը կղզւոյն և Սաքալեանի միջեւ, Փորէպայի նեղուց Ճապոնի և Չինաց ծովերուն մէջ տեղ, Մալաֆֆայի նեղուց՝ Հնդկաց և Խաղաղական ովկիանոսներու միջեւ որ միանգամայն Ասիան կը բաժնէ Ովկիանիայէ, Հիւրմիւզի նեղուց՝ կը միացնէ Օմանի ծոցն Պարսկային ծոցին հետ։ Պապ-էլ-Մանտէպի նեղուց՝ Ասէնի ծոցին և Կարմիր ծովու միջեւ, Սուէզի ջրանցք որով Ափրիկէ կը բաժնուի Ասիայէ և Միջերկրականը կը միանայ Կարմիր ծովու հետ։ Արեւմտեան կողմը կ'երեւին Տարտանէլի և Կ. Պոլսոյ նեղուցք՝ ի մէջ Արշիպելագոսի, Մարմարայի և Սեւ ծովերու։

Լիճք

Ասիա ունի մեծ ու փոքր բազմաթիւ լիճեր։ Մեծագոյններն են Կասպից և Արալ որոնք իրենց մեծութեանն համար կը կոչուին ծով։

Ուրմիա Պարսկաստանի մէջ, Սեւան, Կովկասու մէջ, Վանայ, լիճ, Մեռեալ, Թուզ-կէօլ, Պէյ-Շէհիր, Աֆ-Շէհիր՝ Ասիական Թուրքիոյ մէջ։ Պայքալ և Պայքաշ՝ Սիպերիոյ մէջ։ Լոպ, Քուքունուր, Կապոյտ՝ կեդրոնական Լեռնաշաւտին մէջ։

Գետք

Ասիա բաժնուած է 5 աւազաններու, Հիւսիսային, Արեւելեան, Հարաւային, Արեւմտեան և կեդրոնական զոր կը կազմեն Կասպից և Արալ ծովերը։

Հիւսիսային աւազանի հարկատուներն են՝ Օսկի, Եճնիսէ ու Լէնա։

Արեւելեան » » » Անատիր, Անուր, Հօհանկ-Հօ կամ Դեղին, Քեանկ կամ Կապոյտ, Բանկօճ և Մեկոնգ։

Հարաւային աւազանի հարկատուներն են՝ Անա, Պրահմապուտրա, Գանգէս և Կոտավէրի որոնք կը թափին Պէնկալայի ծոցը։ Ինդոս կամ Սինճ՝ Օմանի ծոցը, Տիգրիս և Եփրատ Պարսկային ծոցը։

Արեւմտեան աւազանին մէջ կը թափին՝ Ալիս կամ Դզղղ գրմագ, Իրիս կամ Եշիլ-գրմագ, Սամարիա, Ճորոխ կամ Չուրուխ Սու ի Սեւ Ծով։ Արշիպելագոսի մէջ կը թափին՝ Կէտիզ կամ Հերմոս, Մէնտէր կամ Մեանտրոս։

Կեդրոնական աւազանի հարկատուներն են՝ Կուր և Երասխ՝ Կասպից, Սիր-Տարիա և Ամու-Տարիա՝ Արալայ Ծովը։

Թերակղզիք, Կղզիք եւ Հրուանդանք

Ասիոյ չուրջը կը դանուին հետեւեալ թերակղզիք։

Անատօլուկամ Փոքր Ասիա՝ արեւմտեան կողմը։

Արաբիա, Հնդկաստան և Հնդկա-Չին հարաւակողմը։

Քորէա և Քամչաթկա՝ արեւելեան կողմը։

Ասիոյ գլխաւոր կղզիներն են՝ Նոր Սիպերիա և Վրանկէլ Սառուցեալ ովկիանոսին մէջ։ Խաղաղականի մէջ՝ Քուրիլեան, Սախալեան, Ճապոնեան կղզիք (Եզո, Նիփօն, Սիքօք և Քիւսիու), իսկ Ֆորմոզա, Հայնան և Մաֆաօ՝ Չինաց Ծովուն մէջ։

Հնդկաց ովկիանոսին մէջ կը դանուին Լաքէտիվեան, Մալտիվեան, Սեյլան, Անտաման և Նիքօպար կղզիք։

Միջերկրականի և Արշիպելագոսի մէջ կը դանուին Հոդոս, Սամոս, Քիոս, Միտիլլի եւն։

Ասիոյ գլխաւոր հրուանդաններն են Գրտխ Հիւսիսոյ կամ Սիվէրօ-Վոսքոյնի՝ Սիպերիոյ հիւսիսային կողմը։ Գրտխ Արեւելեան՝ Սիպերիոյ հիւսիսային արեւելեան կողմը։ Հոռմանիա՝ Մալաքքա թերակղզոյն հարաւային ծայրը։ Գրտխ Գոմորին՝ Հնդկաստանի հարաւային ծայրը, Ռազիկաթ՝ Արաբիոյ հարաւակողմը։ Պասա-Պուրնու՝ Փոքր Ասիոյ արեւմտեան կողմը։

Լերինք

Ասիոյ գլխաւոր լեռնագօտիներն են՝ Ալդայ և Սդանովոյ՝ Չինու և Սիպերիոյ միջեւ։ Արեւելեան կողմը Բուն Չինու լերինք՝ համանուն երկրին մէջ. Հիմալայա գօտի՝ Հնդկաստանի և Չինու միջեւ, որ կը պարունակէ երկրագնդիս բարձրագոյն գագաթները։ Այս շղթային բազուկները կ'երկարին 'ի Հնդկա-Չին և տեղւոյն անուամբ կը կոչուին։ Կովկասու լերինք՝ Սեւ և Կասպից Ծովերու

միջեւ։ Արարատ, Տաւրոս, Անտի-Տաւրոս, Լիբանան՝ Ասիական Թուրքիոյ մէջ։ Հինտու-Քուշ՝ Պարսկաստանի և Աֆղանիստանի մէջ։ Էլ-Արեթ՝ Արաբիոյ մէջ։ Ուրալ՝ Ասիոյ արեւմտեան կողմը։ Արեւելեան և Արեւմտեան Կաղ՝ Հնդկաստանի երկու կողմերը։

Կլիմայ, Բուսաբերութիւն, Հաճիք եւ Կենդանիք

Ասիա կը դանուի Հիւսիսային Սառուցեալ, Հիւսիսային բարեխառն և Արեգեալ գօտիներու տակ։ Հիւսիսային մասերն սաստիկ ցուրտ կ'ընեն, ձմեռներն երկար. հողը խոնաւ ու ջրոտ և ընդհանրապէս նուազ բնակելի և այս պատճառաւ հողագործութիւնն ալ շատ եւս ծնայած է։ Միջին մասերն բարեխառն ու հողն արդասաւոր է. իսկ ամենէն բազմամարդ, հարուստ և բարերեր աշխարհներն են հարաւային երկիրք որոց մէջ երկու եղանակ միայն կը տիրէ՝ չոր և անձրեւային։

Ասիոյ բուսական գլխաւոր հարստութիւններն են՝ արմտիք, բամպակ, խահուէ, շաքարեղէգ, բրինձ, թէյ, արմաւ, համեմունք, խնկեղէն, պանան, քօքօ, կինամօն, ծխախոտ, ներկի նիւթեր, չինուխեան փայտ, լեղակ, ձիթենի, տաք երկրի պտուղներ եւայլն։

Ասիա նշանաւոր է նաեւ իւր հարուստ հանքերով։ Ունի թանկագին քարեր, ոսկի, արծաթ, բլատին, պղինձ, քարիւղ, անագ, երկաթ, կապար, քրոմ, մարմարիոն եւն։

Ընտանի ամեն տեսակ կենդանիներէ 'ի զատ՝ Ասիոյ հար. երկրայ մէջ կը դանուին առիւծ, վագր, ռնգեղջիւր, փիղ, ընձուղտ, կոկորդիլոս, պօա օձ և այլ թունաւոր սողուններ ու ճճիներ։ Իսկ հիւսիսային երկրայ մէջ կան մուշտակաւոր կենդանիք։

Քաղաքակրթութիւն Ասիոյ

Ասիա իւր յարակից կղզիներովին ունի իբր 44,160,000 քառ. քիլ. տարածութիւն և իբր 800 միլիոն բնակիչ։

Մարդկային ազգի պատմութեան մէջ խիստ նշանաւոր եղած է Ասիա իբր ծրան արուեստից, գիտութեանց և բարձր քաղաքակրթութեան։ Սակայն այսօր՝ համեմատաբար իւր փառաւոր անցեալին՝ շատ եւս ծնայած է։

Ասիոյ բնակիչք մեծաւ մասամբ կը բաղկանան Մոնկոլեան և Կովկասեան ցեղերէ որոց մեծագոյն մասին կրօնն է կռապաշտութիւն, մնացեալք Քրիստոնեայ և Մահմէտական են։

Ասիական տէրութեանց կառավարութեան ձեւն ընդհանրապէս բացարձակ Միապետութիւն է։

Ասիա բաժնուած է 12 տէրութեանց,

Հիւս. մասը կը պարունակէ Ռուսական Ասիա

Արեւմտ. » » » Կովկասիա, Ասիական Թուրքիա և Արաբիա։

Մէջին մասը կը պարունակէ Թուրքաստան, Պարսկաստան, Աֆղանիստան և Պելուճիստան։

Հար. մասը կը պարունակէ Հնդկաստան և Հնդկա-Չին։

Արեւլ. » » » Չինաստան և Ճափոն։

Ասիական Աշխարհ

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՍԻԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈՒՑՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՍԻԱ կը պարունակէ երեք գլխաւոր երկիրները 1° ՍԻՊԵՐԻԱ, 2° ԿՈՎԿԱՍԻԱ, 3° ԹՈՒՐՔԱՍՏԱՆ կամ ԱՆԴՐ-ԿԱՍՊԵԱՆ ԱՇԽԱՐՀ։

1° ՍԻՊԵՐԻԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈՒՑՈՒԹԻՒՆ

Սիպերիա կը գրաւէ Ասիոյ հիւսիսային մասն և աւելի մեծ է քան ամբողջ Եւրոպա։

Սահմաններն են՝ Հիւսիսէն Սառուցեալ ովկիանոս, Հիւսիսային

արեւելքէն Պէհրինգայի նեղուց և ծով, արեւելքէն Օխոցքի և Ճապոնի ծովերը. հարաւէն Չինական կայսրութիւն և Թուրքաստան, արեւմուտքէն Կասպից ծով, Ուրալ գետ ու Եւրոպա։

Սիպերիա ընդարձակ ու տափարակ երկիր մ'է որոյ սահմանները վրայ կ'երեւին բարձրաբերձ գօտիներ։ Երկրին մանաւանդ հիւսիսային կողմերը սաստիկ ցուրտ կ'ընեն և ձմեռներն ալ խիստ երկայն են, միայն արեւմտեան և հարաւային մասանց մէջ քիչ քանակութեամբ յառաջ կ'ուգան արմաւիք, դեղնախնձոր, հաճար, վարսակ ու գարի։ Սիպերիա ունի ոսկւոյ, արծաթի, բլագինի և պղնձի հարուստ հանքեր։ Երեւելի են Սիպերիոյ մուշտակաւոր կենդանիները։

ԲՆԱԿԱՒԱՆՆԵՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Սիպերիա ունի 12,500,000 քառ. քիլոմէթր տարածութիւն և 4,500,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է Թօպօլսք (30,000 բն.) Իրթիշի վրայ, երեւելի է այս քաղաքը՝ իբր կեդրոն Եւրոպիոյ և Ասիոյ վաճառականութեան։ Ունի կաշւոյ գործարանները։

Իրքուդսք, Պայքալ լճին մօտ, Չինաւ հետ մեծ վաճառականութիւն ունի

Օմսք, Թուրքաստանի սահմանին մօտ։

Կարեւոր են նաեւ Էքաթերինպուրկ, Սեմիբալատինսք, Ներչինսք։ Իսկ իբրեւ նաւահանգիստ երեւելի են Բէրոզովոյի, Օխոցք, Ամուր ու Նիխոլայեվսք։

Ընդհանուր տեղեկութիւն

Սիպերիա հին աշխարհը կը կոչուէր Սկիւթիա և միայն վերջի դարուս մէջ լաւ մը ճանչցուեցաւ։ Սիպերիոյ բնակիչք կը բաղկանան Թաթարներէ, Մոնկոլներէ, Ռուսերէ և այլ ցեղերէ։ Ռուս տէրութիւնը՝ քաղաքական յանցաւորները Ներչինսք և Սաքալեան կղզին կ'աքսորէ։ Սիպերիոյ բնակիչք ընդհանրապէս կ'զբաղին ձկնորսութեամբ, որսորդութեամբ, կաշեգործութեամբ և Չինաու ու Եւրոպիոյ հետ վաճառականութեամբ։

2° ԿՈՎԿԱՍԻԱ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Կովկասիա կը տարածուի Համանուն լեռնագօտւոյն Հարաւակողմը՝ Սեւ և Կասպից ծովերուն միջեւ, իսկ Հարաւէն Իրեն սահմանակից են Թուրքիա և Պարսկաստան։

Կովկասիա ընդհանրապէս լեռնային երկիր մ'է։ Ունի ընդարձակ և բարեբեր հովիտներ ու դեղեցիկ դեաներ։ Կլիման՝ բարձր լերանց պատճառաւ՝ ձմեռները սաստիկ ցուրտ, իսկ ամառներն ալ դաչտային մասանց մէջ չափազանց տաք կ'ընէ։ Գլխաւոր բերքերն են արմաիք, որթեւտունկ, բամպակ, ձիթապտուղ, ամէնէ մրգեղէնները, ունի նաեւ մետաքս և բուրդ։ Հանքայ մէջ նշանաւոր են պղինձը, երկաթը, արծաթախառն կապարը և մանաւանդ քարիւղն ու նաւդը որոյմէ մեծ քանակութեամբ դուրս կը ղրկէ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Կովկասիա ունի 463,000 քիլ. քառ. տարածութիւն և 7,500,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է Թիֆլիզ կամ Տիխխա (90,000 բն.), կուր գետին վրայ մեծ ու վաճառաշահ քաղաք՝ որ կապուած է երկաթուղեաւ՝ Պաքուի և Պաթումի հետ։ Ունի նորաշէն ու գեղեցիկ թաղեր, թատրոններ ու եկեղեցիներ։ Հայք կարեւոր տեղ մը կը բռնեն այս քաղաքին մէջ։

Երեւելի են նաեւ Խոտայիս, որ հին ատեն Իմերէթի մայրաքաղաքն էր. — Դանձակ կամ Եղիսաբեթուպոլիս, գեղեցիկ քաղաք որ էր աթոռ Աղուանից թագաւորութեան։ — Նախիջեւան, աշխարհիս հնագոյն քաղաքաց մին զոր Շահ Աբբաս կործանելով բնակիչները բռնի տարաւ ի Պարսկաստան ուր հիմնեցին Նոր Ջուղա քաղաքը։ Նաւահիւ, երեւելի են գորգերը։ Երեւան, համանուն նահանգին մէջ՝ Հրազդան գետին վրայ։ Ասոր մօտն է Վաղարշապատ՝ ուր կը գտնուի Էջմիածնայ հռչակաւոր վանքն՝ որ է Մայր աթոռ Հայոց ընդհանրական կաթողիկոսութեան։ Շուշի կամ Շուշա, բնակիչները Հայ ու Թաթար են։ Նոր Պայազիտ, Սեւանայ լճին մօտ։ Ախալցխա, Կուրի մօտ վաճառաշահ քաղաք է։ Կիւմրի

կամ Ալեքսանդրապոլիս, Ախուրեան գետին մօտ՝ նոր և ամուր քաղաք է։ Կարս, անուանի բերդաքաղաք է։ Երեւելի են նաեւ Ազուլիս, Արտահան, Նոխի եղն։ Իսկ իբրեւ նաւահանգիստ կարեւոր են Բորի և Պարտում Սեւ ծովու վրայ, Պաթում, Կասպիցի վրայ։ Այս վերջինն ունի առատ քարիւղ և մեծ վաճառականութիւն։



Էջմիածին

Ընդհանուր Տեղեկութիւն

Կովկասիա Ռուսիոյ կարեւոր բաժանումներէն մին և առանձին փոխարքայութիւն մ'է։ Երկիրն է հարուստ, բարեբեր և վաճառաշահ։ Փոթիէն ու Պաթումէ մինչեւ Պաքու երկաթուղի մը չենուած է։ Գլխաւոր բնակիչներն են Վրացի, Հայ, Թաթար, Թուրք, Լեզկի, Մընկրել, Ապազա, Պարսիկ, Լազ եղն։ Այս ժողովրդոց մէջ Հայք մանաւանդ կարեւորութիւն մ'ունին իրենց վաճառականութեամբ և արուեստներով։

3° ԹՈՒՐՔԱՍՏԱՆ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Թուրքաստան ընդարձակ և տափարակ երկիր մ'է որ կը տարածուի Սիպերիոյ, Չինու, Աֆղանիստանի, Պարսկաստանի և Կասպից ծովու միջեւ։

Երկրին հիւսիսային և արեւմտեան մասերն ընդհանրապէս անապատ և քաղաքներն ալ պարզապէս ովասիսներ են։ Արեւելեան և հարաւային մասերուն վրայ կ'երկարին բարձր լերանց գօտիներ, իսկ Կասպից ծովու արեւելեան հարաւային կողմը կը տարածուի Բարա-Գում, և Արալայ ծովակին արեւելեան կողմը Դշղզլ-Գում մեծ անապատը։

Թուրքաստանի մէջ ամառները սաստիկ տաք, իսկ լեռնային գաւառաց մէջ ձմեռները յուրտ կ'ընէ։

Թուրքաստանի հարաւային և արեւելեան մասերը կը պարունակեն արդասաւոր և ջրառատ դաշտեր որք կ'արտադրեն ցորեն, ձխախոտ, դարի, բամպակ, մրգեղէն և տաք երկրի բերքեր։ Թուրքաստան ունի հարուստ հանքեր ոսկւոյ, արծաթի, կապարի ու թանկագին քարերու։

ԲԱԴԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Թուրքաստան ունի 3,434,000 քիլ. քառ. տարածութիւն և 5,600,000 բնակիչ։

Այս երկիրը քաղաքականապէս կը բաժնուի երկու մասերու 1° Ռուսական Թուրքաստան 2° Անկախ Թուրքաստան։

ՌՈՒՍԱԿԱՆ ԹՈՒՐՔԱՍՏԱՆ

Գլխաւոր քաղաքներն են Թաշկենտ, կուսակալանիստ և վաճառաշահ քաղաք։ Ունի մեռաքսեղինայ, կաշւոյ և անօթեղինայ գործարաններ։ Խոխանս Բարա-Սուի վրայ։ Սամրղանս գեղեցիկ դիրքով վաճառաշահ և ճարտարարուեստ քաղաք է։ Հոս է Թիմուր-Լէնկի գերեզմանը։

Նշանաւոր են նաեւ Խոճենս, Քուլճա, Մէրվ և Բահլ կամ Պալխ։

ԽԱՆՈՒԹԻՒՆ ԽԻՎԱՅԻ

Գլխաւոր քաղաքն է Խիվա, վաճառաշահ քաղաք, ունի գորգի և մեռաքսեղինայ վաճառականութիւն։

Ուրկենճ, ունի երկրագործական բերքեր և մեծ վաճառականութիւն Եւրոպիոյ հետ։

ԽԱՆՈՒԹԻՒՆ ՊՈՒԽԱՐԱՅԻ

Մայրաքաղաքն է Պուխարա, Զէրաֆճանի բարեբեր հովտին մէջ հին և անուանի քաղաք որ է կեդրոնական Ասիոյ մեծագոյն վաճառատեղին եւսկից կը մեկնին կարաւանք յԵւրոպա, ի Սիպերիա, ի Չին, ի Հնդկաստան և ուրիշ երկիրներ։ Պուխարա ունի դպրոցներ, մզկիթներ և շատ մը աւերակներ։

Քարշի, Ամու-Տարիայի մօտ, ունի մեռաքսեղինայ և ղինակի գործարաններ։ Երեւելի են նաև Հիսար, Շէհրի-Զէպս, և այլն։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Թուրքաստան կամ Թաթարիստան հին դարուց մէջ շատ երեւելի եր իւր հզօր աշխարհակալներով։ 1865 էն ի վեր Ռուսք սկսան այս երկրին այլ և այլ մասանց տիրել, այնպէս որ՝ Թուրքաստանի ինչ ինչ մասերն անուանական անկախութիւն մը միայն ունին։ Թաթարք Մահմէտական են ու կ'զբաղին երկրագործութեամբ, խաչնարածութեամբ ու վաճառականութեամբ։ Քաղաքակրթութեան մէջ շատ յետադէմ են։ Երկրին գլխաւոր վաճառքներն են ձխախոտ, արմաւիք, մեռաքս, բուրդ, կաշի, թանկագին քարեր, ղէնք եւն։

ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

ԸՆԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ Օսմանեան պետութեան կարեւորագոյն մէկ մասն է և կը գրաւէ Ասիական ցամաքին արեւմտեան մասը։

Սահմաններն են Հիւսիսէն Սեւ ծով, Հիւսիսային արեւելքէն Կովկասիա, արեւելքէն Պարսկաստան և Պարսից ծոց, Հարաւէն Արաբիա, Սուէզի ջրանցք և Միջերկրական ծով, արեւմուտքէն Արշիպելագոս և Մարմարա։

Ասիական Թուրքիա ընդհանրապէս լեռնային երկիր մ'է։ Արեւելեան մասին մէջ կ'երեւին Արարատեան լերինք, Սեւ ծովու

եղերքը՝ Անտի-Տաւրոս, Միջերկրականի երկայնքը Տաւրոս, Միջերկրականի արեւելեան եղերայ վրայ՝ Լիբանան, իսկ Պարսից սահմանագլխին երկայնութեամբ կ'երեւին Բիւրտիսանի լերինք։ Ազարաաի բարձրադոյն գագաթն է Մասիս։ Տաւրոսի գլխաւոր գագաթներն են Սիհան-Տաղ (Սեպուհ), Ազնա-Տաղ, Պասպա-Տաղ, Հակ ամենէն նշանաւորն է Արգէոս կամ Էրճիաս, որ ունի 4,000 մէթր բարձրութիւն։ Անտիտաւրոսի գլխաւոր գագաթներն են Պինկէօլ (Բիւրակն), Մուրաս-Տաղ և Քէշիշ-Տաղը Պրուսայի մօտիկ։ Լիբանանու գլխաւոր գագաթներն են Թաւիոր և Կարմէղոս։

Գետք եւ Լիճք

Ասիական Թուրքիա կը բաժնուի երեք գլխաւոր ջրհեղձներու 1° Սեւ ծով ուր կը թափին Զիւրիւֆ-Սու (Ճորոխ), Եշիլ-Իրմաֆ (Իրիս), Գզըլ-Իրմագ (Ալիս) և Սաֆարիա։ 2° Մարմարայի մէջ կը թափի Սուսուրլու, Արշիպելագոսի մէջ՝ Մէնտէր, Կէյիզ և Պաքր-Չայ, Միջերկրական կը թափին Գարա-Սու (Կիւզնոս), Սիհան, Ճիհան և Որոնդէս, Յորդանան կը թափի Մեռեալ ծովու մէջ։ 3° Պարսկային ծոց կը թափին Ասիական Թուրքիոյ մեծագոյն գետերը Եփրատ՝ որ ունի երկու ճիւղ, մին կը բղխի Ծաղկեօղ լեռներէն և կը կոչուի Արածանի, իսկ միւսը կը բղխի Կարնոյ լեռներէն և կը կոչուի Գարա-Սու։ Տիգրիս կը բղխի Խարբերդու լեռներէն և միանալով Եփրատի՝ կը կազմէ Շաթ-Իլ-Արապը և կը թափի Պարսից ծոց։ Կասպից ծովու միակ հարկաւոն է Երահա կամ Արաքս որ կը բղխի Կարնոյ լեռներէն։

Ասիական Թուրքիոյ գլխաւոր լիճերն են՝ Վանայ կամ Բզնունեաց ծով, արեւելեան մասին մէջ։ Թուզ-կէօլ, Աֆ-Շէհիր, Պէյ-Շէհիր, Էկիրտիր՝ Փոքր Ասիոյ մէջ։ Իզնիկի, Սապանճայի փոքր լճակները՝ Մարմարայի մօտ։ Տիբերիայի, Անտիոքայ, Հալէպի և Մեռեալ ծովակը՝ Սուրիոյ երկրին ու Պաղեստինու մէջ։

Կրոնագ և Բուսաբերութիւն. — Ասիական Թուրքիոյ արեւելեան և հիւսիսային գաւառները բարձր լերանց պատճառաւ սաստիկ ցուրտ կ'ընեն։ Փոքր Ասիա համեմատաբար աւելի բարեխառն է՝ բայց ի ծովեզերեայ մի քանի մասերէ որոց մէջ սաստիկ ջերմ կը տիրէ։ Իսկ Միջագետաց, Պաղեստինու և Սուրիոյ մերձակայ գաւառաց մէջ սաստիկ տաք կ'ընէ։

Ասիական Թուրքիա ունի պարարտ հող, ընդարձակ և բարեբեր հովիտներ և ընդարձակ մարգագետիններ։ Երկրագործութիւնը հետզհետէ ծաղկելու վրայ է։ Գլխաւոր բերքերն են արմտիք, բամպակ, սուսամ, ծխախոտ, ձիթենի, որթատունկ, թուզ, չամիչ, աֆիոն, լեմոն, նարինջ, ներկի նիւթեր, արմաւ, եգիպտացորեն, շաքարեղէգ, խահուէ, հիւսելի նիւթեր, մրգեղէն, կանեփ, բրինձ, վուշ եւն։ Ասիական Թուրքիա ունի նաեւ ընդարձակ անտառներ որք կը մատակարարեն շինութեան աղնիւ փայտ։ Ունի նաեւ առատ մետաքս։

Կենդանիք և Հանքք. — Ասիական Թուրքիոյ մէջ կան ոչխար, այծ (մանաւանդ Էնկիւրիոնը), ձի, ջորի, կով, եզ, ուղտ, մուշտակաւոր կենդանիներ, թռչուններ և հարաւային մասանց մէջ ալ՝ վայրի գաղանք։

Ասիական Թուրքիա ունի հարուստ հանքեր պղնձի, արծաթի, խառն կապարի, ադի, պղպեղի, քրոմի, պօռասի, շինութեան քարերու եւն։

ԲՆԱԿԱՐԱՆԱՆ ԵՒ ԱՐԴԻԱԴԻՐ

Ասիական Թուրքիա ունի 1,250,000 քիլ. քառ. տարածութիւն և 16,000,000 բնակիչ

Պատմական գլխաւոր բաժանումներն են Փոքր Ասիա, Միջագետք, Սուրիա, Պաղեստին եւն։ Իսկ այսօր՝ Ասիական Թուրքիա բաժնուած է քսան կուսակալութեանց (Վիլայէթ) որք են,

Գասթէմունի և Տրապիզոն՝ Սեւ ծովու վրայ։

Խուտավէնտիկար՝ Մարմարայի վրայ։

Այդըն՝ Արշիպելագոսի վրայ։

Գոնիէ, Սմանա, Հալէպ, Պէյրութ, Սուրիէ՝ Միջերկրականի վրայ։

Էրզրում՝ Ռուսիոյ սահմանին վրայ։

Վան, Մուսուլ, Պաղտատ և Պասրա՝ Պարսից սահմանագլխին վրայ։

Էնկիւրիւ, Սըվազ, Մամուրէթ-իւլ-Ազիզ, Տիարպէքիր և Պիթլիս՝ ներքին մասանց մէջ

Օսմանեան Արշիպելագոսի կղզիք կը կազմեն առանձին կուսակալութիւն մը՝ Ճէզայիրի-Պահրը-Սէֆիտ անուամբ։

Իւրաքանչիւր կուսակալութիւն կը բաժնուի Նահանգներու (Լիվա) և նահագներն ալ՝ Գաւառակներու (Գազա)։

Գլխաւոր Նաւահանգիստք

Սեւ Ծովու վրայ կը գտնուին։

Տրապիզոն, Սեւ Ծովու վրայ Ասիական Թուրքիոյ ամենէն նշանաւոր և վաճառաշահ նաւահանգիստն է. կ'արտադրէ բրինձ, լուբիա, կաղին, ծխախոտ եղն։

Կիրասոն և Օrsու, Տրապիզոնի արեւմտեան կողմը, երկրորդական նաւահանգիստներ են։

Սամսոն, բանուկ նաւահանգիստ է. ունի ծխախոտ, բրդեղէն և բամպակեայ հիւսուածքներ։

Սինոպ, համանուն թերակղզւոյն վրայ. կ'արտադրէ ատաղձ։

Ինէպօլու, նոյնպէս ունի մեծ քանակութեամբ ատաղձ։

Էյրէլի, մօտերը կան հանքածուխ։

Մարմարայի վրայ կը գտնուին։

Նիկոմիդիա կամ Իզմիտ, համանուն ծոցին խորը, բանուկ նաւահանգիստ մ'է։ Ունի երկրագործական բերքեր։ Հայոց-Թագաւորի երկաթուղւոյ գլխաւոր կայարանն այս քաղաքին սկսած է երկարիլ մինչեւ Էնկիւրի։

Մուտանիա և Պանտրմա, բաւական բանուկ նաւահանգիստներ են և կ'արտածեն դինի, մրգեղէն, ձէթ, մետաքս և արմատ։

Արշիպելագոսի վրայ և Ասիական Թուրքիոյ ամենէն վաճառաշահ և հարուստ նաւահանգիստն է Իզմիր կամ Զմիւռնիա (160,000 բն.), համանուն ծոցին խորը։ Ունի ընդարձակ վաճառականութիւն ներկի նիւթերու, չամիչի, թուղի, մոլթի, ծխախոտի, աֆիոնի, սուսամի, արմտեայ, օղիի, գորգերու եւն։ Շատ Հայ կայ այս քաղաքին մէջ որք առաջնակարգ դիրք մը բռնած են և ընդհանրապէս կ'ղեկավարեն վաճառականութեամբ։ Ունին հոյակապ եկեղեցի, Հիւանդանոց ու երկսեռ վարժարաններ։ Հոս կը հրատարակուի «Արեւելեան Մամուլ» հմուտ և օգտաչատ Ամօրեայ Հանդէսն, անօրինութեամբ Աղգային մեծանուն դրագէտ՝ Մամուրեան Մատթէոս Եֆենտիի։

Միջերկրականի վրայ կը գտնուին,

Սմիռնա, համանուն ծոցին խորը՝ ամուր և վաճառաշահ նաւահանգիստ։ Մօտերը կան քրոմի հանք։

Մէրսին, վորը նաւահանգիստ մ'է որ երկաթուղեայ միացած է Թարսուս և Ատանա քաղաքաց։

Խրէնտէրուն, համանուն ծոցին խորը բաւական բանուկ բայց վատառողջ օդով նաւահանգիստ մ'է։

Թարապլուսը-Շամ, Սուրիոյ գլխաւոր նաւահանգստաց մին է, ունի մետաքս և նարինջ։

Պէյրութ, (100,000 բն.) Սուրիոյ ամենէն ծաղկեալ, վաճառաշահ և հարուստ նաւահանգիստն է, կ'արտադրէ գինի, մրգեղէն և մետաքս։

Եաֆա

Եաֆա, նաւահանգիստ երուսաղէմի, համբաւաւոր է նարինջը։ Դէպ ի հարաւ կը գտնուին Աշեա և Գազա։

Ներքին գլխաւոր քաղաքներ՝ Արեւելեան մասին մէջ

Կարին կամ Էրզրում, վերին Եփրատի վրայ՝ մեծ և վաճառաշահ քաղաք է։

Հասան-Գալա, Երասխայ մէկ ճիւղին վրայ ամուր քաղաք է։

Բաբերդ կամ Պայպուրդ, լեռնային գեղեցիկ տեսարաններով քաղաք մ'է՝ Ճորոխի վրայ։

Վան կամ Շամիրամակերտ, համանուն լճին արեւելեան կողմը բազմամարդ ու վաճառաշահ քաղաք է։ Վանայ մօտն է Վարագայ լեռն և Աւագ Նշանի համբաւաւոր վանքը։

Բաղէճ կամ Պիթլիզ, Վանայ ծովուն արեւմտեան կողմը, Ասիական Թուրքիոյ վաճառաշահ քաղաքայ մին է։ Ունի դեղեցիկ դիրք և ձեռագործներ։

Մուշ, Եփրատի հովտին մէջ, գեղեցիկ պարտէզներով շրջապատեալ քաղաք մ'է։ Բնակիչք մեծ մասամբ Հայ են։ Ակիւղ 8 ժամ հեռաւորութեամբ կը գտնուի Ս, Կարապետի երեւելի վանքը։

Երզնկա կամ Էրզինկեան, Եփրատի մօտ կարեւոր քաղաք մ'է։ Բնակիչք մեծ մասամբ Հայ են։

Տիգրանակերտ կամ Տիարպէքիր, Տիգրիսի վրայ նշանաւոր բերդաքաղաք է։ Ունի դեղեցիկ ձեռագործներ կաշւոյ, մետաքսեղինաց և գոհարեղէններու։

Մալաթիա, դեղեցիկ դիրքով վաճառաշահ քաղաք մ'է Եփրատի մէկ ճիւղին վրայ։

Ակն կամ Էկին, Եփրատայ ակ ափանց վրայ դեղեցիկ պարտէզներով շրջապատուած Հայաշատ քաղաք մ'է,

Ուրքիր, Եփրատայ մօտ՝ ունի տեղական ձեռագործներ։

Սեբաստիա կամ Սըվազ, Գըզըլ-Ըրմագի վրայ դեղեցիկ և հարուստ քաղաք է։ Ունի առատ արմտիք, բուրդ, մեղր և ընդարձակ առեւտուր։ Հոս ծնած է Մխիթար Աբբայ, մեծանուն հիմնադիրն Մխիթարեան բազմարդիւն միաբանութեան։ Երեւելի են նաեւ Պաճրա, Մարզուան, Պայազիտ, Բալու, Բեւնախ, Ադաշկերտ են։

Միջագետաց գլխաւոր քաղաքներն են

Մուսուլ, Տիգրիսի վրայ՝ հին Նինուէ քաղաքին աւերակաց մօտ վաճառաշահ և ճարտարարուեստ քաղաք է։ Ունի բազմակողմանի համբաւաւոր բանուածքներ՝ Մուսլին անուն։

Պաղտատ, Տիգրիսի վրայ հին, ամուր և վաճառաշահ քաղաք է։ Ունի ձեռագործներ և ընդարձակ վաճառականութիւն

Պասրա, Շաթ-իլ-Արապի վրայ բանուկ և վաճառաշահ նաւահանգիստ է։

Երեւելի են նաեւ Իսպահիէ, Թուռնա, Հիլլահ, Մէրսին, Բէրպեղա եւայլն։

Սուրիոյ և Պաղեստինու գլ. քաղաքներն են

Եղեսիա կամ Ուռհա, վաճառաշահ քաղաք է։ Ունի դեղեցիկ ձեռագործներ։

Մարաշ, ձիհան դեռեն վրայ վաճառաշահ քաղաք է։ Ունի աղնիւ հիւսուածքներ։

Այնթապ, լեռնային քաղաք մ'է։

Անտիոք կամ Անթաքիա, Որոնդէսի վրայ զուարճալի դիրքով վաճառաշահ քաղաք է։

Հալէպ կամ Բերիա (70,000 բն.), հին և վաճառաշահ քաղաք է։ Ունի մետաքսեայ և բամպակեղէն նուրբ և ճաշակաւոր ձեռագործներ։

Դամասկոս կամ Շամ-Շէրիֆ, հին և մեծապատիւ քաղաք է։ Երեւելի են մետաքսեայ և ոսկեթել բանուածքներն, դորգը, բամպակեայ և բրդե հիւսուածքները, պատուական մրգեղէնները ելն։ Դամասկոս մեծ վաճառականութիւն ունի։



Երուսաղէմ

Երուսաղէմ (Էլ-Գուտս), նշանաւոր ուխտատեղի բովանդակ Քրիստոնէից։ Հոյք ունին հոս Ս. Յակոբայ համբաւաւոր վանքը, ժառանգաւորաց դպրոց և տպարան։ Շրջակայքը կը գտնուին Բեթլեհէմ, Ռեմլէ, Սամարիա, Երիքով ելն։

Արեւմտեան մասին գլ. քաղաքներն են

Եւդոկիա կամ Թոքաթ, Իրիսի մօտ՝ դեղեցիկ ու ճարտարարուեստ քաղաք է։ Ունի պղնձեայ գործուածքներ, բամպակէ հիւսուածք ելն։

Ամասիա, Իրիսի վրայ, ունի գորգ և մետաքսեղէն բանուածքներ։

Շապին-Գարա-Հիսար, մօտերը կան արծաթախառն կապարի և պաղլեղի (ջուղ) հանք։

Մարսվան, Ամասիոյ հիւսիսային կողմը, ունի երկրագործական բերքեր և պղնձի հանք։

Եոզղաս, Բանակատեղի է. ունի այծու մաղ, կապարի հանք ու երեւելի մզկիթ մը՝ Զօսպան-Օղլու անուն։

Կեսարիա կամ Գայսերի, հին ու վաճառաշահ քաղաք է Արդէոս լերան ստորոտը։ Բնակչայ մէջ կան բազմաթիւ Հայեր որք կ'զբաղին երկրագործութեամբ և վաճառականութեամբ։ Երեւելի են Կեսարիոյ Հայք իրենց գործունէութեամբ և առեւտուրի մէջ ունեցած մեծ յարմարութեամբ։ Կեսարիոյ մօտերն է Ս. Կարապետի երեւելի վանքը։

Էնկիւրիւ, Սաքարիայի մէկ ճիւղին վրայ՝ վաճառաշահ քաղաք է, անուանի է մետաքսանման և դանդուր այծու մազը։ Մօտերը կան շատ մ'աւերակներ։

Ատաճա, ձիհան գետին վրայ բարեբեր ու վաճառաշահ քաղաք՝ որ երկաթուղեաւ կապուած է Մէրսինի։

Սիս, լեռնային դիրքով քաղաք մ'է։ Հոս է՝ Կղիկիոյ կաթողիկոսութեան աթոռը։

Գոնիա կամ Իկոնիոն, հին ու երեւելի քաղաք։ Ունի արմունկ և գորգի գործարաններ։

Գարաման, ունի հոյակապ մզկիթ և բրդէ բանուածքներ։

Սպարդա, վաճառաշահ քաղաք է։

Քէօթահիա, Սաքարիայի Բուրսաք ճիւղին վրայ վաճառաշահ քաղաք է. Ունի աֆիոնի մեծ առեւտուր։

Քասթամպօլու, Կէօք-Ըրմաք գետակին վրայ. Ունի երկրագործական բերք և բուրդ։

Այտըն կամ Կիւզէլ-Հիսար, մեծ քաղաք է։ Ունի արմունկ, բանվոր և ընտիր գորգեր։

Աֆիոն Գարա-Հիսար, բարեբեր դաշտի մը մէջ. ունի ներկի նիւթեր, ոչխար և աֆիոն։

Պրուսա, Ոլիմպոս լերան ստորոտը հին ու զուարճալի քաղաք է. Ունի համբաւաւոր ջերմուկներ, մզկիթներ և մետաքսեայ

ու բանվոր գեղեցիկ ձեռագործներ։ Կ. Պոլիսէն և Էսքիշէհիր առաջ՝ այս էր Օսմանեցւոց Մայրաքաղաքը։

Կարեւոր քաղաքներ են նաեւ Մանիսա, Ատա-բազար, Պալըքեսէր, Պօլու, Զանկըրը, Էսկի-Շեհիր, Պերկամա, Ալա-Շեհիր եւն. եւն։

Օսմանեան Արքիպեղագոս

Օսմանեան Արշիպեղագոսը կը կազմեն Միտիլլի, Քիոս կամ Սաքզ-Ատաը, Ռատոս կամ Հոդոս, Սամոս կամ Ստանամ-Ատաը, Իմրոս, Լեմնոս, Թենեդոս կամ Պոնձա-Ատաը, Քոս կամ Սթանիքէօյ, Թասոս, և այլ մի քանի կղզեակներ որք լեռնային են ընդհանրապէս, բայց ունին բարեբեր հող և կ'արտադրեն արմտիք, գինի, թուղ, նարինջ, լիմոն, չամիչ, ձիթապտուղ, մետաքս, օղի, սուսամ եւն։ Այս Արշիպեղագոսը կը կազմէ առանձին մի կուսակալութիւն, իսկ Սամոս արտօնագեալ է։ Կիպրոս լեռնային կղզի մ'է։ Ունի անուանի գինի։ Գլխ. քաղաքներն են Ֆամակօստա և Լարնաքա։

Ընդհանուր տեղեկութիւն

Ասիական Թուրքիա ընդարձակ ու հարուստ երկիր մ'է թէ հողագործութեան և թէ վաճառականութեան խիստ յարմար։ Ձեռագործ, ճարտարութիւն, առեւտուր և ընդհանուր քաղաքակրթութիւն հետզհետէ յառաջ երթալու վրայ են։ Կառավարիներ ու երթեւեկներ սկսած են չհնուիլ՝ որոյ շնորհիւ հաղորդակցութիւնք պիտի դիւրանան։

Ասիական Թուրքիոյ արտաքին վաճառականութեան գլխաւոր նիւթերն են՝ արմտիք, ծխախոտ, բանվոր, այծու մազ, բուրդ, մորթ, ձէթ, գինի, աֆիոն, թուղ, չամիչ, ներկի նիւթեր, մրգեղէն, ձիթապտուղ, մետաքս, չգործուած մետաղներ, մետաքսեայ և բրդեղէն գեղեցիկ հիւսուածք եւն։

Ասիական Թուրքիոյ գլխաւոր բնակիչներն են Թուրք, Հայ, Արաբ, Քիւրտ, Ասորի, Յոյն, Լազ, Հրէայ, Թիւրքմէն, Չերքէզ եւն։ Այս ժողովուրդք կ'զբաղին ընդհանրապէս. երկրագործութեամբ, խաչնարածութեամբ, տեղական արհեստներով, ներքին ու արտաքին վաճառականութեամբ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ՝ որ կը կոչուի նաեւ Իրանի Թագաւորութիւն, կը տարածուի Ասիական Թուրքիոյ արեւելեան կողմը։ Սահմաններն են՝ հիւսիսէն Կովկասիա, Կասպից ծով և Թուրքաստան. արեւելքէն՝ Աֆղանիստան և Պելուճիստան. հարաւէն՝ Պարսից ծոց, Հիւրմիւզի նեղուց և Օմանի ծոց. արեւմուտքէն՝ Թուրքիա։

Պարսկաստանի հիւսիսային և արեւմտեան կողմերն ընդհանրապէս լեռնային են ուր կ'երեւին Էլպրուս, Լարիստանի ու Ծարախիստանի լերինք, իսկ արեւելեան և միջին մասերը դաշտային և տեղ տեղ ալ անապատային են։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Երկրին կլիմայն արեւելեան և հարաւային կողմերը սաստիկ տաք և վտառուղջ, իսկ հիւսիսային և արեւմտեան գաւառները՝ բարեխառն, տեղ տեղ ալ հիւանդաբեր են։

Գլխաւոր բերքերն են արմաւիք, բրինձ, չամիչ, վուշ, կանեփ, ծխախոտ (Ընդեւէ), բամպակ, մետաքս, աղնիւ պտուղներ, ներկի նիւթեր, բժշկական բոյսեր եղն։

Պարսկաստան ունի ձի, ջորի, ուղտ, այծ ու ոչխար որոյ բուրդն աղնիւ է։

Իսկ հանքայ մէջ կարեւորներն են արծաթ, ոսկի, պղինձ, քարիւղ և թանկագին քարեր՝ որոնք մեծաւ մասամբ չեն շահադործուիր։

ԲՆԱԿՉԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պարսկաստան ունի 1,650,000 քիլ. քառ. տարածութիւն և 7,000,000 բնակիչ։

ԹԷՀՐԱՆ (200000 բն.) Պարսկաստանի Մայրաքաղաքն է Էլպրուս լերան ստորոտը՝ վտառուղջ երկրի մը մէջ։ Նշանաւոր է Շահին պալատը։

Գլխաւոր Նաւահանգիստք

Պարսկաստան Կասպից ծովու վրայ ունի Պալճրուշ և Բիշտ, իսկ Պարսկային ծոցին վրայ՝ Պուշիր և Պենտերապահի նաւահանգիստները։

Ներքին գլխաւոր քաղաքներ

Դաւրէժ կամ Թէպրիզ, Ուրմիոյ հիւսիսային արեւելեան կողմը մեծ ու վաճառաշահ քաղաք է և ունի ընդարձակ առեւտուր՝ Ռուսիոյ ու Եւրոպայի հետ։ Բնակչաց մէջ կան բաղում Հայեր որք ունին եկեղեցի, դպրոց և առաջնորդարան։

Իսպահան, նախկին Մայրաքաղաք Պարսկաստանի։ Երեւելի են բամպակեայ ու մետաքսեայ գեղեցիկ հիւսուածքները, գէնքերը և անօթեղէնները։ Իսպահանի մօտն է Նոր-Ջուղա՝ որու բնակիչք մեծաւ մասամբ Հայ են՝ Հին-Ջուղան գաղթած։

Շիրազ, երկրին արեւմտեան հարաւային կողմը, գեղեցիկ պարտէզներով և ընդարձակ այգեստաններով շրջապատեալ քաղաք մ'է։ Ունի պատուական ծիրան, գեղձ, գինի, թէնպէքի և վարդի լուղ։ Ուրմիա, համանուն լճին մօտ։ Հոս ծնած է Զրադաշտ մոգը։

Համատան, Մայրաքաղաք հին Մարաստանի, վաճառաշահ քաղաք է. ունի ձեռագործներ։

Երեւելի են նաեւ Մեշհետ, Գազուին, Կրմանշահ եւայլն։

Ընդհանուր տեղեկութիւն

Պարսիկները կը վերաբերին Արեւոյ ցեղին ու են չարքաշ, դործունեայ և աշխատասէր։ Ուսման և քաղաքակրթութեան մէջ շատ ետ մնացած են, իսկ ձեռարուեստի և վաճառականութեան՝ բաւական յառաջդէմ են։ Երեւելի են իրենց դորգերը, չալերը, պղինձէ անօթները, գէնքերը եւայլն։ Պարսկաստան կը վաճառէ թէնպէքի, բրինձ, չամիչ, վարդի լուղ, թանկագին քարեր, կաշի, բուրդ եղն։

Բնակչաց մէջ կան Պարսիկներէ ի զատ՝ Հայ, Արաբ, Հրէայ, Թուրք և Քիւրտ։

Երկրին տիրող կրօնն է Մահմետականութիւն։

ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՖՂԱՆԻՍՏԱՆ՝ որ կը կոչուի նաեւ Թագաւորութիւն Քաբուլի, փոքր աէրութիւն մ'է Պարսկաստանի արեւելեան կողմը։ Սահմաններն են՝ հիւսիսէն Թուրքաստան. արեւելքէն Հնդկաստան. հարաւէն՝ Պելուճիստան եւ արեւմուտքէն Պարսկաստան։

Երկրին հիւսիսային եւ արեւելեան կողմերը կը տարածուին Հիմաստու-Քուշ լերինք, մնացեալ մասանց մէջ կը գտնուին հովիտներ եւ տեղ տեղ ալ անապատներ։

Կլիմայ եւ Բուսաբերութիւն. — Կլիման՝ հիւսիսային եւ արեւմտեան կողմերը ցուրտ, իսկ արեւելեան եւ հարաւային մասանց մէջ բաւական տեղ տեղ ալ շատ տաք կ'ընէ։

Գլխաւոր բերքերն են ցորեն, բրինձ, ծխախոտ, վուշ, բամպակ, շաքարեղէգ, թմրենի եւ պաղատու ծառեր։ Կարեւոր հանքերն են ոսկի, արծաթ, պղինձ եւ անդիկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ա֊ֆղանիստան ունի 720,000 քիլ. քառ. տարածութիւն եւ 6,000,000 ի չափ բնակիչ։

ՔԱՊՈՒԼ (60,000 բն.), Մայրաքաղաք Ա֊ֆղանիստանի, Ասիոյ հնագոյն քաղաքաց մին է, շրջապատեալ գեղեցիկ պարտէզներով, ունի հին պարիսպ եւ միջնաբերդ։

Հերաթ, երկրին արեւմտեան հիւսիսային կողմը՝ վաճառաշահ ու ծաղկեալ քաղաք է։ Ունի գինուց, ընտիր դորգերու եւ վարդի իւղի գործարաններ։

Գանտահար, երկրին կեդրոնը՝ ամուր եւ վաճառաշահ քաղաք է։ Երեւելի են նաեւ Ձելալապատ, Մարմանիէ եւ Քունտուզ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ա֊ֆղանիստան Ասիոյ երկրորդական երկիրներէն մին է եւ ունի շահ մը՝ որու իշխանութիւնը սահմանափակեալ է։ Ա֊ֆղանք՝

պատերազմասէր ու չարքաշ մարդիկ են։ Փոքր մաս մը կ'զբաղի տեղական արհեստներով, իսկ մեծագոյն մասը թափառական եւ հովիտ է։ Կրօնն է Մահմէտականութիւն։ Ռուսք հետզհետէ այս երկրին ներսերը կը յառաջանան։

ՊԵԼՈՒՃԻՍՏԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ՊԵԼՈՒՃԻՍՏԱՆ փոքր աէրութիւն մ'է՝ Ա֊ֆղանիստանի հարաւակողմը։ Սահմաններն են հիւսիսէն Ա֊ֆղանիստան, արեւելքէն՝ Հնդկաստան. հարաւէն՝ Օմանի ծոց եւ արեւմուտքէն՝ Պարսկաստան։

Երկրին հիւսիսային կողմերը լեռնային են. իսկ արեւմտեան եւ հարաւային մասանց մէջ կը տարածուին ընդարձակ անապատներ։

Բարերեր հովտաց մէջ յառաջ կուգան արմաւ, բամպակ, լերգակ, շաքարեղէգ, արմաւ, նուշ եւն։ Ունի նայնպէս՝ ոսկւոյ, արծաթի ու երկաթի հանքեր՝ երեսի վրայ ճիապած։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պելուճիստան ունի 350,000 քիլ. քառ. տարածութիւն եւ 1,000,000 ի չափ բնակիչ։

ՔԷԼԱԹ, Մայրաքաղաք Պելուճիստանի, երկրին հիւսիսային կողմը, ամուր եւ վաճառաշահ քաղաք՝ ուր կը բնակի երկրին էմիրը։

Կանտավա, Քելաթի արեւելեան հարաւային կողմը գեղեցիկ քաղաք է։ Կարեւոր են նաեւ Պէյա եւ Քիճան։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Պելուճիստանցիք ընդհանրապէս խաշնարած ու երկրագործ են։ Քալաքակրթութիւնը մնաց չէ գտած իրենց մէջ եւ Անգլիացիք մեծ աղդեցութիւն ունին այս երկրին այլ եւ այլ մասանց վրայ։ Երկրին կրօնն է Մահմէտականութիւն։

ԱՐԱԲԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՐԱԲԻԱ Ասիոյ յամաքին հարաւային երեք մեծ թերակղզիներէն մին է։ Սահմաններն են հիւսիսէն Ասիական Թուրքիա. արեւելքէն Պարսից ծոց, Հիւրմիւզի նեղուց և Օմանի ծոց. հարաւէն Հնդկաց ովկիանոս. արեւմուտքէն Պապ-Իւլ-Մանտէպի նեղուց, Կարմիր ծով և Սուէզի ջրանցք։

Արմաւենի

Խահուէի տունկ

Արաբիա մեծաւ մասամբ անապատային երկիր մ'է, միայն արեւմտեան կողմը (Հիճազ և Եէմէն գաւառները) բարեբեր ու բազմամարդ են և այս պատճառաւ՝ երկրին այն մասը կը կոչուի Երջանիկ Արաբիա։ Արեւմտեան մասին մէջ կ'երկարի լեռնագօտի մը՝ Էլ-Սրեթ անուն։ Երկրին կլիմայն սաստիկ տաք է, քիչ անգամ անձրեւ կ'ուզայ և որոշեալ ժամանակ մը կը փչէ Սիմում կոչուած խորշակն՝ որ մահաբեր աղդեցութիւն մ'ունի բուսոց և կենդանեաց համար։

Գլխաւոր բոյսերն են խնկեղէն, ընաիր խահուէ, շաքարեղէգ, արմաւ, խէժ, բամպակ, լեզակ, թուզ եւն։ Կենդանեաց անուանի են ուղտը, ձորին և մանաւանդ ձին՝ որ սիեզերական համբաւ ունի։

Արաբիոյ անապատին մէջ փոթորիկ

ԳՈՂԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Արաբիա ունի 2,850,000 քիլոմէթր քառ. տարածութիւն և 7-10,000,000 բնակիչ։

Գլխաւոր քաղաքք և նաւահանգիստք

ՄԷՔՔԷ (45,000 բն.) Հիճազ գաւառին գլխաւոր քաղաքը, հայրենիք Իսլամաց Մարգարէին և նշանաւոր ուխտատեղի համօրէն Մահմէտականաց՝ ուր ամէն տարի հազարաւոր ուխտաւորներ կ'երթան Գուրպան Պայրամին առթիւ։

Մէտինէ, հոս է Մարգարէին գերեզմանը։ — Ճիտտէ, կարմիր ծովու վրայ՝ Մէքքէի նաւահանգիստն է։

Ասէճ, համանուն ծոցին վրայ՝ Արաբիոյ ամենէն բանուկ ու

հարաւային նաւահանգիստն է և 1838 էն ի վեր կը վերաբերի Անգլիացւոց։

Եամպօ, կարմիր ծովու վրայ։

Սանա՛ա, զուարճալի և հարուստ քաղաք է Եէմէնի դաւառին մէջ։

Մoffա, կարմիր ծովու վրայ երկրորդական նաւահանգիստ, անուանի է խահուէն։

Մաճկաթ, Օմանի ծովեզրն վրայ գեղեցիկ և վաճառաշահ նաւահանգիստ է և ունի առանձին Սուլթան մը։

Երեւելի են նաեւ Թայիճ և Հոտէյտահ։

Ընդհանուր տեղեկութիւն

Արաբիոյ բնակիչք, բաց ի Հիճազ ու Եէմէնէ, ընդհանրապէս յետադէմ ու կիսավայրենի վիճակի մէջ են։ Ոմանք կ'զբաղին հողագործութեամբ և կը կոչուին Ֆէլլահ, կան ալ որ թափառական կը շրջին իրենց հօտերով և կը կոչուին Պէտէվի։ Արաբիոյ կէնդանեաց մէջ շատ երեւելի է ուղտը՝ որ կատարեալ համբերութեամբ մլռոններով տեղ կը ճամբորդէ՝ դիմանալով հոգնութեան, ծարաւի և ահաւոր փոթորիկներու։ Նշանաւոր է նաեւ ձին՝ իր աքանչելի գեղեցկութեան կողմանէ։ Արաբիոյ մէջ կը գտնուին նաեւ շատ Հրէաներ՝ Որդիք Ռեփեկայ անուն։

ՁԱԲՈՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ձաբոն մեծ ու փոքր կղզիներէ բաղկացեալ առանձին տէրութիւն մ'է Չինու արեւելեան կողմը՝ Խաղաղական ովկիանոսին մէջ։

Գլխաւոր կղզիներն են Նիճօն, Սի-Ճօֆ, Քիու-Սիու, Էզօ։ Այս չորս մեծ կղզիներէն ի զատ՝ կան նաեւ Մուրիլեան և Լիու-Քիու փոքր արշիպեղագոսները։

Ձաբոնական կղզիք ընդհանրապէս լեռնոտ և հրաբղխային են։

Հիւսիսային կղզեաց մէջ ցուրտ, միջին մասը բարեխառն, իսկ հարաւակողմը տաք կ'ընէ։

Երկրին հողը խիստ լաւ մշակուած է և կ'արտադրէ բրինձ, ցորեն, հաճար, վարսակ, բանջարեղէն, թէյ, պտղատու ծառեր եւն։

Ձաբոն ունի ոսկւոյ, արծաթի, մոլիւիի, պղնձի, անագի, երկաթի, հանքածխոյ և ծծումբի հարուստ հանքեր զորս կը շահագործէ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ձաբոնեան կղզիք ունին 380,000 քիլ. քառ. տարածութիւն և 40,000,000 բնակիչ։



Ձաբոնական տուն

ԵՏՕ կամ **ԴՕՔԻՕ** (800,000 բն.), Մայրաքաղաք Ձաբոնի, Նիֆօնի արեւելեան կողմը՝ Եւրոպական ճաշակաւ զարգարուած մեծ ու վաճառաշահ քաղաք է։ Ունի գեղեցիկ ձեռագործներ, ծովային վարժարան, պալատներ ու հոյակապ մեհեաններ։

Գլխաւոր քաղաքք Նիֆօն կղզւոյն

Եօֆօ-Համա, Եաօի ծովին վրայ ազատ նաւահանգիստ, ունի ցորենի, մետաքսի և թէյի մեծ վաճառականութիւն։

Օսաքա, նոյնպէս ազատ նաւահանգիստ է, մօտերը կան ածխահանք։

Միաքօ կամ Քիօտօ, կղզւոյն հարաւային արեւմտեան կողմը՝ կեդրոն ուսմանց, գիտութեանց և գեղեցիկ ձեռագործներու։ Այս էր Ձաբոնի նախկին մայրաքաղաքը։

Սակա, *ունի յախճապակեայ դործարաններ։*

Նակասաքի, *Փիու-Սիու կղզւոյն մէջ՝ ազատ և բանուկ նաւահանգիստ է։*

Քակօսիմա, *նոյն կղզւոյն հարաւակողմը։*

Հաճօղաս *կամ* Քաճօսադէ, *Իզօ կղզւոյն գլխաւոր քաղաքն է։*

Ընդհանուր տեղեկութիւն

Ճաբան՝ Թէեւ Ասիոյ ամենէն արեւելեան դին, Խաղաղական ովկիանոսի մէջ փոքր երկիր մ'է, սակայն ամենէ քաղաքակրթեալը կը հանդիսանայ իւր արուեստներով, դիտութեամբ, ձեռագործ-ներով, դեղարուեստներով, հաղորդակցութեան միջոցներով և վաճառականութեամբ։ Ուշիմ ճափոնցիք՝ վերջի ժամանակներս շատ յառաջ գացին լեզուագիտութեան, նաւային արուեստի և ճարտարութեանց մէջ։ Իրենց արտաքին վաճառականութեան գլխաւոր նիւթերն են թէյ, յախճապակի, սատափէ զարդեր, ընտիր մետաքսեղէնք, չերամի հունտ, բրինձ, ազատ ձուկ եղն։ Ճաբոնցիք Մոնկոլեան ցեղին կը վերաբերին ու կռապաշտ են, կը հետեւին Պուտտայի աղանդին։ Կառավարութեան ձեւն է Սահմանադրական Միապետութիւն։ Կայսրը կը կոչուի Միքատօ՝ որ ունի թէ կրօնական և թէ քաղաքական իշխանութիւն։

Ծխախոտի տունկ

ՀՆԴԿԱՍՏԱՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԴԻՐ

Հնդկաստան՝ Ասիոյ հարաւակողմը՝ կը ձեւացնէ ընդարձակ ցամաքակղզի մը՝ որու սահմաններն են՝ հիւսիսէն Հիմալայա լերինք. արեւելքէն Պիրմանիա և Պենկալայի ծոց. հարաւէն Հնդկաց ովկիանոս. արեւմուտքէն Օմանի ծոց, Պելուճիստան և Աֆղանիստան։

Կղզիք. — Հնդկաստանի կը պատկանին Սեյլան (2,550,000 բն.) հարաւակողմը, Մայրաքաղաքն է Քոլոմպօ։ — Լաքեատիվեան կղզիք՝ արեւմտեան կողմը՝ որոնք բուսատէ ձեւացած մանր կղզիներ են. — Մալտիվեան կղզիք, հարաւային արեւմտեան կողմը, 12,000 կղզեակներէ կազմուած փոքր արշիպելագոս մ'է։

Հնդկաստանի հիւսիսային սահմանին վրայ կիսաշրջանակի ձեւով կը կանգնի Հիմալայա հսկայ դօտին որ կը պարունակէ աշխարհիս բարձրագոյն գագաթները, նոյնպէս հիւսիսէն՝ի հարաւ կ'երկարին երկու բազուկներ՝ Արեւելեան Կաղ և Արեւմտեան Կաղ անունով։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Հնդկաստան ունի այլազան կլիմաներ — Հիմալայա լերանց սառոյցը բաւական ցուրտ, միջին մասը բարեխառն, հարաւակողմը սաստիկ տաք, իսկ ծովեզերքները շատ տեղ վատառողջ են, այնպէս որ ժանտախտն ու այլ մահաբեր հիւանդութիւնք դրեթէ անպակաս են։ Հնդկաստան ունի երկու որոշ եղանակ՝ չոր և անձրեւային։

Բամպակի տունկ

Երկրին հողը շատ արգասաւոր է և կ'արտադրէ առատ ու այլազան բոյսեր, ինչպէս արմաւիք, եգիպտացորեն, բրինձ, բամպակ, լուպակ, նարինջ, վուշ, կանեփ, համեմունք, ծխախոտ, շաքարեղէգ, պտղատու ծառեր, քափուր, խահուէ, բժշկական բոյսեր, աֆիոն, պանան, պտմպու եղէգ, շինութեան աղնիւ փայտ եւլն։

Հնդկաստան շատ հարուստ է նաեւ հանքի մասին։ Ունի ոսկի, երկաթ, ադամանդ, պղպատ, արծաթ, կապար, գինկ, պղինձ, հանքածուխ, անագ եւլն։

Հնդկաստանի արեւմտեան ծովեզրին և մօտակայ կղզեաց շուրջը առատ մարգարիտ ու ձուկ կ'որսան։

Հնդկաստան ունի ընտանի և վայրի բազում կենդանիներ. ինչպէս՝ եզ, լորի, ուղտ, ձի, էշ, ոչխար, այծ, մանաւանդ փիղը զոր ընտանեցուցած են և իրենց մեծ ծառայութիւնները կը մատուցանէ։ Կան նաեւ գեղեցիկ թռչուններ, հնդկահաւ, թութակ եւայլն։ Ամենայն ի զատ կը գտնուին բազմաթիւ վայրի գազաններ. ինչպէս, առնեղջիւր, առիւծ, վագր, օձ, կոկորդիլոս, դիշատիչ թռչուններ եւլն։

ԲՈՂՈՔԱԲԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հնդկաստան ունի 3,800,000 *քիլ. քառ. տարածութիւն և* 285,000,000 *բնակիչ։*

Հնդկաստան քաղաքականապէս հետեւեալ կերպիւ բաժնուած է,

1°. Անգլիական Հնդկաստան,

2°. Հարկատու *կամ* Անգլիացւոց դաշնակից Հնդիկք,

3°. Անկախ Հնդիկք,

4°. Ֆռանսական և Փորթոկէզեան տացուածք,

ԿԱԼԿԱԹԱ, *Մայրաքաղաք Անգլիական Հնդկաստանի Բանգէսի մէկ ճիւղին վրայ. ծովէն* 160 *քիլ. հեռաւորութեամբ մեծ ու վաճառաշահ քաղաք և առեւտրական առաջին կարգի նաւահանգիստ մ'է։ Ընդարձակ և կանուխ յարաբերութիւն ունի Եւրոպիոյ, Ասիոյ ու Ովկիանիոյ հետ։ Հոս կան երեւելի Հայ վաճառականներ որք ունին եկեղեցի ու ճեմարան։*

Նաւահանգիստք Անգլիական Հնդկաստանի

Քարաչի, *Ինդոսի բերնին մօտ՝ ծաղկեալ նաւահանգիստ է։*

Անմէտապաս, *կիւզարաթի թերակղզւոյն հիւսիսային կողմը։*

Սիւրաք, » » *հարաւային* »

ունի մուտքին և այլ ձեռագործներ։

Պոմպայ, *համանուն փոքր կղզւոյն վրայ բազմամարդ ու ծաղկեալ նաւահանգիստ՝ որ մեծ յարաբերութիւն ունի Եւրոպիոյ հետ։*

Քալիքուդ, 1498 *ին՝ առաջին անգամ հոս ոտք կոխեց Վասքօ-ա-Կամա Փորթոկէզ անուանի նաւապետը։*

Քոչին, *հին աեն այս էր Հոլանտական Հնդկաստանի դլխ. քաղաքը։*

Պէնկալայի ծոցին վրայ

Մատրաս (400,000 *բն.*), *Արեւելեան Հնդկաստանի ամենէն նշանաւոր ու վաճառաշահ նաւահանգիստն է։*

Մասուլիփաթամ, *համբաւաւոր է իւր բամպակեայ ընտիր ձեռագործներով։*

Երեւելի են նաեւ Վիզակափաթամ և Պիկակօղէ։

Ներքին գլխաւոր քաղաքներ

Պէնարէս, *Գանգէսի վրայ մեծ վաճառատեղի ապամանդի,*



Կայսերական պարտէզ ի Նաճրին — Փութալայի մենաստան ի Թաքաոիսատ

ոսկեղէն զարդուց և է միանգամայն կեդրոն դիտութեանց։

Մատրասապաս, *ձիմնա դետին վրայ ամուր քաղաք և Հնդկաց ուխտատեղի է։*

Բադնա, *Գանգէսի վրայ, ունի աֆիոնի և մետաքսեղինաց մեծ առեւտուր։*

Լաիօռ, *նախկին մայրաքաղաք Մօնկոլ էշխանաց, անուանի է շալը։*

Տէլհի, *ճարտարապետեա և վաճառաշահ քաղաք ձիմնայի վրայ։*

Երեւելի են նաեւ Ակրա, Լահնօ, Նակբուր, Մուլթան, Բիշամէր եղն։

ՀԱՐԿԱՏՈՒ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Գլխաւոր քաղաքներ

Քաշմիր, *ձէլամ դետին վրայ զուարճալի դիրքովն, իւր ձեռագործներովն ու ճարտարութեամբն շատ երեւելի է։ Անուանի են գործդը, շալը, վարդի իւղը եղն։*

Հայտէր-Ապաս, *Փիտոնա դետին մէկ ճիւղին վրայ, մայրաքաղաք Նիզամի։*

Երեւելի են նաեւ Պանկալոր, Աւրինկապաս, Իպրանապաս, Պարոս եղն։

ԱԶԱՏ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հիմնալայա լերանց սաորատը փոքր թագաւորութիւն մ'է նեփալ, ունի 2,500,000 բնակիչ։ Մայրաքաղաքն է Քաթմանտու։

Պութան, նոյնպէս փոքր թագաւորութիւն մ'է Նէփալի արեւելեան կողմը 1 միլիոն բնակչօք։ Մայրաքաղաքն է Փունգաֆա։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԵՒ ՓՈՐԹՈՒԿԷԶԵԱՆ ՍՏԱՑՈՒԱԾՔ

Ֆռանսա 'ի Հնդկաստան ունի Չանտէրնակոր, Եանաւս, Փոնթիշէրի և Քարիխալ չէն քաղաքները՝ Պէնկալայի ծոցին վրայ։ Մահէ, Մալապարի ծովեզրին վրայ։ Ֆռանսական Հնդկաստանի գլխաւոր կեդրոնն է Փոնթիշէրի։



Հնդկական մեհեան

Փորթոկալ 'ի Հնդկաստան Օմանի ծոցին վրայ ունի Տիու, Տաւանա և Կօա քաղաքները։

ԸՆԿ. տեղեկութիւն

Հնդկաստան՝ Ասիոյ ընդարձակ երկիրներէն մին ու եւրեւելի է իւր բուսական և հանքային մեծ հարստութեամբ։ Անգլիացւոց դերիշխան տիրապետութեան ներքև մտնելէն 'ի վեր՝ այս երկիրն սկսած է աւելի յառաջադիմել արուեստից, վաճառականութեան և քաղաքակրթութեան մէջ։ Հնդիկք մեծաւ մասամբ կը պատկանին Արիական ցեղին և ընդհանրապէս կուռապաշտ են։ Եւրոպացիներէն 'ի զատ՝ կայ նաեւ մաս մը սեղացի Քրիստոնեայ և 17 միլիոնի չափ Մահմէտական։

Երկրին մէջ բաց 'ի հնդիկներէ՝ կը գտնուին նաեւ 1 միլիոնէ աւելի Եւրոպացի, նոյնպէս Արաբ, Պարսիկ, Թաթար, Հայ և Հրէայ։

Նշանաւոր են Հնդկաց մետաքսեղէնները, դորգերը, շալերը, բրդեղէնները, ոսկիէ ու փղոսկրէ զարդեղէնները, անօթները եղն։ Հնդկաստան կը կառավարուի Անգլիացի փոխարքայով մը։

ՉԻՆ

ԿԱՄ

ԵՐԿՆԱՅԻՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Չինաստան կը գրաւէ Ասիոյ միջին և արեւելեան մասն և է աշխարհիս ամենէ բազմամարդ երկիրն։ Սահմաններն են՝ հիւսիսէն՝ Սիպերիա, արեւելքէն՝ Խաղաղական ովկիանոս, հարաւէն՝ Չինաց ծով, Հնդկա-Չին և Հնդկաստան. արեւմուտքէն՝ Թուրքաստան։

Այս ընդարձակ աշխարհին արեւմտեան, հիւսիսային և հարաւային կողմերը կը տարածուին երկար ու բարձրաբերձ լերինք որոնք ծնունդ կուտան խոր ու երկար գետերու։ Հիւսիսային և արեւմտեան կողմերը կը տարածուին ընդարձակածաւալ լեռնադաշտեր որոնք ծանօթ են Թիպէթի կամ Ասիոյ վեծագոյն լեռնադաշտ անուամբ։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Չինաստան իւր երկրային ընդարձակութեան պատճառաւ՝ ամեն տեսակ կլիմայ, ամեն տեսակ հող և ամեն կլիմայի յատուկ բուսաբերութիւն ունի։ Հիւսիսային կողմերը՝ Սիպերիոյ սահմանին վրայ ցուրտ, միջին մասերը բարեխառն, իսկ հարաւակողմը՝ համեմատաբար աւելի տաք է։

Չինաստանի մէջ չատ ծաղկած է երկրագործութիւնը, այս պատճառաւ առատօրէն յատուկ կ'ուզայ թէյ, բրինձ, եղիպատացորեն, բամպակ, լեղակ, քափուր, պամպու եղէգ, իւղալից հունտեր, համեմունք, պաղատու ծառեր, չինութեան ընտիր փայտի ծառեր, մանաւանդ թթենի՝ որ չերամի համար մեծ կարեւորու-



Չինական տաճար

թիւն ունի։ Երկրին մէջ կը գտնուին ձի, լոռի, ուղտ, ոչխար և բազմաթիւ թռչուններ։ Մովերկրեայ բնակիչք կղզային ձկնորսութեամբ։

Չինաստան ունի երկաթի, պղնձի, գինկի, անագի, կապարի, ոսկւոյ, արծաթի, ծծումբի, քարիւղի և թանկագին քարերու հարուստ հանքեր որոնք Կայսեր սեփականութիւնն են։

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՊԵՏԻ

Չինաստան ունի 11,500,000 քիլ. քառ. տարածութիւն և 380,000,000 բնակիչ։

Չինաստան կը բաժնուի 6 գլխաւոր մասերու. Բուն Չին, Մանչուրիա, Մոնկոլիա, Արեւելեան Թուրքաստան և Թիպէթ։

ՓԷ-ՔԻՆ (1,500,000 բն.), Կայսրութեան Մայրաքաղաքն է Բէյ-Հօ գետին վրայ, կը բաժնուի երկու մասերու, Թարտարաց կամ Ներքին քաղաք, Արտաքին կամ Չինական քաղաք։ Թէեւ այս քաղաքն արտաքուստ գեղեցիկ կ'երեւի, սակայն ներքին մասերը ազտոտ և անճաշակ են։

Գլխաւոր Նաւահանգիստք

Թիէն-Ձին, համանուն գետին վրայ վաճառաշահ քաղաք է և Փէքինի նաւահանգիստը։

Հոնկ-Քօնկ, Քանթոնի ծոցին մէջ փոքր կղզեայ մը վրայ խիստ վաճառաշահ նաւահանգիստ է, այս քաղաքն կը վերաբերի Անգլիացւոց և ընդարձակ յարաբերութիւն ունի Եւրոպիոյ և Ամերիկայի հետ։

Քանդոն, Չինաց ծովէն ձեւացած համանուն ծոցին վրայ մեծ և վաճառաշահ նաւահանգիստ՝ զոր Անգլիացիք և Ֆռանսացիք 1858 ին պատերազմաւ առին։

Շանկ-Հայ, Ասիոյ ամենէ բանուկ նաւահանգիստներէն մին է։

Նինկ-Բօ, Շանկ-Հայի հարաւը։ Երեւելի են նաեւ Ֆու-Ձէու-Քու, Հիամեն, Մաֆօ եւն։

Ներքին Գլ. քաղաքներն են

Նանիին, բուն Չինաց մէջ՝ Նան-Քու-Քեան գետին վրայ հին ու ճարտարարուեստ քաղաք է։ Երեւելի են նաեւ Թինկ-Թու, Սիանկ-Թան եւն։

Ուրկա, Մոնկոլիոյ մէջ՝ ուր կը բնակի Պուտտայականաց Քրմապետը։

Եարխանդ և Քաշկար, վաճառաշահ քաղաքներ են Չինական Թուրքաստանի մէջ։

ՔՈՐԷԱ

Քորէա փոքր թերակղզի մ'է Չինաց հիւսիսային արեւելեան կողմը և իբր 10,000,000 բնակչօք անկախ թագաւորութիւն մ'է։ Մայրաքաղաքն է Սէուլ կամ Քիէնկ։

Թիպէթի գլխաւոր քաղաքներն են Լասսա որ մեծ ուխտատեղի է։ Ժիկակուենկաս, մեծագոյն քաղաքն է Թիպէթի։

ԿՂԶԻՔ

Չինաց կը վերաբերին Հայնան և Ֆորմոզա մեծ կղզիները, իսկ Մաֆաօ փոքր կղզին Փորթոկալի. և Հոնկ-Քոնկ՝ Անգլիոյ։

Ընդհանուր տեղեկութիւն

Հարուստ և ընդարձակ երկիր մ'է Չինաստան որոյ բնակիչք կը վերաբերին Մոնկոլեան ցեղին և նշանաւոր են իրենց լուրջ, չարքաշ, համբերատար և քիչ մ'ալ նենգամիտ մարդիկ։ Չինացիք Ջրհատոսէ դարեր յառաջ հնարած են կողմնացոյցը, կարկինը, վառօդը, թուղթը և տպագրութեան արուեստը։ Նշանաւոր են իրենց յախճապակիները, մետաքսեղէնները, գորգերը, չուխան եղն։

Չինացիք կռապաշտ են և կը հետեւին ընդհանրապէս Պուտտայականութեան։ Կառավարութեան ձեւն է բացարձակ Միապետութիւն։ Կայսրը կը կոչուի Որդի Երկնից (Թիէն-Զի) և իշխանք՝ Մանտարին։

ՀՆԴԿԱ—ՉԻՆ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հնդկա-Չին Ասիոյ հարաւային երեք մեծ յամաքակղզիներէն մին է։ Սահմաններն են՝ հիւսիսէն Չինաստան. արեւելքէն՝ Չինաց ծով. հարաւէն՝ Մալաքքայի նեղուց. արեւմուտքէն՝ Պէնկալայի ծոց և Հնդկաստան։

Ընդհանրապէս լեռնային ու հրաբղխային երկիր մ'է Հնդկա-Չին՝ որոյ հարաւակողմը կ'երկարի Մալաքքա թերակղզին։ Արեւելեան կողմը կը տեսնուի Թոնքինի, հարաւը՝ Սիամի, իսկ արեւմտեան կողմը Մարթապանի ծոցը։ Երկրին հիւսիսէն ի հարաւ կը հոսին խոր ու երկար գետեր։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Հնդկա-Չինու կլիմային՝ լեռնային գաւառաց մէջ ցուրտ, հովտաց մէջ տաք, իսկ ճահճային ու ցած վայրերն ալ խոնաւ ու ջերմոտ են։

Երկրին հողը ընդհանրապէս արդասաբեր ու պարարտ է, մանաւանդ գետոց շրջակայ հովիտներն։ Գլխաւոր բոյսերն են բրինձ, ցորեն, եդիպտացորեն, խահուէ, շաքարեղէգ, համեմունք,

դեղօրայք, պանան, ծխախոտ, լաքակ, չինութեան փայտ, քափուր եղն։ Ունի նոյնպէս ոսկւոյ, արծաթի, պղնձի, անագի, ղինկի, հանքածխոյ և թանկագին քարերու հարուստ հանքեր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հնդկա-Չին ունի 1,800,000 քիլ. քառ. տարածութիւն և 40,000,000 բնակիչ։

Բաժանմունք և գլխաւոր քաղաք

Հնդկա-Չին կը բաժնուի 8 մասերու որք են՝ Կայսրութիւն Աննամի, Ցուանասական Հոյինչին, Թագաւորութիւն Քամպոճի, Մալաքքա, Թոնքին, Թագաւորութիւն Սիամի, Կայսրութիւն Պիրմանիոյ և Անգլիական Հնդկա-Չին։

ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ ԱՆՆԱՄԻ

Աննամ կը գրաւէ Հնդկա-Չինու արեւելեան մասն և ունի 7,000,000 բնակիչ։ Կը գտնուի Ցուանասի դերիշխանութեան ներքև։

Մայրաքաղաքն է ՀՈՒԷ, ծովէն 25 քիլմ. հեռի՝ ամուր և վաճառաշահ քաղաք է։

Երեւելի են նաեւ Թուրան և Ֆայֆո։

ՑՈՒԱՆՍԱԿԱՆ ՔՈՉԻՆՉԻՆ

Սոյն կարեւոր և հարուստ գաւառը՝ որոյ տէր են Ցուանասցիք 1867 էն ի վեր, կը գտնուի Սիամի հարաւակողմը և ունի 1,500,000 բնակիչ։

Գլխաւոր քաղաքն է Սայկօն (100 000 բն.), մէկ-քանի գեղեցիկ բերդեր մտ, լիստ վաճառաշահ նաւահանգիստ մ'է և գլխաւոր կայարան՝ Եւրոպային Մայրադրոյ Արեւելք երթեւեկող սուրհանդակ շոգենաւերու։

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՔԱՄՊՈՃԻ

Գամպոճի Թագաւորութիւնը կը գտնուի Սիամի և Աաոլին Հոչինչինի միջեւ և է Ցուանասի պաշտպանութեան տակ։

Ունի 1,000,000 բնակիչ

Մայրաքաղաքն է Բնօմ-Բէնկ կամ Նամ-Վան։

ՄԱԼԱՔՔԱ

Մալաքքա թերակղզւոյն հարաւակողմը կը գտնուին մի քանի ինքնօրէն փոքր իշխանութիւններ որոց բնակիչք սեւամորթ, վայրենի ու լեռնաբնակ ցեղեր են։ Գլխաւոր բնակավայրերն են Սաշանկօր և Ձոհօր։

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՍԻԱՄԻ

Սոյն երկիրը կը տարածուի ցամաքակղզւոյն կեդրոնական մասին մէջ։ Ունի հարուստ հանքեր և առատ բուսաբերութիւն։ Բնակչաց թիւն է 6,000,000

Մայրաքաղաքն է Պանգօք (300 000 բն.), Մէնամ գետին բերնին մօտ՝ վաճառաշահ և բանուկ նաւահանգիստ է։ Կ'արտածէ բրինձ, համեմունք, չինութեան փայտ, շաքարեղէգ եղն։

ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ ՊԻՐՄԱՆԻՈՅ

Հնդկա-Չինու ամենէն հիւսիսային և ամենէն հարուստ երկիրներէն մին է Պիրմանիա։ Ունի 4,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է Մանճալայ (100,000 բն.), Իրաւատի գետին մօտ՝ չէն ու ծաղկեալ քաղաք է, հոս կը բնակի երկրին վեհապետը։ Երեւելի են նաեւ Ամա և Ամարափուրա։

ԹՈՆՔԻՆ

Հնդկա-Չինու հիւսիսային արեւելեան կողմը՝ համանուն ծոցին վրայ փոքր գաւառ մ'է Թոնքին՝ որու վերջին տարիներս Ֆռանսացիք տէր եղած են։ Ունի 12,000,000 բնակիչ։

Գլխաւոր քաղաքն է Հանօի՝ Սօնկ-Քօ գետին վրայ ընդարձակ և վաճառաշահ քաղաք։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀՆԴԿԱ-ՉԻՆ

Անգլիա Հնդկա-Չինու մէջ ունի Պիրմանիոյ և Մալաքքայի մէկ մէկ մասերը, նաեւ Անտաման, Նիկոպար և Սինկափոր կղզիները։

Գլխաւոր քաղաքներն են՝ Ռանկուն (110,000 բն.), Մայրաքաղաք Անգլիական Պիրմանիոյ և նշանաւոր նաւահանգիստ Իրաւատիի մէկ ճիւղին վրայ։ Փէկու, նոյնպէս Իրաւատիի բերնին մօտ՝ որ էր նախկին մայրաքաղաք։ Երեւելի են նաեւ Բրօմ, Տալհուզի, Բէսասիմ եղն։

Ընդհանուր տեղեկութիւն

Հնդկա-Չին՝ Ասիոյ հարաւային արեւելեան կողմը՝ աշխարհագրական խիստ նպաստաւոր դիրքով օժտուած գեղեցիկ և հարուստ ցամաքակղզի մ'է՝ մեծաւ մասամբ եւրոպացւոց գերիշխանութեան ներքեւ։ Ունի բուսական և հանքային մեծ հարստութիւն որք կը չահագործուին։ Տեղացիք տակաւին ըստ մեծի մասին կիսավայրենի վիճակի մէջ են։ Միայն Սիամցիք, Քոչինչինցիք և Քամպոճցիք քիչ շատ տրամադիր են քաղաքակրթուելու։

Երկրին կրօնն է Պուտտայականութիւն։

ԱՍԻՈՅ ՎՐԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1.

Ասիա՝ Արեւելեան կիսագունդի որ մասը կը գրաւէ, ինչ գիտես իւր մեծութեանը վրայ։ — Որոնք են սահմանները. — Քանի ովկիանոսներ կը տեսնէ եւ որ ծովերը ձեւացած են անոնցմէ. — Ասիա Ամերիկայէ որ նեղուցով բաժնուած է, որ նեղուցներով Ափրիկէ. որոնցմով Եւրոպայէ. — Խաղաղական եւ Հնդկաց ովկիանոսներէ որ մեծ ծոցերը ձեւացած են. — Միջերկրականի եւ Արշիպելագոսի մէջ որ ծոցերը կան։

2.

Ասիա քանի՞ աւազան ունի. — Որոնք են Հիւսիսային աւազանի գլխաւոր գետերը. — Դէպ ի՞ Խաղաղական որ մեծ գետերը կը թափին. — Որ երկիրներէն կ'անցնին եւ որը կը թափին Գանգէս, Կոտավէրի, Պրահմափուտրա, Ինդոս, Եփրատ, Տիգրիս. — Սեւ ծովու աւազանին հարկատուները որոնք են. — Ծոյց տուր Ասիոյ ներքին աւազանին հարկատուները. — Սուրիոյ եւ Պաղեստինու մէջ որ գետերը կան. — Դասակարգէ Ասիոյ մեծագոյն եւ նաւարկելի գետերը. — Որոնք են Ասիոյ գլխաւոր լիճերը։

3.

Ասիա ինչ երեւելի թերակղզիներ ունի. — Որ թերակղզիները առանձին տէրութիւններ կը կազմեն. — Ծոյց տուր Ասիոյ երեւելի

կղզիներն ու արշիպելագոսները. — Ո՞ր երեւելի արշիպելագոսը առանձին տէրութիւն մը կը կազմէ. — Ո՞րն է Ասիոյ ամենէն հիւսիսային, ամենէն արեւելեան, ամենէն հարաւային եւ ամենէն արեւմտեան գլուխը. — Ո՞ր կը գտնուին Թազէլկաթ, Հռուսանիա, եւ Լոփաթքա հրուանդանները. — Ո՞րոնք են Ասիոյ լեռնային երկիրները. — Եւրոպիոյ եւ Ասիոյ միջեւ ո՞ր գօտին կայ. — Ո՞ր կը գտնուին Արարատ, Տօրոս, Անի-Տօրոս, Կովկաս, Հիմալայա, Էլ-Արզթ, Ալթայ, Հինտու-Քուշ, Սթանովա լերինք. — Ասիոյ մեծագոյն անապատները ո՞ր երկրաց մէջ կը գտնուին:

4.

Ասիա քանի՞ գօտիներու ներքեւ կը գտնուի. — Ո՞ր երկիրները Սառուցեալ, որոնք Բարեխառնի տակ եւ որո՞նք Այրեցեալ գօտւոյ մօտ կը գտնուին. — Ասիոյ հարաւային երկրաց մէջ տարօրինակ քանի՞ եղանակ կը տիրէ. — Ո՞րոնք են Ասիոյ գլխաւոր բոյսերը. — Ո՞ր երկրաց մէջ մեծ քանակութեամբ յառաջ կ'ուգան արմաւիք, խահուէ, բամպակ, բրինձ, թէյ, համեմունք, ներկի նիւթեր, բժշկական բոյսեր եղեն. — Ո՞ր կը գտնուի քարիւղ, նաւթ, պղինձ, բլագին, ոսկի, թանկագին քարեր, երկաթ եղեն. — Ասիոյ մէջ ի՞նչ ընտանի կենդանիներ կան. — Ո՞ր երկրաց մէջ կը գտնուին մուշտակաւոր կենդանիք. — Ո՞ր կը գտնուին վայրի գազաններ, օձեր ու մողեղներ. — Ասիոյ ո՞ր երկիրները գինի կ'արտադրեն:

5.

Ասիական Թուրքիոյ բնական դրից վրայ ի՞նչ կրնաս ըսել. — Պատմական բաժանումները որո՞նք են. — Այսօր քանի՞ կուսակալութեանց կը բաժնուի. — Ո՞րոնք են գլխաւոր բոյսերը, հանքերն ու կենդանիները. — Ցոյց տուր Ասիական Թուրքիոյ ներքին վաճառաշահ քաղաքները. — Ի՞նչ կողմանէ երեւելի են Պուրսա, Բէօթահիա, Գոնիա, Կեսարիա, Սըվազ, Տարհասկոս, Հալէպ, Պաղտատ, Վան, Էնգիւրիւ, Տիգրանակերտ, Սամսոն, Այտընն. — Փոթիէ սկսեալ՝ ցոյց տուր Ասիոյ գլխաւոր նաւահանգիստներն մինչեւ Քաշխաթքա. — Ցոյց տուր Ասիոյ այն քաղաքներն՝ որք նշանաւոր ուխտատեղիներ են Քրիստոնէից, Մահմետականաց եւ Կռապաշտից. — Ցոյց տուր Ասիոյ այն քաղաքներն՝ որոնք երեւելի յիշատակարաններ կը պարունակեն. — Ցոյց տուր այն քաղաքներն որոց մէջ ձեռագործ եւ ճարտարութիւն ասիճան մը զարգացած են:

6.

Ասիա ո՞րքան բնակիչ ունի. — Քանի՞ գլխաւոր ցեղերու կը բաժնուին. — Քանի՞ տեսակ կրօն կայ Ասիոյ մէջ. — Ո՞ր ժողովուրդներն են Քրիստոնեայ, Մահմետական եւ Կռապաշտ. — Ասիոյ կառավարութեանց

ձեւն ի՞նչպէս է ընդհանրապէս. — Ասիոյ մէջ Եւրոպացիք ի՞նչ կարեւոր կալուածներ ունին. — Ասիան ի՞նչ տեսակ բերքեր կը փոխադրուին յԵւրոպա. — Այր ու Բենական կարգաւ՝ նշանակէ Ասիոյ երեւելի քաղաքները.՝— Բիօնիկսպէրկէն՝ նաւով պիտի երթամք փէքին, ցոյց տալով այն ովկիանոսներն, ծովերը, նեղուցները, կղզիները եւ հրուանդանները որոց պիտի հանդիպինք մեր ուղեւորութեան միջոցին:

ՀՐԱՀԱՆԴ

1°. Գծել Ասիոյ համար քարտէսն եւ առանձին գոյներով նշանակել Եւրոպական կալուածները.

2°. Նոյն-քարտէսին վրայ նշանակել՝ Կովկասեան, Մոնկոլեան եւ Մալայեան ցեղերը.

3°. Նշանակել՝ այն երկիրներն որք կ'արտադրեն թէյ, խահուէ, բամպակ, բրինձ եւ համեմունք:

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԱՓՐԻԿԷ

ՐՆԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԴԻՐ

Ափրիկէ կը գրաւէ Արեւելեան կիսագունտին արեւմտեան հարաւային մասն, տարածուելով Միջերկրական և կարմիր ծովերու, Աղչանեան և Հնդկայ ովկէանոսներու միջեւ:

Սահմաններն են՝ հիւսիսէն՝ Միջերկրական ծով. հիւսիսային արեւելքէն՝ Սուէզի ջրանցք. արեւելքէն՝ կարմիր ծով, Պապ-իլ-Մանահէպի նեղուց և Հնդկայ ովկէանոս. հարաւէն՝ Խազաղական և արեւմուտքէն՝ Աղչանեան ովկէանոս. հիւսիսային արեւմուտքէն՝ Ճիպալթարի նեղուց՝ որով կը բաժնուի Եւրոպէ:

Ափրիկէ իւր յարակից կղզիներով ունի իբր 28,000,000 քիլ. քառ. տարածութիւն որ ըսել է Եւրոպիոյ իբր երեք անգամն:

Ափրիկէ ունի եռանկիւնի մը ձեւ և համեմատաբար իւր ընդարձակութեան՝ Հին Աշխարհի ամենէ կանոնաւոր ծովափունք ունեցող ցամաքն է։

Ծոց և Նեղուց

Ափրիկէի գլխաւոր ծոցերն են Սիրթ և Կապէս՝ Միջերկրականէ ձեւացած։ Կուինիոյ մեծ ծոցն՝ Ատլանտեանէ ձեւացած. Պենիէն և Պիաճրա փոքր ծոցերը, Կուինիոյ ծոցէն ձեւացած են։

Ափրիկէ ունի չորս գլխաւոր նեղուցներ, Ճիպրապղար՝ որ կը գտնուի Ատլանտեանի ու Միջերկրականի միջեւ. Սուեզի ջրանցք՝ Միջերկրականի ու Կարմիր ծովու միջեւ. Պապ-իլ-Մանեէպի նեղուց՝ Կարմիր ծովու և Աէնի ծոցին միջեւ. Մոզամպիկի ջրանցք՝ Արեւելեան Ափրիկէի ու Մատակասքար կղզւոյն միջեւ։

Գետք և Լիճք

Ափրիկէ ունի երեք գլխաւոր աւազան, Միջերկրական, Հնդկայ և Ատլանտեան։ Միջերկրական թափող ամենէ կարեւորն և Ափրիկէի մեծագոյն գետն է Նեղոս՝ որոյ գլխաւոր գետակիցներն են Սպիտակ ու Կապոյտ Նեղոս։ Հնդկայ ովկիանոսը կը թափին Լիմբոպօ, Զամպեզ, Ռուվումա և Լուճիճի։ Ատլանտեան կը թափին Սենեկալ, Կամպիա, Ռիո-Կրանս, Նիկեր կամ Ճոլիպա, Բոնկո կամ Լիվինկսթըն, Օկուե, Բօանգա և Օրանճ։

Ափրիկէի մէջ կան մեծ ու փոքր բազմաթիւ լիճեր որոց շատերն վերջի տարիներս գտնուեցան։ Գլխաւորներն են Զատ՝ Սուտանի մէջ։ Հասարակածային Ափրիկէի արեւելեան կողմը կը գտնուին Վիքտորիա-Նիանզա, Ալպերտ-Նիանզա, Թանկանիկա, Պանկուէլա, Նիասսա, Նգոլիկէ եւլն։

Կազմութիւն և Լերինք

Ափրիկէ երկրիս հինգ մասանց մէջ ամենէն աւելի և ամենէն ընդարձակ անապատներ պարունակող ցամաքն է։ Ընդհանրապէս ծովեզերայ մօտ կ'երեւին երկար ու բարձրաբերձ լերինք որոց ստորոտներն քիչ շատ բարեխառն ու բնակելի են։

Ափրիկէի գլխաւոր լեռներն են Աղլաս գօտին՝ Պերպերիատանի մէջ, երովպական լերինք՝ համանուն երկրին մէջ. Քիլիմա-Նճարօ՝

կեդրոնական և արեւելեան մասանց մէջ. Բոնկ լերինք արեւմտեան կողմը. Լորաթա լերինք՝ հարաւային արեւելեան կողմը։

Ափրիկէի չորս գլխաւոր կողմերը կ'երեւին հետեւեալ հրուանդանք, Պօն՝ հիւսիսային կողմը. Դաշարի գլուխ՝ արեւմտեան կողմը Սենեկամպիոյ մէջ. Բարեյուսոյ գլուխ՝ հարաւային ծայրը. Կուարտաֆուի գլուխ՝ արեւելեան ծայրը։

Կղզիք

Ափրիկէի գլխաւոր կղզիներն են Ազորեան, Բանարեան, Մատեյրա և Դաշարի գլխոյ փոքր արշիպելագոսներէն՝ ի զատ Ս. Հեղինէ, Հարբարմնահ, Իշխանի, Ս. Թովմաս, Անճնոպօն և Ֆերնանս-Բօ կղզիք՝ Ատլանտեանի մէջ։

Մոդագոսկար, Սեշելեան, Զանզիպար, Բուռնեոնի, Պուռպօն, Մօրիս և Մատակասքար մեծ կղզին՝ Հնդկայ ովկիանոսին մէջ։

Կլիմայ, Բուսաբերութիւն, Հանք և Կենդանիք

Ափրիկէ իւր մեծատարած անապատներուն և համեմատաբար ջրոյ նուազութեան պատճառաւ՝ երկրիս հինգ մասանց մէջ ամենէ տաք և սակաւաբնակ ցամաքն է։ Հիւսիսային և հարաւային կողմերը քիչ շատ բարեխառն, իսկ Հասարակածային և սահմանակից երկրայ մէջ դժոխային տաք կ'ընէ։ Այս երկրայ մէջ կը տիրէ երկու որոշ եղանակ, չոր և անձրեւային։

Ափրիկէի բարեբեր երկրայ մէջ մեծ առատութեամբ յառաջ կ'ուգան ցորեն, բրինձ, եգիպտացորեն, շաքարեղէգ, բամպակ, խահուէ, համեմունք, խնկեղէն, թուզ, նարինջ, լեմոն, ձիթենի, լեղակ, արմաւ, որթատունկ, բժշկական բոյսեր եւլն։ Ափրիկէ ունի նաեւ հսկայ և լայնատարած անտառներ որք կը մատակարարեն շինութեան ազնիւ փայտ։

Ափրիկէ ունի ոսկի որ կը գտնուի գետոց աւազին մէջ։ Կան նաեւ պղնձի, երկաթի, կրանիթի, աղի և մանաւանդ ադամանդի հարուստ հանք՝ որ կը գտնուի Հարաւային Ափրիկէի մէջ։

Ափրիկէի կենդանեաց ամենէն երեւելին է ուղտը որ մեծ օգտակարութիւն ունի և զոր իրաւամբ կը կոչեն Անապատի

ձառ։ Երեւելի են նաեւ ջորին, ոչխարը, ձին, եզը եւլն։ Բայց աւելի բազմաթիւ են վայրի գազանք, ինչպէս՝ վագր, առիւծ, կոկորդիլոս, ընձ, ռնգեղջիւր, փիղ, ղեպը, ընձուղտ, կապիկ, ջայլամ, թռչուններ, թունաւոր օձեր, ճճիներ, մրջիւններ եւլն։

Քաղաքակրթութիւն Ափրիկէի

Ափրիկէ ունի իբր 170 միլիոն բնակիչ (կարծեօք) որոնք կը պատկանին այլ եւ այլ ցեղերու։ Անոնք ընդհանրապէս վայրենի, պատերազմիկ ու մարդակեր են։ Բնակչաց մեծագոյն մասին կրօնն է կռապաշտութիւն կամ նիւթապաշտութիւն, իսկ Հիւսիսային երկիրք, Նուպիա, Սուտան և Հնդկաց ովկիանոսի սահմանակից երկրաց մեկ մասին մէջ կը տիրէ Մահմետականութիւն։ Ափրիկէի այլ եւ այլ մասանց մէջ՝ դրեթէ Եւրոպացի ամէն ազգէ գաղթականներ կը գտնուին որք կ'ղրաղին երկրագործութեամբ և առեւտուրով։ Այս Եւրոպացի գաղթականք հետզհետէ բնիկները քաղաքակրթելու կ'աշխատին՝։

Քաղաքական բաժանումնք

Հիւսիսային Ափրիկէի երկիրներն են՝ Եգիպտոս, Պէրպէրիստան, (Թարապլուս, Թունուզ, Ալճեըի և Մարոք) Նուպիա, Սահարա կամ Մեծ Անապատ։

Միջին Ափրիկէի երկիրներն են՝ Սենէկամպիա, Հիւսիսային Կուինիա, Հարաւային Կուինիա, Հիւսիսային Նիկրիտիա կամ Սուտան, Քոնկոյի պետութիւն և Սոմալ։

Հարաւային Ափրիկէի երկիրներն են՝ Հարաւային Կուինիա, Օքենքացւոց Երկիր, Հարաւային Նիկրիտիա, Մոզամպիք, Զանկէպար, Քաճրասան, Բարեյուսոյ Երկիր, Նաղալ, Թրանսուալ և Հանրապետութիւն Օրանժի։

Ափրիկեան Աշխարհ

ԵԳԻՊՏՈՍ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԴԻՐ

ԵԳԻՊՏՈՍ՝ *Ափրիկէի նշանաւորագոյն երկիրն է և կը գրաւէ սոյն ցամաքին հիւսիսային արեւելեան մասն։ Սահմաններն են հիւսիսէն՝ Միջերկրական ծով. արեւելքէն՝ Սուէզի ջրանցք և Կարմիր ծով. հարաւէն՝ Նուպիա. արեւմուտքէն Թարապլուս և Լիբիոյ անապատը։*

Եգիպտոս նեղ ու երկար հովիտ մ'է որու ալ կողմէն կ'երկարի Արաբական և ձախ կողմէն Լիբիական լերինք։ Եգիպտոսի մէջէն կ'անցնի Նեղոս գետը որ՝ Հասարակածի տակ գտնուած Վիքթորիա Նիանղա լճէն բղխելով դէպ ի հիւսիս կը հոսի և բազմաթիւ բերաններով կը թափի Միջերկրական ծով։ Առանց Նեղոս գետին՝ Եգիպտոս պիտի լինէր անջրդի անապատ մը և որով շատ իրաւամբ ըսած է Հերոդոտոս Յոյն պատմիչը թէ՝ — «Եգիպտոս Նեղոսի մեկ պարգեւն է» — ։ Այս գետը տարին երկու անգամ կանոնաւորապէս կը յորդէ և շրջակայ հովիտները կը ծածկուին ջրով։ Երբ ջուրերը քաշուին, կը թողուն պարարտ կաւ մը՝ որու վրայ երկրագործը մեծ դիւրութեամբ կ'աշխատի և այսպէս քիչ ժամանակի մէջ Եգիպտոսի հովիտը կը ծածկուի ամենազգի բոյսերով և կ'առնու գմայլելի դրախտի մը կերպարանքը։ Ահա այս է Եգիպտոսի անյման արգասաւորութեան պատճառը։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — *Եգիպտոսի կլիման ընդհանրապէս շատ տաք է, բայց՝ ի տարին մասէն՝ ուր քիչ շատ բարեխառն է։*

Գլխաւոր բոյսերն են ցորեն, գարի, եգիպտացորեն, բրինձ, բամպակ, կանեփ, շաքարեղէգ, ծխախոտ և բանջարեղէնք. ունի նոյնպէս բազմաթիւ պաղատու ծառեր, ինչպէս արմաւենի, սրթենաւնկ, թզենի, նարնջենի, ծիրանի, նռնենի, ձիթենի եւայլն։



Կոկոդիլոս

Երկրին մէջ կան կրանիթի, մարմարիոնի և Նաթրոն ըսուած աղի հանք։

Կենդանեաց մէջ կարեւորներն են ոչխար, եզ, ուղտ և ջորի։ Վայրի կենդանիներն են կոկոդիլոս, Հիպոս անուն մուկը, ձիագետի և մեծամեծ օձեր։

ԲԱԺԱՆՈՒԱԾ ՆԱՀԱՆԳԱՎԻՐ

Եգիպտոս ունի իբր 1,020,000 քիլ. քառ. տարածութիւն և 6,800,000 բն.։

Եգիպտոս կը բաժնուի երեք մասերու՝ Ստորին Եգիպտոս կամ Տէլդա, Միջին Եգիպտոս և Վերին Եգիպտոս։

ԳԱՀԻՐԷ կամ **ՄԸՍԸՐ** (400,000 բն.), Եգիպտոսի Մայրաքաղաքն է Նեղոսի ալ ափանց մօտ, կը բաժնուի երկու որոշ մասերու Հին քաղ՝ որ աղտոտ է և կը պարունակէ հին շէնքեր, Նոր քաղ որ ունի գեղեցիկ շէնքեր, մաքուր և ընդարձակ փողոցներ։ Գահիրէի արեւմտեան կողմը կը գտնուի հին Մեմֆիս քաղաքին աւերակները և այն լեռնաձեւ Բուրգերն ու մարդադլուխ Սփինքսն՝ որք հաղարաւոր տարիներէ ի վեր կանգուն մնացած են։

Գլխաւոր ճաւահանգիստք Միջերկրականի վրայ

Ալեքսանդրիա կամ Իսքենտէրիէ (230,000 բն.), Եգիպտոսի և աշխարհիս նշանաւորագոյն նաւահանգստաց մին է զոր հիմնեց Մեծն Ալեքսանդր Քրիստոսէ 332 տարի յառաջ։

Ռոզէթ կամ Բաշիս, Տամիէթ կամ Տիմիադ, Տէլդայի վրայ բանուկ նաւահանգիստներ են և ունին բրինձ, բամպակ, ծխախոտ։

Բօռ-Սայիտ, Սուէզի ջրանցքին բերնին վրայ՝ բանուկ նաւահանգիստ է։

Սուէզ, Կարմիր ծովու վրայ Եգիպտոսի երեւելի վաճառատեղեաց մին է և նոյն ջրանցքին բացուելէն ի վեր աւելի մեծ կարեւորութիւն առած է, որովհետեւ Միջերկրականէ՝ Հարաւային և Արեւելեան Ասիա երթեւեկող նաւերն ասկից կ'անցնին։

Ներքին գլխաւոր քաղաքներ

Մէհալէթ-էլ-Քէսիր, Թանթահ, Զակազիկ, Տամանհուր,



Սփինքս եւ Բուրգ

Մանաւանդ Ստորին Եգիպտոսի մէջ։ Մէտինէթ-էլ-Ֆայում, Տամիէհ՝ Միջին մասին մէջ։ Միտրահինէ, Քարնակ ու Լուքսոր՝ հին Թեվիէ քաղաքին աւերակաց մօտ՝ անոնք գիւղեր են Վերին Եգիպտոսի մէջ։

Ընդհանուր տեղեկութիւն

Հին դարուց մէջ չատ երեւելի էր Եգիպտոս իւր բարձր քաղաքակրթութեամբ, արհեստներով, ճարտարութեամբ և իւր իմաստուն օրէնքներով։

Այս երկրին յաջորդաբար տիրեցին Պարսիկք, Մակեդոնացիք, Հռոմայեցիք, Արաբք և ի վերջոյ Օսմանցիք։ Եգիպտոսի Փոխարքային կը կոչուի Խոտիվ որ կը ճանաչէ Օսմ. Սուլթանին գերիշխանութիւնը։ Իրաւիճներու իշխանութիւնը ժառանգական է։ Եգիպտոս աւելի մեծ կարեւորութիւն ստացաւ Սուէզի ջրանցքին բա-

ցումէն ի վեր, որովհետեւ անկից առաջ՝ Եւրոպայէն Հնդկաստան և կամ Արեւելեան Ասիա գացող նաւերը՝ ստիպուած էին Ափրիկէի շրջանն ընել, մինչդեռ հիմա նոյն ըրանցքէն անցնելով՝ քիչ ժամանակի մէջ և քիչ ծախքով կրնան երթեւեկել։ Երկրին մէջ կը գտնուին Ղպտիք, Արաբք, Թուրք, Հրէայ ու Եւրոպական ամէն ազգէ բնակիչք։ Նոյնպէս Հայ գաղթականութիւնը կարեւոր տեղ մը կը բռնէ Եգիպտոսի մէջ։

ՆՈՒՊԻԱ.

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՆՈՒՊԻԱ. կը տարածուի Եգիպտոսի Հարաւակողմը։ Սահմաններն են Հիւսիսէն Եգիպտոս. արեւելքէն Կարմիր ծով ու Եթովպիա. Հարաւէն և Հարաւային արեւմուտքէն Սուտան. արեւմուտքէն՝ Լիբիոյ անապատ։

Ա.յս երկրին միայն Հիւսիսային և միջին մասերն բարեբեր են՝ չնորհիւ Նեղոս գետին, միայնակաց տեղուանքն աւազուտ անապատներ են։ Կլիմայն խիստ տաք և վատառողջ է, միայն Հարաւային կողմերը կ'անձրեւէ։

Գլխաւոր բոյսերն են բրինձ, եգիպտացորեն, դարի, ծխախոտ, բամպակ, թզենի և արմաւ։ Տեղական բերքերու մէջ յիշատակութեան արժանի են նաեւ փղոսկրը, խէժը, ոսկւոյ փոշին, վայրի կենդանեաց մորթը և չինութեան աղնիւ փայտերը։

Նուպիա ունի արջառ, եզ, ջորի, ուղտ և բազում վայրի կենդանիներ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Նուպիա ունի 1,200,000 քիլոմէթր քառակուսի տարածութիւն և 4,000,000 բնակիչ։

Երկիրը կը բաժնուի երկու մասերու, 1°. Վերին Նուպիա, 2°. Ստորին Նուպիա։

ՔԱՐԹՈՒՄ (40,000 բն), Մայրաքաղաք Նուպիոյ, Կապոյտ և Սպիտակ Նեղոսներու միացման տեղը՝ ամուր և վաճառաշահ քաղաք է և մեծ յարաբերութիւն ունի շրջակայ երկրաց հետ։

Քասալա, եթովպիոյ սահմանին մօտ՝ վաճառաշահ փոքր քաղաք մ'է։

Սուաքիմ, կարմիր ծովու վրայ բանուկ նաւահանգիստ է։

Երեւելի են նաեւ Պերպեր, Քորտոֆան, Նոր Տոնկոլա և Սեննաար՝ Նեղոսի մօտ։

Ընդհանուր տեղեկութիւն

Նուպիացիք կը պատկանին Արաբական ցեղին և են պատեբազմասէր ու կիսավայրենի։ Բնակչաց մեծ մասին կրօնն է Մահմետականութիւն։

ԵԹՈՎՊԻԱ. կամ ՀԱՊԻՇԻՍՏԱՆ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԵԹՈՎՊԻԱ. բարձր և ընդարձակ լեռնադաշտ մ'է Նուպիոյ հարաւակողմը ուր կ'երեւին բարձր գագաթներ ու մեծատարած հովիտներ։ Մայիսէն մինչեւ Սեպտեմբեր կանոնաւորապէս կ'անձրեւէ, այս պատճառաւ կլիման՝ բայ ի ծովեզերքներէն՝ ընդհանրապէս բարեխառն է։

Գլխաւոր բոյսերն են ցորեն, բրինձ, բամպակ, շաքարեղէգ, խահուէ, արմաւ, խէժ և աղնիւ փայտի ընդարձակ անտառներ։

Ընտանի կենդանեաց մէջ երեւելի են ձին, ջորին, էշը, ոչխարը և կովը։ Կան նաեւ բազում վայրի գազաններ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Եթովպիա ունի 1,200,000 քիլ. քառ. տարածութիւն և 3,000,000 ի չափ բնակիչ

Եթովպիա բաժնուած է այլ և այլ ինքնագլուխ իշխանութեանց որոց գլխաւորներն են Ամհարա, Թիկրէ և Շօա։

Գլխաւոր քաղաքներ

ԿՈՆՏԱՐ, Մայրաքաղաք Ամհարայի, Տէմպէա լճին հիւսիսային կողմը վաճառաշահ քաղաք է։

Ասմամ, գլխաւոր քաղաք Թիկրէէ՝ որ էր նախկին մայրաքաղաք Եթովպիոյ։

Երեւելի են նաեւ Փասօ, Կալօսպաթ, Սահնարա։

Մասուվա, կարմիր ծովու վրայ բանուկ և նշանաւոր նաւահանգիստ՝ զոր վերջերս Իտալացիք գրաւեցին։

Ընդհանուր տեղեկութիւն

Եթովպիա իւր լեռնային կազմուածքեան, բարձրաբերձ գագաթներուն և բնական այլ և այլ սիրուն տեսարաններուն պատճառաւ՝ կոչուած է Աֆրիկեան Զուիցերի։ Այս երկիրն հին դարուց մէջ ունեցած է բարձր քաղաքակրթութիւն մը, մինչդեռ այսօր՝ յետին տգիտութեան և խաւարի մէջ է։ Բնակիչք՝ ըստ մեծի մասին բարբարոս, պատերազմասէր ու ծոյլ են։ Երկրին վաճառականութիւնը Հրէից ձեռքն է։ Տեղացւոց մեծագոյն մասին կրօնն է Քրիստոնէութիւն։

ՊԷՐՊԷՐԻՍՏԱՆ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՊԷՐՊԷՐԻՍՏԱՆ կը կոչուի հիւսիսային Աֆրիկէի այն մասն՝ որ կը տարածուի Եգիպտոսէ մինչեւ Ատլանտեան ովկիանոս։

Պէրպէրիստան կը պարունակէ չորս երկիրներ, Թարապլուս, Թունուզ, Ձէզայիր և Մարոք։

Թարապլուս ընդհանրապէս տափարակ ու անապատային է, իսկ Թունուզէ մինչև Ատլանտեան կ'երկարի Սդղաս գօտին որմէ սկսեալ՝ Միջերկրականի միջեւ գտնուած երկիրը կը կոչուի Թէլ և է բարեբեր, շէն ու բազմամարդ։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Երկրին կլիման՝ լեռնային մասանց մէջ բարեխառն և տեղ տեղ խոնաւ, իսկ դաշտայց և մեծ անապատի սահմանաց վրայ սաստիկ տաք կ'ընէ։

Պէրպէրիստանի բուսական գլխաւոր արտադրութիւններն են արմաւիք, ձիթախոտ, արմաւ, ձիթենի, նարնջենի, թթենի, բամպակ, որթատունկ, չաքարեղէգ, չինութեան աղնիւ փայտ եւլն։

Պէրպէրիստանի մէջ կը գտնուին արծաթի, պղնձի, կապարի, երկաթի գինկի, չինութեան աղնիւ փայտերու և աղի հանքեր։

Երկրին մէջ կան ձի, էշ, ջորի, կով, այծ, ուղտ և ջայլամ որոյ փետուրը շատ յարգի է։

ԹԱՐԱՊԼՈՒՍ

Թարապլուս՝ Եգիպտոսի և Թունուզի միջեւ ընդարձակ երկիր մ'է, 1,000,000 քիլ. քառ. տարածութեամբ և իբր 1,000,000 բնակչօք, կը պատկանի Օսմանեան պետութեան։

Գլխաւոր քաղաքն է Թրիփոլի կամ Թարապլուսը Ղարպ՝ որ բանուկ նաւահանգիստ է Միջերկրականի վրայ։ Երկրորդական նաւահանգիստ է Պենկազի։

Թարապլուսի հարաւային կողմը կը գտնուի Ֆեզզանի ընդարձակ ովասիսը։ Գլխաւոր քաղաքն է Մուրզուք որ մեծ առեւտուր ունի փղոսկրի, խէժի և ջայլամի փետուրի։ Ամէնէն կը մեկնին Սուտան գացող կարաւանք։

Թունուզ

ԹՈՒՆՈՒԶ

Թունուզ Աֆրիկէի ամենէն հիւսիսային երկիրն է Ալճէրիի և Թարապլուսի միջեւ։ Ունի 120,000 քիլ. քառ. տարածութիւն և 2,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է Թունուզ՝ Միջերկրականէ մօտ, ուր կը գտնուին հին Կարքեդոնի աւերակները։ Թունուզ ճարտարարուեստ ու վաճառաշահ քաղաք մ'է։

Կապէս, հանգոյն ծոյլ վրայ բանուկ նաւահանգիստ է։

Պիզէրթա, Աֆրիկէի ամենէ հիւսիսային քաղաքն է։

Երեւելի են նաեւ Քէրուրան, Սճամա, Հաճաճէր եւլն։

Թունուղ առժամանակեայ կերպիւ կը դանուի ընդ պաշտպանութեամբ Ֆռանսայի։

ԱԼՃԷՐԻ ԿԱՄ ՃԷԶԱՅԻՐ

Ալճէրի՝ Պէրպերիատանի եւ միանդամայն Ափրիկէի ամենէն հարուստ ու քաղաքակրթեալ երկիրներէն մին է եւ որ կը տարածուի Թունուղի եւ Մարոքի միջեւ։

Ունի 670,000 քիլ. քառ. տարածութիւն եւ 3,800,000 բնակիչ։

Երկրին Մայրաքաղաքն է ԱԼՃԷՐԻ ԿԱՄ ԷԼ-ՃԷԶԱՅԻՐ (70,000 բն), ամուր եւ վաճառաշահ նաւահանգիստ է, կը բաժնուի երկու մասերու։ Հին թաղ որ է՝ Արաբական քաղաքը, եւ Նոր թաղ որ ունի Ֆռանսական շէն քաղաքի մը երեւոյթն։

Կոստանդին, ամուր քաղաք է, մօտերը կան հին շէնքերու աւերակներ։

Օրան, Միջերկրականի վրայ զինուորական նաւահանգիստ է։

Պոն, ապահով եւ բանուկ նաւահանգիստ է, հոս ապրած է Ս. Օգոստինոս երեւելի հայրապետը։

Ֆիլիփվիլ, նոթաշէն եւ գեղեցիկ քաղաք է։

Երեւելի են նաեւ Պուժի, Մոսթականեմ, Շեռշել եւլն։

Ալճէրի 1830 էն ի վեր առժամեայ կերպիւ կը պատկանի Ֆռանսայի։

ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՈՔԻ

Մարոք՝ Պէրպերիատանի ամենէն արեւմտեան երկիրն ու ինքնիշխան Պետութիւն մ'է եւ որոյ վերհապետը կը կոչուի Սուլթան։

Մարոք ունի 680,000 քիլ. քառ. տարածութիւն եւ 6,000,000 բնակիչ։

Երկրին մեծագոյն քաղաքն է Ֆէս (100,000 բն.), ճարտարապետական եւ վաճառաշահ քաղաք, ունի Մարոքեան անուն գեղեցիկ հիւսուածքներ։

Մարոք, երկրորդ քաղաքն է եւ կարաւաններով կը հաղորդակցի Միջերկրականի հետ։

Թանճէր եւ Թէթուան, Միջերկրականի վրայ բանուկ նաւահանգիստներ են։

Ատլանտեանի վրայ երեւելի նաւահանգիստ է Մոկատոր, երկրորդական են Մէխինէզ եւ Մազական։

Սպանիոյ կը վերաբերին Մէօղա, Մելիլլ եւ Վէլէզ փոքր քաղաքները՝ Ճիպրալթարի մօտ

Ընդհանուր տեղեկութիւն

Պէրպերիատան ունի աշխարհագրական գեղեցիկ դիրք եւ մեծ յարմարութիւն ծովային վաճառականութեան համար։ Այս երկրին բնակիչքն են Պէրպէր, Արաբացի, Մուղրի, Թուրք, Հրէայ ու Եւրոպացի։ Քաղաքակրթութիւնը միայն Ալճէրիի մէջ մեծ գաւած է։ Պէրպերիատան մեծ առեւտուր ունի արմտեաց, բուրդի, ձիթոյ, կաշւոյ, մետաքսեղինայ, Արաբական ջինքերու, խէժի գեղեցիկ թռչնոց փետուրներու եւ վայրի գազանաց մորթերու։

ՍԱՀԱՐԱ ԿԱՄ ՄԵԾ ԱՆԱՊԱՏ

ՌՆԱԿԻՉՔ ՆԱՀԱՊԵՏԻՔ

Սահարա կամ Մեծ Անապատ կը կոչուի այն ատաղձաւ, եւ լայնատարած երկիրն որ՝ կը տարածուի Պէրպերիատանի, Ատլանտեանի, Սենեգալի, Սուտանի, Եգիպտոսի, Նուպիոյ եւ Կուինիոյ միջեւ։

Սահարա իբր 7,000,000 քիլ. քառ. տարածութեամբ եւ իբր 4,000,000 բնակչօք ատաղձային անսահման անապատ մ'է՝ ուր քիչ տեղեր կ'երեւին ովասիսներ։

Կլիմային անտանելի կերպիւ տաք եւ ատաղձային մրրիկներն անպակաս են։

Գլխաւոր ովասիսներն են՝ Թուատ, Թիտիքեթ, Պիլմա, Թալկան, Ատրար, Թիպպու եւլն։

Բնակիչք Պէրպերներէ, Մաւրիտանացիներէ եւ այլ ցեղերէ բազկացեալ վայրենի մարդիկ են, եւ կ'զբաղին խաշնարածութեամբ ու տեղական բերոյ առեւտրով։ Ամեն տեսակ գազաններ ու ճճիներ կը վխտան այս երկրին մէջ։

ՄԻՋԻՆ ԱՓՐԻԿԷ

ՍԵՆԷԿԱՄՊԻԱ.

ՍԵՆԷԿԱՄՊԻԱ՝ որ առած է իւր անունն Սենէկալ և Կամպիա գետերէն, Ափրիկէի ամենէն արեւմտեան երկիրն է։ Սահմաններն են Հիւսիսէն՝ Սահարա. արեւելքէն՝ Սուտան. Հարաւէն՝ Կուինէա և արեւմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոս։

Ընդհանրապէս տափարակ երկիր մ'է Սենէկամպիա, մանաւանդ ծովեղերեայ մասերն ծովէն ցած ըլլալնուն՝ շատ տաք կ'ընեն։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Երկրին կլիման սաստիկ տաք է. — Ունի երկու եղանակ՝ չոր և անձրեւային որ կը տեւէ Յուլիսէ մինչեւ Հոկտեմբեր։ Սենէկամպիա՝ Հասարակածային ամէն տեսակ բոյսերէն՝ ի զատ՝ ունի նաեւ Պաօպապ անուն հսկայ ծառն որոյ կոճղն ունի իբր 10 մէթր արամագիծ։

Այս երկիրն ունի 920,000 քիլ. քառ. տարածութիւն և իբր 10,000,000 բնակիչ։

Գլխաւոր քաղաքներն են

Ս. Լուի, Սենէկալ գետին բերանը՝ համանուն կղզւոյն վրայ ամուր և վաճառաշահ քաղաք մ'է։

Saffar, Դալարի գլխոյ հրուանդանին հարաւակողմը։

Gorէ, համանուն կղզւոյն վրայ, կը պատկանի Ֆռանսացւոց։

Անգլիա Սենէկամպիոյ մէջ ունի Պաթըրսթ, Կամպիա գետոյն բերանը։ — նոյնպէս Ձորմսբաւն և Ալպրեդա։

Փորթոկիզեան գլխաւոր քաղաքներն են Բիս-տը-Քաշէս և Բիս-տը-Կեպա։

Բաց ի սոյնցմէ՝ ներքին մասանց մէջ կը գտնուին այլ և այլ՝ անկախ թագաւորութիւններ։

ՀԻՒՍԻՍՍԱՅԻՆ ԿՈՒՏԻՆԻՍ.

ՀԻՒՍԻՍՍԱՅԻՆ ԿՈՒՏԻՆԻՍ. կը կոչուի արեւմտեան Ափրիկէի այն մասն որ՝ Սենէկամպիայէ սկսեալ՝ կը տարածուի դէպ յարեւելեան հարաւ՝ մինչեւ Լորէզ հրուանդանը։

Այս երկիրն ունի բարձրաբերձ լեռներ, խիտ անտառներ և ջրոյ բազմաթիւ հոսանքներ որոնք երկիրը կ'արգասաւորեն։ Կլիման չափազանց տաք և վատառողջ է, Մայիսէն մինչեւ Հոկտեմբեր ահաւոր փոթորիկներով անձրեւներ կը տեղան։

Գլխաւոր բոյսերն են՝ արմաւ, ծխախոտ, եգիպտացորեն, բրինձ, պանան, լեղակ, նարինջ, համեմունք, շինութեան ազնիւ փայտ եւայլն։

Երկրին գետերը իրենց աւազին հետ կը բերեն ոսկւոյ փոշի։ Կենդանեայ մէջ մանաւանդ կարեւորութիւն մ'ունի փիղն որմէ կ'առնուն փղոսկր։

Հիւսիսային Կուինէա ունի 2,500,000 քիլ. քառ. տարածութիւն և 12,500,000 բնակիչ։

Երկիրը՝ տեղական մի քանի իշխանութիւններէ ի զատ՝ բաժնուած է նաեւ Եւրոպական հետեւեալ տէրութեանց միջև։

Գլխաւոր երկիրներն են

1°. Սիէրա-Լէօն, գլխաւոր կեդրոն Անգլիական գաղթականութեան։ Բնակիչք՝ դերութենէ ազատեալ սեւեր են։ Գլխաւոր քաղաքն է Ֆրիթաուն։ Օդը վատառողջ է։

2°. Լիպէրիա, Ազատ Հանրապետութիւն մ'է զոր Ամերիկացիք հիմնեցին 1840 ին՝ ազատեալ Բրիտանեայ սեւերու համար, Գլխ. քաղաքն է Մօնրովիա՝ բանուկ և վաճառաշահ նաւահանգիստ։

3°. Փղոսկրի ծովեզր, գլխաւոր քաղաքներն են Կրան-Պասամ, Ասինի և Տապու որոնք կը պատկանին Ֆռանսացւոց։

4°. Ոսկւոյ ծովեզր, ուր տեղի կունենայ ոսկւոյ փոշիի առեւտուր։ Գլխաւոր քաղաքներն են Քէյփ-Քոռս, Էլմինա և Ս. Գեորգ զոր Հոլանտացիք թողին Անգլիացւոց։

4°. Աճանթիի Երկիր, ներքին մասին մէջ։ Գլխաւոր քաղաքներն են Գումասի և Սէկոնա։

7°. Գերեաց ծովեզր, այս երկիրը կը պարունակէ մի քանի իշխանութիւններ որոց ամենէն երեւելին է Տահոմէի Թագաւորութիւնը։ Գլխաւոր քաղաքներն են՝ Ագօմէ, Ուիտահ, Porto-Նովօ որք կը պատկանին Ֆռանսացւոց։ Նոյնպէս Ֆռանսայի կը պատկանի Կապոն՝ որ տակաւ կարեւորութիւն կ'առանայ։

7°. Պենէի Երկիր, առանձին փոքր թագաւորութիւն մ'է համանուն մայրաքաղաքաւ։

Գերմանիա եւս 1884 էն ի վեր ակրած է Գերեաց ծովեզրին և Գաէրունի։

Ընդհանուր տեղեկութիւն

Այս երկրին բնիկները սեւամորթ Աֆրիկեցիներ են վայենաբարոյ։ Կրօնքնին է նիւթապաշտութիւն, կան ալ որ մարդագող կ'ընեն։ Եւրոպացիք կ'աշխատին այս վայրենի ցեղերն հեղհեղաբ քաղաքակրթել։

ՆԻԿՐԻՏԻԱ կամ ՍՈՒԱՆ

Բնական նկարագիր

Նիկրիտիա կամ Սուան կը կոչուի այն ընդարձակ երկիրն՝ որ կը տարածուի ընդ մէջ Սահարայի, Սենեկամպիոյ, Կուինիոյ, Հասարակածային Աֆրիկէի և Նուպիոյ։

Սուանն ընդհանրապէս անապատ է, բայց կան նաեւ ընդարձակ և բարեբեր ովասիսներ որոց չատը այս վերջի տարիներս դտնուեցան։ Կլիմայն խիստ տաք է, ցունիսէն մինչեւ Հոկտեմբեր անընդհատ անձրեւ կը տեղայ։ Այս երկրին մէջէն կ'անցնի Նիկեր կամ Տիալի-Պա մեծ գետը՝ որ Կուինիոյ ծոցը կը թափի։

Գլխաւոր բոյսերն են բամպակ, խաղողից հունաձեր, ծխախոտ, պղպեղ, արմաւ, բրինձ, չաքարեղէգ, պանան, եւլն։ Ցեղական հարստութեանց կարգին մէջ երեւելի են նաեւ ոսկւոյ փոշին, փղոսկրը, ջայլամի փետուրը, դոհարեղէնները, խէժը, մեսաքսեղէնները, վայրի կենդանեաց մորթը եւլն։

Սուանի մէջ՝ ուղտ, ձի և ջորիէ ի զատ՝ կը դտնուին նաեւ վայրի գաղաններ։

Քաղաքական նկարագիր

Սուան ունի իբր 3,000,000 քիլ. քառ. տարածութիւն և 4,500,000 բնակիչ։

Այս երկիրը կը բաժնուի այլ և այլ իշխանութեանց և բնիկ թագաւորութիւններու որոց գլխաւորներն են,

1°. Ուասուլօ, Նիկերի վերին հովտին մէջ հարուստ և բաբեբեր երկիր մ'է, բնակիչք հիւրասէր և աշխատասէր են։

2°. Պամպարայի Երկիր, գլխ. քաղաքներն են, Սէկու և Ձենի։

3°. Թոմպուքթու, վաճառաշահ քաղաք է, ունի տեղական բերոյ մեծ առեւտուր։

4°. Կաոսօ, փոքր թագաւորութիւն մ'է համանուն քաղաքաւ։

5°. Սաֆաթու, Նիկերի մօտ, մայրաքաղաքն է Վուռնօ։

6°. Պուռնու, Չատ լճին արեւմտեան կողմը, գլխաւոր քաղաքն է Քուխա։

7°. Պակիրմի, զօրաւոր թագաւորութիւն մ'է Մաուէյնա մայրաքաղաքաւ։

8°. Ուատայ, Չատ լճին հիւսիսակողմը, գլխ. քաղաքն է Ապէշըր։

9°. Քորտոճան, երկրին արեւելեան կողմը, ունի գեղեցիկ ովասիսներ, գլխաւոր քաղաքն է Էլ-ո-պեյթ։

10°. Տարճուր, Քորտոֆանի հարաւային արեւելեան կողմը, ընդարձակ և հարուստ ովասիս մ'է, գլխաւոր քաղաքն է Ֆաշէռոր, մեծ առեւտուր ունի չրջակայ երկրաց հետ։

Այս վերջին երկուքը եգիպտոսի գերիշխանութեան ներքեւ են։

Ընդհանուր տեղեկութիւն

Սուանի բնակիչք ընդհանրապէս Մահմէտական են, կան նաեւ կռապաշտ և մարդակեր ցեղեր։ Ովասիսներու բնակչաց մէջ կան այնպիսի ցեղեր որոնք մեծ յարմարութիւն ունին արհեստադործութեան և որոց ամենէն երեւելին է Ֆեյլատա ցեղը որ կը բնակի Չատ լճին եղերքն և Քոնկոյի հովտին մէջ։ Եւրոպացի խուզարկուներու չնորհիւ՝ այս երկիրն հեղհեղաբ կը ծանօթանայ քաղաքակրթ աշխարհի։

ՍՕՄԱԼ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Սոմալ՝ Ափրիկէի ամենէն արեւելեան երկիրն է որ՝ Պապ-իւլ-Մանտէպի նեղուցէն ու Եթովպիաէն սկսեալ՝ կը տարածուի մինչեւ Զանկէպար։

Երկրին հիւսիսային և արեւմտեան կողմերը լեռնային, իսկ ծովեզերքը տափարակ, ճահճային ու վատառողջ են, կլիման չատ տաք է։ Գլխաւոր հարստութիւններն են՝ դեղին սաթ, խէժ և խնկեղէն։

Բնակիչք կը բաղկանան տեղացի Պէրպէրներէ և Սօմալի կոչուած Մահմէտական Արաբներէ որք կ'զբաղին խաշնարածութեամբ, նախնական արհեստներով և ամենք ալ արտաքին վաճառականութեամբ։

Սօմալ ունի 850,000 քիլ. քառ. տարածութիւն և իբր 5,000,000 բնակիչ։

Գլխաւոր քաղաքներն են

Զէյլա, Պապ-իւլ-Մանտէպի նեղուցին վրայ փոքր քաղաք մ'է։
Պէրպէրա, Մակատոսո, փոքր նաւահանգիստներ են։

Պապ-իւլ-Մանտէպի վրայ Թուանասացիք ունին Օպօք անուն փոքր նաւահանգիստ, իսկ Անգլիացիք Մուշաֆի՝ փոքր կղզին։

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՒՆԻԱ. կամ ՔՈՆԿՕ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Հարաւային Կունիա կը կոչուի արեւմտեան Ափրիկէի այն երկիրն որ կը տարածուի Լօբէզ հրուանդանէն մինչեւ Թրիօ գլուխը։ Երկրին ծովեզերքն ընդհանրապէս ցած, ճահճային ու վատառողջ

են, իսկ ներքին մասանց մէջ կը գտնուին նաև բարեխառն տեղեր։

Այս երկրին մէջ Հոկ.ֆ մինչեւ Մարտ՝ յորդառատ կ'անձրեւէ։

Երկրին արեւելքէն դէպ արեւմուտք կը վազէ Քոնկո կամ Լիվինկսթոնի մեծ գետը որոյ ակը յայտնաբար գտան Քամէրոնի և Սպէնկի խուզարկուները։

Քոնկոյի բուսաբերութիւնքն են բրինձ, բամպակ, արմաւ, ծխախոտ, լեզակ, խէժ, գունաւոր բոյսեր, խահուէ, չաքարեղէգ և չինութեան աղնիւ փայտ։ Կը գտնուին նաեւ ոսկւոյ, երկաթի, պղնձի, ծծումբի, քարիւղի և բորակի հանքեր որոնք նոր սկսած են շահագործուիլ։

Քոնկոյի մէջ կը գտնուին Հասարակածի ամէն տեսակ գազաններ, օձ և ջնասակար ճճիներ։

ԳԱՂՈՒԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հարաւային Կունիա ունի 1,000,000 քիլ. քառ. տարածութիւն և 11,000,000 ի չափ բնակիչ։

Երկիրը բաժնուած է 6 գլխաւոր մասերու։

1°. Թագաւորութիւն Լօանկոյի, գլխաւոր քաղաքն է Պօալի։

2°. Քաոոնկո, գլխաւոր քաղաքն է Քէնկէլէ։

3°. Քոնկոյի Երկիր, Հարաւային Կունիոյ ամենէն հարուստ և ծաղկեալ մասին երկիրն է։ Գլխաւոր քաղաքն է Սան-Սալվատոր։

4°. Անկոլայի Երկիր, կը պատկանի Փորթոկալի, գլխաւոր քաղաքն է Ս. Բոլ տը-Լօանտա։

5°. Պէնկուէլա, նոյնպէս կը պատկանի Փորթոկալի, գլխաւոր քաղաքն է Ս. Քիլիի տը-Պէնկուէլա։

6°. Մոսամեդէս, փոքր երկիր մ'է համանուն քաղաքաւ և կը պատկանի Փորթոկալի։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՔՈՆԿՕ

Ֆրանսա Քոնկոյի մէջ ունի կարեւոր գաղթականութիւն մը որ կը տարածուի Հիւսիսային Կունիաէ մինչեւ Քոնկո կամ Զաիրէ գետը։

Գլխաւոր քաղաքներն են Պրաձաւիլ, Լիպրովիլ և Կապօն։

Այս երկիրն հետզհետէ ծաղկելու վրայ է։

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՆԻԿՐԻՏԻԱ կամ ԱՋԱՑ ՓՈՆԿՕ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Ա.յս անուամբ կը ճանչցուի այն ընդարձակ աշխարհն որ կը տարածուի Սուտանէն՝ ի Բաֆրաստան և Հարաւային Կուինիաէն դէպ արեւելք՝ մինչ՝ ի Սօմալ և՝ ի Զանկէպար։

Ա.յս երկիրը ներկայ դարուս վերջի շրջանին մէջ ճանչցուեցաւ՝ շնորհիւ եւրոպացի և Ամերիկացի երեւելի խուզարկուներու՝ ինչպէս Լիվինկրսթըն, Սքիֆ, Կրանդ, Պէյքր, Էմին փաշա և մանաւանդ Սթէնլի, որոնք գտան մեծամեծ լիճեր, անտառներ և ծանօթացան այլ և այլ ցեղերու։

Սոյն թերածանօթ երկիրը բաժնուած է զանազան տէրացի ցեղերու մէջ ու այլ և այլ փոքր թագաւորութեանց։

Գլխաւոր քաղաքներն են Մրսասալա, Թապօրա, Ուկուկօ, Մրբուօրուա, Ուհիհի, Մրրոզօ, Բասանկա որք կը պատկանին Գերմանացւոց, իսկ Զովէզերեայ մասերը կը գտնուին ընդ գերիշխանութեամբ Անգլիոյ։

ՕԹԵՆԹԱՅԻՈՑ ԵՐԿԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Օթենթիա կը գտնուի Օվամիիայի, Բարեյուսոյ երկրին և Օրանժի միջեւ։ Երկիրը լեռնային և խիտ անտառներով ծածկուած է որոց մէջ կը գտնուին շատ մը վայրի գազաններ, Բնիկները այլ և այլ ցեղերու բաժնուած սեւամորթ և կռապաշտ մարդիկ են, կ'զբաղին խաչնարածութեամբ և որսորդութեամբ։ Քաղաք չ'ունին դրեթէ, այլ կ'ապրին Բրա՛ալ կոչուած տեսակ մը խեղճուկ տաններու մէջ որոնք գլխիվայր դարձած կողովի ձեւ ունին։ Բողոքական Միսիոնարք կ'աշխատին այս կռապաշտ ժողովուրդը Քրիստոնեայ ընել։

ԲԱՐԵՅՈՒՍՈՑ ԵՐԿԻՐ

կամ

ՓԱՓԻ ՏԷՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Փափ՝ Ափրիկէի ամենէն հարաւային և կարեւորագոյն երկիրն է՝ զոր 1846ին առաջին անգամ գտաւ Պարթելեմի Տիազ-Փորթոկէզ անուանի նաւապետը։

Երկիրն ընդհանրապէս լեռնային է, բայց ունի ընդարձակ, բարեբեր և խիտ լաւ մշակուած դաշտեր որոց մէջ յառաջ կ'ուգան արմտիք, կանեփ, նարինջ, լեմոն, կիտրոն, թուզ, որթատունկ, բամբակ, խահուէ, շաքարեղէգ եւլն։ Շատ յարգի է այս երկրին գինին։ Նոյնպէս կը գտնուի ադամանդի հանք։

Կենդանեաց մէջ յարգի են ձին, կովը և ոչխարը որոց բուրդը առեւտուրի մեծ նիւթ մ'է։ Ասոնցմէ՝ ի զատ՝ Անգլիացիք այս երկրին մէջ կը մնուցանեն Լինկիւրիի համբաւաւոր այծերէն՝ որոց մազը մեծ յարգ ունին ամէն տեղ։ Կլիման ընդհանրապէս բարեառն է։ Ունի երկու որոշ եղանակ, չոր և անձրեւային։ Առաջինը կ'սկսի Սեպտեմբերէն և կը տեւէ մինչեւ Մարտ։ Անձրեւային եղանակը կ'սկսի Մայիսին՝ սոսկալի փոթորիկներով և կը տեւէ մինչեւ Օգոստոս։

Փափ

ՀԱԳՍՏԱՆԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Բարեյուսոյ երկիրն ունի 630,000 քիլ. քառ. տարածութիւն և իբր 1,350,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է Քափ, Հնդկաց ովկիանոսի վրայ ծաղկեալ ու վաճառաշահ նաւահանգիստ է։ Սուէզի ջրանցքը չբացուած՝ Եւրոպայէ Հնդկաստան գացող նաւերն ասկից կանցնէին։ Բօռդ-էլիզապէթ, Անգլիական Քաֆրաստանի մէջ նաւահանգիստ է և ունի փղոսկրի և բուրդի մեծ վաճառականութիւն։

Կոստանդինա, գեղեցիկ այգեստաններով շրջապատուած փոքր քաղաք մ՚է։

Երեւելի են նաեւ Սրեւելեան Լոնտոն և Կրահամստոմն։

ՔԱՖՐԱՍՏԱՆ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Քաֆրաստան կը տարածուի Հնդկաց ովկիանոսի, Բարեյուսոյ երկրին, Մոզամպիքի և Օթէնթիաի միջեւ։

Քաֆրաստան լեռնային երկիր մ՚է, տեղ տեղ կը գտնուին նաև աւազուտ դաշտեր՝ գեղեցիկ ովասիսներով։ Այս երկրին հիւսիսէն կ՚անցնի Զանսեզ գետը ղոր առաջին անգամ գտաւ Լիվինկըսթըն Անգլիացի անուանի երկրախոյզը։

ՀԱԳՍՏԱՆԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Քաֆրաստան ունի իբր 1,200,000 քիլ. քառ. տարածութիւն և 2,000,000 ի չափ բնակիչ։

Քաֆրաստան կը բաժնուի այլ և այլ երկիրներու որոց կառավարիչները կը պատկանին Անգլիոյ։

1º. Նաթալի երկիր, գլխաւոր քաղաքներն են Բիեդեր-Մարիցպառկ և Բօռ-Նաթալ։

2º. Զուլուներու Երկիր, որոյ բնակիչը վայրենի են և յաճախ պատերազմի մէջ։

3º. Հանրապետութիւն Օրէնճի, փոքր Հանրապետութիւն մ՚է Քափի հիւսիսային արեւելեան կողմը, բնակիչք կը կոչուին Պոէր և են Բրիտտոնեայ։ Գլխաւոր քաղաքն է Պլեօմֆօնթայն։

4º. Հանրապետութիւն Թրանսուալի ղոր հիմնած են Հոլանտացիք։ Գլխաւոր քաղաքն է Բրեդորիա։

Սոյն ծանօթ երկիրներէն ի զատ՝ ներսերը կը գտնուին Պասուտա, Մաֆալօլօ, Պաւեազի և Պարօձէ անուանեալ վայրենի և ինքնագլուխ ցեղեր են։

Քաֆրաստանի բնակիչք կը կոչուին Քաճր կամ Քաճիր որոնք վայրենի և պատերազմասէր են։ Երկրին մէջ կը գտնուի ոսկւոյ և ադամանդի հանք։



Վայրենի

ՄՈԶԱՄՊԻՔ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Մոզամպիք՝ Սրեւելեան Աֆրիկէի կարեւոր երկիրներէն մին է որ՝ Տէլկաօ հրուանդանէն սկսեալ՝ կ՚երկարի ի հարաւ մինչ ի Քաֆրաստան։ Երկրին արեւմտեան սահմանին վրայ կը գտնուի Լուվալթա գօտին որ կը պարունակէ բարձր դադաթներ։ Կլիման՝ ներքին մասանց մէջ բարեխառն, իսկ ծովեզերքը տաք և վատառողջ են։ Հողը բարեբեր և բազմաթիւ վտակներով ոռոգեալ է։ Առատօրէն կ՚արտադրէ բրինձ, արմտիք, շաքարեղէգ, խաղող, բամպակ, լեզակ, արմաւ, նարինջ, լեմոն եւլն։ Լեռները ծածկուած են գեղեցիկ և թանձր անտառներով որոց մէջ կը գտնուին բազում փիղ։ Երկրին մէջ կան ոսկւոյ, արծաթի և ադամանդի հարուստ հանքեր։

Մոզամպիք ունի 900,000 քիլմ. քառ. տարածութիւն և 2,500,000 բնակիչ։

Գլխաւոր քաղաքներն են

Մոզամպիք, *համանուն փոքր կղզւոյն մէջ բանուկ նաւահանգիստ մ'է։*

Քիլիմանէ, *Զամպեզի գետին աէլդային վրայ, ունի փղոսկրի, խէժի և արմտեաց մեծ առեւտուր։*

Սօֆալա, *երեւելի նաւահանգիստ է, մօտերը կան ոսկւոյ հանք։*

Ներքին մասանց մէջ կը գտնուին Սենա և Թեթէ՝ Զամպեզի վրայ։

Այս երկիրը Փորթոկէզք գտան 1498 ին՝ որ բաւական ծաղկեցաւ։ Բայց վերջի տարիներս Անգլիա այս երկրի ծովեզերեայ մէկ մասին տէր ըլլալով՝ Փորթոկալ քիչ մը տեղ միայն ունի այսօր։

ԶԱՆԿԷՊԱՐ

ՌՆԱԿԱՆ ՆԱՀԱՊԱՏՈՒԹԻՒՆ

Զանկէպար՝ երկար ու ծովեզերեայ երկիր մ'է որ կը տարածուի Հասարակածէն դէպ 'ի հարաւ՝ մինչեւ Ցէլկաոօ հրուանդանը։

Երկիրը լեռնային է, արեւմուտքէն դէպ արեւելք կը վազեն բազմաթիւ ջրոյ հոսանքներ որք երկիրը կ'արգասաւորեն։ Ծովեզերեայ մասին կլիման տաք ու վատառողջ, իսկ ներսերը բաւական բարեխառն են։

ԿԱԴԱՓԱԿԱՆ ՆԱՀԱՊԱՏՈՒԹԻՒՆ

Զանկէպար ունի 650,000 *քիլ. քառ. տարածութիւն և* 1,200,000 *ի չափ բնակիչ։*

Գլխաւոր քաղաքներն են

Զանզիպար, *համանուն փոքր կղզւոյն վրայ գեղեցիկ ու բանուկ նաւահանգիստ մ'է։ Հոս կը նստի Զանզիպարի Սուլթանը։*

Պակամոյօ, *Զանզիպար կղզւոյն դիմացը կարեւոր նաւահանգիստ մ'է ուսկից կը մեկնին կարաւանք՝ Աֆրիկէի ներսերն երթալու համար։*

Մէլինճս, Քիլօա և Մակատոֆսօ *բանուկ նաւահանգիստներ են։*

Ծովեզերեայ մօտ կը գտնուին երկու փոքր կղզիներ՝ Բեմպա և Մօնֆազա։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

1881 էն 'ի վեր՝ Գերմանացիք իրենց կառավարութեան պաշտպանութեան ներքեւ մի քանի ընկերութիւններ կազմած էին իրենց աղգային վաճառականութիւնը զարգացնելու նպատակաւ։ Իսկ 1888 էն 'ի վեր՝ Գերմանիա այս երկրին և շրջակայ ընդարձակ հողերու տէր եղած է՝ որոց սահմանը կը հասնի մինչեւ Հասարակածի մեծ լիճերը։ Տեղւոյն բնակիչք այլ և այլ ցեղերու բաժնուած սեւամորթ կռապաշտներ են, կը գտնուին նաեւ Մահմէտական Արաբներ՝ որոնք առեւտրով կ'զբաղին։

ԱԿՐԱ-ՓԷՖՈՒԱՆԱ

Հարաւային Կուինէոյ և Բարեյուսոյ երկրին միջեւ լեռնային երկիր մ'է Ակրա-Փեֆուանա՝ ուր Գերմանացիք 1885 էն 'ի վեր փոքր գաղթականութիւն մը հիմնած են։

ՕՎԱՄԲԻԱ

Հարաւային Կուինէաէ սկսեալ մինչեւ Օթէնթօյսոյ երկիրը տարածուած ծովեզերեայ նեղ ու լեռնային երկիրը կը կոչուի Օվամպիա՝ որու մէկ մասին տէր են Գերմանացիք։ Երկիրը լաւ ճանչցուած չէ տակաւին, բնակիչք կը կոչուին Օվամպօ և են երկրագործ և հանդարտասիրտ մարդիկ։

ԱՓՐԻԿԵԱՆ ԿՂԶԻՔ

Հնդկաց ովկիանոսի մէջ

ՄԱՏԱԿԱՍՔԱՐ

Մատակասքար, կը գտնուի Մոզամպիքի դիմացը, ունի 590,000 *քիլ. քառ. տարածութիւն և* 4,000,000 *ի չափ բնակիչ։ Այս մեծ կղզւոյն հիւսիսէն 'ի հարաւ կ'երկարի գեղեցիկ անտառներով ծած-*

կուաճ գօտի մը որ կը կոչուի Կարմիր։ Կղզւոյն ներքին մասանց կլիմայն զով ու բարեխառն, իսկ ծովեզերքը վատառողջ՝ այլ շատ բարեբեր է։ Մատակաբար՝ Հասարակածի ամէն տեսակ բերքերն առատօրէն ունի, կը գտնուին նոյնպէս պղնձի, կապարի, երկաթի, մանկանէզի և մարմարիոնի հարուստ հանքեր։

Գլխաւոր քաղաքներն են Թանանարիվօ, լերան մը կատարին վրայ չինուած է և կը ճանչցուի իբր Մայրաքաղաք Հովասի երկրին։

Դանադաւ, Ֆուլբուանդ, Թենրիկէ, Մազանկա նաւահանգիստներ են կղզւոյն արեւելեան կողմը։ Ֆռանսացիք Մատակասքարի արեւելեան կողմն ունին Տուրբ Մարիամ կղզին, իսկ արեւմտեան հիւսիսային կողմը՝ Նոսի-Պէ և Նոսի-Դանսպա կղզիները։ Մատակասքար կը բաժնուի զանազան իշխանութեանց որոց գլխաւորն է Հովասի երկիրը։

ՍԷՇԷԼԵԱՆ ԿՂԶԻՔ

Մատակասքարի հիւսիսային արեւելեան կողմը 30 ի չափ փոքր ու լեռնային կղզիներէ բաղկացած փոքր արշիպելագոս մ'է որ կը պատկանի Անգլիոյ։ Նոյնպէս Անգլիոյ կը վերաբերի Սոֆօրոտա ապառաժուտ կղզին։

ՄԱՍՔԱՐԻՆԵԱՆ ԿՂԶԻՔ

Սոյն արշիպելագոսը կը գտնուի Մատակասքարի արեւելեան կողմը և է բարեբեր ու լաւ մշակուած։ Մօրիս կամ Ֆռանսայի կղզի և Ռոտրիկեզ կը պատկանին Անգլիոյ, իսկ Պուռպօն՝ Ֆռանսայի կը վերաբերի։

ՔՈՄՕՐԵԱՆ ԿՂԶԻՔ

Սոյն կղզիք կը գտնուին Մոզամպիքի ջրանցքին հիւսիսային կողմը, ունին բարեխառն կլիմայ և առատ բուսաբերութիւն։ Գլ. կղզիները են Մեծ Կոմօր, Մօհէլի, Անժուան և Մայօթ։ Ա. յս վերջինը կը պատկանի Ֆռանսայի։

Ասլանտեանցի կղզիք

ԱՍՈՐԵԱՆՔ

Ասորեացիք կը գտնուին Փորթոկալի արեւմտեան կողմը և ունին գեղեցիկ կլիմայ և հարուստ բուսաբերութիւն։ Գլխաւոր քաղաքներն են Թերսէյրա, Ս. Միշել, Սանդա-Մարիա եւլն. որք կը պատկանին Փորթոկալի։

ՄԱՏԷՐԱ ԿՂԶԻՔ

Կը գտնուին Ատլանտեանց հարաւակողմը, երկու գլխաւոր կղզի կայ Մատէրա և Փորտօ-Սանկտօ։ Ա. յս կղզիք ունին առողջարար կլիմայ և գեղեցիկ անտառներ։ Մատէրա կը պատկանի Փորթոկալի։

ՔԱՆԱՐԵԱՆ ԿՂԶԻՔ

Ա. յս արշիպելագոսը կը գտնուի Սահարայի ծովեզրին մօտ և նշանաւոր է իր կլիմային հեշտութեամբ, բնական հարստութեամբ և զմայլելի տեսարաններով։ Գլխաւոր կղզիներն են Թենեռիֆա, Փալմա, Քանարիա, Երկաթի կղզի, Ֆուրթվենտուրա եւլն. Քանարեանք կը պատկանին Սպանիոյ։

ԴԱՆԱՐԻ ԳԼԽՈՑ ԿՂԶԻՔ

Ա. յս արշիպելագոսն ալ գտած են Փորթոկեզք և իրենց կը պատկանի։ Գլխաւոր կղզիներն են Ս. Վէնսան, ունի Հանքածուխ։ Ս. Անտոն, Պալմիդա, Սանդիակօ եւլն։

Կուինիոյ ծոցի կղզիները են

Ֆերնանսօ-Բօ, գեղեցիկ կղզի մ'է և կը պատկանի Սպանիոյ։ Ս. Թոմեան և Իշխանի կղզի կը պատկանին Փորթոկալի, Անտոնօսի՝ նոյնպէս Սպանիոյ։

Ատլանտեանի բացերը կը գտնուին Ս. Հեղինէ ապառաժուտ կղզին՝ ուր աքսորուելով մեռաւ Ֆռանսայի կայսր Մեծն Նափոլէոն։ Ասունիսիօն կամ Վերափոխում, հրաբղխային կղզի մ'է որ առաջնոյն հետ կը պատկանի Անգլիոյ։

ԱՓՐԻԿԷԻ ՎՐԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1.

Ափրիկէ երկրագնտիս ո՞ր մասին մէջ կը գտնուի. — Ի՞նչ է իր քնական ձեւը. — Ի՞նչ գիտես իր մեծութեան վրայ. — Ո՞րոնք են սահմանները. — Քանի՞ ովկիանոս եւ ի՞նչ ծովեր կը տեսնէ. — Ափրիկէի հիւսիսային եւ արեւմտեան կողմերը ո՞ր ծոցերը կան. — Ո՞ր նեղուցով բաժնուած է Ասիայէ եւ ո՞րով կ'երթայիր. — Ի՞նչ կրնաս ըսել Ափրիկէի ընդհանուր կազմութեանը վրայ. — Ի՞նչ լերանց գօտիներ կան Ափրիկէի մէջ. = Ո՞րոնք են չորս գլխաւոր հրաւանդանները. — Եգիպտոսի երկու կողմերը ո՞ր լեռները կան։

2.

Ափրիկէ քանի՞ աւազան ունի. — Ուսկից կը բղխի եւ ո՞ւր կը թափի Նեղոս. — Ո՞րոնք են Ատլանտեանի հարկաւորները. — Ո՞ր գետերը կը թափին Հնդկաց ովկիանոսին մէջ. — Ո՞ւր կը գտնուի Զաա լիճը. — Հասարակածի ներքեւ ո՞ր լիճերը կան. — Ատլանտեանի մէջ ո՞ր կղզիները կը գտնուին. — Հնդկա՞ց ովկիանոսի մէջ. — Մատակասքարի հիւսիսային կողմը ո՞ր հրուանդանը կայ։

3.

Ափրիկէ ո՞րչափ տարածութիւն եւ բնակիչ ունի. — Մեծագոյն մասն ի՞նչ կլիմայի ներքեւ է. — Ո՞ր երկիրները Հասարակածին ներքեւ կը գտնուին. — Պէրպէրիստանի կլիման ի՞նչպէս է. — Ո՞րոնք են Ափրիկէի բերքերը. — Ո՞ր երկրաց մէջ յառաջ կ՚ուզայ բրինձ, բամպակ, սրթեառունկ եւ խահուէ. — Ափրիկէ ի՞նչ հանքեր ունի. — Ո՞ր երկրին մէջ կը գտնուի ադամանդ. — Ընտանի ի՞նչ կենդանիներ ունի. — Ո՞րոնք են Ափրիկէի վայրի գազանները։ — Ուղտը ի՞նչ մասնաւոր կարեւորութիւն մ՚ունի Ափրիկէի համար։

4.

Ափրիկէ քանի՞ գլխաւոր տէրութեանց կը բաժնուի. Բնակիչք մեծաւ մասամբ ի՞նչ ցեղի կը պատկանին. — Ո՞ր երկիրները կան Միջերկրականի, Ատլանտեանի եւ Հնդկաց ովկիանոսի վրայ. — Ափրիկէի կարեւորագոյն երկիրներուն ո՞րոնք տիրած են. — Ափրիկէի մէջ ի՞նչ երկիրներ ունի Անգլիա, Ֆռանսա՞, Թուրքի՞ա, Փորթոկա՞լ Գերմանի՞ա. Սպանի՞ա. — Բուռ-Սայիտ ճամբայ ելնելով՝ Ափրիկէի չրջանն ըրէ, ցոյց տալով գլխաւոր երկիրները եւ նշանակելով նոցա նաւահանգիստները. — Ցոյց տուր Ափրիկէի գետաբերան ու գետեզերեայ քաղաքները։

5.

Ո՞րոնք եղած են Ափրիկէի չրջանն ընող առաջին նաւորդները. — Ո՞ր երկիրները խուզարկեցին Մօնքօ-Բարք, Պարթհ, Սփիք, Կրանդ, Լիվինկըսթընը, Պրատա, Սգէնլի, Պէյքըր, Էմին փաշա. — Ափրիկէ բնական ի՞նչ պատճառներով քաղաքակրթութեան մէջ ետ մնացած է. — Ի՞նչ է բնակչաց կրօնն ու զբաղումը. — Ափրիկէի ո՞ր բերքերը մեծ չարդ ունին Եւրոպոյ մէջ։

ՀՐԱՀԱՆԳ

1°. Գծել համր Ափրիկէ մը եւ նշանակել երեւելի նաւահանգիստները։
2°. Նոյնպէս գծել Ափրիկէի աշխարհացոյց մը եւ առանձին գոյներով նշանակել Եւրոպական գաղթականութիւնները։
3°. Առանձինն գծել Եգիպտոսի եւ Պէրպէրիստանի քարտէսը։

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՄԵՐԻԿԱ.

ՐՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՄԵՐԻԿԱ՝ որ կը կոչուի նաեւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ, կը գտնուի Արեւմտեան Կիսագունտի մէջ եւ կը տարածուի Հիւսիսային Բեւեռէ մինչ՝ ի Հարաւային Բեւեռ։

Ամերիկա կը բաժնուի երկու ցամաքներու, ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ. եւ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ. որոնք միացած են փանամայի պարանոցով։

Ովկիանոսք, Ծովք, Ծոցք և Նեղուցք

Նոր Աշխարհը չրջապատած են 4 ովկիանոսներ՝ Արջային՝ հիւսիսային կողմը որմէ ձեւացած են Լիմբրլի, Պաֆֆինի և Հուտսընի ծովերը։

Ատլանտեան ովկիանոս՝ արեւելեան կողմը՝ որմէ ձեւացած են Անդիլեան ծովը, Մ. Լօրանի, Մեխիկայի, Հոնտուրասի, Տարիէնի, Վենեզուելլայի կամ Մարաքայիպօի, Սանդոսի և Մ. Դեորգայ ծոցերը։

Խաղաղական ովկիանոս արեւմտեան կողմը որմէ ձեւացած են Պերինկայի ծովէն ի վար՝ Քալիֆօրնիոյ և Փանամայի ծոցերը։

Նոր Աշխարհի գլխաւոր նեղուցներն են Պերինկայի նեղուց՝ Սառուցեալ և Խաղաղական ովկիանոսներուն միջեւ և որ կը բաժնէ Նոր Աշխարհը Ասիայէ։

Տիւիսի նեղուց, Պաֆֆինի ծովուն և Ատլանտեանի միջեւ։

Հուտսընի նեղուց, Համանուն ծոցը կը միացնէ Ատլանտեանի հետ։

Պէլ-իլի նեղուց, Մ. Լօրան ծոցին և Ատլանտեանի միջեւ։

Լէնիէար, Պէրրօ և Պենֆս, Բեւեռային կղզեաց միջեւ։

Մակէլլանի նեղուց, Հար. Ամերիկայի հարաւակողմը՝ Հրոյ երկրին և Հօրն գլխոյն մէջ տեղ։

Գետք և Լիճք

Հիւսիսային Ամերիկա ունի չորս աւազան՝ Հիւսիսային՝ ուր կը թափին Մաքընզի, Մայն և Պաֆի՝ Սառուցեալ ովկիանոս։ Ջրջիլ, Նելսըն, Ալպանի և Սեվերն՝ կը թափին Հուսոնի ծոցը։

Ատլանտեան ովկիանոս կը թափին Սէն-Լորան, Հուսըն, Բոնէֆիխուդ և Փորտսմաֆ։

Մէքսիկայի ծոցը կը թափին Միսիսիփի և Միսուրի նշանաւոր գետերէն ի զատ՝ նաեւ Բիօ-Կրանտ-տէլ-Նոռ։

Հարաւային Ամերիկայէ Անդիլեան ծով թափող գետն է Մագդլէն։ Իսկ Ատլանտեան կը թափին Օրինոֆո, Ամազոն, Թոքանտինի, Սան-Ֆրանսիսկո և Բիօ-տը-լա-Բլատա մեծ գետը՝ որ ձեւացած է Բարակուա, Բարանա և Ուրուկուա գետերէն։ Արեւմտեան աւազանի գետերն են Եուֆօն որ՝ Ալապայէն անցնելով կը թափի Պէհրինկայի ծովը։ Օրէկօն, Բոգոտսկիա կը թափին Մեծ ովկիանոս։ Բալիֆորնիոյ ծոցը կը թափի Բիօ-Բոլորատօ։

Հիւսիսային Ամերիկայի հիւսիսային և արեւելեան կողմերը կը գտնուին հետեւեալ կարեւոր լիճերը։ — Մեծ Արջ, Գերեակ, Աթապասկա, Ունիփեկ, Վերին, Միչիկան, Հուրօն, Օնթարիօ և Էրիէ որոց մեծ մասը Ջրանցքներով իրար միացած են։

Հարաւային Ամերիկայի լիճերն են Մարաքայիպօ՝ Պոլիվիոյ հիւսիսակողմը։ Թիթիքաքա՝ Բէրուի հարաւակողմը, Լօս-Փարոս՝ Պրազիլիոյ հարաւակողմը։

Թերակղզիք, Կղզիք և Հրուանդանք

Ամերիկայի մէջ կը գտնուին վեց գլխաւոր թերակղզիներ, Լապրատոր՝ Նոր Բրիտանիոյ հիւսիսային արեւելեան կողմը. Նոր Սկովտիա՝ Նոր Բրիտանիոյ արեւելեան կողմը. Ֆլորիտա՝ Միացեալ Նահանգաց հարաւային արեւելեան կողմը. Եուքաթան՝ Մէքսիկոյի արեւելեան հարաւային կողմը։

Ալասքա՝ Հիւս. Ամերիկայի հիւսիսային արեւմտեան կողմը, Քալիֆորնիա՝ Մէքսիկայի արեւմտեան կողմը։

Նոր Աչխարհը չրջապատող Ջուրերուն մէջ կը գտնուին մեծ ու փոքր կղզիներ։

Գլխաւորներն են,

Կրօէնլանտիա, Սառուցեալ ովկիանոսի մէջ, Հիւս. Ամերիկայի հիւսիսային արեւելեան կողմը։

Վիքթորիա-Լանտ, Բրէնս-Ալպէր, Բրնսըրլէնտ, Մէլվիլ, Բոսըրն՝ նոյնպէս Սառուցեալ ովկիանոսի մէջ սառնապատ և թերածանօթ կղզիներ են։

Ատլանտեանի մէջ կը գտնուին Նիու-Քաուլէնտ (Նոր երկիր), Մ. Պետրոս, Միքլօն, Բրէնս-Էտուար, Անթիխոսթի՝ Մ. Լօրանի բերդին մօտ։

Պէրմուտեան, Լուքայեան, Մեծ և Փոքր Անդիլեանք՝ Մէքսիկայի ծոցին և Անդիլեան ծովուն միջեւ։

Հիւսիսային Ամերիկայի արեւմտեան կողմը՝ Խաղաղականի մէջ կը գտնուին Ալէութեանք, Թագուհի Շառլոթ և Վանքուվր կղզիք։

Հարաւային Ամերիկայի արեւմտեան կողմը կը գտնուին Կալապախոս, Զիլօէ, Ռէյինկրըն, Հանուվր և Աստուածամօր արշիպեղագոս։

Հարաւային ծայրը կը գտնուի Հրոյ Երկիր կոչուած հրաբղխային փոքր կղզին որ Մակէլլանի նեղուցով ցամաքէն բաժնուած է։ Հրոյ երկրին հիւսիսային արեւելեան կողմը կը գտնուի Մաղուիլեան փոքր արշիպեղագոսը։

Նոր աշխարհի գլխաւոր հրուանդաններն են,

Ֆէրուէլ, Կրօէնլանտիոյ հարաւային կողմը։
Հադրաս, Մ. Նահանգաց արեւելեան »
Բաղօշ, Եուքաթանի արեւլ. հիւսիսային »
Մ. Ղուկաս, Քալիֆորնիոյ հարաւային »
Մ. Լուիզ, Լապրատորի արեւելեան »
Արեւմտեան գլուխ, Ալասքայի արեւմտեան »
Մէյպըլ, Նոր Սկովտիոյ հարաւային »

Հարաւային Ամերիկայի գլխաւոր հրուանդաններն են,

Կալլինաս, Պոլիվիոյ հիւսիսային կողմը։
Օրանճ, Մ. Բոռոս և Ֆրիօ՝ Պրազիլիոյ ափանց վրայ։
Հօրն, Հրոյ երկրին հարաւակողմը։
Մ. Անտօն, Լա-Բլաթայի արեւելեան հարաւային կողմը։
Բարիւա, Բերուի արեւմտեան կողմը։

Լերինք և Հրաբուղք

Նոր Աշխարհի ամենէ նշանաւոր լեռնաշղթայն է Ապառաժ գօտին որ՝ Ալասքայէն սկսեալ ու ցամաքին արեւմուտքէն կ'երկարի մինչեւ Հրոյ երկիր։

Այս գօտին Հիւսիսային Ամերիկայի մէջ կը կոչուի Ապառաժ, Մեքսիկայի և Կեդրոնական Ամերիկայի մէջ Որտիլեան, իսկ Հարաւային Ամերիկայի մէջ Անտեան կամ Անտէզ լերինք։

Սոյն շղթային արեւմտեան կողմը՝ Միացեալ Նահանգաց մէջ կը գտնուի Սիեռա-Նեվատա գօտին, իսկ նոյն երկրին արեւելք. մասին և Ալասկաեանի միջեւ կ'երկարի Աղեկսանի գօտին։

Պրազիլիոյ մէջ կը գտնուին համանուն լերինք։

Նոր Աշխարհի գլխաւոր հրաբուղխներն են Ս Եղիա, Ամոնիակատա, Փիչինչա, Սոհֆրիա, Քոթոփախի։

Կլիմայ և Բուսաբերութիւն

Ամերիկա գտնուելով երկու բեւեռներու միջեւ՝ ունի հաւասարապէս երեք գօտիներու ներգործութիւնը։ Միայն թէ Հասարակածային երկիրք՝ չնորհիւ իրենց մէջ ունեցած բարձրաբերձ լերանց և ընդարձակ դաշտերուն՝ մանաւանդ աւազանին անապատներէ ղերծ ըլլալնուն պատճառաւ՝ Հին Աշխարհի միեւնոյն սահմանները քեւ գտնուած երկիրներէն աւելիբարեխառն են։



Սառուցեալ ովկիանոսի մէջ տեսարան

Հիւս. Ամերիկայի հիւսիսային կողմերը սառուկ ցուրտ և սառնապատ, Մեքսիկայի ծոցին սահմանակից մասը վտառողջ իսկ միջին կողմերը տաք կ'ընեն։

Նոր Աշխարհի հողն ընդհանրապէս բարեբեր է և ամէն կլիմայի յատուկ բոյս կ'արտադրէ։ Գլխաւոր բոյսերն են արմտիք, բրինձ, եգիպտացորեն, հաճար, վարսակ, մանեւօքա, գետնախնձոր, նարինջ, կիտրոն, որթեատունկ, քօքօ, պանան, շաքարեղէգ, խահուէ, ծխախոտ, բամպակ, ներկի նիւթեր, բժշկական բոյսեր, վանիլիա, քինա, լեղակ, պտղատու ծառեր, շինութեան ազնիւ փայտ, քաքաօ եւլն։

Հանք և կենդանիք

Նոր Աշխարհը չատ անուանի է իր հարուստ հանքերուն կողմանէ։ Ունի հանքածուխ, քարիւղ, ոսկի, արծաթ, պղինձ, ըլադին, երկաթ, մնդիկ, թանկագին քարեր, ծծումբ եւլն։

Ամերիկա ունի եղ, ոչխար, այծ, ձի, էշ և այլ ընտանի կենդանիներ որոնք փոխադրուած են Հին Աշխարհէ։ Իսկ վայրի կենդանիներն են Գակուար (կարմիր վագր), Եակուար, գայլ, արջ, կոկորդիլոս, մեծամեծ օձեր, կինճ, կապիկ, լամա, ջայլամ եւլն։

Բազաքակրթութիւն

Ամերիկա ունի 120,000,000 չափ բնակիչ որոյ մեծագոյն մասը սերած է Եւրոպաէ գաղթած Անգլիացիներէ, Իրլանտացիներէ, Սպանիոլներէ, Փորթոկէզներէ, Ֆռանսացիներէ և Գերմաններէ։

Այս գաղթականք՝ իրենք արդէն քաղաքակրթեալ՝ Նոր Աշխարհի մէջ ալ դանելով բնական ամէն տեսակ հարստութիւններ, սկսան քիչ ժամանակի մէջ մեծ յառաջադիմութիւններ ընել քաղաքակրթութեան ամէն ճիւղերուն մէջ։

Բնիկ Ամերիկացիներն ևս որոնք կը կոչուին Հնդիկ, հետզհետէ քաղաքակրթուելու վրայ են։

Նոր Աշխարհի կառավարութեանց ձեւն է Հանրապետութիւն։ Հիւսիսային Ամերիկայի մէջ՝ Նոր Բրիտանիա և Միացեալ Նահանգներն ընդհանրապէս Բողոքական, իսկ Միացեալ երկրաց բնակիչք կաթոլիկ են։

Ամերիկա մինչեւ ԺԵ^դ դարու վերջերը անծանօթ էր Հին Աշ-

խարհի։ 1692 ին՝ Ձենովացի անուանի նաւապետ մը՝ Քրիստափոր Քոլոմպոս, որ միանգամայն քաջ աշխարհագէտ էր, համոզուած ըլլալով թէ երկիրս կլոր է, Հնդկաստանի ծովային ճանապարհը գտնելու նպատակաւ՝ Սպանիոյ Փալօս նաւահանգստէն ճամբայ ելաւ դէպ արեւմուտք, և փոխանակ Հնդկաստանի՝ գտաւ Նոր Աշխարհի մէկ մասը։ Ինչն Քոլոմպոս՝ կարծելով թէ Արեւմտեան Հնդկաստան հասած է, տեղացիները կոչեց Հնդիկ։

Նոր Աշխարհը փոխանակ Քոլոմպոսի անուանքն կոչուելու, ԱՄԵՐԻԿԱ. անուանուեցաւ՝ Ֆիօրէնցացի Ամերիկոս Վէսփուչչի ճանապարհորդին անուամբ։

Ամերիկեան Աշխարհ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ԿՐՕԷՆԼԱՆՏԱ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Կրօէնլանտա՝ կը տարածուի Հիւս. Ամերիկայի հիւս. արեւելեան կողմը՝ Սառուցեալ և Ատլանտեան ովկիանոսներու, Պաֆֆինի ծովուն և Տիւիսի նեղուցին միջեւ։ Մեծաւաբար և սառնապատ կղզի մ'է Կրօէնլանտա զոր Թ՛ղ դարուն դատն Իսլանտացի նաւորդք։ Միայն հարաւային կողմերը կ'աճին քիչ քանակութեամբ գետնախնձոր, կանեփ և հաճար։ Տեղացիք կարճահասակ մարդիկ են և կը կոչուին Եսքիմացի։ Գլխաւոր զբաղումնին է ձկնորսութիւն և որսորդութիւն։ Կրօնիս Բողոքական են։

Տանըմարքացիք այս կղզւոյն արեւմտեան ափանց վրայ ունին Ուքերնաւիզ, Բրիդհաւնշաւ, Նուդհաւնսաւ և Կոթհաւսաւ գաղթավայրերն՝ որոց եղերքը կէտ ձկան որսորդութիւն կ'ընեն։ Կրօէնլանտա ունի իբր 14,000 բնակիչ։

ՆՈՐ ԲՐԻՏԱՆԻԱ.

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Նոր Բրիտանիա՝ կը գրաւէ Հիւսիսային Ամերիկայի հիւսիսային մասը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Արկտական ովկիանոս, արեւելքէն՝ Ատլանտեան ովկիանոս, հարաւէն Միացեալ Նահանգք, արեւմուտքէն՝ Ալասքա և Մեծ ովկիանոս։

Եսքիմացիք

Բրիտանական Ամերիկա ընդհանրապէս տափարակ երկիր մ'է, իսկ հիւսիսային կողմերը խոնաւ եւ ճահճային են։ Կլիման հիւսիս. կողմերն ու Գանատայի մէջ սաստիկ ցուրտ, ձմեռները երկայն եւ ամառները կարճ են։ Խաղաղականի սահմանակից գաւառաց կլիման աւելի բարեխառն է։

Երկրին հողը թէեւ բնականէն այնքան բարեբեր չէ, բայց բնակչաց աշխատասիրութեան շնորհիւ երկրագործութիւնը շատ ծաղկած է և կ'արտադրէ գետնախնձոր, արմտիք, եգիպտացորեն, կանեփ, ծխախոտ և հաճար։ Նոյնպէս՝ Նոր Բրիտանիոյ բուսական գլխաւոր հարստութեանց մէկն է գեղեցիկ անտառները՝ որոնք շինութեան աղնիւ փայտ կը մատակարարեն։

Երկրին մէջ կը գտնուին ոսկւոյ, արծաթի, երկաթի, կապարի, պղնձի, մանկանէզի և քրոմի հանքեր որոնք ընդհանրապէս կը շահագործուին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Նոր Բրիտանիա ունի 8,300,000 քիլ. քառ. տարածութիւն և 4,500,000 բնակիչ։ Երկիրը բաժնուած է այլ և այլ գաւառներու որոց ամբողջութիւնը կը կազմէ Դանատական Դաշնակցութիւնը։

Մայրաքաղաքն է ՕԹԱՎԱ (30,000 բն.), համանուն գետակին վրայ, Դանատայի գլխաւոր քաղաքն է և ունի առաջէն մեծ վաճառականութիւն։

Քեպէք, Ս. Լօրանի վրայ գեղեցիկ դիրքով խիստ վաճառաշահ նաւահանգիստ է։

Մօնրէալ (150,000 բն.), Սաորին Դանատայի գլխաւոր քաղաքն է, Ս. Լօրանի վրայ ծաղկեալ ու վաճառաշահ նաւահանգիստ, ունի նաւարան և ուսումնական հաստատութիւններ։

Թորոնթօ, Օնթարիօ լճին վրայ Վերին Դանատայի ամենէ ծաղկեալ քաղաքն է։

Ֆրէտէրիկսթաւն և Ս. Օհանընէս, գլխաւոր քաղաքներ են Նոր Պրունսվիգ գաւառին մէջ։

Հալիֆաքս, Նոր Սկոտիոյ գլխաւոր քաղաքն ու բանուկ նաւահանգիստ է։

Նոր Երկիր, Ս. Լօրան գետին բերանը՝ եռանկիւնաձեւ կղզի մ՚է որու ծովափանց մօտ ընդարձակ որսորդութիւն կ՚ըլլայ։ Պլ. քաղաքն է Ս. Օհանընէս։

Միացեալ Նահանգաց արեւելեան կողմը կը դանուին Պերմուտեան անբեր և ապառաժուտ կղզիք որոնք Նոր Բրիտանիոյ կը վերաբերին։

Իսկ Ս. Պետրոս, Մեծ Միգլոն և Փոքր Միգլոն կը պատկանին Ֆռանսայի։

Մեծ ովկիանոսի մէջ կը դանուին Վանքուվր և Թագուհի Շառլոթ կղզիները՝ Բրիտանական ցամաքին մօտ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Բրիտանական Ամերիկա թէեւ ի բնէ չէ այնքան բարեբեր, սակայն իր բնակչաց գործունէութեան շնորհիւ՝ երկրագործութիւնը բաւական յառաջ դացած է, մանաւանդ Դանատայի մէջ։

Բնակիչք ըստ մեծի մասին Անգլիացի են, Ֆռանսացիք կը

դանուին Դանատայի մէջ՝ որ էր ի սկզբան իրենց ազգականութիւնը։ Արուեստ, վաճառականութիւն և հասարակաց կրթութիւն զարգացեալ վիճակի մէջ են։ Երկրին մեծագոյն կրօնն է Բողոքականութիւն, իսկ Ֆռանսացիք Կաթոլիկ են։

ՄԻՍՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Միսցեալ նահանգները կը գրաւեն Հիւս. Ամերիկայի կեդրոնական մասն և կը կազմեն երկրագնդիս մեծագոյն հանրապետութիւնը։

Սահմաններն են հիւսիսէն՝ Նոր Բրիտանիա, արեւելքէն՝ Ատլանտեան ովկիանոս, հարաւէն՝ Անդիլեան ծով, Մեքսիկայի ծոց և Մեքսիկա. արեւմուտքէն՝ Խաղաղական ովկիանոս։

Հսկայ ծառ ի Քալիֆօռնիա

Այս երկրին արեւելեան և արեւմտեան կողմերը կ՚երկարին բարձր լեռնագօտիներ, իսկ մէջ տեղը ընդարձակ դաշտագետին մ՚է որու մէջէն կը հոսին Միսիսիպի և Միսուրի մեծ գետերը։

Միացեալ Նահանգներն իրենց ընդարձակութեան պատճառաւ՝ ամեն տեսակ կլիմայ ունին։ Օրինակի համար, հիւսիսային նահանգները՝ Եւրոպիոյ հիւսիսային երկիրներու կլիմայն ունին, Ատլանտ-

եանի ծովեզերեայ ու միջին մասերը՝ ամառները բարեխառն և նոյն համեմատութեամբ ձմեռները ալ ցուրտ կ'ընեն, իսկ Մեքսիկայի ծոցին՝ եւ ծովեզերեայ սահմանակից մի քանի գաւառաց մէջ սաստիկ տաք կ'ընէ և տեղ տեղ ալ մահացու հիւանդութիւնները յառաջ կ'ուգան: Այս գեղեցիկ երկիրը՝ որու մէջ հողագործութիւնը շատ ծաղկած է, կ'արտադրէ ցորեն, գետնախնձոր, ծխախոտ, բամպակ, լեղակ, բրինձ, շաքարեղէգ, որթեատունկ, թզենի, նարնջենի, կիտրոնենի, ներկի նիւթեր, դեղօրայք, այլ և այլ պաղատու և չինուեթեան փայտի ընտիր ծառեր, մեծատարած և հսկայ անտառներ՝ մանաւանդ ի Քալիֆօռնիա:

Միացեալ Նահանգներն ունին հարուստ հանքեր ածխոյ, քարիւղի, երկաթի, պղնձի, ոսկւոյ, արծաթի, կապարի, ղինկի, անդիկի, չինուեթեան քարերու եւն:

Ընտանի կենդանեաց մէջ կը գտնուին կով, ձի, ոչխար, այծ, խոզ և հարաւային մասանց մէջ ալ՝ կոկորդիլոս, ընձուղտ և մեծամեծ օձեր:

ԲԱԴԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Միացեալ Նահանգներն ունին 7,650,000 քիլ. քառ. տարածութիւն և 64,500,000 բնակիչ,

Այս երկիրը կը պարունակէ 42 նահանգ և մի քանի Թերրիթօրի որոնք իրարու դաշնակից բայց առանձին հանրապետութիւններ են՝ ունենալով իրենց նախագահն ու տեղական վարչութիւնը: Իսկ երկրին ընդհանուր օրէնքները կը հաստատէ Քօնկրէս կոչուած ազգային ժողովը որ՝ կը բաղկանայ Ներակայէ ու Երեսփոխանաց ժողովէն՝ որոնց անդամները նահանգներէն կը ղրկուին: Այս Գեբազդն ժողովը է որ կ'ընտրէ երկրին Ընդհանուր Նախագահը:

ՈՒԱՇԻՆԿԴԸՆ (150,000 բն.), Մայրաքաղաք Միացեալ Նահանգաց, Փոթոմաք գետին վրայ, հիմնեալ յանուն Գէորգ Ուաշինկդընի անուանի զօրապետին: Այս քաղաքին մէջ տեղը՝ բլրի մը վրայ կառուցած է կապիտոլ անուանեալ՝ ազգային հոյակապ շէնքը: Ուաշինկդընի մէջ է կառավարութեան կեդրոնը և խորհրդարանը:

Գլխաւոր նաւահանգիստք Ատլանտեանի վրայ

Բոռլանս և Փորթսմաուտհ, Մէյն նահանգին մէջ:
Պոսթըն, Մասաչուսէթ նահանգին գլխ. քաղաքն ու անուանի



Կապիտոլ Միացեալ Նահանգաց

նաւահանգիստ է: Հոս ծնած է Բենիամին Ֆրանկլին մեծանուն փիլիսոփան:

ՆԻՈՒ-ԵՈՐՔ (իբր 2,000,000 բն.), Դաշնակցութեան ամենէ բազմամարդ ու ծաղկեալ նահանգին կարեւորագոյն քաղաքն է՝ Հուսոնն գետին վրայ և միանգամայն խիստ բանուկ և վաճառաշահ նաւահանգիստ է: Նիու-Եորքի գլխաւոր արուարձաններն են Պրուքլին, ուր կայ առկախեալ մեծագործ կամուրջ մը, Լօնկ-Այլենս եւն: Պալթիմօր, Մէյրիլանս նահանգին մէջ ծաղկեալ նաւահանգիստ. կ'արտահանէ արմտիք:

Նորֆոլք, Վիրճինիա նահանգին մէջ երեւելի նաւահանգիստ է:

Զարլսթոն, Հար. Քարոլինահ գլխաւոր քաղաքն և վաճառաշահ նաւահանգիստ է:

Բէնսաքոլա, Մեքսիկայի ծոցին վրայ Ֆլորիտա նահանգին մէջ:
Մօպիլ, » » » Ալապամա » »

Նոր-Օռլէան, (300,000 բն.), ընդարձակ և վաճառաշահ նաւահանգիստ է Լուիզիանա նահանգին մէջ. գլխաւորապէս կարտահանէ բամպակ։

Կալվէսթըն, Թեխասա նահանգին մէջ բանուկ նաւահանգիստ է։

Խաղաղականի վրայ ամենէն նշանաւոր նաւահանգիստն է Սան-Ֆրանչիսկո, որ երկաթուղեաւ միացած է Ատլանտեան ովկիանոսի։

Ներքին գլխաւոր քաղաքներ են

Ֆիլատելֆիա, Փիթիզպուրկ, Բիչմօնտ, Ռոչեսթըր, Աղանդա, Սինսինաթի, Չիկագօ, Ֆրանկֆօրթ, Լուիզվիլ, Սէն-Լուի, Սանֆրանսիսքօ են։

ԱԼԱՍՔԱ

Ալասքա։ Հիւս. Ամերիկայի հիւսիսային արեւմտեան կողմը՝ իբր 70,000 բնակչօք մեծատարած ցամաքակղզի մ'է որ՝ ի սկզբան Ռուսաց կը վերաբերէր բայց 1867 էն ի վեր կը պատկանի Միացեալ Նահանգաց։ Ա.յս երկրին մեծ մասը սառնապատ լինելուն՝ միայն ծովեզերեայ մասերը ծանօթ են՝ և ուր պալչնայի որսորդութիւն կըլլայ։ Ա.յս ցամաքակղզւոյն մէջն է Ս. Եղիա հրաբուղխը։ Գլխաւոր քաղաքն է Նոր Արխանկել։

Ընդհանուր տեղեկութիւն

Միացեալ Նահանգներն ի սկզբան Անգլիոյ իշխանութեան ներքեւ էին, սակայն ասկից դրեթէ մէկ դար առաջ բաժնուելով Մայր երկրէն՝ եղան առանձին Հանրապետութիւն։ Ա.յս երկրին բնակիչք բաղկացած են Անգլիացիներէ, Իրլանտացիներէ, Գերմաններէ, Ֆռանսացիներէ և այլ Եւրոպական ազգերէ։ Արուեստ, ճարտարութիւն, ձեռագործ, երկրագործութիւն, նախնական կրթութիւն և վաճառականութիւն շատ զարգացած են։ Երկիրը ծածկուած է երկաթուղւոյ բազմաթիւ գիծերով և ջրանցքներով։ Տիրող լեզուն է Անգլիերէն։ Կրօնն է Բողոքականութիւն։

ՄԵՔՍԻԿԱ.

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Մեքսիկա՝ որ էր Սպանիական հին գաղթականութիւն մը, կը տարածուի Միացեալ Նահանգաց հար. արեւմտեան կողմը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Միացեալ Նահանգք, արեւելքէն՝ Մեքսիկայի ծոց, հարաւէն՝ կեդրոնական Ամերիկա, և արեւմուտքէն՝ Խաղաղական ովկիանոս։ Երկիրն ընդհանրապէս լեռնային է և կը պարունակէ երկու նշանաւոր հրաբուղխներ՝ Փոփոքատեպէթլ (5400 մ. բ.) և Օրիզապա (5300 մ. բ.)։

Երկրին միջին մասերը բարձր լերանց պատճառաւ բարեխառն, արեւմտեան կողմերն սաստիկ տաք, իսկ արեւելեան ծովեզերքն շատ վատառողջ է և կը տիրէ Դեղին ջերմ կոչուած մահացու հիւանդութիւնը։

Մեքսիկայի հողն ընդհանրապէս խիստ բարեբեր սակայն լաւ մշակուած չէ։ Գլխաւոր բոյսերն են ցորեն, շաքարեղէգ, քաքաօ, վանիլեա, բամպակ, լեղակ, գետնախնձոր, քինա եղն։ Ունի նաեւ բազմաթիւ պտղատու ծառեր և չինութեան ազնիւ փայտ։

Մեքսիկա ունի արծաթախառն կապարի, պղնձի, ոսկւոյ և արծաթի հարուստ հանքեր։

Ընտանի կենդանիներէ ի զատ՝ կը գտնուին Բակուար և Փակուար անուն վայրի գազաններ։

ԳԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Մեքսիկա ունի 2,000,000 քիլմ. քառ. տարածութիւն և 10,500,000 բնակիչ։

Մեքսիկա՝ իրարու դաշնակից 27 նահանգներէ կազմուած Հանրապետութիւն մ'է։

ՄԵՔՍԻԿՕ (300,000 բն.), Մայրաքաղաք Մեքսիկայի՝ ծովու մակերեւութէն 2274 մեթր բարձրութեամբ գեղեցիկ հովտի մը մէջ։ Ունի գեղեցիկ Մայր եկեղեցի, Արքեպիսկոպոսարան, վաղերանոց, համալսարաններ և բաւական բանուկ վաճառականութիւն։

Գլխաւոր Նաւահանգիստք

Վէրա-Քրուզ, *երեւելի նաւահանգիստ, ունի առեւտրական մեծ յարաբերութիւն Եւրոպիոյ հետ։ Քաւիբէջ, Եուքաթան թերակղզւոյն մէջ՝ ուր կան շատ հնութիւններ։*

Խաղաղականի վրայ կը գտնուին Մազատլան և Ակափուլքո։

Ներքին գլխաւոր քաղաքներն են

Բուէպլա, *ճարտարարուեստ քաղաք է։ Մէրիտա, Եուքաթան թերակղզւոյն մէջ վաճառաշահ քաղաք է։ Երեւելի նաեւ Սան Լուի-տը-Բօրոսի, Կուատալաժարա, Կուանա-Խուատօ, Քուէրէթարօ եւայլն։*

Ընդհանուր տեղեկութիւն

Այս երկիրը գտաւ Ֆէրնան-Քոթէզ Սպանիայի երեւելի նաւապետը 1519 ին, որ ատեն Մէքսիկացիք ունէին կանոնաւոր կառավարութիւն և բաւական քաղաքակրթեալ էին։ Սպանիացիք 300 տարուոյ չափ տիրեցին այս երկրին, բայց 1821 էն ի վեր անկախ է։ Արուեստ և ճարտարութիւն հեռզհետէ զարգանալու վրայ են։ Մէքսիկայի վաճառականութեան նիւթերն են՝ խահուէ, վանիլիա, ծխախոտ, գունաւոր նիւթեր, լէզակ, շաքար, քաքաօ, չինուխեան աղնիւ փայտ, այլ և այլ մեռաղներ, կաշի եւլն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՈՒԲԱԹԱՆ

Սոյն թերակղզւոյն արեւելեան ծովեզրին մէկ մասը կը պատկանի Անգլիոյ։ Գլխաւոր քաղաքն է Պելիզ՝ որ ունի Քամբէջի փայտի ընդարձակ առեւտուր։

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

ՐՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Կեդրոնական Ամերիկա կը կոչուի այն նեղ երկիրն որ՝ Մէքսիկայէ սկսեալ՝ կ'երկարի մինչեւ Փանամա։ Լեռնային երկիր մ'է Կեդրոնական Ամերիկա՝ ուր կը գտնուին 35 է աւելի հրաբուղխներ։ Ունի երկու լիճ, Նիքարակուա և Մանակուա։

Կլիման՝ ներքին մասանց մէջ զով, իսկ ծովեզերքը տաք ու վատառոգ է։

Գլխաւոր բոյսերն են բրինձ, քաքաօ, խահուէ, շաքար, բամպակ, ծխախոտ, լէզակ, վանիլիա, պաղատու ծառեր, չինուխեան աղնիւ փայտ եւլն։

Երկրին մէջ կան հարուստ հանքեր որոնք չեն շահագործուիր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Կեդրոնական Ամերիկա ունի 446,000 քիլ. քառ. տարածութիւն և 2,900,000 բնակիչ։

Բաժնուած է հինգ առանձին Հանրապետութեանց որք են՝ Կուատէմալա, Սան-Սալվատօր, Հօնտուրաս, Նիքարակուա և Քօսթա-Րիքա։

ԿՈՒԱԹԷՄԱԼԱ

Կը գտնուի Կեդրոնական Ամերիկայի հիւսիսային արեւմտեան կողմը և է հինգ Հանրապետութեանց մեծագոյնը։ Ունի 1,400,000 բնակիչ։ Գլխ. քաղաքներն են Կուատէմալա, Սան-Ժօզէ, Ս Թոմինաս և Վէրափազ։

ՍԱՆ ՍԱԼՎԱՏՕՐ

Կուատէմալայի հարաւային արեւմտեան կողմը՝ Խաղաղականի վրայ ծաղկեալ Հանրապետութիւն մ'է։ Մայրաքաղաքն է Սան-Սալվատօր, նաւահանգիստն է Ակաժուտլա։

ՀՕՆՏՈՒՐԱՍ

Կը տարածուի Կուատէմալայի հարաւային արեւելեան կողմը։ Գլխաւոր քաղաքներն են Թունայակուա և Թեկուսիկալպա։

ՆԻՔԱՐԱԿՈՒԱ

Սոյն Հանրապետութիւնը կը տարածուի Հոնտուրասի հարաւակողմը։ Մայրաքաղաքն է Մանագուա՝ համանուն լճին քով։ Սաճ ձուաձև և կրէյթաուն բանուկ նաւահանգիստներ են։ Երեւելի են նաեւ Կրրնտատա և Լէօն։

ՔՕՍԹԱ-ՐԻՔԱ

Կեդրոնական Ամերիկայի ամենէն հարաւային Հանրապետութիւնն է։ Ունի հարուստ բուսաբերութիւն և ընդարձակ առեւտուր չինութեան աղնիւ փայտի։

Մայրաքաղաքն է Սան Ճոզէ։ Գլխաւոր քաղաքներն են Քարթաճո և Բուենդա-Արէնաս։

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ՏԷՐՈՒԹԻՒՆ

Հարաւային Ամերիկա կը պարունակէ 12 տէրութիւն, Քոլոմպիա, Վենեցուէլլա, Կույանա, Էգուաթօր, Պրազիլիա, Բէրու, Բարակուէ, Ուրուկուէ, Զիլի, Լա-Բլատա և Փաթակոնիա։

ՔՈԼՈՄՊԻԱ.

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Քոլոմպիա *կը գտնուի Հարաւային Ամերիկայի հիւսիսային արեւմտեան կողմը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Անգլիական ծով, հիւսիսային արեւմուտքէն՝ կեդրոնական Ամերիկա, արեւելքէն՝ Վենեցուէլլա, Հարաւէն՝ Էգուաթօր և արեւմուտքէն՝ Խաղաղական ովկիանոս։*

Այս երկրին հիւսիսէն՝ ի հարաւ կ'երկարին Անտէզ լերինք որոնք կը պարունակեն հրաբղխային դադաթներ։

Երկրին կլիմայն՝ լեռնային գաւառաց մէջ բարեխառն և առողջ, իսկ ծովեղերքը սաստիկ տաք և վատառողջ է։

Գլխաւոր բոյսերն են բժշկական բաղմատեսակ տունկեր, որդան կարմիր, քաքաօ, խահուէ, ծխախոտ, վանիլիա, շաքարեղէգ, քաուչու, տաք երկրի պտուղներ եւլն։

Քոլոմպիա ունի ոսկւոյ, բլատինի, արծաթի, կապարի և թանկագին քարերու հարուստ հանքեր որոնք երեսի վրայ թողուած են։

Քոլոմպիոյ մէջ կը գտնուին բազում վայրի գազաններ։

ԿԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Քոլոմպիա ունի 900,000 քիլ. քառ. տարածութիւն եւ 3,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՊՕԿՕԹԱ, ծովուն մակերեւութէն 3650 մեթր բարձրութեամբ լեռնադաշտի մը վրայ չինուած։ Ունի համալսարան, փառաւոր մայր եկեղեցի ու երեւելի գործարաններ կաշւոյ, դորգի և ոսկեղէն զարդուց։

Գլխաւոր Նաւահանգիստներն են

Ս. Մարթա, Կարթագինէ, Քոլօն և Մանուանդ Փանաման։

Ներքին գլխաւոր քաղաքներն են Սանդա-Քէ, Բօքօթան, Մէտելլին եւլն։

Ընդհանուր Տեղեկութիւն

Այս երկիրը կոչուած է Քոլոմպիա՝ ի յիշատակ Քրիստափոր Քոլոմպոսի։ Բնակիչք կը բաղկանան Սպանիօլներէ, Սեւերէ և բնիկ Ամերիկացիներէ։ Ուսում և ճարտարութիւն տակաւին եւս մնացած են, իսկ վաճառականութիւնը բաւական բանուկ է։ Անգլիան ծովուն մէջ երկու փոքր կղզիներ՝ Նոր Բրովիդենս և Ս. Անտռէ կը վերաբերին Քոլոմպիոյ։

ՎԵՆԵՑՈՒԷԼԱ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՎԵՆԵՑՈՒԷԼԱ՝ Հարաւային Ամերիկայի հիւսիսային երկիրներէն մին է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Անդիլեան ծով, Ատլանտեան ովկիանոս և Անգլիական Կուայանա. հարաւէն՝ Պրազիլ և արեւմուտքէն Քոլոմպիա։

Վենեցուէլլա ընդհանրապէս լեռնային երկիր մ'է։ Իւր մէջէն կ'անցնի Օրենոքո գետը որ երկրին արդասաւորութեան մեծապէս կ'օգնէ։

Կլիման՝ հիւսիսային ծովեղերաց վրայ տաք ու վատառողջ, իսկ լերանց ու հովտաց մէջ աւելի բարեխառն է։ Դլխաւոր բոյսերն են խահուէ, քաքաո, շաքարեղէգ, բամպակ, ծխախոտ, լեղակ, վանիլիա և չինութեան փայտ։

Վենեցուէլլա ունի մարմարիոն, կրանիթ, պղինձ և հանքային ջուրեր։ Այս երկրին մէջ կան մեծեղներ և բազմաթիւ թունաւոր օձեր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Վենեցուէլլա ունի 1,137,000 քիլ. քառ. տարածութիւն և 2,200,000 բնակիչ

Մայրաքաղաքն է ՔԱՐԱՔԱՍ (60,000 բն.), գեղեցիկ հովտի մը մէջ խիտ զուարճալի քաղաք է, իւր նաւահանգիստն է Կուէյրաս։

Բուէրթօ-Քապէլլօ, Մարաքայիպօ, Պօլիվար և Ս. Քառլօ բանուկ նաւահանգիստներ են։

Ներքին քաղաքաց մէջ երեւելի են Վալենցիա, համանուն փոքր լճին մօտ զուարճալի դիրքով քաղաք մ'է։ Սան-Ֆիլիփ, Մերիտա, Պառչելոնա, Սան-Ֆերնանտօ եւլն։

Ընդհանուր տեղեկութիւն

Վենեցուէլլայի բնակիչք բաղկացեալ են խառնածին Հնդիկներէ ու Ամերիկացիներէ։ Դաստիարակութիւն և արուեստ տակաւին ողորմելի վիճակի մէջ են։ Երկրին դլխաւոր հարստութիւններն են խահուէ, քաքաո, բամպակ, լեղակ, շաքար, դեղորայք եղն։

ԿՈԻՅԱՆԱ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԿՈԻՅԱՆԱ կը կոչուի այն երկիրը որ Ատլանտեանէ սկսեալ՝ կը տարածուի մինչեւ Վենեցուէլլա, հարաւէն՝ սահման ունենալով Պրազիլեան։

Երկրին ծովեղերեայ մասերը ցած, ճահճային և անառողսախտ են, արեւմտեան կողմերը լեռնոտ, իսկ ներքին մասերը քիչ ծանօթ։

Կլիման՝ ծովեղերքը սաստիկ տաք ու վատառողջ են, ներսերը՝ ջրոյ հոսանքներու պատճառաւ խոնաւ՝ ու տեղ տեղ ալ ցուվ են։

Դլխաւոր բոյսերն են չինութեան փայտ, դունաւու և բժշկական բոյսեր, խէժ, շաքար, խահուէ, քաքաո, լեղակ, վանիլիա եղն։

Երկրին մէջ կը դտնուին բաղում վայրի դազաններ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Կուայանա բաժնուած է Եւրոպական 3 տէրութեանց՝ Անգլիոյ, Ֆռանսայի և Հոլանտայի միջեւ։

Անգլիական Կուայանա. Մայրաքաղաքն է Ջորձ-թաուն, Տէմերարա գետին բերանը վաճառաշահ նաւահանգիստ է։

Ֆռանսական Կուայանա. Մայրաքաղաքն է Քայէնա, համանուն փոքր կղզւոյն վրայ՝ ուր կ'աքսորուին Ֆռանսայի քաղաքական յանցաւորք։

Հոլանտական Կուայանա. Մայրաքաղաքն է Փարամարիպօ, որ ծաղկեալ և ապահով նաւահանգիստ է։

ԷԳՈՒԱԹՕՐ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԷԳՈՒԱԹՕՐ՝ Հարաւային Ամերիկայի արեւմտեան երկիրներէն մէն է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Քոլոմպիա, արեւելքէն՝ Պրազիլիա, հարաւէն՝ Բէրու և արեւմուտքէն՝ Խաղաղական ովկիանոս։

Այս երկիրը Հասարակածի Ներքեւ գտնուելուն պատճառաւ՝ կոչուած է Էգուադոր (Հասարակած)։

Էգուադորի մէջ կը գտնուին Զիմպորազո, Քոթոփախսի եւ Փիչինչա նշանաւոր հրաբուխները։ Երկրին կլիման դաշտային մասանց մէջ տաք ու խոնաւ, իսկ լերանց վրայ աւելի բարեխառն եւ տեղ տեղ ալ ցուրտ է։ Գլխաւոր բոյսերն են արմտիք, քաքաօ, քինքինա, լեղակ, ծխախոտ, բամպակ եւ պաղպաղ ծառեր։ Երկրին մէջ կան ոսկւոյ եւ աղի հարուստ հանքեր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Էգուադոր ունի 643,000 քկմ. քառ. տարածութիւն եւ իբր 1,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՔԻԹՕ (80,000 բն.), ծովու մակերեւոյթէն 2950 մեթր բարձրութեամբ լեռնաշղթայի մը վրայ շինուած է։ Թէեւ Հասարակածի տակ՝ սակայն ունի առողջ եւ բաբեխառն օդ։ Այս քաղաքը քանիցս երկրաշարժէ կործանած է։

Կույաքիլ, համանուն խորշին վրայ երկրին գլխաւոր նաւահանգիստն է։ Ներքին գլխաւոր քաղաքներն են Կուանկա, Լէօն եւն։

Էգուադորի կը վերաբերի Կալլափակոս փոքր արշիպելագոսն որ Սպանիօլերէն կը նշանակէ Կրիաներու կղզի։

ՊՐԱԶԻԼԻԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ՊՐԱԶԻԼԻԱ՝ կը գրաւէ Հարաւային Ամերիկայի արեւելեան ութերորդ մասը։ Իր անունն առած է Պրազիլիա կոչուած ներկի բոյսէ մը։

Սահմաններն են հիւսիսէն՝ Վենեցուէլլա եւ Կույանա, արեւելքէն՝ Ատլանտեան ովկիանոս, հարաւէն՝ Ուրուկէ, Բարակուա եւ Լա-Բլաթա, արեւմուտքէն Պոլիվիա, Բէրու, Էգուադոր եւ Քոլոմպիա։

Այս ընդարձակ երկրին հիւսիսային եւ արեւմտեան մասանց մէջ կը գտնուին տափարակ ու ճախճախուտ դաշտեր, կեդրոնական եւ հարաւային գաւառներն ընդհանրապէս աւելի բարձր դիրք

ունին եւ կը պարունակեն գեղեցիկ ու բարերեր հովիտներ որոց կլիման բարեխառն է։ Պրազիլիոյ հիւսիսային մասն Հասարակածի Ներքեւ գտնուելուն՝ սաստիկ տաք կ'ընէ, ծովեզերքը նուազ տաք, իսկ ներքին մասերը համեմատաբար աւելի բարեխառն են։

Այս ընդարձակ երկրէն կանցնի աշխարհիս ընդարձակագոյն գետը՝ Ամազոն որ ունի 5,000 քկմ. երկայնութիւն եւ 300 մեթր լայն բերան։ Իր մէջ կը թափին մեծ ու փոքր բազմաթիւ գետեր։ Պրազիլիոյ հողն շատ բարերեր է եւ խիստ մեծ քանակութեամբ կ'արտադրէ խահուէ, շաքարեղէգ, քաքաօ, ծխախոտ, բամբակ, մեխակ, վանիլիա, բժշկական բոյսեր եւ շինութեան աղնիւ փայտ։ Պրազիլիա ունի ադամանդի, ոսկւոյ, արծաթի, պղնձի, երկաթի, մարմարիոնի եւ հանքածխոյ հարուստ հանքեր։

Երկրին մէջ կը գտնուին ընտանի կենդանիներէ՝ ի զատ՝ վայրի գազաններ, թռչնաւոր օձեր եւ ջրասակար ճճիները։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պրազիլիա ունի 8,340,000 քկմ. քառ. տարածութիւն եւ 14,000,000 բնակիչ։

Երկիրը բաժնուած է 20 գաւառներու։

Մայրաքաղաքն է ՐԻՕ-ԵԱՆԷՅՐՕ, աշխարհիս ամենէն մեծ, ամենէն վաճառաշահ եւ ապահով նաւահանգստաց մին է։ Ազատական ընդարձակ եւ կանոնաւոր յարաբերութիւն ունի Անգլիոյ, Ֆռանսայի եւ Փորթոկալի հետ։ Երեւելի են այս քաղաքին թանգարանները, գեղարուեստից վարժարանը եւն։

Պրազիլիոյ երեւելի նաւահանգիստներն են՝ Պահիա կամ Սան-Սալվատօր, ունի շաքարի եւ ծխախոտի մեծ վաճառականութիւն։ Բէրնամպուք, Բառա կամ Պելէմ, Բորթօ-Մէկուրօ, Վիքթորիա, Սանտօս, Բորթօ-Ալլէկրէ եւն։

Ներքին մասին մէջ երեւելի են Ս. Բօղ, Կույապա, Ուրօ-Բրիէթօ եւն։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Պրազիլիա ի սկզբան կը պատկանէր Փորթոկալի, բայց 1825 էն ի վեր եղած է ինքնագլուխ տէրութիւն մը։ Բնակիչք կը բազկանան սեւամորթ, խառնածին եւ սպիտակ ցեղերէ։ Դատաստանակութիւն ձեւաբուեսա եւ ճարտարութիւն հետզհետէ ծաղկելու վրայ են։

Պրազիլիոյ գլխաւոր հարստութիւններն են գոհարեղէն, խահուէ, շաքար, բամպակ, քաուչու (լաստիկ), ծխախոտ, չինութեան փայտ դեղի վերաբերեալ բոյսեր եւլն: Տեղացւոց խօսած լեզուն է Փորթոկեզերէն, կրօնն է Կաթոլիկութիւն և կառավարութեան ձեւն է Հանրապետութիւն:

ԲԷՐՈՒ

ՐՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Բէրու՝ Հարաւային Ամերիկայի կարեւոր երկիրներէն մին է: Սահմաններն են հիւսիսէն՝ Էգուադոր, արեւելքէն՝ Պրազիլիա, և Պոլիվիա, հարաւէն Չիլի և արեւմուտքէն Խաղ. ովկիանոս:

Ա.յս երկրին հիւսիսէն ի հարաւ կ'երկարի Անտէզ գօտին որոյ սառոյտնները կը տարածուին ընդարձակ և արգասաւոր հովիտներ և որոյ մէջ կը տիրէ հշանջենաւոր գարուն, իսկ ծովեզերքը աւազուտ և անբեր է: Բէրուի մէջ է Տիթիգաքա հրաբղխային լեռը որ ունի 4,000 մէթր բարձրութիւն: Երկրին կլիման՝ բարձր լեռնադաշտերու վրայ զով և առողջարար, իսկ Պրազիլիոյ մօտերը տաք ու խոնաւ են:

Բէրուի հողն բարեբեր ու լաւ մշակուած է: Կ'արտադրէ արմաւիք, բրինձ, դեղօրայք և հարաւային երկիրներու յատուկ բոյսեր ու պտղատու ծառեր:

Բէրուի մէջ կը գտնուին թանկագին քարեր, ոսկի, արծաթ, անդիկ, կապար, երկաթ եւլն:

Ա.յս երկրին մէջ կը գտնուի Կուանօ կոչուած թռչնոյ աղբը որ մեծ կարեւորութիւն ունի Եւրոպիոյ մէջ՝ ծաղկի մշակութեան համար:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Բէրու ունի 1,090,000 քիլ. քառ. տարածութիւն և իբր 3,000,000 բնակիչ:

Մայրաքաղաքն է ԼԻՄԱ (100,000 բն.), Խաղաղական ովկիանոսէն 9 քիլոմէթր դէպ ի ներս և որու նաւահանգիստն է Քալաօ: Լիմա, ունի գեղեցիկ մայր եկեղեցի, ընդարձակ հրապարակներ և հոյակապ շէնքեր:

Ներքին գլխաւոր քաղաքներ են

Քուսկօ, Բէրուի նախկին մայրաքաղաքն՝ էր Ինկաց կոչուած թագաւորաց ժամանակ:

Արեքիպա, երկրին հարաւակողմը համանուն հրաբուղխին մօտ:

Կուամպալիկա, մօտերը կան ոսկւոյ և անդիկի հարուստ հանքեր:

Երկրորդական նաւահանգիստներն Իգիկա, Արիկա, Բայդա:

Քալաօ նաւահանգիստը

ԸՆԴՀ. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Բէրուի առաջին անդամ տիրեցին Սպանիացիք 1531ին, բայց 1821ին եղաւ առանձին հանրապետութիւն: Ա.յս երկիրը դանուած ժամանակ, տեղացիք ունէին կանոնաւոր կառավարութիւն, թագաւոր՝ որ կը կոչուէր Ինկա: Բէրուի մէջ կը դանուին մեհեանները և փառաւոր յիշատակարանաց աւերակներ: Բնակիչք կը բաղկանան բնիկ Ամերիկացիներէ և Սպանիօլներէ: Քաղաքակրթութիւնը տակաւին նոր սկսած է ծաղկիլ այս երկրին մէջ:

ՊՈԼԻՎԻԱ կամ ՎԵՐԻՆ ԲԷՐՈՒ

ՐՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պոլիվիոյ սահմաններն են՝ հիւսիսէն և արեւելքէն՝ Պրազիլիա, հարաւէն՝ Լա-Պլատա և արեւմուտքէն՝ Բէրու: Երկիրը լեռնային է, Անտեան շղթային բարձրագոյն գագաթները հոս կը դանուին: Ա.յս Անտեաց արեւմտեան կողմը անջրդի և սառնապատ

է, իսկ արեւելեան կողմը բարեբեր՝ եւ կը վայելէ զուարճալի կլիմայ։

Գլխաւոր բոյսերն են՝ որթեւտունկ, ձիթենի, բամպակ, արմաւ շաքարեղէգ, խահուէ, ծխախոտ, քաքաօ, քինքինա մեծ առատութեամբ, վանիլիա, բժշկական բոյսեր եւլն։

Պոլիվիա ունի ոսկւոյ, արծաթի, պղնձի եւ անագի հարուստ հանքեր։ Այս երկրին մէջ կը գտնուի լամա, ալբակոս, ժակուար, կապիկ, կինճ եւլն։

ՓՈՂՈՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պոլիվիա ունի 1,250,000 քիլ. քառ. տար. եւ 2,400,000 բն.)։

Մայրաքաղաքն է ՉՈՒՔԻՍԱՔԱ, Բոլոր լերան ստորոտը ղուարճալի դիրքով գեղեցիկ քաղաք մ'է, մօտերը կան արծաթի հանքեր։

Գլխաւոր քաղաքներն են

Լա-Բազ, Պոլիվիոյ Հանրապետութեան մեծագոյն քաղաքն է, մօտերը կան ոսկւոյ կանք։

Փոթոզի, ունի հարուստ արծաթի հանք։ Երեւելի են նաեւ Սանկղա-Քոռնա, Սան-Ֆիթրօ եւլն։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Պոլիվիա՝ ի սկզբան Արճէնթինի մէկ մասը կը կազմէր, սակայն 1825ին Սիմոն Պոլիվար անուանի զօրապետին օգնութեամբ բաժնուեցաւ անկից ու եղաւ անկախ Հանրապետութիւն, երկիրն ալ Պոլիվարի անուամբ կոչուեցաւ Պոլիվիա։

ԲԱՐԱԿՈՒԱ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Բարակուա կամ Բարակէ՝ փոքր Հանրապետութիւն մ'է՝ ի մէջ Պրազիլիոյ, Լա-Պլաթայի եւ Պոլիվիոյ։ Կլիման՝ բարձր տեղերը զով եւ չոր, իսկ դաշտաց մէջ տաք ու խոնաւ է։ Գլխաւոր բերքերն են՝ բամպակ, ծխախոտ, շինութեան փայտ, շաքարեղէգ, սափառնա եւ տեսակ մը ընտիր թէյ՝ որ իլեխա ըսուած ծառին տերեւն է։

Բարակուա ունի 150,000 քիլ. քառ. տարածութիւն եւ 3,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ԱՍՕՄՓՍԻՕՆ կամ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ, այսօր աննշան քաղաք մ'է։

Վիլլա-Բիխա, երկրին կեդրոնը, Հանրապետութեան երկրորդ քաղաքն է։

Երեւելի են նաեւ Հուանայրա, Սան-Ֆիթրօ եւլն։

Բարակուա՝ ի սկզբան Սպանիացւոց տիրապետութեան ներքեւ էր՝ որմէ 1818ին բաժնուելով՝ եղաւ ազատ Հանրապետութիւն։ Սակայն Պրազիլիոյ, Արճէնթինի եւ Ուրուկուայի դէմ մղած պատերազմներով շատ տկարացաւ եւ իւր բնակիչներն ալ մեծապէս նուազեցան։

ՈՒՐՈՒԿՈՒԱ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ՈՒՐՈՒԿՈՒԱ. կամ ՈՒՐՈՒԿԷ՝ Պրազիլիոյ, Խաղաղականի եւ Արճէնթինի միջեւ փոքր Հանրապետութիւն մ'է։ Կլիման ընդհանրապէս բարեխառն եւ հողը շատ արդասաւոր է։ Ունի ընդարձակ եւ պարարտ արօտներ որոց մէջ կ'արածին բազմաթիւ արջառք։

Տարածութիւնն է 218,000 քիլ. քառ. տարածութիւն եւ 600,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՄՈՆԹԷՎԻՏԷՕ (80,000 բն.), Բիօ-ար-լա-Բլաթա ծովին հիւսիսային կողմը մեծ ու վաճառաշահ նաւահանգիստ է։

Երկրորդական քաղաքներ են Մալդօնատօ, Բոլոնիա եւ Բանէիոնէս։

ՉԻԼԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Չիլի՝ Հարաւային Ամերիկայի արեւմտեան կողմը նեղ ու լեռնային երկիր մ'է որ կ'երկարի Բէրուէն մինչեւ ի Մրուխ Հորն։ Այս երկրին մէջ կը գտնուի Հարաւային Ամերիկայի մէկ հրաբուղիտը՝ Ամօնկակուա։ Չիլի ունի բարեխառն ու առողջ կլիմայ։ Ձմեռներն

ընդհանրապէս կարճ և դարունն երկայն է։ Երկիրը լաւ ջրակուած է և կ'արտադրէ տաք երկրի յատուկ բոյսեր, մրգեղէն եւլն։ Ունի նաև ոսկւոյ, արծաթի, և պղնձի հարուստ հանքեր։

Չիլի ունի 900,000 քիլ. քառ. տար. և 4,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է **ՍԱՆԴԻԱԿՕ** (270,000 բն.), ընդարձակ դաշտի մը մէջ՝ զուարճալի դիրքով գեղեցիկ ու ծաղկեալ քաղաք մ'է որ երկրաշարժէ մեծ վնասներ կրած է։

Գլխաւոր նաւահանգիստներն են

Վալբարէզօ, նշանաւոր նաւահանգիստ որ՝ երկաթուղեաւ կապուած է Մայրաքաղաքին։

Նոյնպէս երեւելի նաւահանգիստներ են Քոքիմպօ, Սան-Ֆեռանչիսկօ, Վալտիվիա եւլն։

Կղզիք

Չիլիի կը վերաբերին Չիլօէ արշիպեղագոսը, Սան-Ֆերնանտօ, Սան-Ֆելիքս, Ս. Ամբրոսիոս և Ճուան-Ֆերնանտէզ կղզեաց խումբերն որք ծովեզրէն 200 քիլմ. դէպ արեւմուտք կը գտնուին։ Նոյնպէս Չիլի կը վերաբերին Փաթագոնիոյ մէկ մասը և հեռաւոր կղզիք Ա. ամօր Աւշիպեղագոս, Ուէլլինկտըն, Հանովր, Աստեյայիս եւլն։

Ընդհանուր տեղեկութիւն

Չիլի 1844ին ի վեր հաստատուած անկախ Հանրապետութիւն մ'է և Հարաւային Ամերիկայի ամենէն յառաջադէմ երկիրը։ Հողագործութիւն, ձեռարուեստ և ճարտարութիւն բաւական զարգացած են, միայն թէ երկրաշարժ և քաղաքական պատերազմներ՝ մեծ վնաս հասուցած են այս երկրին։ Չիլիի գլխաւոր հարստութիւններն են ոսկի, պղինձ, արծաթ, արմաւիք, կուանօ, կաչի, փայտ եւլն։ Այս երկրին հետ ամենէն աւելի յարաբերութիւն ունին Անգլիա, Գերմանիա

ԲԼԱԴԱ կամ ԱՐՁԷՆԹԻՆԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Արձէնթինեան դաշնակցութեան սահմաններն են՝ հիւսիսէն՝ Պոլիվիա. արեւելքէն՝ Բարակուա, Պրազիլ, Ուրուկուա և Ատլանտեան ովկիանոս, հարաւէն՝ Փաթագոնիա և արեւմուտքէն՝ Չիլի։

Երկրին արեւմտեան սահմանին վրայ կ'երկարի Անտէզ գօտին։ Իւր մէջէն կ'անցնի Լա-Բլադա գետն՝ որու չրջակաները արծաթի հանքեր գտնուելուն պատճառաւ՝ Սպանիօլք առաջին անգամ երկիրը կոչեցին Լա-Բլադա՝ որ կը նշանակէ արծաթ։ Կլիմայն ընդհանրապէս առողջ է, լեռնային գաւառաց մէջ ցուրտ կ'ընէ, իսկ հարաւային կողմերը կը գտնուին Բարձրաւանդակ անուն անջրդի անապատներ։ Լա-Բլադայի հողը շատ բարեբեր է և կ'արտադրէ տաք երկրի բերքեր։ Երկրին հանքերուն մէջ միայն ոսկին ու արծաթը կը շահագործուին։

ԳԱՂԱՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԼԱ-ԲԼԱԴԱ ունի 2,800,000 քիլ. քառ. տարածութիւն և իբր 4,000,000 բնակիչ։

Երկիրը բաժնուած է 14 դաշնակից գաւառներու։

Մայրաքաղաքն է **ՊՈՒԷՆՈՍ-ԱՅՐԷՍ** (200,000 բն.), Բիւ-ը-լա-Բլադայի հարաւային ափանց վրայ գեղեցիկ դիրքով վաճառաշահ նաւահանգիստ մ'է և կանոնաւոր յարաբերութիւն ունի Անգլիոյ, Գերմանիոյ և Ֆռանսայի նաւահանգստաց հետ։

Գլխաւոր քաղաքներն են

Ռօզարիօ, Բարանա գետին վրայ բանուկ նաւահանգիստ է։

Մէնտոզա, երկրին արեւմտեան կողմը։ Երեւելի են նաեւ Գորտովա, Սանդա-Քէ, Սանդիակօ, Սան-Ճուան եւլն։

Ընդհանուր Տեղեկութիւն

Արճէնդին ի սկզբան Սպանիական գաղթականութիւն մ'էր որ 1810ին եղաւ անկախ Հանրապետութիւն։ Արուեստ և քաղաքակրթութիւն տակաւին եւս մնացած են։ Երկրին գլխաւոր հարստութիւններն են բուրդ, աղած միս, կաշի, ճարպ, Լայլամի փետուր, այլ և այլ մետաղներ։

ՓԱԹԱԿՈՆԻԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ՓԱԹԱԿՈՆԻԱ՝ կը գտնուի Հարաւային Ամերիկայի հարաւային ծայրը և է քարուտ ու անապատային մի երկիր՝ որոյ բնակիչք թափառական ու վայրենի Հնդիկներ են։ Արճէնդին և Չիլի 1881ին ի վեր այս երկիրը բաժնած են իրենց մէջ։

ՄԱԿԷԼԼԱՆԻ ԿՂԶԻՔ

Փաթաքոնիոյ հարաւակողմը կը գտնուի այս արշիպելագոսն՝ որոյ մեծագոյնն է Հոդ եւ կիրը եւ որ բաժնուած է ցամաքէն համանուն նեղուցով։ Ա.յս կղզւոյն մօտ սոսկալի փոթորիկներ կը լինին։

Բնակիչք վայրենի են եւ կ'ապրին ձկնորսութեամբ։

Մակէլլանի նեղուցին արեւելեան կողմը կ'գըտնուի Քափ Էնտ կամ Մագելհաեսի արշիպելագոսն ուր Անգլիացիք գաղթականութիւն մը հիմնած են Պալէնա որսալու համար։ Սոյն կղզեայ կլիմայն բարեխառն է եւ ունին հարուստ հանքեր։

Ա.մերիկեան վայրենի

ԱՆԴԻԼԵԱՆ ԿՂԶԻՔ

ԿԱՄ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Սոյն կարեւոր արշիպելագոսը՝ զոր 1492ին առաջին անգամ գտաւ Քրիստափոր Քոլոմպոս, կը գտնուի երկու Ամերիկաներու միջեւ, Անգլիեան ծովուն արեւելեան հիւսիսային և արեւելեան հարաւային կողմը։ Կը բաժնուի երեք գլխաւոր խումբերու՝

Լուխայեան կամ Պահամա կղզիք, հիւսիսային կողմը։

Մեծ Անդիլեանք, *մէջ տեղը։*

Փոքր » *արեւելեան հարաւային կողմը։*

Անդիլեանք ընդհանրապէս լեռնային և ոմանք ալ հրաբղխային են։ Երկու որոշ կլիմայ կը տիրէ, չոր՝ որ նոյեմբերէ մինչեւ Ապրիլ կը տեւէ, իսկ միացեալին ամբողջապէս կ'անձրեւէ և այս միջոցին կը պատահին ահաւոր և բուռն մրրիկներ։

Կղզեայ հողն բարերեր և ընդհանրապէս լաւ մշակուած ըլլալով առատօրէն կ'արտադրէ Ասիոյ, Ափրիկէի և Ամերիկայի ամենէն պիտանի և շահաւոր բոյսերը՝ ինչպէս խահուէ, շաքարեղէգ, խիստ յարգի ծխախոտ, լեղակ, պանան, բամպակ, որդան կարմիր, քաքաօ, ներկի և բժշկական բոյսեր, համեմունք եւլն։ Հանքայ մէջ կարեւորներն են ոսկի, արծաթ, պղինձ, հանքածուխ, ծծումբ և հանքային ջուրեր։

Եւրոպիոյ կենդանիք՝ բաց ի խոզէ և ճագարէ՝ (Ա.փա Թովշանք) չեն աճիր այս կղզեայ մէջ։

ԼՈՒԽԱՅԵԱՆ ԿՂԶԻՔ

Լուխայեան կամ Պահամա կղզիք բազկացեալ են 650 է աւելի կղզիներէ և կը պատկանին Անգլիոյ։ Ա.յս կղզեայ միոյն՝ Կուանահանի կամ Սալվատօրի մէջ էր որ առաջին անգամ Քոլոմպոս ոտք կոխեց 1492ին։

ՄԵԾ ԱՆԴԻԼԵԱՆՔ

Մեծ Անդիլեանք *բազկացած են 4 մեծ կղզիներէ՝ Քուպա, Հայիթի, Եամայիկա և Քորթօ-Ռիքօ։*

ՔՈՒՊԱ

Ա.յս կղզին Անդիլեանց մեծագոյնն է և ունի 118,833 քիլ. քառ. տարածութիւն և 1,530,000 բնակիչ։ Հողը խիստ բարերեր է և կ'արտադրէ շաքար, խահուէ, ծխախոտ, լեղակ, քաքաօ, բամպակ, անանաս, չինուերեան աղնիւ վայտ, եգիպտացորեն եւլն։ Ունի նաեւ պղինձի, արծաթի, ածխոյ և աղուճակի հարուստ հանքեր։

Մայրաքաղաքն է Հաւանա (240,000 բն.), գեղեցիկ և վաճառաշահ նաւահանգիստ է։

Երեւելի են նաեւ Մադանզաս, Սանդիակօ-տի-Քուպա, Քորթօ-Բրինս եւլն։

ՀԱՅԻՔԻ

Ա.յս կղզին որ կը կոչուի նաեւ Սան-Տօմինիկօ, կը բաժնուի երկու անկախ Հանրապետութեանց, 1° Հայիթիի եւ 2° Տօմինիկեան։

Հայիթիի մայրաքաղաքն է Բorpo-Բրէնս, որ դեղեցիկ նաւահանգիստ է։

Տօմինիկեան Հանրապետութեան մայրաքաղաքն է Սան-Տօմինիկօ, որ Նոր-Աշխարհի մէջ Եւրոպացւոց ձեռօք չհիմուած առաջին քաղաքն է։ Կղզւոյն տարածութիւնն է 77,000. բնակչաց թիւն է 850,000։

ԵԱՄԱՅԻՔԱ

Ա.յս կղզին կը գտնուի Փուէրթօ Հարաւակողմը։ Ունի 10,850 քիլ. քառ. տար. եւ 600,000 բնակիչ եւ կը պատկանի Անգլիոյ։

Կ'արտադրէ տաք երկրի ամէն տեսակ բերքեր։ Համբաւաւոր են մանաւանդ ռօմը, ծխախոտը եւ շաքարը։

Մայրաքաղաքն է Քինկսթըն, որ է երեւելի նաւահանգիստ, նոյնպէս Բor-Բօյըլ, կղզւոյն հարաւային կողմը վաճառաշահ նաւահանգիստ է։

ԲՕՐԹՕ-ՐԻՔՕ

Ա.յս կղզին ունի 750,000 բնակիչ։ Առաւօրէն կ'արտադրէ Հասարակածի բերքեր։ Մայրաքաղաքն է Սան-Ճուան-տի-Բorpo-Բիfo, կղզւոյն հիւսիսային կողմը վաճառաշահ եւ ամրապատ նաւահանգիստ է եւ կը պատկանի Սպանիոյ։

ՓՈՔՐ ԱՆԴԻԼԵԱՆՔ

Փոքր Անդիլեանք ունին կիսաշրջանակի մը ձեւ եւ իրենց հին բնակչաց անուամբ կը կոչուին նաեւ Քարայիպեան կղզիք եւ ընդհանրապէս քարուտ եւ հրաբղխային են

Կը բաժնուին երեք խումբերու եւ կը պատկանին Անգլիոյ, Ֆռանսայի, Հոլանտայի եւ Տանըմարքայի։

Անգլիոյ պատկանող կղզիներն են Սանկտ Լուչիա, Ս. Վիչենի, Ս. Քրիստոֆ, Նեվիս, Անթիկուա, Պարպատոս, Թապակո, Դոմինիճեան։

Ֆռանսայի կը պատկանին Կուատալուպի, Մարի-Գալանդ, Տէզիրատ, Լէ-Սեյնդ, Ս. Բարթելեմի, Ս. Մարտինու։

Հոլանտայի կը պատկանին Ս. Մարտինուսի հարաւային մասը, Ս. Եուստաֆիոս, Քիւրասաօ, Արուպա եւլն։

Տանըմարքայի կը վերաբերին Ս. Խաչ, Ս. Թովմաս եւ Ս. Յոհաննէս կղզիք։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎՐԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1.

Ա.մերիկա ո՞ր կիսագնդին մէջ կը գտնուի։ — Քանի՞ մասերէ կը բաղկանայ։ — Ո՞ր պարանոցով իրար միացած են։ — Ո՞րոնք են սահմանները։ — Ո՞ր ովկիանոսները կը տեսնէ։ — Ի՞նչ երեւելի ծոցեր ու նեղուցներ կան Նոր Աշխարհի մէջ։ — Ի՞նչ կրնաս ըսել Ա.մերիկայի բնական ընդհանուր կազմուածքին վրայ։ — Ո՞ր երեւելի լեռնագօտին՝ ցամաքին հիւսիսէն 'ի հարաւ կ'երկարի։ — Ի՞նչ անուններ կ'առնու ցամաքին այլ եւ այլ մասանց մէջ։ — Միացեալ Նահանգաց արեւելեան կողմը ո՞ր գօտին կայ։ — Ո՞րոնք են Նոր Աշխարհի գլխաւոր հրուանդանները։ — Ալառաժ լերանց մէջ ո՞ր երեւելի հրաբուղխները կան։

2.

Նոր Աշխարհը քանի՞ աւազաններ ունի։ — Որո՞նք են հիւսիսային աւազանի հարկատուները։ — Մեքսիկայի ծոցին մէջ ո՞ր երկու մեծ գետերը կը թափին։ — Հարաւային Ա.մերիկայի գետերն դէպի 'ի ո՞ր կը վազեն ընդհանրապէս։ — Հիւսիսային Ա.մերիկայի մէջ ո՞ր մեծ լիճերը կան։ — Ո՞րոնք են կեդրոնական ու Հարաւային Ա.մերիկայի գլխաւոր լիճերը։ — Սառուցեալ ովկիանոսի մէջ ո՞ր կղզիները կան։ — Մեքսիկայի ծոցին արեւելեան կողմը ո՞ր մեծ արշիպելագոսը կայ եւ քանի՞ մասերու կը բաժնուի։ — Ո՞րոնք են Պէհրինկայի ծովուն ու Խաղաղականի գլխաւոր կղզիները։

3.

Ա.մերիկա ո՞րչափ տարածութիւն եւ բնակիչ ունի։ — Ո՞ր գօտիներու ներքեւ կը գտնուի։ — Ո՞րոնք են Բարեխառն, Սառուցեալ եւ Այրեցեալ գօտիներուն տակ գտնուած երկիրք։ — Ի՞նչ բերքեր ունի Ա.մերիկա։ — Ո՞ր երկիրները մեծ քանակութեամբ կ'արտադրեն բամպակ, ցորեն, խոհուէ, շաքարեղէգ, վանիլեա, բժշկական բոյսեր, բրինձ եւ աղնիւ առատ։ Ի՞նչ հարուստ հանքեր ունի Նոր Աշխարհը։ — Ո՞ր երկրաց մէջ կը գտնուին քարիւղ, հանքածուխ, երկաթ, պղինձ, ոսկի, ադամանդ եւ արծաթ։ Ո՞րոնք են Ա.մերիկայի ընտանի եւ վայրի կենդանիները։ — Երկրագործութիւնը մանաւանդ ո՞ր երկրաց մէջ չատ յառաջ գացած է։

4.

Ա.մերիկա քանի՞ տէրութեանց բաժնուած է։ — Բնակիչք ի՞նչ ազգութիւններէ բաղկացեալ են։ — Ի՞նչ կրօն կը դաւանին։ — Եւրոպական ո՞ր տէրութիւնք Ա.մերիկայի մէջ տասնուածքներ ունին։ — Ո՞րն է հիւսիսային Ա.մերիկայի ամենէն բազմամարդ եւ քաղաքակրթեալ երկիրը։ — Միացեալ Նահանգներն ի՞նչ պատճառներով քիչ ժամանակի մէջ այնքան մեծ յառաջադիմութիւն ըրին քաղաքակրթութեան ամէն ճիւղերուն մէջ։ — Թուէ՞

հանդերձ Անդիլեաններով՝ նոր Աշխարհի երեւելի նաւահանգիստները. — Եւրոպական ծր ազգերն՝ ի սկզբան ծանօթացան եւ սիրեցին Ամերիկայի հարուստ աշխարհներուն։

5.

Ո՞ր թուականին եւ ո՞վ գտաւ Ամերիկան. — Բնիկներն ի՞նչու Հնդիկ կը կոչուին. — Ո՞վ էր Ամերիկոս Վեսպուչչի. — Ամերիկայէ յերրորդ փոխադրեալ բուսական, հանքային եւ ճեռարուեստական գլխաւոր բերքերը ծրանք են. — Նոր Աշխարհի ծր երեւելի նաւահանգիստներն Եւրոպիոյ հետ կանոնաւոր յարաբերութիւն ունին. — Ո՞ր երկիրներն երկրաշարժի ենթակայ են։

ՀՐԱՀԱՆԳ

1° Գծել Հարաւ Ամերիկա մը եւ նշանակել երեւելի գետերն՝ իրենց վրայ եւ բերանը գտնուող գլխաւոր նաւահանգիստներով։
2° Գծել նոյն Հարաւ քարտէսին վրայ՝ Եւրոպական կալուածները։
3° Գծել Ծահուէ, Ծխախոտ, Շաքար, Բամպակ, եւ Արմաւիք արտադրող երկիրները՝ տարբեր տարբեր գոյներով։
4° Առանձինն գծել Միացեալ Նահանգները։

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՕՎԿԷԱՆԻԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Ովկէանիա կը կոչուի Խաղաղական ովկէանոսի մէջ և Հին ու Նոր աշխարհաց միջեւ ափուռած այն մեծ ու փոքր բազմաթիւ արշիպելագոսներն որոնք հաւաքաբար կը կազմեն երկրիս հինգերորդ մասն և բաժնուած են 4 գլխաւոր խումբերու 1°. Մալէզիա, 2°. Մելանեզիա կամ Աւստրալիա, 3°. Միկրոնեզիա, 4°. Փոլինեզիա։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Ովկէանիա ըստ մեծի մասին Հասարակածի ներքեւ կը գտնուի. սակայն չնորհիւ ծովէն փչող զով հովերուն՝ շատ տեղ կլիման բարեխառն և առողջ է։

Ովկէանիոյ կղզեաց շատերն լեռնոտ, հրաբղխային ու երկրաշարժի ենթակայ են, այսու հանդերձ՝ ունին պարարտ հող և առատ բուսաբերութիւն։ Գլխաւոր բերքերն են՝ բրինձ, շաքարեղէգ, եգիպտացորեն, լեղակ, արմաւ, արմաւիք, բամպակ, խահուէ, քավուր, մեխակ, քօքօ, նարինջ, խնկեղէն, ծխախոտ, դեղօրայք, կինամոն, սանդալ անուն անուշահոտ փայտ մը և չինութեան ազնիւ փայտեր եւլն. եւլն։

Կենդանիք և Հանք. — Եւրոպիոյ ընտանի կենդանիք հետզհետէ աճելու վրայ են հոս։ Կը գտնուին ձի, եզ, ոչխար, կով, և մանաւանդ Լինկիւրիի տեսակէ այծ որ ունի փայլուն մազ։ Ասոնցմէ ի զատ կան Հար. Ասիոյ ամէն տեսակ գազանները, իսկ մանաւանդ երեւելի են գոյնզգոյն թռչնաթակները, մեծափառ ու գեղեցիկ թռչունները, դրախտահաւը եւլն։

Ովկէանիա ունի հարուստ հանքեր ոսկւոյ, երկաթի, պղնձի, անագի, հանքածխոյ և թանկագին քարերու։

Ովկէանիա ունի իբր 10,850,000 քիլ. քառ. տարածութիւն և 37,000,000 ի չափ բնակիչ։

ՄԱԼԷԶԻԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Մալէզիա կը պարունակէ Սունտայի Արշիպելագոսը, Պորնէօ, Ջելէպեան, Մոլուքեան և Փիլիպպեան կղզիները որք կը կոչուին նաեւ Կղզիք Արեւելեան Հնդկաց։

ՍՈՒՆՏԱՅԻ ԱՐՇԻՊԵԼԱԳՈՍ

Սունտայի արշիպելագոսին գլխաւոր կղզիներն են Սումատրա, Պաւիա, Ճաւա և Թիմոր։

Սումատրա (2,700,000 բն.), մեծ և հրաբղխային կղզի մ՚է, կլիման տաք ու վատառողջ։ Գլխաւոր քաղաքներն Բատաւի՝ արեւմտեան կողմը, Բալառնպանկ՝ արեւելեան ծովեզրին վրայ Հոլանտական կալուածոց գլխաւոր կեդրոններն են։ Ասոնցմէ ի զատ՝

կղզւոյն Միացեալ Նահանգաց բաժնուած է բնիկ երեք թագաւորութեանց։

Հոլանտայի կը վերաբերի նաեւ Պանիա կղզին՝ որ ունի անագի հարուստ հանք։

ՁԱՎԱ

Ա.յս կղզին կը գտնուի Սումատրայի հարաւային արեւելեան կողմին, ունի 18,000,000 բնակիչ և է Հոլանտական կալուածոց ամենէն հարուստը։ Կ'արտադրէ շաքար, խահուէ, բամպակ, լերկակ, ծխախոտ, չինութեան միայտ եւլն։ Գլխաւոր քաղաքներն են Պադաւիա (105,000 բն.), կղզւոյն հիւսիսային ափանց վրայ մեծ ու վաճառաշահ նաւահանգիստ է, ունի նոր ու գեղեցիկ թաղ մը՝ ուր Եւրոպացիք կը բնակին։ Մեր Ազգէն ալ կան 300ի չափ բնտանիք՝ որոնք պատուաւոր դիրք մը գրաւած են իրենց վաճառականութեամբ և արուեստներով։

Շէրիպօն և Սամարանգ, կը գտնուին հիւսիսային ափանց վրայ։ Նեըքին գլխ. քաղաքներն են Սուրաբարդա և Ձօրձօֆարթա։

Սունտայի արշիպելագոսը կ'ամբողջացնեն Մասուրա, Պալի, Լօմպօք, Սումպավա, Ֆլօրէս բարեբեր կղզիք՝ Հոլանտացւոց ձեռք։

Թիմօր, բաժնուած է Սպանիոյ և Փորթոկալի միջեւ։

ՊՕՐՆԷՕԻ ԱՐՇԻՊԵԼԱԳՈՍ

Պօրնէօ ունի 680,000 քիլ. քառ. տարածութիւն և իբր 14,000,000 բնակիչ։ Ա.յս կղզին Աւստրալիայէ յետոյ՝ աշխարհիս մեծագոյն կղզին է։

Պօրնէօ ծածկուած է բարձրաբերձ լեռներով և ոռոգուած է ջրոյ հոսանքներով։ Կ'արտադրէ հասարակածային երկիրներու յատուկ՝ ամեն տեսակ առատ բոյս։ Ունի նաեւ ոսկւոյ, հանքածխոյ, անագի և պղնձի հարուստ հանքեր։

Ա.յս կղզւոյն հարաւային արեւելեան և արեւմտեան մասին տէր են Հոլանտացիք, արեւմտեան հիւսիսային մասին՝ Անգլիացիք, իսկ միացեալ մասը կը կառավարեն անկախ Սուլթաններ։

Հոլանտացւոց գլխաւոր կալուածներն են Բոնիթհանամ և Պենժէռմասինկ։ Նեըքին գլխաւոր քաղաքն է Սինդան։

ՉԷԼԷՊԵԱՆ ԿՂԶԻՔ

Չէլէպեան արշիպելագոսը կը տարածուի Պօրնէօ կղզւոյն արեւելեան կողմին՝ որոյ մեծագոյն կղզին Չելեպ ըլլալուն՝ արշիպելագոսին այդ անունը կոչուած է։ Չելեպեանք ունին իբր 2,000,000 բնակիչ և մեծաւ մասամբ կը պատկանին Հոլանտացւոց։ Գլխաւոր քաղաքներն են Մախասար և Մենադօ։

ՄՈԼՈՒԿԵԱՆ ԿՂԶԻՔ

Մոլուկեան արշիպելագոսն կը տարածուի Չելեպեանց արեւելեան կողմը և իրենց արտադրած առատ համեմունքին պատճառաւ՝ կը կոչուին նաեւ Համեմի կղզիք։ Ա.յս արշիպելագոսն երկու մասերու կը բաժնուի, Մեծ Մոլուկեանք և Փոքր Մոլուկեանք որք մեծաւ մասամբ կը պատկանին Հոլանտացւոց։

Փոքր Մոլուքեանք բաղկացած են հինգ կղզիներէ, Թեռնատ, Թիտոր, Մաքիան, Մոդիր և Պաքիան։ Մեծ Մոլուքեանց գլխաւորներն են Ճիլոլո, Ջերաք, Ամպոյան և Պանտա որք հրաբղխային են։

Մոլուքեանք ունին իբր 400,000 բնակիչ։

ՓԻԼԻՊՊԵԱՆ ԿՂԶԻՔ

Փիլիպպեան արշիպելագոսն կը տարածուի Մալէզիոյ հիւս. կողմը և բաղկացած է 40ի չափ մեծ ու փոքր կղզիներէ որք ընդհանրապէս հրաբղխային և անտառներով ծածկուած՝ ու ոսկւոյ մրրիկներու և անձրեւաց ենթակայ են, բայց ունին բարեբեր հող և հարուստ բուսաբերութիւն։ Բնակչաց թիւն է իբր 6,000,000։ Գլխաւոր կղզիներն Լուսօն (2,000,000 բն.), Մայրաքաղաքն է Մանիլլա, գեղեցիկ դիրքով վաճառաշահ նաւահանգիստ մ'է։

Մինտանաօ (1,200,000 բն.), ունի ոսկւոյ հարուստ հանքեր։ Գլխաւոր քաղաքն է Սէլանկան։

Երկրորդական կղզիներն են Փալաւան, Սուրիկաօ, Սամար, Մինտորօ, Ջեպու եւլն։

ԱՒՍՏՐԱԼԻԱ. կամ ՄԵԼԱՆԷԶԻԱ.

ՄԵԼԱՆԷԶԻԱ՝ անունը կ'ուտան աշխարհագիրք՝ Ովկիանիոյ հարաւային արեւմտեան կողմը սփռուած այն արշիպելագոսին որոյ մեծագոյն կղզին է ԱՒՍՏՐԱԼԻԱ. և որ ի հնումն կը կոչուէր Նոր Հոլանտա։

Մելանեզիա կը պարունակէ երեք մեծ երկիրներ և ութը գլխաւոր արշիպեղագոսը։

Երեք մեծ երկիրներն են,

Աւստրալիա, ունի 7,750,000 քիլ. քառ. տար. և 3,800,000 բն։

Աւստրալիոյ արեւմտեան և միջին մասերն ընդհանրապէս դաշտային են, իսկ արեւելեան կողմը հիւսիսէն՝ ի հարաւ կ'երկարին Կապոյց կամ Աւստրալեան Ալպեաներ որք կը պարունակեն բազմաթիւ հրաբղխային դադաթներ։ Հիւսիսային կողմը կը տեսնուի Բարիաճքայի մեծ ծոցը։

Կլիմային ընդհանրապէս բարեխառն է և առողջ, մանաւանդ հարաւային կողմը, իսկ սաստիկ տաք կ'ընէ հիւսիսային ծովեզրին վրայ։ Կղզւոյն ամենէն արգասաւոր և լաւ մշակուած մասերն են հարաւային գաւառք՝ յորս յառաջ կ'ուգան Հասարակածի ամէն տեսակ բոյսեր։ Առատօրէն կը գտնուին ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ և հանքածուխ։ Բայ՝ ի ծանօթ ընտանի կենդանիներէ՝ կը գտնուին նաեւ բազմաթիւ գաղանք։ Կայ նաեւ էնկիւրիի տեսակէ այծ՝ որոյ բուրդն շատ յարդի է։

Աւստրալիա քաղաքականապէս բաժնուած է վեց մասերու։

1°. Նոր Կալէս Հարաւային 2°. Վիքտորիա. 3°. Քուիսլէնտ. 4°. Հարաւային Աւստրալիա. 5°. Հիւսիսային Աւստրալիա 6°. Արեւմտեան Աւստրալիա։

1°. Նոր Կալէս Հարաւային. *Ունի 800,000 բնակիչ։ Գլխ. քաղաքն է Սիտնէյ՝ Եւրոպական ճաշակաւ չինուած, ծաղկեալ, վաճառաշահ և խիտ գեղեցիկ քաղաք է ձիգզրնի նաւահանգիստին վրայ, երեւելի են նաեւ Փարամատա և Պօրան-Պէյ։*

2° Վիքտորիա. *կը գտնուի Նոր Կալէսի հարաւակողմն և ունի 950,000 բնակիչ և ոսկւոյ հանք։ Գլխաւոր քաղաքն է Մելպըրն (250,000 բն.) Փիլիփ նաւահանգստին վրայ նորաշէն, գեղեցիկ ու վաճառաշահ քաղաք է։ Երեւելի են նաեւ Ձիլոնկ, Պալշարադ և Սենտհիթորդ։*

3°. Քուիսլէնտ. *Հարաւային Նոր Կալէսի հիւսիսային կողմը։ Ունի 200,000 բնակիչ, հարուստ բուսաբերութիւն և բազում արջառ։ Գլխաւոր քաղաքն է Պրիսպըն որ համանուն գետին բերանը վաճառաշահ նաւահանգիստ է։*

4°. Հարաւային Աւստրալիա. *Ունի 300,000 բնակիչ։ Գլխաւոր քաղաքն է Ադելայիտ որ հեռագրեաց ծաղկելու վրայ է։*

5°. Հիւսիսային Աւստրալիա. *Իր մէջ կը պարունակէ Պղիֆսանտրաւանս երկիրն ու Մելվիլ կղզին։ Գլխաւոր քաղաքներն են Բալտերսդըն և Վիքտորիա։*

6°. Արեւմտեան Աւստրալիա. *Գլխաւոր քաղաքներն են Բէրթի, Պլպանի և Ֆրիմանթըլ։*

ՆՈՐ ԿՈՒԻՆԻԱ կամ ԲԱԲՈՒԱԶԻԱ

Այս մեծ կղզին կը տարածուի Աւստրալիոյ հիւսիսային կողմն՝ ուսկից բաժնուած է Թորրէսի նեղուցով։ Հրաբղխային լեռներով ծածկուած կղզի մ'է Նոր Կուինէա որու ներքին մասերը տակաւին ամբողջապէս ծանօթ չեն։ Կ'արտադրէ Հասարակածային երկիրներու յատուկ բոյսեր։ Կղզւոյն արեւմտեան մասին տէր են Հոլանտացիք, հարաւային մասին՝ Անգլիացիք, իսկ հիւսիսային և արեւելեան մասանց վրայ՝ Գերմանացիք վերջերս գերիշխանութիւն մը հաստ ձգեցին։ Բնակիչք քաղցրաբարոյ և քաղաքակրթուելու յարմար են և կը հաշուուին իբր 500,000 որոնք Բարու ցեղին կը վերաբերին և այս պատճառաւ կղզին ալ կոչուած է Բարուազիա։

Թասմանիա՝ որ կը կոչուի նաեւ Երկիր Տիէմէնի, Աւստրալիոյ արեւելեան հարաւային կողմը եռանկիւնաձեւ կղզի մ'է և կը պատկանի Անգլիոյ։ Գլխաւոր քաղաքն է Հօպարդդաւն։

ԱՐՇԻՊԵԼԱԳՈՍՔ ՄԵԼԱՆԵԶԻՈՅ

Մելանեզիոյ ութը գլխաւոր արշիպեղագոսներն են.

1°. Նոր Բրիտանիոյ Արշիպեղագոս, *որ բաղկացած է Նոր Հանովր, Ամիրօթէ, Նոր Իրլանտա, Նոր Բրիտանիա կղզիներէն՝ ուրոյ վերջի սահմաններս Գերմանացիք տիրանալով՝ զայնս անուանեցին Պիզմարքեան արշիպեղագոս։*

Սողոմոնեան. *բնակիչ 100,000։*

Նոր Հէպրիտեանք. *բնակիչ 150,000։*

Լա Բէրուզի արշիպեղագոս։

Նոր Քալէտոնիա։

Լոյիզիատի արշիպեղագոս, *որք կը գտնուին Նոր Բրիտանիոյ արշիպեղագոսին հարաւային արեւելեան կողմը։*

Բուսք

Ֆիճի կղզիք, *ծովային հրաբուղխէ յառաջ*

եկած 300ի չափ կղզիներէ բաղկացեալ են։ Հողը բարեբեր է և կ՚արտադրէ տաք երկրի բերքեր և մանաւանդ սաճդալ անուն ա-նուշահոտ փայտը։

Նորճօլ, Նոր Քալէտոնիոյ արեւելեան հարաւակողմը ղուարճալի դիրքով և ղուարճալի կլիմայով բարեբեր կղզի մ՚է։ Կը պատկանի Անգլիոյ՝ որու իբր Սիդնէյա կը ծառայէ։

ՄԻՐՕՆԷԶԻԱ.

ՄԻՐՕՆԷԶԻԱ՝ որ կը նշանակէ Փոքր կղզի, բաղկացած է բազմաթիւ մանր կղզիներէ և կը տարածուի Խաղաղական ովկէ-անոսի արեւմտեան կողմը։

Գլխաւոր արշիպելագոսներն են.

Մարիանեան կամ Ասազակաց կղզիք, զորս առաջին անգամ գտաւ Մակէլլան 1521ին, այժմ կը պատկանի Սպանիոյ, գլխաւոր քաղաքն է Կուամ որ ունի հարուստ բուսաբերութիւն։ Բնակչաց մէջ կան շատ մը Քրիստոնեաներ։

Քարոլինեան կղզիք, կը գտնուին Նոր Կուինէոյ հիւսիսային կողմը և բաղկացած են 500է աւելի կղզիներով։ Կլիման թէեւ ղուարճալի՝ բայց ահաւոր փոթորիկներ ալ անպակաս են։ Բնակիչք կը պատկանին Ամերիկեան և Մալայեան ցեղերու և նշանաւոր են իրենց աշխատասիրութեամբ ու երկրագործութեամբ։ Գլխաւոր կղզիներն են Ուալաան, Նաւուրէֆ, Նաբ, եւն։

Երեւելի են նաեւ Մակէլլանի, Ժիլպերի, Ամսօնի և Մարշալի արշիպելագոսք։

ՓՕԼԻՆԷԶԻԱ.

ՓՕԼԻՆԷԶԻԱ՝ որ կը կոչուի նաեւ Արեւելեան Ովկէանոս, ձեւացած է Խաղաղական ովկէանոս արեւելեան կողմը սփռուած բազմաթիւ մանր կղզիներէ որք ընդհանրապէս բարձրադիր և հրաբղխային են։

1°. Նաւորդաց կղզիք (40,000 բն.), Գլխաւորներն են Մաուևա Բօլա, Օրոլու որք շատ բարեբեր են։ Բնակիչք մեծ մասամբ Քրիստոնեայ և քաջ նաւորդներ ու մահացի մարդիկ են։

2°. Բարեկամաց կղզիք (50,000 բն.), զորս գտաւ Թասման Հոլանտացի նաւապետը 1645ին և ապա Քուք՝ բնակչաց հիւրասիրութեանն համար՝ սոյն արշիպելագոսը կոչեց Բարեկամաց։



Բնաստէ ձեւացած երջանկաձեւ կղզի

3°. Սաճսուիչ կղզիք (60,000 բն.), հրաբղխային լեռներով ծածկուած կղզիներ են, կ՚արտադրեն խահուէ, շաքար, բամպակ, ծխախոտ եւլն։ Գլխաւոր կղզին է Հաւաայի՝ ուր 1779ին սպանուեցաւ Քուք անուանի նաւապետը։ Գլխաւոր քաղաքն է Հօնօլուլու որ ունի ընդարձակ վաճառականութիւն։ Բնակչաց մէջ կան բաղում Զինացիք։

4° ԹԱՅԻԹԻ կամ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՂԶԻՔ

Ունին 25,000 բնակիչ և կը պատկանին Ֆռանսայի։ Ամենէն երեւելի կղզին է Թայիթի որ՝ իւր բնական զմայլելի դիրքին պատճառաւ՝ կոչուած է Թագուհի Խաղաղական ովկէանոս։ Բնակիչք քաղաքակրթեալ ու Քրիստոնեայ են։

5°. Մարգիզեան կղզիք, հրաբղխային և անբեր են և բնակիչք վայրենական վիճակի մէջ կը գտնուին։ Գլխաւոր կղզիներն են Նուկա-Հիվա և Սանտա—Տօրհիհիա որք կը պատկանին Ֆռանսայի

6°. Նոր-Զէլանտա, Հարաւային Բոլինէզիոյ գլխաւոր արշիպելագոսն է և կը բաղկանայ երկու մեծ կղզիներէ, Իհանուամիի՝ հիւսիսային կողմը, Փունաւու հար. կողմը։ Նոր-Զէլանտա ունի 273,000 քիլ. քառ. սար. և 530,000 բնակիչ որոց 485,000ը Եւրոպացի

և Ռնացեալք՝ բնիկ վայրենիներ են Մէօրիս անուն։ Եւրոպական դաստիարակութիւնք և Քրիստոնեայ միսիոնարք կը ջանան քաղաքակրթել այս վայրենիներն որոնք ի բնէ չատ ուշիմ կ՚երեւին։ Կլիմային ընդհանրապէս առողջարար է, ունի հարուստ և բազմաեռակ բոյսեր, պարարտ արօտներ, ընդարձակ անտառներ և հարուստ հանքեր ոսկւոյ, պղնձի և հանքածխոյ։ Գլխաւոր քաղաքներն են Օրիենս, Ուէլինկրըն, Նէյպըն եւ Տէօնսիըն։

Նոր-Զէլանտա կը պատկանի Անգլիոյ։

Նոր Զելանտացի վայրենի

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1°. Կ. Պոլսէն փարիզ երթալու քանի՞ գլխաւոր ճամբայ կայ։

2°. Կ. Պոլիս լայնութեան քանի՞երորդ աստիճանին ներքեւ կը գտնուի եւ ո՞րոնք են Ասիոյ ու Ամերիկայի մէջ իրեն աստիճանակից երեւելի քաղաքները։

3°. Սան-Ֆրանչիսկօէն նաւ մը կալիֆոռնիա պիտի երթայ։ Կ՚ուզեմք գիտնալ թէ՝ ո՞ր ովկիանոսներէն, ծովերէն, ծոցերէն ու նեղուցներէն պիտի անցնի, եւ այս առթիւ ո՞ր երկիրները, կղզիներն ու հրուանդանները պիտի տեսնէ։

4°. Զինատանի Մայրաքաղաքէն Լոնտօն երթալու ամենէն դիւրին ճանապարհը ո՞րն է։

5°. Պուէնոս-Այրէսէն երուսաղէմ պիտի երթամք — գիտէ՛ մեր ընթացնալիք ուղին։

6°. Ամերիկէն՝ նաւով պիտի երթամք ՚ի Ճավա՝ հանդիպելով Ամերիկէի հիւսիսային եւ արեւելեան գլխաւոր նաւահանգիստները։ — Գիտէ՛ մեր ընթանալիք ուղին։

7°. Պօտօքէն դէպ արեւելք պիտի ուղեւորիմք մինչեւ Խաղաղական ովկիանոսի սահմանը։ — Մեր այս ուղեւորութեան նպատակը պիտի լինի ուշադրութիւն ընել թէ՝ Եւրոպիոյ եւ Ասիոյ ո՞ր երկիրներէն պիտի անցնիմք, ի՞նչ երեւելի քաղաքաց պիտի հանդիպիմք եւ ո՞ր գետերը, լեռներն ու լիճերը պիտի տեսնեմք։

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

ԵՒՐՈՊԻՈՅ ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑԻՆ ՎՐԱՅ

ԴԱՍ Ա.

Գտնել այնպիսի նաւահանգիստներ՝ որոց սկզբնատառերով կարելի ըլլայ կազմել հետեւեալ անունները.

ՕՐԻՆԱԿ

Ա. մսդերտամ
Ֆ. ափօլի
Ֆ. ատփլէա
Բ պրայիլ
Ք ադրաս
Ջ. ժէրխաճ
Վ իվօռնօ

ԱՆՆԻԲԱԼ, ԿԻԿԵՐՈՆ, ՍՈԿՐԱՏ, ՍԿԻՊԻՈՆ, ԱՐԱՄ ՆԵՐՍԷՍ, ՆԱՓՈԼԷՕՆ, ՄԱՐԱԹՈՆ, ԱԹԻՆԲ, ՊՈԼԻՍ, ԷԼՊԱ, ՇԱՄԲԱՄ.

ԴԱՍ Բ.

Եւրոպական տէրութեանց սկզբնատառերով կազմել հետեւեալները.

ՕՐԻՆԱԿ

Ա. ստրիա
Ֆ. ռուվէկիա
Ա. Ճգլիա
Հ. ոլանտա
Բ տալիա
Տ անգմարք

1°. Հայոց մեծագոյն դիցուհին.
2°. Կ. Պոլիսն առնող Սուլթանին տիտղոսը.
3°. Ասիական Թուրքիոյ բարձրագոյն գագաթը.
4°. Արաբիոյ պատմական կարեւոր մէկ լեռը.

ԴԱՍ Գ.

Գտնել ներքին այնպիսի քաղաքներ՝ որոց սկզբնատառերով կարելի ըլլայ կազմել հետեւեալ անունները.

ՕՐԻՆԱԿ

Ք արֆօճ
Ո ւրէխա
Ր իկա
Թ անեա
Ֆ իւրեմպէրկ
Ա լիանոքէ
Տ ուրիխ
Ք նապուլ

ԽՈՐԵՆԱՑԻ, ՊԵՐԻԿԼԷՍ, ՔՈԼՈՄՊՈՍ, ԼԷՈՆԻԴԱՍ, ՕԳՈՍՏՈՍ, ԱՐԱՄԱԶԴ, ՊՈՄՊԷՈՍ, ԿԵՍԱՐ, ԱԼԵՔՍԱՆԴՐ, ՀՈՄԵՐՈՍ, ՀԵՐՈԴՈՏՈՍ, ՄԻԼՏՕՆ, ՆԵՐՍԷՍ, ՀՌՈՄ, ՌԱՖԱԷԼ, ՃԷՆՈՎԱ, ՖԻՕՐԷՆՑԱ, ԱՄԵՐԻԿԱ, ՄԱՐՍԻԼԻԱ, ՀՌՆՆՈՍ, ՎՕԼԿԱ.

ԴԱՍ Դ.

Գտնել այնպիսի գետեր՝ որոց սկզբնատառերով կարելի ըլլայ կազմել հետեւեալ անունները.

ՕՐԻՆԱԿ

Ա ավա
Բ անուբ
Գ լպա
Դ էվա
Ե ուառ
Զ ե

ՍԴԷՆԼԻ, ԱԴԱՄԵԱՆ, ՆԱՓՈԼԷՕՆ, ԱԹԷՆԱՍ, ԴԱՆԻԷԼ ՄԱՏԹԷՈՍ, ՆԻՆՈՍ, ՎԱՏԻԿԱՆ, ՕՏԷՍՍ., ԿԱԼԿԱԹԱ, ԴԱՄԱՍԿՈՍ.

ԴԱՍ Ե.

Գտնել այնպիսի գագաթներ կամ լեռնագօտիներ՝ որոց սկզբնատառերով կարելի ըլլայ կազմել հետեւեալները.

ՕՐԻՆԱԿ

Ը բանտիճավեան
Թ տճա
Ժ իէրրա-Մօռնիկ
Ի ւրալ
Լ իէրրա տ'էնթրէլլա
Խ իճարեան
Ծ ոտոփ

1°. *Եգիպտացի մեծ աշխարհակալի մը անունը.*
2°. *Միջերկրականի մեծագոյն կղզին.*
3°. *Միջերկրականի մէջ՝ Ֆռանսայի պատկանող կղզին.*
4°. *Հին Յունաստանի պատմական երեւելի մէկ լեռը.*

ԴԱՍ Զ.

Գտնել ներքեւի այնպիսի քաղաքներ եւ կամ նաւահանգիստներ՝ որոց վերջին տառերով կարելի ըլլայ կազմել հետեւեալ անուններըը.

ՕՐԻՆԱԿ

Պէրտիչէ Ձ
Շեռպուռ Ռ
Քոլոնի Ա
Բօզէ Թ
Բսեռէ Ը
Տրէզտ Ա

ՖՌԱՆՍԱ., ԱՆԴԼԻԱ., ԿՈՎԿԱՍ, ՍԻԿԻԼԻԱ., ԱՐԱՔՍ, ՌՕՆ, ԼԻՎԻՆԿՍԴԷՆ.

ԴԱՍ Է.

Եւրոպական կղզեաց սկզբնատառերով կազմել հետեւեալ անուններըը.

ՕՐԻՆԱԿ

Պ որճիոլմ
Ա լանց
Ր իւկէն
Ո ւալթ
Ե ամսոս
Ե ւբէա
Ա ճսրոս
Ե եկրոբոնդ

ՊԱՐՈՆԵԱՆ, ՔՈՐՍԻՔԱ., ՍԻԿԻԼԻԱ., ԿԻՊՐՈՍ, ՓԷՔԻՆ,

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

	Երես
1. Ընդհանուր գիտելիք	1
2. Յամաքին բաժանումները	5
3. Ջրոյ բաժանումները	8

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԵԻՐՈՊԱ

Եւրոպական Աշխարհ

1. Անգլիա	21
2. Տանիմարքա	25
3. Շուէտ-Նորվէկիա	27
4. Եւրոպական Ռուսիա	29
5. Ֆռանսա	33
6. Պելճիքա	36
7. Հոլանտա	38
8. Զուիցերի	39
9. Գերմանական կայսրութիւն	41
10. Աւստրօ-Հունգարիա	44
11. Սպանիա	47
12. Փորթուկալ	49
13. Իտալիա	51
14. Եւրոպական Թուրքիա	54
15. Պուլկարիա	61
16. Արեւելեան Րումէլի	62
17. Ռումանիա	63
18. Սերպիա	64
19. Գարատաղ	65
20. Յունաստան	65
21. Ընդհանուր Հարցումներ Եւրոպիոյ վրայ	68

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՍԻԱ

Ասիական Աշխարհ

1. Ռուսական Ասիա	74
Կովկասիա	76
Թուրքաստան	77
2. Ասիական Թուրքիա	79
3. Պարսկաստան	88
4. Աֆղանիստան	90
5. Պելուճիստան	91
6. Արաբիա	92
7. Ճաբոն	94
8. Հնդկաստան	96
9. Չին	101
10. Հնդկա-Չին	104
11. Ընդհանուր Հարցումներ Ասիոյ վրայ	107

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԱՓՐԻԿԷ

Ափրիկեան Աշխարհ

1. Եգիպտոս	113
2. Նուպիա	116
3. Եթովպիա	117
4. Պէրպէրիստան	118
5. Սահարա	121
6. Սենեկամպիա	122
7. Հիւսիսային Կուինէա	123
8. Սուտան	124
9. Սոմալ	12
10. Հարաւային Կուինէա	126
12. Հարաւային Նիկրիտիա	128
12. Բարեյուսոյ երկիր	129
13. Քաֆրաստան	130
14. Մոզամպիք	131
15. Զանկէպար	132
16. Օվամպիա	133
17. Ափրիկեան կղզիք	133
18. Ընդհ. Հարցումներ Ափրիկէի վրայ	135

ԵՐԿՈՒ

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

—

ՀԻՒՍ. ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկեան Աշխարհիմ

1. Կրէնլանտիա 142
2. Նոր Բրիտանիա 143
3. Միացեալ Նահանգք 145
4. Մեխսիկա 149
5. Կեդրոնական Ամերիկա 151

ՀԱՐ. ԱՄԵՐԻԿԱ

1. Քոլոմպիա 152
2. Վենեցուէլլա 154
3. Պրազիլիա 156
4. Բէրու 158
5. Պոլիվիա 159
6. Բարակուա 160
7. Ուրուկուա 161

ԵՐԿՈՒ

7. Չիլի 161
9. Արճէնդին 162
10. Փարակոնիա 163
11. Անդիլեան կղզիք 164
12. Ընդհանուր Հարցումներ Ամերիկայի վրայ 167

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

—

ՈՎԿԷԱՆԻԱ

1. Մալէզիա 168
2. Աւստրալիա 171
3. Միխրոնէզիա 174
4. Փոլինէզիա 174
5. Ընդհ. պարտականութիւն 176
6. Աշխարհագրական Հանելուկներ 177

БИБЛІОТЕКА
ВЫСШІХЪ КЛАССОВЪ
ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА

ՀՀ Ազգային գրադարան
NL0585703

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

		Դրշ.	Փոյ.
1°.	**ՀԱՄԱՌՕՏ ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**. Ի պէտս Ազգ. Նախակրթական վարժարանաց	2	20
2°.	**ԸՆԴԱՐՁԱԿ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ**. Բնական, Քաղաքական եւ Տնտեսական՝ հանդերձ նորագոյն եւ կարեւոր ծանօթութեամբ՝ Ի պէտս Ազգ. Երկրորդական Նախակրթարանաց	6	
3°.	**ՀԱՄԱՌՕՏ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ**. Ի պէտս Ազգ. Նախակրթական վարժարանաց	4	20

ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎՍՏԱՀՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ

معارف نظارت جلیلهسنك رخصتنامهسیله طبع اولنمشدر